ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
CASSATION COURT
OF THE REPUBLIC OF ARMENIA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ASSOCIATION OF JUDGES
OF THE REPUBLIC OF ARMENIA

ISSN 1829 - 0744

ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ



7-9/325-327 2026
ՀՈՒԼԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ

Հրատարակիչներ՝
ՀՀ Վճռաբեկ դատարան,
«Դատական իշխանություն» ամսագրի խմբագրություն

ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ
СУДЕБНАЯ ВЛАСТЬ
JUDICIAL POWER

ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
НАУЧНО-МЕТОДИЧЕСКИЙ ЖУРНАЛ
SCIENTIFIC - METHODICAL JOURNAL

7-9/325-327 2026
ՀՈՒԼԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ

Գիտական խմբագրական խորհուրդ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
Լիլիթ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ – ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ, ՀՀ վաստակավոր իրավաբան, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ
Արման Դիլանյան - ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ, իրավաբանական գիտությունների թեկնածու,
Համլետ Ասատրյան - ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ, ՀՀ վաստակավոր իրավաբան,
Հովսեփ Բեդևյան - ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահ,
Արթուր Դավթյան - ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ, իրավաբանական գիտությունների թեկնածու,
Երվանդ Խունդկարյան - ՀՀ Սահմանադրական դատարանի դատավոր, ՀՀ վաստակավոր իրավաբան,
Սերժիկ Ավետիսյան - ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր, ՀՀ վաստակավոր իրավաբան, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Ելիզավետա Դանիելյան - ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի դատավոր, ՀՀ վաստակավոր իրավաբան, իրավաբանական գիտությունների թեկնածու,
Լիանա Հակոբյան - ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի դատավոր, իրավաբանական գիտությունների թեկնածու,
Ռուզաննա Հակոբյան - ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի դատավոր, ՀՀ վաստակավոր իրավաբան,
Նորա Կարապետյան - ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների թեկնածու,
Գոռ Թորոսյան - ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների թեկնածու,
Արշակ Վարդանյան - ՀՀ դատավորների միության անդամ, իրավաբանական գիտությունների թեկնածու,
Սերգեյ Առաքելյան - ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Արմեն Հայկյանց - ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Վահե Հովհաննիսյան - ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Բորիս Գավրիլով - ՌԴ ներքին գործերի նախարարության Կառավարման ակադեմիայի հանցագործությունների քննության մարմինների կառավարման ամբիոնի պրոֆեսոր, ՌԴ գիտության վաստակավոր գործիչ, ՌԴ վաստակավոր իրավաբան, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Անատոլի Կուստով - ՌԴ վաստակավոր իրավաբան, Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, իրավաբանական գիտություններիի դոկտոր, պրոֆեսոր:

Գլխավոր խմբագիր՝
ՀՀ Վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայության գլխավոր մասնագետ, Ռուս-Հայկական համալսարանի իրավունքի ինստիտուտի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու **Վարազդատ Սուքիասյան**

«Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիրը 2014 թվականից ընդգրկված է Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից հաստատված թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում:

Հրատարակվում է
Երևանի դատական փորձագիտության և հոգեբանության ինստիտուտի գիտական խորհրդի երաշխավորությամբ:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«ՀՀ դատավորների միություն» հասարակական կազմակերպություն
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 5
http://www.ajra.am

«Դատական իշխանություն»
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 5
Հեռ. 56-99-89
Էլ. հասցե՝ armjudges.association@gmail.com
ISSI 1829-0744

Հանձնվել է տպագրության՝ 01.10.2026 թ.
Ֆորմատը՝ 70x100 1/8
Տպաքանակը՝ 47
Ծավալը՝ 11.75 պայմ. մամուլ
Գրանցման վկայական՝ 01Մ000023
Տրված է՝ 07.11.2001 թ.

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ-ում:
ք. Երևան, Խորենացի 4-րդ նրբ., 69 տուն

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ/THEORY OF STATE AND LAW/ ТЕОРИЯ ГОСУДАРСТВА И ПРАВА

Արտակ Գևորգյան
«Իրավաբանական գրագրություն և վերլուծություն» առարկայի կառուցվածքի և դասավանդման առանձնահատկությունները (ուսումնամեթոդական աշխատանք)..... 3

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CONSTITUTIONAL LAW/ КОНСТИТУЦИОННОЕ ПРАВО

Կարեն Թումանյան
Շրջակա միջավայրի պաշտպանության սահմանադրականացման համաշխարհային միտումները՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքի արդիականացման համատեքստում 15

Եփրեմ Կարապետյան
Անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների հիմնախնդիրները հանրային ծառայության համակարգում 31

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CIVIL LAW/ГРАЖДАНСКОЕ ПРАВО

Խորեն Նասիբյան
Էլեկտրոնային եղանակով կնքվող միջազգային առևտրային պայմանագրերի կնքման վայրի որոշման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունքում..... 44

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/CIVIL PROCEDURE/ ГРАЖДАНСКИЙ ПРОЦЕСС

Գոհար Գրիգորյան
Սնանկության գործերով օտարերկրյա դատական ակտերի ճանաչումը և կատարումը..... 52

Лилиана Сисакян
Судебная ошибка, дефекты вступившего в законную силу судебного акта и пересмотр по вновь открывшимся и новым обстоятельствам..... 62

Աղավնի Մադոյան
Պետական շահի ձևակերպման քաղաքացիադատավարական հիմնախնդիրները ՀՀ իրավական համակարգում..... 73

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CRIMINAL LAW/УГОЛОВНОЕ ПРАВО

Андраник Рашидян
Использование искусственного интеллекта при совершении преступления: проблемы установления вины и пределов уголовной ответственности по уголовному законодательству Республики Армения..... 82

Մարինե Իսահակյան, Միլեն Գրիգորյան
Դատապարտյալների կրթության իրավունքի իրացման խնդիրները
Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկներում.....94

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/CRIMINAL PROCEDURE/УГОЛОВНЫЙ ПРОЦЕСС

Արմինե Մելիքսեթյան, Եվգենյա Գևորգյան
Տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության իրավական կարգավորման արդի
հիմնահարցերը.....112

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ/INTERNATIONAL LAW/МЕЖДУНАРОДНОЕ ПРАВО

Mikael Arshakyan
DO *PACTA* STILL *SERVANDA*? REASSESSING THE GENERAL RULE OF TREATY
CONTINUATION IN ARMED CONFLICT 120

ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ

Վճռաբեկ դատարանի որոշումներ..... 137

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ/THEORY OF STATE AND LAW/ ТЕОРИЯ ГОСУДАРСТВА И ПРАВА

https://doi.org/10.59546/18290744-2026.7-9-3

ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ
Իրավաբանական գիտությունների թեկնածու,
ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ավագ դասախոս,
Ռուս-Հայկական համալսարանի ավագ դասախոս

АРТАК ГЕВОРГЯН
Кандидат юридических наук,
старший преподаватель Образовательного комплекса
Министерства внутренних дел РА,
старший преподаватель Российско-Армянского университета

ARTAK GEVORGYAN
PhD in law, Senior Lecturer at the Educational Complex of the
Ministry of Internal Affairs of the RA,
Senior Lecturer at the Russian-Armenian University
https://orcid.org/0009-0009-7384-5585

«ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ)

FEATURES OF THE STRUCTURE AND TEACHING OF THE SUBJECT "LEGAL WRITING AND ANALYSIS" (EDUCATIONAL AND METHODOLOGICAL WORK)

СТРУКТУРА И ОСОБЕННОСТИ ПРЕПОДАВАНИЯ ПРЕДМЕТА «ЮРИДИЧЕСКОЕ ПИСЬМО И АНАЛИЗ» (УЧЕБНО-МЕТОДИЧЕСКАЯ РАБОТА)

Ներածություն

Հայաստանի Հանրապետության **բուհական համակարգում** (իրավագիտական (իրավաբանական) բուհերում, բուհի իրավագիտական ֆակուլտետներում) **նախնական մասնագի-**

տական կրթության (պատրաստության) ծրագրում **«Իրավաբանական գրագրություն և վերլուծություն»** առարկայի դասավանդումը սկսվել է 2000-ական թվականներից, և հայալեզու առաջին ուսումնական ձեռնարկը հրատարակվել է Երևանի պետական համալսարանի հրատարակչության կողմից՝ հեղինակներ՝ Մոլիտերնո Ջոն, Մելիքյան Ռուբեն, Մելքոնյան Դավիթ, սակայն լայն տարածում է գտել նույն ձեռնարկի երրորդ հրատարակությունը՝ ուսումնական ձեռնարկ, 3-րդ հրատ. փոփոխություններով ու լրացումներով, Երևան ԵՊՀ հրատարակչություն, 2010, 300 էջ[1]:

Հետագայում **«Իրավաբանական գրագրություն և վերլուծություն»** դասընթացը սկսվեց ներառվել **շարունակական մասնագիտական պատրաստության (զարգացման**) ծրագրերում (օրինակ՝ դատավորների, դատախազների, նոտարների, փաստաբանների վերապատրաստման ծրագրերում), ինչպես նաև **դատավորների, դատախազների, փաստաբանների թեկնածուների ուսուցման ծրագրերում** (Դատախազության դպրոցի, Դատական դպրոցի, հետագայում՝ Արդարադատության ակադեմիայի, Փաստաբանական դպրոցի, հետագայում՝ Փաստաբանական ակադեմիայի ուսումնական ծրագրերում):

Երբեմն **«Իրավաբանական գրագրություն և վերլուծություն»** անվան փոխարեն օգտագործում են **«Իրավաբանական գիր», «Իրավաբանական գրագրություն», «Իրավաբանական փաստաթղթերի կազմման հմտություններ», «Դատավարական փաստաթղթերի կազմման հմտություններ»** անվանումները: Ճիշտ է՝ նշված անվանումների միջև բովանդակային տարբերություններ կան, օրինակ՝ «Դատավարական փաստաթղթերի կազմման հմտություններ» առարկայի դեպքում դասավանդողը սովորեցնում է, թե ինչպես կազմել դատավարական փաստաթղթեր **(օրինակ՝ հայցադիմում, դատավճիռ, վերաքննիչ բողոք և այլն),** իսկ «**Իրավաբանական գրագրություն և վերլուծություն»** առարկայի դեպքում՝ ինչպես դատավարական, այնպես էլ ոչ դատավարական փաստաթղթեր **(օրինակ՝ պայմանագիր, հրաման և այլն),** սակայն էությունը, առանցքայինը՝ **զարգացնել ուսանողի, վերապատրաստվողի փաստաթուղթ կազմելու, այդ թվում՝ մասնագիտական գրավոր խոսքի հմտությունները**, բոլորի դեպքում նույնն է:

Այսօր գրեթե բոլոր իրավագիտական կրթական ծրագրերում առկա է դասընթաց, որը վերաբերում է **իրավաբանական բնույթի փաստաթղթեր կազմելու կամ իրավական վերլուծություն կատարելու կամ իրավագիտական գրավոր խոսքը զարգացնելու հմտությունների կատարելագործմանը**: Ավելին՝ գնալով մեծացել է **դատարանում գործերի քննության գրավոր ընթացակարգի** դերակատարությունը, օրինակ՝ ՀՀ Սահմանադրական դատարանում, ՀՀ Վճռաբեկ դատարանում, վերաքննիչ դատարաններում, հետևաբար՝ փաստաթուղթ կազմելիս շատ կարևոր է **գրագետ գրավոր խոսք,** ինչպես նաև **համակարգված, հիմնավոր, համոզիչ, ոչ ծավալուն իրավական վերլուծություն** կատարելու հմտություն ունենալը[2]:

Ինչպես նշվում է իրավաբանական գրականության մեջ. «**Իրավաբանական տեքստը** չի կարող հաջողված համարվել, եթե այն կառուցելիս հաշվի չեն առնվել իրավաբանական ոճի **լեզվաբանական և տրամաբանական առանձնահատկությունները**[3]»:

---

[1] Այս ձեռնարկի հիմնական մասը վերաբերում է **իրավական վերլուծություն** կատարելու մեթոդաբանությանը, այսինքն՝ շեշտադրումը **համոզիչ իրավավերլուծական փաստաթուղթ** կազմելն է եղել:

[2] Այստեղ տեղին է հիշել Վ. Գաբրիելյանի այն միտքը, որ այսօրվա նշանակությամբ գրերին նախորդել են՝ պատկերագրությունը, նշանագրությունը, ապա իմաստավորված գրությունը, հիերոգլիֆները, սեպագրերը և այլ տեսակները (Գաբրիելյան Վ., **Գրավոր խոսք,** ուսումնական ձեռնարկ, Երևան, 2012, էջ 11):

[3] *Մոլիտերնո Ջ., Մելիքյան Ռ., Մելքոնյան Դ.,* **Իրավաբանական գիր և վերլուծություն,** ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2010, էջ 114:

Հաշվի առնելով այն, որ Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է[4], իսկ պաշտոնական լեզուն՝ գրական հայերենը[5], ապա անհրաժեշտ է փաստել, որ պաշտոնական հաղորդակցությունը, նամակագրությունը պետք է իրականացվի արդի գրական հայերենով՝ արևելահայերենով: Մասնավորապես, ըստ լեզվաբան Լ. Միրզոյանի՝ զարգացման արդի փուլում **գրական արևելահայերենը պետական կարգավիճակի շնորհիվ** ունի հետագա զարգացման, մշակման, նորմավորման լայն հնարավորություններ[6]:

Հիրավի, իրավական նորմերի իմացությունը դեռևս բավարար չէ արդյունավետ, դիպուկ, մատչելի խոսք կառուցելու համար, և ինչպես նշում են որոշ հեղինակներ. «Գրագրությունների հղկված լեզուն, պարզ խոսքը, փաստաթղթերի մշակված ձևաչափը պետաիրավական հիմնարկի համար երաշխավորում են նաև որոշակի վարկանիշ. **գրագետ և համակարգված խոսքը ապահովում է տեղեկատվության արագ և անմիջական ընկալում, հնարավորություն է տալիս խուսափելու տարընթերցումներից**[7]»:

Նշենք, որ, բացի հղումներում նշված գրականությունից, իրավաբանական տեքստեր կազմելու համար օգտակար է նաև իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ցուցումները[8], որը, ճիշտ է, ուղղակիորեն վերաբերում է իրավական ակտեր նախագծերի կազմմանը, սակայն ձեռնարկում առկա են գրության բազում կանոններ, որոնք օգտակար են պաշտոնական գրագրություն, իրավական վերլուծություն կատարելիս:

Հիմնական հետազոտություն

1. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

«Իրավաբանական գրագրություն և վերլուծություն» դասընթացը պետք է կառուցված լինի 2 հիմնական բաժնից՝

1. **Իրավաբանական գրագրություն,**
2. **Իրավական վերլուծություն:**

Իրավաբանական գրագրություն էլ բաժանվում է 2 ենթաբաժնի՝

1) Ներքին գրագրություն, որն առավելապես վերաբերում է ներքին գրագրությանը, օրինակ՝ կազմակերպության ներսում ընդունվող, կիրառվող փաստաթղթերին, այդ թվում՝ ներքին իրավական ակտերին, **հրաման, որոշում, դիմում** և այլն:

2) Արտաքին գրագրություն, որն առավելապես վերաբերում է արտաքին, կազմակերպությունից դուրս՝ այլ անձանց հետ գրագրությանը, փաստաթղթերին, օրինակ՝ **նախապատահանջ, ծանուցում** և այլն:

Հավելենք, որ թե՛ ներքին, թե՛ արտաքին գրագրությունն առավելապես **իրավակարգավորիչ, նորմատիվային, ընթացակարգային բնույթ** ունի: Այն կապված չէ իրավավերլուծական

[4] ՀՀ Սահմանադրություն, հոդված 20:

[5] «Լեզվի մասին» ՀՀ օրենքի 1.1 հոդվածի համաձայն.

- ✓ «**պետական լեզու**՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված և պետության հոգածությամբ ու հովանավորությամբ **Հայաստանի Հանրապետության տարածքում գերակայություն ունեցող լեզու.**
- ✓ **պաշտոնական լեզու**՝ հայոց լեզվի քերականության, բառապաշարի, արտասանության կանոններին ենթարկվող, պաշտոնական գործառույթներին և հասարակության գրական ու գիտական պահանջներին ծառայող լեզու.»:

[6] *Միրզոյան Լ.*, **Կյանքի ուղեցույց**, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2012, էջ 67:

[7] *Ավետիսյան Յու., Մկրտչյան Ա., Սարգսյան Լ.*, **Իրավաբանական գրագրության լեզուն,** գիրք, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2019, էջ 4:

[8] **Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ցուցումներ**, Երևան, 2012, էջերի քանակը՝ 216՝ ընդունված ՀՀ կառավարության՝ 2012 թվականի 13 արձանագրային որոշմամբ:

աշխատանքի հետ, սակայն իրավաբանի աշխատանքի կարևոր բաղադրիչներից է: Որպես օրինակ՝ կարելի է նշել պայմանագրի, համաձայնագրի կազմումը:

Իրավական վերլուծությունն էլ բաժանվում է 2 ենթաբաժնի՝

1) Սուբյեկտիվ իրավավերլուծություն: Սուբյեկտիվ իրավավերլուծական փաստաթղթում փաստաթուղթ կազմողի սուբյեկտիվ շահն առաջնային է: Օրինակ՝ հայցադիմումը, վերաքննիչ բողոքի պատասխանը սուբյեկտիվ իրավավերլուծական փաստաթղթեր են, քանի որ այդ փաստաթուղթ կազմողն իր շահերից բխող փաստարկներ է ներկայացնում և պահանջներ առաջ քաշում կամ մերժում ներկայացված պահանջները կամ բողոքարկում դատական ակտերը, այսինքն՝ կենտրոնում դատավարական մեկ կողմի՝ սուբյեկտի շահն է:

2) Օբյեկտիվ իրավավերլուծություն: Օբյեկտիվ իրավավերլուծական փաստաթղթում կարևորը օբյեկտիվ շահի պահպանում է: Օրինակ՝ քաղաքացիական գործով առաջին ատյանի դատարանի վճիռը, քրեական գործով՝ դատավճիռը կամ վերաքննիչ դատարանի որոշումը օբյեկտիվ իրավավերլուծական փաստաթղթեր են, քանի որ այդ փաստաթուղթ կազմողը, որոշում ընդունողն օբյեկտիվ և ոչ թե սուբյեկտիվ, այսինքն՝ արդարադատության շահից ելնելով է իրավական վերլուծություն կատարում, եզրահանգման գալիս, որոշում ընդունում:

2. ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«**Իրավաբանական գրագրություն և վերլուծություն**» դասընթացի արդյունավետությունը մեծապես կախված է **ընտրված մեթոդաբանությունից և կիրառելի քայլերից**: Այս դեպքում տեսական նյութի տրամադրումը պետք է հասցնել նվազագույնի, եթե ոչ զրոյական վիճակի, այն ամբողջովին գործնական պարապմունքի ձևաչափով պետք է անցկացնել:

Իսկ ո՞րն է **գործնական պարապմունքի նպատակը**: Ըստ Գ. Ռուսակովայի՝ դրա նպատակը դասախոսությունների և սեմինարների ընթացքում ձեռք բերված տեսական գիտելիքների ընդհանրացումը, **ապագա մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ գործնական հմտությունների և կարողությունների ձևավորումը,** ինքնավարության, պատասխանատվության բարձրացման և խնդիրների լուծման ստեղծագործական մոտեցման զարգացումն է[9]:

Այս դասընթացը պետք է դասավանդել այն ուսանողներին, որոնք առնվազն երրորդ կուրսում են սովորում (4-ամյա բակալավրիական կրթական ծրագրի դեպքում), քանի որ փաստաթուղթ կազմելիս անհրաժեշտ է, որ ուսանողը տիրապետի խնդրի թե՛ նյութաիրավական, թե՛ դատավարաիրավական (կամ գոնե սկսել են ուսումնասիրել դատավարական իրավունք) հիմքերին:

Սա էական է, որպեսզի ուսանողը ժամանակ չկորցնի խնդրի իրավական լուծումը երկար պլանավորելու հարցում: Այն նպատակ ունի ապահովելու գրավոր հաղորդակցության պրոֆեսիոնալիզմը և հետևողականությունը[10]:

Ինչ վերաբերում է վերապատրաստման ծրագրերում ներառելուն, ապա այն կախված է վերապատրաստվող թիրախային խմբի առջև դրված խնդիրներից:

Հաշվի առնելով առարկայի գործնական պարապմունքի տեսքով անցկացնելու հանգամանքը՝ դասախոսը, վերապատրաստողը պետք է ներկայացնի.

1) փաստաթուղթը կազմելու համար ինչ **իրավական հիմքեր** կան *(օրինակ՝ ՀՀ քրեական*

[9] *Ռուսակովա Գ.,* **Դասավանդման մեթոդիկա** Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիրի դասախոսների համար, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2025, էջ 120:

[10] CDPP Legal Writing Style Guide, April 2024, p. 4 (www.cdpp.gov.au/system/files/2024-12/CDPP%20Legal%20Writing%20Style%20Guide%20%28April%202024%29.pdf, վերջին մուտք՝ 01.06.2026)

*դատավարության օրենսգիրքը նախատեսում է, որ քրեական վարույթի ընթացքում **հափշտակման ենթակա են** մեղադրյալին վերագրվող արարքի հետևանքով պատճառված այնպիսի **գույքային վնասները**, ինչպիսիք են՝ մահացած փուժողի կամ փուժող ճանաչվելու ենթակա անձի հուղարկավորության, հուշաքարի, տապանաքարի տեղադրման, ինչպես նաև գերեզմանի բարեկարգման համար կատարված ողջամիտ ծախսերը՝ **գույքային հայց ներկայացնելու եղանակով**[11]):*

2) որո՞նք են **պահանջները, վավերապայմանները** (այսինքն՝ փաստաթղթի ձևին և բովանդակությանը ներկայացվող կանոնները), որի կամ որոնց չլրացումը կամ թերի լրացումը փաստաթուղթը վերադարձնելու[12] կամ այն վիճարկելու հիմք կդառնան *(օրինակ՝ 1. աշխատանքի ընդունման անհատական իրավական ակտը կամ պայմանագիրը ստորագրված չէ կամ բացակայում է նշումն այն մասին, թե աշխատողն ինչ պաշտոն, հաստիք է զբաղեցնելու, 2. վերաքննիչ բողոքում նշված չէ դատարանի անվանումը, որի կայացրած դատական ակտի դեմ բերվում է վերաքննիչ բողոքը, գործի համարը և դատական ակտի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը)*

3) ինչպիսի՞ **իրավական ռիսկեր** կարող են առաջանալ անորոշ, թերի փաստաթուղթ կազմելու դեպքում *(օրինակ՝ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրում պայմանագրի գինը՝ նշված թվերով և բառերով, նույնական չէ, օրինակ՝ 500000 (հիսուն հազար) դրամ)*, ինչպիսի՞ քայլեր պետք է ձեռնարկել՝ ամուր հիմքերի վրա կառուցված, կողմի շահն իրավաչափորեն պաշտպանված փաստաթուղթ ունենալու համար,

4) իրավակիրառ պրակտիկայում, այդ թվում՝ դատական պրակտիկայում, ինչ խնդիրներ, տարածված վրիպակներ են հանդիպում, որոնք փաստաթուղթը դարձնում են վիճելի կամ անիմաստ ձգձգվում է հարցի լուծումը, գործի քննությունը *(օրինակ՝ ծանուցման մեջ ծանուցվող անձի հաշվառման վայրի հասցեի **շենքի համարի փոխարեն** բնակարանի համարն է նշվել, **իսկ բնակարանի համարի փոխարեն**՝ շենքի համարը, կամ փաստաթղթի ներքևում գրված է «Ա» պաշտոնատար անձի անունը և ազգանունը, բայց նրա անվան դիմաց թեք գիծ է դրվել, և նրա փոխարեն ստորագրել է «Բ» անձը[13])*, հետևաբար՝ ինչպիսի՞ մարտավարություն ընտրել, որպեսզի կազմված փաստաթուղթը չլինի խոցելի, այդ թվում՝ տեխնիկական իմաստով:

3. ՄԵԹՈԴԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԻ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ

Ստորև ներկայացված քայլերի տրամաբանական հաջորդականությունը գրագետ փաստաթուղթ կազմելու գրավականն է[14]:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՓՈՒԼ: Դասախոսը դատական (օրինակ՝ datalex.am հարթակից վերցված գործ) կամ իրավական պրակտիկայից (օրինակ՝ կոնկրետ կազմակերպության անու-

[11] Հիմք՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդվածներ 157-160:
[12] Հիմք՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, հոդվածներ 368, 371:
[13] Հետագայում կարող է պարզվել, որ տվյալ անձն այդ փաստաթուղթը ստորագրելու իրավասություն չի ունեցել, լիազորված չի եղել, ավելին՝ հարցը կարող է դիտարկվել լիազորությունների սահմանազանցման, միգուցե նաև պաշտոնական կեղծիքի համատեքստում:
[14] Ընդ որում՝ որպես արդյունավետության ապացույց է դիտարկվում հետազոտողի կողմից 2012-2025 թվականներին նույն քայլերով, մեթոդաբանությամբ **դասավանդումը** նախնական մասնագիտական կրթության *(օրինակ՝ Ռուս-Հայկական համալսարանում)*, **վերապատրաստումը** շարունակական մասնագիտական զարգացման *(օրինակ՝ ՀՀ փաստաբանական ակադեմիայում)* ծրագրերի շրջանակում և դրա վերաբերյալ ուսանողների, վերապատրաստվողների անդրադարձը, որի ցուցիչը վերջիններիս մասնագիտական գործնական հմտությունների՝ գրավոր փաստաթուղթ կազմելու շրջանակում, մակարդակի բարձրացումն է եղել:

նից կնքված պայմանագիր կամ որևէ իրական ներքին գրագրության առնչվող փաստաթուղթ) վերցրած գործնական առաջադրանքը (իրական գործը) **նախապես ուղարկում է ուսանողներին**՝ տանը ծանոթանալու, լուծման ուղիներ որոնելու համար:

Դասի ընթացքում դասախոսը համառոտ **ամփոփում է լուծման հնարավոր տարբերակները**, առաջ քաշված բոլոր վարկածները քննարկվում են, ներկայացվում են դրանց ուժեղ և թույլ կողմերը, որից հետո **վերջնական մեկ տարբերակի՝ լուծման ուղու վրա են կանգ առնում**, որից հետո սկսվում է փաստաթղթի կազմման բուն գործընթացը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՓՈՒԼ 1: Դասախոսը ուսանողի հետ միասին, քայլ առ քայլ, պահանջ առ պահանջ լրացնելով կազմում է փաստաթուղթը, պարզապես՝ դասախոսը գրում է գրատախտակին (կամ խելացի տախտակին)՝ ի ցույց լսարանում գտնվողների, իսկ ուսանողը՝ իր տետրում (կամ դյուրակիր էլեկտրոնային համակարգչում):

Դասախոսը պարտավոր է յուրաքանչյուր պահանջի լրացման ժամանակ բացատրել, թե **գրագրության ինչ ձևեր են հանդիպում, որոնք են վիճելի, որոնք են համապատասխանում հայերենի գրությանը, իրավական պահանջներին, և հնարավոր տարբերակներից որոնք խոցելի չեն դարձնի փաստաթուղթը**: Քանի որ հնարավոր մի քանի տարբերակներից մեկը պետք է ընտրել, դասախոսը պետք է նաև ներկայացնի, թե որն է իր ընտրության հիմնավորումը, միևնույն ժամանակ ուսանողներին հնարավորություն տա ներկայացնել իրենց տարբերակները:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՓՈՒԼ 2: Դասախոսը փաստաթղթի սկզբից մինչև վերջ բացատրում է դրա կազմման առանձնահատկությունները, որից հետո **որպես օրինակելի նմուշ՝ դասախոսը պետք է իր կազմած փաստաթուղթը, օրինակը ներկայացնի, ուղարկի ուսանողներին**: Ստացվում է՝ դասախոսը լսարանում սովորեցնում է ինչպես կազմել փաստաթուղթը, ապա նույն գործով վերջնական տեսքով իր կազմածն էլ է ուղարկում ուսանողներին:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՓՈՒԼ 3: Դասախոսը **նոր առաջադրանք է տալիս ուսանողներին**, և այս անգամ ուսանողներն իրենք են կազմում փաստաթուղթը՝ որպես օրինակելի նմուշ ունենալով դասախոսի՝ նախորդ առաջադրանքի վերաբերյալ կազմած փաստաթուղթը: Այս դեպքում դասախոսն **ուսանողների կազմածն է ստուգում՝ յուրաքանչյուրինը առանձին-առանձին**: Այսինքն՝ **սա անհատական աշխատանքի** է նմանվում: Ուսանողի կատարած աշխատանքն առանձին ստուգելու դեպքում ուսանողը տեսնում է, թե ինչպես է դասախոսը ստուգում իր աշխատանքը, **տվյալ պահին հարցեր կարող է տալ դասախոսին, իսկ դասախոսը լրացուցիչ պարզաբանում ստանալ**, թե ինչու է այս հատվածում այլ կերպ շարադրվել:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՓՈՒԼ 4: Այս ամենից հետո դասախոսն **ամփոփում է ուսանողների գործնական առաջադրանքները՝** ներկայացնելով բոլոր թերությունները, վրիպակները: Սա այն լավագույն եղանակն է, որի դեպքում ուսանողները հասկանում, տեսնում են նույնիսկ **այն թերությունները, որոնք իրենք չէին նկատել, սակայն այլ ուսանող էր նկատել, կատարել**: Այսինքն՝ **փաստաթուղթը բազմակողմանի, համակողմանի վերլուծություն է ենթարկվում,** որի արդյունքում չի լինում գեթ մեկ հարց, որին անդրադարձ չկատարվի:

4. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Մասնագիտական գրավոր խոսքի զարգացմանն ուղղված է նաև «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի այն կարգավորումը, համաձայն որի՝ բուհի գործունեության հիմնական գործառույթներից է ուսանողների **հետազոտական և ակադեմիական գրագրության հմտությունների** զարգացումը (հոդված 6, մաս 3, կետ 4):

Ինչպես նկատեցինք, օրենսդիրը կարևորել է ուսանողի **մասնագիտական գրավոր խոս-**

քի՝ հետազոտական և ակադեմիական գրագրության հմտությունների զարգացումը: Այստեղ խոսքը վերաբերում է ուսանողի **վերլուծական, քննադատական, խնդիրների վերհանման և դրանց արդյունավետ ուղիների որոնման կարողությունների** զարգացմանը, իսկ սույն հոդվածում քննարկվող առարկայի շրջանակում՝ **իրավական վերլուծություն կատարելու հմտությունների զարգացմանը, կատարելագործմանը:**

Ճիշտ է՝ օրենսդիրը կարևորել է ուսանողի գրավոր խոսքի՝ հետազոտական և ակադեմիական գրագրության հմտությունների զարգացումը, սակայն չպետք է մոռանալ, որ այն պետք է իրականացվի գրական հայերենով: Հավելենք, որ գրական հայերենի զարգացման գործում մեծ է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության լեզվի կոմիտեի դերը, մասնավորապես, վերջինս «փորձում է կողմնորոշել օգտվողին լեզվական խնդրահարույց հարցերում՝ յուրաքանչյուր դեպքի համար ներկայացնելով դրան բնորոշ համատեքստը: Լեզվական բարդությունները ներկայացնելով են նյութերը ձևավորում լեզվական այս կամ այն ձևի կիրառության նախընտրելիությունը»[15]:

Իսկ ի՞նչ է իրավական վերլուծությունը:

Նեղ իմաստով իրավական վերլուծությունն իրավական նորմերի օգտագործման, կիրառման, դրանց բովանդակության բացահայտման արդյունքում որևէ եզրահանգման գալու գործընթաց է:

Լայն իմաստով իրավական վերլուծությունն իրավական նորմերի օգտագործման, կիրառման, դրանց բովանդակության բացահայտման, ապա փաստերի հետ համադրման արդյունքում որևէ եզրահանգման գալու գործընթաց է:

Այսօր իրավական, այդ թվում՝ դատական պրակտիկայում, հանդիպում են **իրավական վերլուծության կատարելու տարբեր մեթոդներ**, որոնցից առավել խրախուսվողը և արդյունավետը **IRAC մեթոդով վերլուծությունն** է:

5.1

Ստորև քննարկենք **IRAC մեթոդով վերլուծության մեկ օրինակ:**

«ԱՐՅԱՆ ԴՈՆՈՐՈՒԹՅՈՒՆ: ՀԱԿԱՑՈՒՑՈՒՄ

Գործի փաստական հիմքեր

Սուրեն Սուրենյանը, լսելով իրավասու մարմնի կոչը՝ արյան պաշարը համալրելու համար, վաղ առավոտյան (2026 թվականի հունվարի 09) մեկնել է համապատասխան կենտրոն՝ որպես արյան դոնոր արյուն հանձնելու համար:

Բժշկական կենտրոնը հետազոտության ավարտից հետո Սուրեն Սուրենյանին չի թույլատրել արյուն հանձնել՝ նշելով, որ վերջինս ունի արյունատվության հակացուցում:

Սուրեն Սուրենյանը զայրացել է և նշել, որ ինքը առողջ է, մշասակար սովորություններ չունի և ամենակարևորը՝ ունի ցանկություն՝ մարդկանց օգնելու, ապա հավելել, որ ընդամենը մեկ հատ ասպիրին է խմել առավոտյան (2026 թվականի հունվարի 09), քանի որ մեկ օր առաջ (2026 թվականի հունվարի 08) մեկ ատամ էր հեռացրել և փոքր-ինչ վատառողջ էր:

Սուրեն Սուրենյանն ամենաշատը վրդովվել էր այն հանգամանքից, որ բժշկական կենտրոնը հակացուցման հիմքում դրել է նաև այն փաստը, որ 5 տարի առաջ ավտովթարից հետո վերջինիս աջ երիկամը հեռացվել է: Վրդովմունքի պատճառն այն էր, որ, ըստ Սուրենյանի, երիկամը կապ չունի արյան հետ, իսկ ամենակարևոր ներքին օրգանը՝ փայծաղը, գտնվում է գերազանց վիճակում:

Գնահատել բժշկական կենտրոնի գործողությունների իրավաչափությունը՝ վերլուծելով

[15] Լեզվական կողմնացույց, ՀՀ ԿԳՄՍՆ լեզվի կոմիտե, Երևան, 2025, էջ 3:

իրավիճակը IRAC մեթոդի կիրառմամբ:

IRAC

«IRAC»-ը հապավում է, ըստ որի.

- ✓ **I-Issue** (հարցադրում, վեճ),
- ✓ **R-Rule** (կանոն, իրավական հիմք),
- ✓ **A-Analysis** (վերլուծություն, փաստերի և իրավական հիմքերի համադրություն)
- **A1.** կանոնի բովանդակության բացահայտում՝ ըստ վերլուծողի բառապաշարի,
- **A2.** բացահայտված բովանդակության համադրում գործի փաստերի հետ,
- ✓ **C-Conclusion** (եզրահանգում, հարցադրման պատասխան)

ԿԻՐԱՌՈՒՄ

ISSUE

Արդյո՞ք բժշկական կենտրոնն իրավաչափ վարքագիծ է դրսևորել՝ արգելելով Սուրեն Սուրենյանին արյան դոնոր լինելու՝ մատնանշելով վերջինիս արյունատվության հակացուցում ունենալու հանգամանքը:

RULE

«Մարդու արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Արյան դոնոր կարող է լինել 18 տարին լրացած, բժշկական զննություն անցած և **դոնորության հակացուցում չունեցող յուրաքանչյուր գործունակ անձ**՝ բժշկի պատճառաբանված եզրակացության հիման վրա»:

«Մարդու արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ (…) լիազոր մարմնի լիազորություններն են՝ **դոնորության համար հակացուցումների ցանկի** հաստատումը:

ՀՀ առողջապահության նախարարի՝ 7 փետրվարի 2013 թվականի թիվ 06-Ն հրամանի 2-րդ հավելվածով հաստատվել է դոնորության համար հակացուցումների ցանկը: Մասնավորապես,

✓ 1-ին կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ որպես դոնորությունը **բացառող բացարձակ հակացուցումներ** (հիվանդություններ՝ անկախ հիվանդության վաղեմությունից և բուժման արդյունքներից) նշված է «**Վիրահատություններ (կյանքի ընթացքում որևէ օրգանի հեռացում** (ստամոքս, երիկամ, փայծաղ, արգանդ իր հավելումներով, ձեռք, ոտք, աչք և այլն)),

✓ 2-րդ կետի համաձայն՝ որպես դոնորությունը բացառող **ժամանակավոր հակացուցումներ** նշված է՝

- 2-րդ ենթակետ՝ **ատամի հեռացում՝ 10 օր ժամկետով**,
- 10-րդ ենթակետի «բ» պարբերություն՝ **դեղերի օգտագործում՝ ասպիրին՝ 5 օր ժամկետով**:

Analysis (A1. կանոնի բովանդակության բացահայտում՝ ըստ վերլուծողի բառապաշարի)

Վերը նշված իրավական հիմքերի վերլուծությունից բխում է, որ արյան դոնորն արյուն հանձնելուց առաջ անցնում է համապատասխան հետազոտում, և եթե հայտնաբերվում է **արյունատվության հակացուցում, ապա վերջինս չի կարող արյան դոնոր հանդես գալ:**

Արյունատվության հակացուցումները լինում են 2 տեսակի՝ բացարձակ և ժամանակավոր: **Բացարձակ հակացուցման դեպքում** անձը մշտապես զրկվում է արյան դոնոր հանդես գալու հնարավորությունից, իսկ **ժամանակավորի դեպքում** այն կրում է տևական, ժամանակավոր

բնույթ՝ պայմանավորված հակացուցման պատճառ դարձած արգելքի հաղթահարմամբ:

Analysis (A2. բացահայտված բովանդակության համադրում գործի փաստերի հետ)

Վերը նշվածը համադրելով գործի հանգամանքների հետ՝ ակնհայտ է, որ Սուրեն Սուրենյանն ունեցել է ինչպես **արյունատվության բացարձակ հակացուցում, այն է՝ երիկամի հեռացված լինելը**, այնպես էլ ***ժամանակավոր* հակացուցում՝ ատամի հեռացված և ասպիրինի օգտագործած լինելը:**

Ավելին՝ ժամանակավոր հակացուցման դեպքում՝ ասպիրինի օգտագործումից ընդամենը 5 օր հետո անձը կարող էր համարվել այդ հակացուցումը հաղթահարած, իսկ ատամի հեռացման դեպքում՝ 10 օր հետո: Սույն դեպքում Սուրեն Սուրենյանի ատամի հեռացումից անցել է 1 օր, իսկ ասպիրինի օգտագործումից հետո՝ մի քանի ժամ:

Conclusion

Հիմք ընդունելով վերը նշվածը՝ անհրաժեշտ է նշել, որ **բժշկական կենտրոնն իրավաչափ վարքագիծ է դրսևորել**՝ արգելելով Սուրեն Սուրենյանին արյան դոնոր լինել՝ պայմանավորված վերջինիս մոտ արյունատվության հակացուցման առկայությամբ:

ԴԻՏԱՐԿՈՒՄ

Ինչպես նկատեցինք, IRAC մեթոդով վերլուծությունն աչքի է ընկնում հարցադրման, իրավական վեճի հստակ սահմանմամբ, ինչն էլ երաշխավորում է **վերլուծությանն կոնկրետությունը**: Այստեղ իրավական հիմքերի թվարկումը աչքի է ընկնում **վերաբերելիության բարձր ցուցիչով**, այսինքն՝ վկայակոչել միայն այն հիմքերը և այնպես վկայակոչել, որն ուղղակիորեն առնչվում է խնդրին, իրավական վեճի լուծման միջոց է: Իրավական վերլուծություն կատարելու ընթացքում **մատչելի, հասանելի ներկայացվում, պարզաբանվում է** իրավական հիմքերի բովանդակությունը, որից հետո այն համադրվում է կոնկրետ գործով փաստերի հետ, իսկ ինչ վերաբերում է եզրահանգմանը, ապա անհրաժեշտ է նշել, որ այն պետք է լինի հարցադրման ուղղակի պատասխանը, ինչն էլ ապահովում է **մտքի տրամաբանական ավարտը:**

Նշենք, որ IRAC մեթոդով կատարված վերլուծությամբ աչքի են ընկնում ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումները, օրինակ՝ ***ՀՀ Վճռաբեկ դատարանի***՝ 2025 թվականի դեկտեմբերի 15-ի որոշում (**վարչական գործ** թիվ ՎԴ/7503/05/22), 2025 թվականի հոկտեմբերի 10-ի որոշում (**քաղաքացիական գործ** թիվ ԵԴ/42898/02/21), 2025 թվականի հուլիսի 11-ի որոշում (**քրեական գործ** թիվ ԵԴ/1157/01/19) և այլն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հարկ է նկատել, որ այսօր հասարակական, այդ թվում՝ իրավաբանական շփումները գնալով **բանավորից անցում են կատարում գրավորի,** որի վկայությունը մի շարք դատական ատյաններում **գործերի գրավոր քննության կարգի** կիրառումն է: Հետևաբար՝ գրագետ և համոզիչ փաստաթղթի, իրավական վերլուծության կատարումն արդյունավետության առաջին ցուցիչն է, հրամայականը:

«Իրավաբանական գրագրություն և վերլուծություն» առարկան հայաստանյան կրթական ծրագրերում նոր երևույթ լինելով հանդերձ հասցրել է **իր ուրույն տեղը գտնել դասավանդվող առարկաների ցանկում**: Այս առարկայի նպատակը ուսանողների մոտ **գրագետ փաստաթուղթ** կազմելու, **համոզիչ իրավական վերլուծություն** կատարելու հմտությունների զարգացումն է, հետևաբար՝ այն պետք է ուսումնասիրվի երկու հարթությամբ՝ **իրավաբանական գրագրության**, որը պաշտոնական՝ ներքին և արտաքին գրագրությունն է, և **իրավական վերլուծության** (օբյեկտիվ և սուբյեկտիվ իրավական վերլուծություն);

«Իրավաբանական գրագրություն և վերլուծություն» առարկայի դասավանդման ժամա-

նակ դասախոսի կողմից ուսանողին փոխանցվող տեսական գիտելիքի մակարդակը զրոյական պետք է լինի: Այն **գործնական պարապմունքների մեթոդով** պետք է անցկացվի, քանի որ ուղղված է ուսանողի մոտ պաշտոնական գրավոր փաստաթուղթ կազմելու, իրավական վերլուծություն կատարելու հմտությունների փոխանցմանը, զարգացմանը՝ շեշտադրվելով իրավակիրառ պրակտիկայի առանձնահատկությունները: Ավելին՝ դասընթացն արդյունավետ անցկացնելու համար անհրաժեշտ է հետևել վերը նշված **փուլերի հաջորդականությանը**, որոնք մեկ մյուսի տրամաբանական շարունակությունն են:

«Իրավաբանական գրագրություն և վերլուծություն» առարկայի դասավանդման ժամանակ դասախոսը պետք է անդրադառնա և հիմնավոր պատասխաններ ներկայացնի ուսանողների բարձրացրած բոլոր հարցերին: Բացի այդ, դասախոսը.

- ✓ պետք է պարզաբանի փաստաթղթին ներկայացվող **իրավական պահանջները, փաստաթղթի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները,**
- ✓ շեշտադրի **գրական հայերենով** կազմելու պարտադիրությունը, գրական հայերենով որոշակի բառերի կիրառության առանձնահատկությունները,
- ✓ ներկայացնի **պրակտիկայում հանդիպող սխալ և ճիշտ** գրության ձևերը, պարզաբանի դրանց էությունը, **հնարավոր ռիսկերը,**
- ✓ հնարավորության դեպքում ցուցադրի ամբողջական կազմած փաստաթղթերի նմուշներ՝ **իրական փաստաթղթեր,**
- ✓ ստուգի **բոլոր ուսանողների կատարած առաջադրանքները**, ընդ որում՝ յուրաքանչյուր ուսանողի աշխատանք ստուգի վերջինիս ներկայությամբ՝ ուսանողին հնարավորինս ներգրավելով իր իսկ աշխատանքի ստուգման գործընթացին: Այս դեպքում ուսանողն առավել մեծ և **իրական հետաքրքրություն կցուցաբերի,** քանի որ ուսանողը սովորում է իր սխալի վրա[16]: Սա նաև լավ մեթոդ է այն ուսանողների համար, որոնք լսարանում՝ այլ ուսանողների առաջ կաշկանդվում են *(օբյեկտիվ՝ օրինակ՝ խոսքի արագ, կամ սուբյեկտիվ՝ օրինակ՝ համոզիչ չթվալու, պատճառներով պայմանավորված)* իրենց տեսակետն արտահայտել:

Վերոնշյալի լույսի ներքո՝ անհրաժեշտ է արձանագրել, որ կարևոր է ոչ միայն ուսանողի հետաքրքրվածությունը, այլ նաև դասախոսի տեղին մեթոդաբանություն կիրառումը, որը կհանգեցնի դասընթացի նպատակների, վերջնարդյունքների իրականացմանը:

Ամփոփագիր: ««Իրավաբանական գրագրություն և վերլուծություն» առարկայի կառուցվածքի և դասավանդման առանձնահատկությունները (ուսումնամեթոդական աշխատանք)» թեմայով հոդվածում հեղինակը ներկայացրել է «Իրավաբանական գրագրություն և վերլուծություն» առարկայի նախապատմությունը, այդ առարկայի տարբեր անվանումները, կառուցվածքը, ըստ որի՝ կարևորվել է իրավաբանական գրագրության և իրավական վերլուծության բաժինները: Այդ առարկան հայաստանյան կրթական ծրագրերում նոր երևույթ լինելով հանդերձ հասցրել է իր ուրույն տեղը գտնել դասավանդվող առարկաների ցանկում: Այդ առարկայի նպատակը ուսանողների մոտ գրագետ փաստաթուղթ կազմելու, համոզիչ իրավական վերլուծություն կատարելու հմտությունների զարգացումն է: Հեղինակն իրավաբանական գրագրության բաժնի ուսումնասիրումն իրականացրել է 2 ենթաբաժնի՝ ներքին և արտաքին գրագրության, իրավական վերլուծությանը՝ կրկին 2 ենթաբաժնի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ իրավավերլուծության համատեքստում:

Հեղինակն անդրադարձել է առարկայի գործնական պարապմունքների ձևաչափով անցկացնելուն, ներկայացրել մեթոդաբանությունը, մեթոդական քայլերի հաջորդականությունը, անդրադարձել այդ քայլերի

[16] Սովորելու տեսանկյունից մեկ անգամ ինքնուրույն, թեկուզև բազմաթիվ սխալներով փաստաթուղթ կազմելն առավել օգտակար է, քան այլոց կազմած փաստաթղթերում որոշակի փոփոխություններ կատարելը և օգտագործելը կամ այլոց կազմած անթերի փաստաթղթերը մեխանիկորեն օգտագործելը:

արդյունավետությանը: Հեղինակը ներկայացրել է, թե ինչպես են IRAC մեթոդով իրավական վերլուծություն կատարում, անդրադարձել է այդ մեթոդով փաստաթուղթ կազմելու, իրավական վերլուծություն կատարելու առանձնահատկություններին: Միևնույն ժամանակ հեղինակն ուշադրություն է հրավիրել այն հանգամանքի վրա, որ իրավաբանական շփումները գնալով բանավորից անցում են կատարում գրավորի, որի վկայությունը մի շարք դատական ատյաններում գործերի գրավոր քննության կարգի կիրառումն է, հետևաբար՝ գրագետ և համոզիչ փաստաթղթի, իրավական վերլուծության կատարումն արդյունավետության առաջին ցուցիչն է, հրամայականը:

Annotation. In the article “Features of the structure and teaching of the subject "Legal Writing and Analysis" (educational and methodological work)” the author examined the background of the subject “Legal Writing and Analysis”, its various titles, and the structure according to which the sections of legal writing and legal analysis were emphasized. Despite being a new discipline in Armenian educational programs, this subject has managed to find its own place in the list of taught subjects. The goal of this subject is to develop the skills of students to compose a competent document and conduct a convincing legal analysis. The author studies the legal writing section through two subsections—internal and external writing—and the legal analysis section through two subsections—objective and subjective legal analysis.

The author touched upon the format of conducting the subject in practical classes, presented the methodology, the sequence of methodological steps, and evaluated their effectiveness. The author presented how legal analysis is performed using the IRAC method, examined the peculiarities of compiling a document using that method and performing legal analysis. At the same time, the author drew attention to the fact that legal communications are gradually transitioning from oral to written, as evidenced by the application of the written examination procedure in a number of judicial instances, therefore, the ability to prepare a competent and persuasive legal document and conduct effective legal analysis has become a key indicator of professional competence and an essential requirement of modern legal practice.

Аннотация. Работа посвящена особенностям структуры и преподавания учебной дисциплины «Юридическое письмо и анализ», направленной на формирование у студентов навыков составления юридических документов и проведения правового анализа. В работе рассматриваются предпосылки возникновения данной дисциплины в системе юридического образования, различные варианты её наименования и особенности построения курса, включающего два основных раздела — юридическое письмо и юридический анализ.

Особое внимание уделяется содержанию и методике преподавания каждого из указанных разделов. Юридическое письмо рассматривается с точки зрения двух его компонентов — внутреннего и внешнего письма, тогда как юридический анализ представлен в рамках объективного и субъективного подходов. Несмотря на относительную новизну дисциплины для армянских образовательных программ, она постепенно занимает устойчивое место в системе подготовки специалистов в области права.

В работе рассматриваются особенности организации практических занятий, последовательность методических этапов и применяемые методы обучения, а также оценивается их эффективность. Отдельное внимание уделяется использованию метода IRAC при проведении юридического анализа и его применению при подготовке юридических документов. На конкретных примерах показано, каким образом данный метод может использоваться в учебном процессе для формирования практических навыков студентов.

Актуальность преподавания дисциплины обусловлена также изменениями в современной правовой коммуникации, которая всё в большей степени приобретает письменный характер. В частности, об этом свидетельствует применение процедуры письменной экспертизы в ряде судебных инстанций. В этих условиях умение составлять грамотные, аргументированные и убедительные юридические документы, а также проводить качественный правовой анализ становится важной составляющей профессиональной компетентности юриста и одним из необходимых условий его эффективной практической деятельности.

Բանալի բառեր *- իրավաբանական գրագրություն, իրավական վերլուծություն, գործնական պարապմունք, մեթոդական քայլերի հաջորդականություն:*

Keywords: *legal writing, legal analysis, practical training, sequence of methodological steps.*

Ключевые слова: *юридическое письмо, правовой анализ, практическая подготовка, методика преподавания, метод IRAC, юридический документ, профессиональная компетентность.*

Օգտագործված գրականության ցանկ

Ա. Նորմատիվ-իրավական ակտեր

1. ՀՀ Սահմանադրություն
2. «Լեզվի մասին» ՀՀ օրենք
3. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք
4. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք
5. ՀՀ կառավարության՝ 2012 թվականի 13 արձանագրային որոշում

Բ. Տեսական գրականություն և էլեկտրոնային ռեսուրսներ

1. Ավետիսյան Յու., Մկրտչյան Ա., Սարգսյան Լ., Իրավաբանական գրագրության լեզուն, գիրք, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2019, 202 էջ
2. Գաբրիելյան Վ., Գրավոր խոսք, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2012, 295 էջ
3. Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ցուցումներ, Երևան, 2012, 216 էջ
4. Լեզվական կողմնացույց, ՀՀ ԿԳՄՄՆ լեզվի կոմիտե, Երևան, 2025, 142 էջ
5. Միրզոյան Լ., Կյանքի ուղեցույց, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2012, 344 էջ
6. Մոլիտերնո Ջ., Մելիքյան Ռ., Մելքոնյան Դ., Իրավաբանական գիր և վերլուծություն, ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2010, 320 էջ
7. Ռուսակովա Գ., Դասավանդման մեթոդիկա Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիրի դասախոսների համար, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2025
8. CDPP Legal Writing Style Guide, April 2024, (www.cdpp.gov.au/system/files/2024-12/CDPP%20Legal%20Writing%20Style%20Guide%20%28April%202024%29.pdf, վերջին մուտք՝ 01. 06.2026)

Գևորգյան Ա. - իրավաբանական գիտությունների թեկնածու, ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ավագ դասախոս, Ռուս-Հայկական համալսարանի ավագ դասախոս, էլհասցե՝ artak2020gevorgyan@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 09.02.2026 թ., տրվել է գրախոսության 09.02.2026 թ., երաշխավորվել է իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, վաստակավոր իրավաբան, Ռուս-հայկական համալսարանի իրավունքի ինստիտուտի իրավունքի տեսության եւ սահմանադրական իրավունքի ամբիոնի ղեկավար Ա. Ղամբարյանի կողմից, ընդունվել է տպագրության 01.10.2026 թ.:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CONSTITUTIONAL LAW/ КОНСТИТУЦИОННОЕ ПРАВО

https://doi.org/10.59546/18290744-2026.7-9-15

ԿԱՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ
Բարձրագույն դատական խորհրդի անդամ

KAREN TUMANYAN
Member of the Supreme Judicial Council

КАРЕН ТУМАНЯН
Член Высшего судебного совета
https://orcid.org/0009-0002-3231-4939

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

GLOBAL TRENDS IN THE CONSTITUTIONALISATION OF ENVIRONMENTAL PROTECTION IN THE CONTEXT OF THE MODERNISATION OF THE CONSTITUTIONAL LAW OF THE REPUBLIC OF ARMENIA

МИРОВЫЕ ТЕНДЕНЦИИ КОНСТИТУЦИОНАЛИЗАЦИИ ОХРАНЫ ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЫ В КОНТЕКСТЕ МОДЕРНИЗАЦИИ КОНСТИТУЦИОННОГО ПРАВА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Ներածություն

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է երեք փոխկապակցված գործոնով: Նախ՝ մոլորակային եռակի ճգնաժամը՝ կլիմայի փոփոխությունը, կենսաբազմազանության կորուստը և շրջակա միջավայրի աղտոտումը, վերածվել է սահմանադրական նշանակության մարտահրավերի, քանի որ այն անմիջականորեն վտանգում է մարդու կյանքի, առողջության և արժանապատիվ գոյության սահմանադրական երաշխիքների նյութական հիմքերը: Երկրորդ՝ միջազգային իրավունքում 2022–2025 թվականներին տեղի են ունեցել սկզբունքային տեղաշարժեր. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան 76/300 բանաձևով ճանաչել է մա-

քուր, առողջ և կայուն շրջակա միջավայրի իրավունքը որպես մարդու իրավունք[1], իսկ Արդարադատության միջազգային դատարանը 2025 թվականի խորհրդատվական կարծիքով հաստատել է պետությունների կլիմայական պարտավորությունների համապարփակ իրավական բնույթը[2]: Երրորդ՝ Հայաստանի Հանրապետությունում ընթացող սահմանադրական բարեփոխումների գործընթացը ստեղծում է իրական հնարավորություն՝ ազգային սահմանադրական մոդելը համապատասխանեցնելու համաշխարհային զարգացումների տրամաբանությանը: Այս պայմաններում գիտական գրականության մեջ բացակայում է Հայաստանի սահմանադրական մոդելի համակարգված տեղորոշումը շրջակա միջավայրի սահմանադրականացման համաշխարհային քարտեզի վրա, ինչը և կազմում է սույն հետազոտության հիմնախնդիրը:

Հետազոտության նպատակն է կառուցել շրջակա միջավայրի պաշտպանության սահմանադրականացման համաշխարհային քարտեզը և դրա հիման վրա գնահատել Հայաստանի Հանրապետության սահմանադրական մոդելը՝ հիմնավորելով սահմանադրական իրավունքի արդիականացման ուղղությունները: Նպատակին հասնելու համար լուծվում են հետևյալ խնդիրները. ա) բացահայտել շրջակա միջավայրի սահմանադրականացման հասկացության տեսական բովանդակությունը և առաջարկել հեղինակային սահմանում, բ) ներկայացնել սահմանադրականացման վիճակագրական պատկերը և պատմական պարբերացումը, գ) մշակել սահմանադրական մոդելների տիպաբանություն, դ) վերլուծել տարածաշրջանային առանձնահատկությունները և դատական սահմանադրականացման դոկտրինալ ներդրումը, ե) գնահատել ՀՀ սահմանադրական կարգավորումը միջազգային չափանիշների համեմատ և ձևակերպել բարեփոխումների առաջարկներ:

Մեթոդներ. Մեթոդաբանական հիմքը կազմում են համեմատահիրավական, պատմահրավական, դոկտրինալ, համակարգային-կառուցվածքային և վիճակագրական մեթոդները: Առանձնահատուկ նշանակություն ունի սահմանադրական քարտեզագրման (constitutional mapping) մեթոդը, որը ենթադրում է սահմանադրական տեքստերի համընդգրկուն նմուշի նորմատիվ բովանդակության կոդավորում՝ ըստ նախապես սահմանված չափանիշների (դրույթի առկայություն, նորմի տեսակ, սուբյեկտային կազմ, արդարադատելիություն), դրանց քանակական ամփոփում և տարածական-տարածաշրջանային բաշխման վերլուծություն[3]: Այս մեթոդի կիրառումը թույլ է տալիս անցնել առանձին երկրների օրինակների նկարագրությունից դեպի սահմանադրականացման՝ որպես համաշխարհային գործընթացի կառուցվածքային օրինաչափությունների բացահայտում, ինչում էլ դրսևորվում է հետազոտության մեթոդաբանական նորույթը:

Հիմնական հետազոտություն

Շրջակա միջավայրի սահմանադրականացման տեսական հիմքերը

Շրջակա միջավայրի սահմանադրականացման տեսական ընկալումը ձևավորվել է մի քանի փոխլրացնող հայեցակարգերի շրջանակում: Բնապահպանական սահմանադրականության (environmental constitutionalism) հայեցակարգը, որի համակարգված մշակումը կապված է Ջ. Մեյի և Է. Դեյլիի անվան հետ, սահմանադրականացումը դիտարկում է որպես բնապահ-

[1] UN General Assembly, Resolution 76/300, The human right to a clean, healthy and sustainable environment, A/RES/76/300, 28 July 2022.
[2] International Court of Justice, Obligations of States in respect of Climate Change, Advisory Opinion, 23 July 2025.
[3] Տես մեթոդի կիրառության մասին՝ May J. R., Daly E., Global Environmental Constitutionalism, Cambridge, Cambridge University Press, 2015, էջ 55–80:

պանական արժեքների, իրավունքների, պարտականությունների և ընթացակարգերի ներմուծում սահմանադրական մակարդակ՝ դրանց հաղորդելով գերակա իրավաբանական ուժ և դատական պաշտպանելիություն[4]: Այս մոտեցման առանցքը սահմանադրության՝ որպես բնապահպանական կառավարման բարձրագույն նորմատիվ շրջանակի գաղափարն է, որը սահմանափակում է ինչպես պետական իշխանության, այնպես էլ մասնավոր տնտեսական գործունեության հայեցողությունը:

Սահմանադրական բնապահպանական իրավունքների հայեցակարգը, որի էմպիրիկ հիմնավորումը տվել է Դ. Բոյդը, շեշտադրում է առողջ շրջակա միջավայրի սուբյեկտիվ իրավունքի սահմանադրական ամրագրման գործնական հետևանքները՝ բնապահպանական օրենսդրության ուժեղացում, դատական պաշտպանության ընդլայնում, բնապահպանական ցուցանիշների բարելավում[5]: «Կանաչ սահմանադրությունների» (green constitutions) եզրույթը բնութագրում է այն սահմանադրությունները, որոնցում բնապահպանական բաղադրիչը ներթափանցում է սահմանադրական կարգավորման բոլոր շերտերը՝ նախաբանից մինչև տնտեսական կարգի և տարածքային կառավարման դրույթներ: Իր հերթին, սահմանադրական էկոլոգիայի և գլոբալ բնապահպանական սահմանադրականության հայեցակարգերը, որոնց զարգացման գործում էական ներդրում ունի Լ. Կոտցեն, առաջարկում են անթրոպոցենի դարաշրջանում սահմանադրական իրավունքի էկոկենտրոն վերաիմաստավորում՝ սահմանադրական պաշտպանության օբյեկտ ճանաչելով ոչ միայն մարդու շահերը, այլև էկոհամակարգերի ամբողջականությունը[6]: Այս մոտեցումների ընդհանուր հայտարարն էկոլոգիական իրավական պետության՝ որպես իրավական պետության էվոլյուցիոն նոր փուլի գաղափարն է, որի շրջանակում կայունության սկզբունքը ճանաչվում է իրավակարգի հիմնարար նորմ[7]:

Ամփոփելով դոկտրինալ մոտեցումները և հաշվի առնելով դրանց հատվածական բնույթը՝ առաջարկում ենք հետևյալ հեղինակային սահմանումը. շրջակա միջավայրի սահմանադրականացումը սահմանադրական իրավունքի զարգացման այն գործընթացն է, որի արդյունքում շրջակա միջավայրի պահպանությունը միաժամանակ **չորս հարթություններում** ձեռք է բերում սահմանադրական նորմատիվ ուժ՝ **արժեքային** (որպես սահմանադրական կարգի հիմունքների բաղադրիչ և պետական նպատակ), **սուբյեկտիվ-իրավունքային** (որպես առողջ շրջակա միջավայրի հիմնարար իրավունք՝ նյութական և ընթացակարգային բովանդակությամբ), **պարտավորական** (որպես պետության պոզիտիվ և անհատի սահմանադրական պարտականությունների առարկա) և **ինստիտուցիոնալ** (որպես սահմանադրական մակարդակով երաշխավորված վերահսկողական և պաշտպանական կառուցակարգերի օբյեկտ): Այս քառաչափ մոդելի գիտական նշանակությունն այն է, որ սահմանադրականացման աստիճանը դառնում է չափելի. յուրաքանչյուր ազգային մոդել կարող է գնահատվել ըստ այն բանի, թե չորս հարթություններից քանիսում և ինչ խորությամբ է իրականացված սահմանադրական ամրագրումը: Հենց այս մոդելն է հետագա շարադրանքում ծառայում որպես համաշխարհային քարտեզի կառուցման և Հայաստանի Հանրապետության մոդելի գնահատման վերլուծական գործիք:

[4] *May J. R., Daly E.,* նշվ. աշխ., էջ 1–17:
[5] *Boyd D. R.,* The Environmental Rights Revolution: A Global Study of Constitutions, Human Rights, and the Environment, Vancouver, UBC Press, 2012, էջ 233–290:
[6] *Kotzé L. J.,* Global Environmental Constitutionalism in the Anthropocene, Oxford, Hart Publishing, 2016, էջ 129–178:
[7] *Bosselmann K.,* The Principle of Sustainability: Transforming Law and Governance, 2nd ed., London, Routledge, 2017, էջ 111–140:

Սահմանադրականացման համաշխարհային քարտեզը

Վիճակագրական պատկերը վկայում է, որ շրջակա միջավայրի սահմանադրականացումը վերջին կես դարում վերածվել է համաշխարհային սահմանադրաիրավական միտման: Եթե 1972 թվականի Ստոկհոլմի հռչակագրի ընդունման պահին բնապահպանական դրույթներ պարունակող սահմանադրությունները եզակի էին, ապա ներկայում աշխարհի սահմանադրությունների ավելի քան երեք քառորդը՝ շուրջ 150 պետություն[8], պարունակում է շրջակա միջավայրին վերաբերող որևէ սահմանադրական դրույթ, իսկ ավելի քան 110 պետության սահմանադրություն ուղղակիորեն ամրագրում է առողջ շրջակա միջավայրի իրավունքը[9]: ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի տվյալներով՝ իրավական ճանաչման որևէ ձև (սահմանադրական, օրենսդրական կամ միջազգային-պայմանագրային) առկա է ՄԱԿ-ի անդամ պետությունների ավելի քան 80 տոկոսում, ինչը 76/300 բանաձևի ընդունման հիմնական էմպիրիկ նախադրյալն էր:

Պատմական զարգացման տեսանկյունից առաջարկում ենք առանձնացնել սահմանադրականացման չորս ալիք: Առաջին՝ ստոկհոլմյան ալիքը (1972–1987 թթ.) բնութագրվում է առաջին սահմանադրական ամրագրումներով, որոնց թվում առանձնանում են Պորտուգալիայի 1976 թվականի Սահմանադրության 66-րդ հոդվածը՝ որպես առողջ և էկոլոգիապես հավասարակշռված միջավայրի սուբյեկտիվ իրավունքի առաջին ամբողջական ձևակերպումներից մեկը[10], Իսպանիայի 1978 թվականի Սահմանադրության 45-րդ հոդվածը և Հնդկաստանի Սահմանադրության 1976 թվականի 42-րդ փոփոխությամբ ներմուծված 48A և 51A(g) հոդվածները: Երկրորդ՝ ինստիտուցիոնալացման ալիքը (1988–2004 թթ.), որի ելակետը Ռիոյի 1992 թվականի հռչակագրին նախորդած Բրազիլիայի 1988 թվականի Սահմանադրությունն է և որն ամրապնդվել է Ռիոյից հետո, ընդգրկում է Բրազիլիայի 1988 թվականի Սահմանադրության 225-րդ հոդվածի համալիր կարգավորումը, հետսոցիալիստական պետությունների սահմանադրությունների բնապահպանական դրույթները և Հարավային Աֆրիկայի 1996 թվականի Սահմանադրության 24-րդ հոդվածը, որում իրավունքի ամրագրումը զուգակցվում է կայուն զարգացման և միջսերնդային շահերի հստակ ձևակերպման հետ[11]: Երրորդ՝ իրավունքահեն և էկոկենտրոն ալիքը (2005–2019 թթ.) նշանավորվում է Ֆրանսիայի Շրջակա միջավայրի խարտիայի սահմանադրական ուժով օժտմամբ, Էկվադորի 2008 թվականի և Բոլիվիայի 2009 թվականի սահմանադրություններով բնության իրավունքների ճանաչմամբ և Քենիայի 2010 թվականի Սահմանադրությամբ ընթացակարգային բնապահպանական իրավունքների մանրամասն ամրագրմամբ: Չորրորդ՝ կլիմայական ալիքը (2020 թվականից առ այսօր) դրսևորվում է կլիմայական պարտավորությունների և ապագա սերունդների շահերի սահմանադրական ամրագրմամբ, որի խորհրդանշական օրինակը Իտալիայի 2022 թվականի սահմանադրական բարեփոխումն է. 9-րդ և 41-րդ հոդվածների փոփոխությամբ շրջակա միջավայրի, կենսաբազմազանության և էկոհամակարգերի պաշտպանությունը, այդ թվում՝ ապագա սերունդների շահերից ելնելով, ամրագրվել է որպես հանրապետության հիմնարար սկզբունք և տնտեսական ազատության սահմանափակման հիմք[12]:

---

[8] UNEP, Environmental Rule of Law: First Global Report, Nairobi, United Nations Environment Programme, 2019. Տես նաև՝ Constitute Project, Environmental provisions in national constitutions (տվյալների բազա)

[9] *Boyd D. R.,* նշվ. աշխ., էջ 47–90 (2012 թ. դրությամբ տվյալներ); UNEP, Environmental Rule of Law: First Global Report, Nairobi, 2019;; UN Human Rights Council, Right to a healthy environment: good practices. Report of the Special Rapporteur on human rights and the environment, A/HRC/43/53, 30 December 2019, § 13:

[10] Constituição da República Portuguesa, 2 de abril de 1976, artigo 66.º:

[11] Constitution of the Republic of South Africa, 1996, section 24:

[12] Legge costituzionale 11 febbraio 2022, n. 1, Modifiche agli articoli 9 e 41 della Costituzione in materia di tutela

Համաշխարհային քարտեզի քանակական վերլուծությունը բացահայտում է երեք կառուցվածքային օրինաչափություն: Նախ՝ առկա է ընդգծված տարածաշրջանային անհամաչափություն. առողջ շրջակա միջավայրի սուբյեկտիվ իրավունքի սահմանադրական ամրագրումն առավել տարածված է Լատինական Ամերիկայում և Աֆրիկայում, մինչդեռ Արևմտյան Եվրոպայի մի շարք պետություններ և Հյուսիսային Ամերիկան դաշնային մակարդակում պահպանում են օբյեկտիվ-նպատակային կամ զուսպ մոդելը: Երկրորդ՝ նկատվում է նորմերի «խտացման» միտում. նոր կամ բարեփոխված սահմանադրություններում բնապահպանական կարգավորումը, որպես կանոն, ընդգրկում է միանգամից մի քանի հարթություն՝ իրավունք, պետական պարտականություն, անհատի պարտականություն և ընթացակարգային երաշխիքներ: Երրորդ՝ սահմանադրական տեքստի և իրավակիրառ պրակտիկայի միջև ճեղքվածքը մնում է սահմանադրականացման հիմնական խնդիրը. ամրագրման փաստը ինքնին չի ապահովում արդյունավետություն, ինչի հետևանքով ծանրության կենտրոնը տեղափոխվում է դատական սահմանադրականացման և ինստիտուցիոնալ երաշխիքների ոլորտ:

Համաշխարհային սահմանադրական մոդելները

Համեմատահիրավական վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել շրջակա միջավայրի սահմանադրական կարգավորման յոթ հիմնական մոդել, որոնք գործնականում հանդես են գալիս տարբեր համակցություններով:

Առաջին՝ պետական նպատակի մոդելը շրջակա միջավայրի պահպանությունն ամրագրում է որպես պետության օբյեկտիվ նպատակ-պարտականություն՝ առանց սուբյեկտիվ իրավունքի ձևակերպման: Դասական օրինակը Գերմանիայի Հիմնական օրենքի 20a հոդվածն է, որի ուժով պետությունը, պատասխանատվություն կրելով նաև ապագա սերունդների առջև, պաշտպանում է կյանքի բնական հիմքերը և կենդանիներին[13]: Գերմանիայի Դաշնային սահմանադրական դատարանը այս նորմը մեկնաբանել է որպես պետական նպատակի դրույթ (Staatszielbestimmung), մյուս սահմանադրական նորմերի մեկնաբանման սկզբունք և տնտեսական ազատությունների սահմանափակման իրավաչափ հիմք: Մոդելի ուժեղ կողմը իշխանության բոլոր ճյուղերի համընդգրկումն է, թույլ կողմը՝ անհատական դատական պաշտպանության սահմանափակությունը:

Երկրորդ՝ հիմնարար իրավունքի մոդելը առողջ շրջակա միջավայրում ապրելը ճանաչում է որպես յուրաքանչյուրի սուբյեկտիվ իրավունք: Ֆրանսիայի Շրջակա միջավայրի խարտիայի 1-ին հոդվածն ամրագրում է յուրաքանչյուրի իրավունքը՝ ապրելու հավասարակշռված և առողջությանը նպաստավոր միջավայրում[14], ընդ որում Սահմանադրական խորհուրդը շրջակա միջավայրի պաշտպանությունը ճանաչել է սահմանադրական արժեք ունեցող նպատակ, որը կարող է արդարացնել ձեռնարկատիրական ազատության սահմանափակումները[15]: Այս մոդելին են հարում նաև Պորտուգալիայի, Հարավային Աֆրիկայի, Բրազիլիայի և լատինաամերիկյան պետությունների մեծ մասի կարգավորումները:

Երրորդ՝ պետության դրական պարտականությունների մոդելը շեշտադրումը տեղափոխում է իրավունքի հռչակումից դեպի պետության կոնկրետ պոզիտիվ պարտավորությունների ամրագրում՝ կանխարգելում, վերահսկողություն, վերականգնում, տեղեկատվության ապահո-

dell'ambiente, Gazzetta Ufficiale n. 44, 22.02.2022:

[13] Grundgesetz für die Bundesrepublik Deutschland, Art. 20a (ներմուծվել է 27.10.1994 թ., փոփոխվել է 26.07.2002 թ.):

[14] Charte de l'environnement de 2004, Loi constitutionnelle n° 2005-205 du 1er mars 2005, article 1er:

[15] Conseil constitutionnel, décision n° 2019-823 QPC du 31 janvier 2020, Union des industries de la protection des plantes:

վում: Այս մոդելը զարգացած ձևով դրսևորվում է Քենիայի 2010 թվականի Սահմանադրության 69-րդ հոդվածում, որը սահմանում է պետության պարտավորությունների մանրամասն ցանկ՝ ներառյալ անտառածածկույթի նվազագույն մակարդակի պահանջը: Չորրորդ՝ քաղաքացիների բնապահպանական պարտականությունների մոդելը անհատին ճանաչում է շրջակա միջավայրի պահպանության սահմանադրական պարտականության սուբյեկտ. Ֆրանսիայի խարտիայի 2-րդ հոդվածը յուրաքանչյուրին պարտավորեցնում է մասնակցել շրջակա միջավայրի պահպանությանը և բարելավմանը, ինչը սահմանադրական մակարդակում իրավականացնում է հասարակական համերաշխության և կանխարգելիչ պատասխանատվության սկզբունքները:

Հինգերորդ՝ ապագա սերունդների պաշտպանության մոդելը միջսերնդային արդարությունը վերածում է ինքնուրույն սահմանադրական սկզբունքի. Նորվեգիայի Սահմանադրության 112-րդ հոդվածը բնական ռեսուրսների տնօրինումը պայմանավորում է նաև ապագա սերունդների իրավունքների պահպանմամբ[16], իսկ Հունգարիայի Հիմնարար օրենքի P) հոդվածը բնական ռեսուրսները հռչակում է ազգի ընդհանուր ժառանգություն, որի պահպանումը ապագա սերունդների համար պետության և յուրաքանչյուրի պարտականությունն է: Վեցերորդ՝ բնության իրավունքների մոդելը, որի հիմնադիր օրինակը Էկվադորի 2008 թվականի Սահմանադրության 71–74-րդ հոդվածներն են, բնությանը ճանաչում է իրավունքների ինքնուրույն սուբյեկտ՝ գոյության, կենսական ցիկլերի պահպանման և վերականգնման իրավունքներով[17]: Այս էկոկենտրոն մոդելը սահմանադրական մտածողության պարադիգմային տեղաշարժ է՝ անթրոպոցենտրիզմից դեպի էկոհամակարգային մոտեցում:

Յոթերորդ՝ ինստիտուցիոնալ մոդելը սահմանադրական կամ օրենսդրական մակարդակում ստեղծում է բնապահպանական շահերի պաշտպանության մասնագիտացված անկախ կառույցներ. Հունգարիայում գործում է Հիմնարար իրավունքների հանձնակատարի՝ ապագա սերունդների շահերի պաշտպանության գծով տեղակալի ինստիտուտը, Ուելսում՝ Ապագա սերունդների հանձնակատարը[18], մի շարք պետություններում՝ բնապահպանական մասնագիտացված դատարաններ և խորհուրդներ: Այս մոդելի նշանակությունն այն է, որ այն սահմանադրական արժեքի պաշտպանությունը դարձնում է կազմակերպականորեն երաշխավորված՝ չեզոքացնելով կարգավորման «գերևարման» (regulatory capture) և կարճաժամկետ քաղաքական ցիկլերի ռիսկերը: Յոթ մոդելների համադրական վերլուծությունը ցույց է տալիս, որ սահմանադրականացման արդյունավետությունն առավելագույնն է այն համակարգերում, որտեղ օբյեկտիվ-նպատակային նորմը զուգակցվում է սուբյեկտիվ իրավունքի, ընթացակարգային երաշխիքների և ինստիտուցիոնալ կառուցակարգերի հետ, այսինքն՝ իրականացված են հեղինակային քառաչափ մոդելի բոլոր հարթությունները:

Տարածաշրջանային սահմանադրական քարտեզը

Եվրոպայում գերիշխում է օբյեկտիվ-նպատակային և իրավունքահեն մոդելների համադրությունը: Գերմանական պետական նպատակի մոդելին և ֆրանսիական խարտիային զուգահեռ՝ Պորտուգալիան, Իսպանիան, Հունաստանը և Արևելյան Եվրոպայի պետությունների մեծ մասը սահմանադրական մակարդակում ամրագրել են բնապահպանական իրավունքներ կամ սկզբունքներ, իսկ Իտալիայի 2022 թվականի բարեփոխումը եվրոպական քարտեզի վրա ձևավորել է կլիմայական ալիքի չափորոշիչ օրինակ: Եվրոպական առանձնահատկու-

[16] Kongeriket Norges Grunnlov, 17. mai 1814, § 112 (2014 թ. խմբագրությամբ):
[17] Constitución de la República del Ecuador, 2008, artículos 71–74:
[18] Well-being of Future Generations (Wales) Act 2015, sections 17–25:

թյունն այն է, որ ազգային կարգավորումների պակասը փոխհատուցվում է վերազգային շերտով՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 2-րդ և 8-րդ հոդվածների բնապահպանական մեկնաբանությամբ և Օրհուսի կոնվենցիայի ընթացակարգային երաշխիքներով[19]:

Լատինական Ամերիկան սահմանադրականացման ամենաառադիկալ տարածաշրջանն է. Բրազիլիայի 225-րդ հոդվածի համալիր մոդելից մինչև Էկվադորի և Բոլիվիայի էկոկենտրոն կարգավորումներ, Կոլումբիայի սահմանադրական դատարանի ակտիվ պրակտիկա և Չիլիի 1980 թվականի Սահմանադրության 19-րդ հոդվածի 8-րդ կետով՝ աղտոտումից զերծ միջավայրում ապրելու իրավունքի ամրագրում: Տարածաշրջանի զարգացումն ամրապնդվում է Էսկասուի համաձայնագրով՝ ընթացակարգային իրավունքների և բնապահպանների պաշտպանության պարտադիր չափանիշներով[20]: Աֆրիկայում առանցքային են Հարավային Աֆրիկայի 24-րդ հոդվածը և Քենիայի 2010 թվականի Սահմանադրության 42-րդ, 69-րդ և 70-րդ հոդվածների համակարգը, որը իրավունքի ամրագրումը զուգակցում է դատական պաշտպանության դյուրացված կանոններով՝ ներառյալ հանրային շահի հայցի (actio popularis) հնարավորությունը[21]:

Ասիական երկրներում սահմանադրականացման գործընթացը հիմնականում զարգանում է երկու ուղղությամբ. մի կողմից՝ ուղղակի սահմանադրական ամրագրումներ (Հարավային Կորեայի Սահմանադրության 35-րդ հոդված, Նեպալի 2015 թվականի Սահմանադրության 30-րդ հոդված), մյուս կողմից՝ սահմանադրականացումն է դատական մեկնաբանության միջոցով: Դրա վառ օրինակը Հնդկաստանն է, որտեղ կյանքի իրավունքի ընդլայնված մեկնաբանությամբ առողջ շրջակա միջավայրում ապրելու իրավունքը ճանաչվել է որպես դատական պաշտպանության ենթակա իրավունք:

Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում սահմանադրական կարգավորումը համեմատաբար զուսպ է (Պապուա Նոր Գվինեայի սահմանադրական նպատակները, Ֆիջիի 2013 թվականի Սահմանադրության 40-րդ հոդվածը)[22], սակայն տարածաշրջանը առաջատար է բնության իրավական սուբյեկտության օրենսդրական ճանաչման հարցում, ինչի վկայությունը Նոր Զելանդիայում Վանգանուի գետին իրավաբանական անձի կարգավիճակ շնորհելն է[23]: Հյուսիսային Ամերիկայում դաշնային սահմանադրական կարգավորման բացակայությունը փոխհատուցվում է նահանգային մակարդակով. ԱՄՆ Փենսիլվանիա նահանգի Սահմանադրության I բաժնի 27-րդ հոդվածը (1971 թ.), ԱՄՆ Մոնտանա նահանգի 1972 թվականի Սահմանադրության դրույթները և ԱՄՆ Մասաչուսեթս նահանգի 1972 թվականի Սահմանադրության դրույթները և ԱՄՆ Նյու Յորք նահանգի 2021 թվականի «կանաչ ուղղումը» ձևավորում են տարածքային բնապահպանական սահմանադրականության ինքնուրույն շերտ[24]:

---

[19] Convention on Access to Information, Public Participation in Decision-making and Access to Justice in Environmental Matters, Aarhus, 25 June 1998, 2161 UNTS 447 (ՄԱԿ ԵՏՀ):

[20] Regional Agreement on Access to Information, Public Participation and Justice in Environmental Matters in Latin America and the Caribbean (Escazú Agreement), 4 March 2018:

[21] Constitution of Kenya, 2010, articles 42, 69–70:

[22] Constitución Política de la República de Chile, 1980, artículo 19 N° 8; Constitution of the Republic of Fiji, 2013, section 40; Constitution of Nepal, 2015, article 30; Constitution of the Republic of Korea, 1987, article 35; Constitution of the Independent State of Papua New Guinea, 1975, National Goals and Directive Principles, No. 4:

[23] Te Awa Tupua (Whanganui River Claims Settlement) Act 2017 (New Zealand):

[24] Constitution of Pennsylvania, Article I, § 27; Constitution of Montana, Article II, § 3, Article IX, § 1; Constitution of New York, Article I, § 19 (2021):

Դատական սահմանադրականացումը

Դատական սահմանադրականացումը սահմանադրական տեքստի և իրավակիրառ իրականության միջև ճեղքվածքի հաղթահարման հիմնական կառուցակարգն է. հենց դատարաններն են բնապահպանական դրույթները վերածում գործող իրավունքի՝ ձևավորելով դոկտրինալ նոր կատեգորիաներ: Համաշխարհային պրակտիկայում առանձնանում են մի քանի ուղենշային որոշումներ:

Եվրոպական տարածաշրջանում դատական սահմանադրականացումն ընթացել է ածանցյալ պաշտպանության ուղով. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, չունենալով շրջակա միջավայրի ինքնուրույն իրավունքի նորմ, բնապահպանական պաշտպանությունը զարգացրել է Կոնվենցիայի 2-րդ և 8-րդ հոդվածների միջոցով՝ Օներյըլդըզի, Ֆադեևայի, Տատարի և Կորդելլայի գործերով ձևակերպելով պետության պոզիտիվ պարտավորությունների, կանխարգելման և տեղեկացման չափանիշները: Այս մոդելը ցույց է տալիս, որ սահմանադրական տեքստի բացը կարող է մասնակիորեն լրացվել վերազգային դատական մեկնաբանությամբ, սակայն չի փոխարինում ազգային սահմանադրական ամրագրմանը:

Գերմանիայի Դաշնային սահմանադրական դատարանի Նոյբաուերը և այլք (Neubauer et al.) գործով որոշումը (2021 թ.) ձևավորել է ազատության միջժամանակային երաշխավորման դոկտրինը. օրենսդիրը, արտանետումների կրճատման բեռը անհամաչափորեն տեղափոխելով 2030 թվականից հետո ընկած ժամանակահատված, նախապես սահմանափակում է ապագա սերունդների հիմնարար ազատությունները, ինչը հակասում է Հիմնական օրենքի 20a հոդվածին[25]: Նիդեռլանդների Գերագույն դատարանի Urgenda որոշումը (2019 թ.) Կոնվենցիայի 2-րդ և 8-րդ հոդվածներից բխեցրել է պետության որակապես նոր պարտավորություն՝ ապահովելու արտանետումների կրճատման կոնկրետ նվազագույն չեմ[26], իսկ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատի **«Կլիմայի տարեց կանանց շվեյցարական միությունը և այլք ընդդեմ Շվեյցարիայի» (Verein KlimaSeniorinnen Schweiz and Others v. Switzerland)** գործով վճիռը (2024 թ.) կլիմայական անգործությունը ճանաչել է 8-րդ հոդվածով նախատեսված պոզիտիվ պարտավորությունների խախտում՝ միաժամանակ արձանագրելով 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում՝ դատարանի մատչելիության իրավունքի մերժման հիմքով, և ընդլայնելով միավորումների հայցային իրավունակությունը կլիմայական գործերով[27]:

Ամերիկյան ներպետական մակարդակում Հելդն ընդդեմ Մոնտանա նահանգի (Held v. State of Montana) գործով Մոնտանայի դատարանները՝ առաջին ատյանի 2023 թվականի օգոստոսի 14-ի վճռով և նահանգի Գերագույն դատարանի 2024 թվականի դեկտեմբերի 18-ի որոշմամբ, արձանագրել են, որ մաքուր և առողջարար միջավայրի սահմանադրական իրավունքը ներառում է կայուն կլիմայական համակարգը, և հակասահմանադրական են ճանաչել կլիմայական ազդեցության գնահատումն արգելող օրենսդրական դրույթները[28]: Գլոբալ հարավի պրակտիկայում Կոլումբիայի Գերագույն դատարանը (Corte Suprema de Justicia) Ապագա սերունդներն ընդդեմ Շրջակա միջավայրի նախարարության և այլոց (Future Generations v. Ministry of the Environment and Others) գործով պաշտպանել է ապագա սերունդների հայ-

[25] BVerfG, Beschluss des Ersten Senats vom 24. März 2021, 1 BvR 2656/18 u.a. (Klimaschutz), Rn. 182–193:
[26] Hoge Raad, 20 december 2019, Staat der Nederlanden t. Stichting Urgenda, ECLI:NL:HR:2019:2006:
[27] Verein KlimaSeniorinnen Schweiz and Others v. Switzerland [GC], no. 53600/20, ECtHR, 9 April 2024, §§ 519–560, 614–640:
[28] Held v. State of Montana, Montana First Judicial District Court, 14 August 2023; հաստատվել է՝ Montana Supreme Court, 2024 MT 312, 18 December 2024:

ցային շահը[29], Լահորի բարձր դատարանը Լեղարիի (Leghari) գործով կլիմայական քաղաքականության չկատարումը գնահատել է հիմնարար իրավունքների խախտում՝ ստեղծելով դատական վերահսկողության մշտական կառուցակարգ[30], իսկ Հնդկաստանի Գերագույն դատարանը **Սուբհաշ Կումարն ընդդեմ Բիհար նահանգի (Subhash Kumar v. State of Bihar) և Մ. Ք. Մեհտան ընդդեմ Հնդկաստանի միության (M.C. Mehta v. Union of India)** գործերի շարքով կյանքի իրավունքից բխեցրել է աղտոտումից զերծ ջրի և օդի իրավունքը և ձևավորել բացարձակ պատասխանատվության դոկտրինը վտանգավոր գործունեության համար[31]:

Դատական սահմանադրականացման համադրական վերլուծությունը թույլ է տալիս ձևակերպել երեք դոկտրինալ եզրահանգում: Նախ՝ դատարանները սահմանադրական բնապահպանական նորմերին հաղորդում են արդարադատելիություն նույնիսկ այն դեպքերում, երբ սահմանադրական տեքստը ձևակերպված է որպես օբյեկտիվ նպատակ: Երկրորդ՝ ձևավորվում է ապագա սերունդների շահերի դատական ներկայացուցչության ինստիտուտը՝ հայցային իրավունակության ավանդական կանոնների ճկունացմամբ: Երրորդ՝ ապացուցման բեռի վերաբաշխումը հօգուտ դիմումատուների և կանխարգելման ու նախազգուշացման սկզբունքների կիրառումը դատական պրակտիկան վերածում են սահմանադրականացման ինքնուրույն, երբեմն՝ առաջանցիկ ուղու:

Շրջակա միջավայրի սահմանադրականացման արդի միտումները (2020–2025 թթ.)

Արդի փուլում սահմանադրականացման գործընթացը դուրս է եկել ներպետական շրջանակներից և զարգանում է նաև միջազգային ու տարածաշրջանային մակարդակներում: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 76/300 բանաձևը (2022 թ. հուլիսի 28), ընդունված 161 կողմ ձայնով, մաքուր, առողջ և կայուն շրջակա միջավայրի իրավունքը ճանաչել է որպես մարդու իրավունք՝ ձևավորելով ազգային սահմանադրական բարեփոխումների համընդհանուր ուղենիշ: Թեև բանաձևը ձևականորեն պարտադիր ուժ չունի, դրա նորմատիվ ազդեցությունը դրսևորվում է որպես սովորութային իրավունքի ձևավորման և սահմանադրական մեկնաբանության հեղինակավոր աղբյուր: Որակապես նոր փուլ է նշանավորում Արդարադատության միջազգային դատարանի 2025 թվականի հուլիսի 23-ի խորհրդատվական կարծիքը, որով Դատարանը միաձայն հաստատել է, որ կլիմայի պաշտպանության ոլորտում պետությունների պարտավորությունները բխում են ոչ միայն կլիմայական պայմանագրերից, այլև միջազգային սովորութային իրավունքից (վնասի կանխարգելման և պատշաճ ջանասիրության պարտականություններ) և մարդու իրավունքների միջազգային իրավունքից, իսկ դրանց խախտումը հանգեցնում է միջազգային պատասխանատվության՝ ներառյալ լիարժեք հատուցման պարտականությունը[32]: Դատարանը միաժամանակ արձանագրել է, որ մաքուր, առողջ և կայուն շրջակա միջավայրը մարդու իրավունքների իրացման էական նախապայման է, ինչը միջազգային մակարդակում ամրապնդում է իրավունքի ինքնուրույն ճանաչման տրամաբանությունը:

Զուգահեռաբար՝ Ծովային իրավունքի միջազգային տրիբունալը 2024 թվականի խորհրդատվական կարծիքով՝ ջերմոցային գազերի արտանետումները որակել է ծովային միջավայրի աղտոտում՝ ՄԱԿ-ի Ծովային իրավունքի կոնվենցիայի իմաստով[33], իսկ Մարդու

[29] Corte Suprema de Justicia de Colombia, STC4360-2018, 5 de abril de 2018:
[30] Leghari v. Federation of Pakistan, Lahore High Court, W.P. No. 25501/2015, orders of 4 and 14 September 2015:
[31] Subhash Kumar v. State of Bihar, AIR 1991 SC 420; M.C. Mehta v. Union of India, AIR 1987 SC 1086:
[32] ICJ, Obligations of States in respect of Climate Change, Advisory Opinion, 23 July 2025:
[33] ITLOS, Request for an Advisory Opinion submitted by the Commission of Small Island States on Climate Change and International Law, Advisory Opinion, 21 May 2024, Case No. 31:

իրավունքների միջամերիկյան դատարանը 2025 թվականի խորհրդատվական կարծիքով՝ զարգացրել է կլիմայական արտակարգ իրավիճակի պայմաններում պետությունների ուժեղացված պարտավորությունների դոկտրինը[34]: Այս զարգացումների համակցությունն արտացոլում է կլիմայական սահմանադրականության (climate constitutionalism) ձևավորումը՝ որպես սահմանադրականացման չորրորդ ալիքի դոկտրինալ առանցք. կլիմայական կայունությունը ճանաչվում է սահմանադրական պաշտպանության ինքնուրույն օբյեկտ, միջսերնդային արդարությունը՝ արդարադատելի սկզբունք, իսկ ազգային սահմանադրական դատարանները՝ կլիմայական պարտավորությունների կատարման երաշխավոր: Ազգային մակարդակում նույն միտումը դրսևորվում է կենսաբազմազանության և էկոհամակարգերի սահմանադրական ամրագրմամբ, էկոցիդի քրեականացման նախաձեռնություններով և բնության իրավունքների ճանաչման ընդլայնվող աշխարհագրությամբ:

Հայաստանի Հանրապետության տեղը համաշխարհային քարտեզում

Հայաստանի Հանրապետության գործող սահմանադրական մոդելի առանցքը Սահմանադրության 12-րդ հոդվածն է, որի ուժով պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունը ապագա սերունդների առջև, իսկ յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին[35]: Հեղինակային քառաչափ մոդելի տեսանկյունից այս կարգավորումն ամբողջությամբ իրականացնում է արժեքային հարթությունը (պետական նպատակ՝ սահմանադրական կարգի հիմունքների բաժնում), մասնակիորեն՝ պարտավորական հարթությունը (անհատի պարտականություն՝ առանց պետության պոզիտիվ պարտավորությունների մասնավորեցման), և չի իրականացնում սուբյեկտիվ-իրավունքային ու ինստիտուցիոնալ հարթությունները: Հատկանշական է, որ 2005 թվականի խմբագրության 33.2-րդ հոդվածն ամրագրում էր յուրաքանչյուրի իրավունքը՝ ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, ինչպես նաև պաշտոնատար անձանց պատասխանատվությունը բնապահպանական տեղեկատվությունը թաքցնելու համար. 2015 թվականի սահմանադրական բարեփոխմամբ այդ դրույթը չվերապահվեց, ինչի հետևանքով ազգային մոդելը, համաշխարհային իրավունքահեն միտմանը հակառակ, սուբյեկտիվ իրավունքի մակարդակից հետընթաց ապրեց դեպի զուտ օբյեկտիվ-նպատակային կարգավորում:

Միջազգային չափանիշների հետ համեմատությունն ամփոփված է ստորև բերվող գնահատման մատրիցայում, որը ՀՀ մոդելը դիտարկում է սահմանադրականացման ութ առանցքային չափանիշների կտրվածքով:

Ընթացակարգային իրավունքների սահմանադրականացման անհրաժեշտությունը հաստատվում է նաև Օրհուսի կոնվենցիայի Համապատասխանության կոմիտեի՝ Հայաստանի վերաբերյալ եզրահանգումներով (ACCC/C/2004/8 և ACCC/C/2009/43), որոնցով արձանագրվել են հանրության մասնակցության և արդարադատության մատչելիության ապահովման խնդիրներ: Այս հանգամանքը ցույց է տալիս, որ ընդհանուր սահմանադրական նորմերի միջոցով բնապահպանական ընթացակարգային երաշխիքների ապահովումը գործնականում բավարար չէ:

[34] Corte Interamericana de Derechos Humanos, Opinión Consultiva OC-32/25, Emergencia climática y derechos humanos, 2025:
[35] ՀՀ Սահմանադրություն (2015 թ. փոփոխություններով), հոդված 12:

Աղյուսակ 1. ՀՀ սահմանադրական մոդելի գնահատման մատրիցա

Չափանիշ	Համեմատական չափորոշիչ	ՀՀ կարգավիճակ
Պետական նպատակի նորմ	ԳԴՀ ՀՕ 20a հոդված	Առկա է (12-րդ հոդված)
Առողջ շրջակա միջավայրի սուբյեկտիվ իրավունք	110-ից ավելի սահմանադրություն, ՄԱԿ ԳԱ 76/300	Բացակայում է (2005 թ. 33.2-րդ հոդվածը չի վերապահվել)
Ընթացակարգային իրավունքներ (տեղեկատվություն, մասնակցություն, արդարադատության մատչելիություն)	Օրհուսի կոնվենցիա, Քենիա 2010 թ.	Մասնակի (ընդհանուր նորմերով, առանց բնապահպանական մասնավորեցման)
Միջսերնդային արդարություն	Նորվեգիա § 112, Իտալիա 2022 թ.	Առկա է որպես նպատակ, ոչ որպես արդարադատելի սկզբունք
Կլիմայական պարտավորություններ	Կլիմայական սահմանադրականության ալիք (2020–2025 թթ.)	Բացակայում է
Անհատի բնապահպանական պարտականություն	Ֆրանսիայի խարտիա, 2-րդ հոդված	Առկա է (12-րդ հոդվածի 2-րդ մաս)
Ինստիտուցիոնալ երաշխիք (անկախ մարմին)	Հունգարիա (սահմանադրական՝ Հիմնարար օրենքի P) հոդված), Ուելս (օրենսդրական՝ 2015 թ. ակտ)	Բացակայում է
Կենսաբազմազանության և էկոհամակարգերի ամրագրում	Իտալիա 2022 թ., Էկվադոր 2008 թ.	Բացակայում է

Հետազոտության շրջանակում մշակված առաջարկությունները ներկայացվել են ՀՀ սահմանադրական բարեփոխումների խորհրդին՝ նոր Սահմանադրության նախագծի մշակման աշխատանքների շրջանակում քննարկելու նպատակով[36]:

Դրանից բխում են սահմանադրական իրավունքի արդիականացման հետևյալ ուղղությունները, որոնք հեղինակի կողմից ներկայացվել են նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրական խորհրդին ուղղված առաջարկությունների տեսքով: Առաջին՝ Սահմանադրության 12-րդ հոդվածի նոր խմբագրություն՝ պաշտպանության օբյեկտների շարքում ուղղակիորեն ներառելով կենսաբազմազանությունը և էկոհամակարգերը, ինչպես նաև կլիմայի կայունությունը՝ Իտալիայի 2022 թվականի բարեփոխման օրինակով: Երկրորդ՝ առողջ և անվտանգ շրջակա միջավայրում ապրելու հիմնարար իրավունքի ամրագրում հիմնական իրավունքների գլխում (առաջարկվող 31.1-րդ հոդված)՝ վերականգնելով և արդիականացնելով 2005 թվականի կարգավորման տրամաբանությունը և ապահովելով արդարադատությունը, այդ թվում՝ սահմանադրական դատարան անհատական դիմումի կարգով: Երրորդ՝ ընթացակարգային բնապահպանական երաշխիքների սահմանադրականացում՝ բնապահպանական տեղեկատվության մատչելիության և որոշումների կայացմանը հանրության մասնակցության իրավունքների ամրագրմամբ (առաջարկվող լրացում 51-րդ հոդվածում)՝ Օրհուսի կոնվեն-

[36] ՀՀ վարչապետի 27.01.2022 թ. N 111-Ա որոշումը՝ «Սահմանադրական բարեփոխումների խորհուրդ ձևավորելու, խորհրդի անհատական կազմը և գործունեության կարգը հաստատելու և ՀՀ վարչապետի 2020 թվականի փետրվարի 12-ի N 181-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»: Առաջարկությունները Խորհրդին ներկայացվել են 30.01.2026 թ. թիվ 6678 գրությամբ:

ցիայի պահանջներին համահունչ[37]: Չորրորդ՝ միջսերնդային արդարության սկզբունքի վերածում պետական քաղաքականության արդարադատելի ուղենիշի (առաջարկվող լրացում 86-րդ հոդվածում): Հինգերորդ՝ շրջակա միջավայրի պահպանության անկախ խորհրդի՝ որպես ինքնավար մարմնի սահմանադրական կարգավիճակի ամրագրում (առաջարկվող լրացում 122-րդ հոդվածում)՝ համեմատական հինգ արտասահմանյան մոդելների (Միացյալ Թագավորություն, Գերմանիա, Ֆրանսիա, Նիդերլանդներ, Նոր Զելանդիա) հիման վրա մշակված հիբրիդային կառուցակարգով: Այս հնգաստիճան բարեփոխումը ՀՀ մոդելը կտեղափոխի քառաչափ սահմանադրականացման ամբողջական իրականացման դաշտ՝ ապահովելով նաև Հայաստանի միջազգային պարտավորությունների (Օրհուսի կոնվենցիա, Փարիզյան համաձայնագիր) սահմանադրական հենքը:

Եզրակացություններ

Իրականացված հետազոտությունը թույլ է տալիս եզրակացնել: Առաջին՝ շրջակա միջավայրի սահմանադրականացումը դարձել է համաշխարհային սահմանադրաիրավական միտում. բնապահպանական դրույթներ պարունակում է աշխարհի սահմանադրությունների ավելի քան երեք քառորդը, իսկ առողջ շրջակա միջավայրի իրավունքը ամրագրված է ավելի քան 110 պետության սահմանադրությունում: Սահմանադրականացումը զարգացել է չորս հաջորդական ալիքներով՝ ստոկհոլմյան, ինստիտուցիոնալացման, իրավունքահեն-էկոկենտրոն և կլիմայական, ընդ որում յուրաքանչյուր հաջորդ ալիք ընդլայնել է սահմանադրական պաշտպանության օբյեկտային և սուբյեկտային շրջանակը:

Երկրորդ՝ ձևավորվել են սահմանադրական կարգավորման յոթ հիմնական մոդելներ՝ պետական նպատակի, հիմնարար իրավունքի, պետության դրական պարտականությունների, քաղաքացիների պարտականությունների, ապագա սերունդների պաշտպանության, բնության իրավունքների և ինստիտուցիոնալ մոդելները, որոնց արդյունավետությունն առավելագույնն է համակցված կիրառման դեպքում: Հեղինակային քառաչափ (արժեքային, սուբյեկտիվ-իրավունքային, պարտավորական, ինստիտուցիոնալ) մոդելը թույլ է տալիս սահմանադրականացման աստիճանը դարձնել չափելի և համադրելի:

Երրորդ՝ ժամանակակից փուլում առաջնային նշանակություն ունեն կլիմայական սահմանադրականությունը, միջսերնդային արդարությունը և դատական սահմանադրականացումը. Neubauer, Urgenda, KlimaSeniorinnen, Held v. Montana և գլոբալ հարավի ուղենշային որոշումները սահմանադրական բնապահպանական նորմերին հաղորդում են արդարադատելիություն և ձևավորում ապագա սերունդների շահերի իրավական ներկայացուցչության դոկտրինը: Չորրորդ՝ միջազգային և տարածաշրջանային իրավունքը (ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 76/300 բանաձևը, Արդարադատության միջազգային դատարանի 2025 թվականի խորհրդատվական կարծիքը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Ծովային իրավունքի միջազգային տրիբունալի և Մարդու իրավունքների միջամերիկյան դատարանի ակտերը) էական ազդեցություն է թողնում ազգային սահմանադրական համակարգերի զարգացման վրա՝ ձևավորելով սահմանադրականացման վերազգային չափում:

Հինգերորդ՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական մոդելը համապատասխանում է եվրոպական դասական՝ պետական նպատակի մոդելին, սակայն 2015 թվականի բարեփոխմամբ սուբյեկտիվ իրավունքի կարգավորումից հրաժարումը ազգային մոդելը հե-

[37] Օրհուսի կոնվենցիայի կատարման հայաստանյան խնդիրների մասին տե՛ս Aarhus Convention Compliance Committee, findings ACCC/C/2004/8 and ACCC/C/2009/43 (Armenia):

ռացրել է համաշխարհային իրավունքահեն միտումից: Սահմանադրական իրավունքի արդիականացումը պահանջում է առողջ շրջակա միջավայրի հիմնարար իրավունքի, կլիմայական և կենսաբազմազանության պարտավորությունների, ընթացակարգային բնապահպանական իրավունքների և անկախ ինստիտուցիոնալ երաշխիքների առավել ամբողջական սահմանադրական ամրագրում՝ սույն հոդվածում հիմնավորված հնգաստիճան բարեփոխումների ծրագրի շրջանակում: Դրա իրականացումը Հայաստանի Հանրապետությանը համաշխարհային քարտեզի ծայրամասային դիրքից կտեղափոխի սահմանադրականացման չորրորդ ալիքի առաջատար պետությունների շարք:

Հետազոտության սահմանափակումները պայմանավորված են սահմանադրական տեքստերի կոդավորման տարրական սուբյեկտիվությամբ և վիճակագրական տվյալների դինամիկ բնույթով. սահմանադրական բարեփոխումների ընթացիկ գործընթացները կարող են փոփոխել ներկայացված քանակական պատկերը, ինչը պահանջում է քարտեզի պարբերական թարմացում:

Ամփոփագիր: Հոդվածը նվիրված է շրջակա միջավայրի պաշտպանության սահմանադրականացման համաշխարհային միտումների համեմատաիրավական ուսումնասիրությանը և Հայաստանի Հանրապետության սահմանադրական մոդելի գնահատմանը: Հետազոտության նպատակն է կառուցել շրջակա միջավայրի սահմանադրականացման համաշխարհային քարտեզը, բացահայտել դրա հիմնական մոդելները, պատմական զարգացման փուլերը և դատական պրակտիկայի ազդեցությունը, ինչպես նաև հիմնավորել Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքի արդիականացման ուղղությունները: Ուսումնասիրությունը հիմնված է համեմատաիրավական, պատմաիրավական, դոկտրինալ, վիճակագրական և սահմանադրական քարտեզագրման (constitutional mapping) մեթոդների վրա: Հեղինակն առաջարկում է շրջակա միջավայրի սահմանադրականացման քառաչափ (արժեքային, սուբյեկտիվ-իրավունքային, պարտավորական և ինստիտուցիոնալ) հասկացական մոդել, սահմանադրականացման չորս ալիքների պարբերացում և յոթ սահմանադրական մոդելների տիպաբանություն: Հիմնավորվում է, որ Հայաստանի Հանրապետության գործող սահմանադրական կարգավորումը համապատասխանում է եվրոպական դասական՝ պետական նպատակի մոդելին, սակայն չի արտացոլում սահմանադրականացման արդի՝ իրավունքահեն և կլիմայական չափումները: Առաջարկվում են սահմանադրական բարեփոխումների կոնկրետ ուղղություններ՝ առողջ շրջակա միջավայրի հիմնարար իրավունքի, միջսերնդային արդարության, ընթացակարգային բնապահպանական երաշխիքների և անկախ ինստիտուցիոնալ վերահսկողության սահմանադրական ամրագրման տեսքով:

Annotation. The article offers a comparative legal study of the global trends in the constitutionalisation of environmental protection and an assessment of the constitutional model of the Republic of Armenia. Its purpose is to construct a global map of environmental constitutionalisation, to identify its principal models, historical stages and the influence of judicial practice, and on that basis to substantiate the directions for modernising Armenian constitutional law. The study relies on comparative, historical, doctrinal and statistical methods, as well as on constitutional mapping, which involves coding the normative content of a comprehensive sample of constitutional texts according to predefined criteria.

The author proposes a four-dimensional conceptual model of environmental constitutionalisation — axiological, subjective-rights, obligational and institutional — a periodisation of the process into four waves (Stockholm, post-Rio, rights-based and ecocentric, and climate), and a typology of seven constitutional models: state objective, fundamental right, positive obligations of the state, citizens' environmental duties, protection of future generations, rights of nature, and the institutional model. More than three quarters of the world's constitutions now contain environmental provisions, and over 110 states enshrine the right to a healthy environment. Particular attention is

paid to judicial constitutionalisation — Neubauer, Urgenda, KlimaSeniorinnen, Held v. Montana and the landmark rulings of the Global South — which render constitutional environmental norms justiciable and develop the doctrine of legal representation of future generations.

The article demonstrates that the current constitutional regulation of the Republic of Armenia corresponds to the classical European state-objective model (Article 12 of the Constitution) but does not reflect the contemporary rights-based and climate dimensions of constitutionalisation, not least because the right enshrined in Article 33.2 of the 2005 Constitution was not retained in 2015. Concrete reform proposals are formulated: the entrenchment of a fundamental right to a safe and healthy environment, of intergenerational justice, of procedural environmental guarantees, and of independent institutional oversight.

Аннотация. Статья посвящена сравнительно-правовому исследованию мировых тенденций конституционализации охраны окружающей среды и оценке конституционной модели Республики Армения. Цель исследования заключается в построении мировой карты конституционализации охраны окружающей среды, выявлении её основных моделей, исторических этапов развития и влияния судебной практики, а также в обосновании направлений модернизации конституционного права Республики Армения. Исследование опирается на сравнительно-правовой, историко-правовой, доктринальный и статистический методы, а также метод конституционного картографирования (constitutional mapping).

Автор предлагает четырёхмерную концептуальную модель конституционализации охраны окружающей среды, охватывающую ценностное, субъективно-правовое, обязательственное и институциональное измерения, периодизацию данного процесса по четырём волнам (стокгольмская, постриоская, правозащитно-экоцентричная и климатическая), а также типологию семи конституционных моделей. Показано, что более трёх четвертей конституций мира содержат экологические положения, а более 110 государств закрепляют право на здоровую окружающую среду. Особое внимание уделено судебной конституционализации: решениям по делам *Neubauer*, *Urgenda*, *KlimaSeniorinnen*, *Held v. Montana*, а также практике судов Глобального Юга, которые придают конституционным экологическим нормам судебную защищаемость и формируют доктрину представительства интересов будущих поколений.

Обосновывается, что действующее конституционное регулирование Республики Армения соответствует европейской классической модели государственной цели (статья 12 Конституции), однако не отражает современных — правозащитного и климатического — измерений конституционализации, в том числе вследствие отказа в 2015 году от положения статьи 33.2 Конституции в редакции 2005 года. Предлагаются конкретные направления конституционной реформы: закрепление фундаментального права на безопасную и здоровую окружающую среду, принципа межпоколенческой справедливости, процессуальных экологических гарантий и независимого институционального контроля.

Բանալի բառեր *- շրջակա միջավայրի սահմանադրականացում, բնապահպանական սահմանադրականություն, առողջ շրջակա միջավայրի իրավունք, միջսերնդային արդարություն, կլիմայական սահմանադրականություն, սահմանադրական քարտեզագրում, ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդված:*

Keywords: *environmental constitutionalisation, environmental constitutionalism, right to a healthy environment, intergenerational justice, climate constitutionalism, constitutional mapping, positive obligations of the state, Article 12 of the Constitution of the Republic of Armenia.*

Ключевые слова: *конституционализация окружающей среды, экологический конституционализм, право на здоровую окружающую среду, межпоколенческая справедливость, климатический конституционализм, конституционное картографирование, позитивные обязательства государства, статья 12 Конституции Республики Армения.*

Օգտագործված աղբյուրների ցանկ[38]

I. Միջազգային իրավական ակտեր և միջազգային կազմակերպությունների փաստաթղթեր

1. Convention on Access to Information, Public Participation in Decision-making and Access to Justice in Environmental Matters (Aarhus Convention), Aarhus, 25 June 1998, 2161 UNTS 447 (UNECE).
2. Regional Agreement on Access to Information, Public Participation and Justice in Environmental Matters in Latin America and the Caribbean (Escazú Agreement), Escazú, 4 March 2018.
3. UN General Assembly, Resolution 76/300, The human right to a clean, healthy and sustainable environment, A/RES/76/300, 28 July 2022.
4. UN Human Rights Council, Right to a healthy environment: good practices. Report of the Special Rapporteur on the issue of human rights obligations relating to the enjoyment of a safe, clean, healthy and sustainable environment, A/HRC/43/53, 30 December 2019.
5. UNEP, Environmental Rule of Law: First Global Report, Nairobi, United Nations Environment Programme, 2019.
6. Constitute Project, Environmental provisions in national constitutions:

II. Հայաստանի Հանրապետության իրավական ակտեր

7. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ընդունվել է 1995 թ. հուլիսի 5-ին, փոփոխություններով՝ 2005 թ. նոյեմբերի 27-ի և 2015 թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեներով, հոդված 12:
8. Իսկոյան Ա. Բ., Գեղամյան Օ. Մ., Գրիգորյան Հ. Ս., Հայաստանի Հանրապետության էկոլոգիական իրավունք. Ընդհանուր մաս, խմբ.՝ Վ. Վ. Հովհաննիսյան, Երևան; Շրջակա միջավայրի պահպանության իրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում. գիտագործնական հետազոտություն, ընդ-հ. խմբ.՝ Գ. Դանիելյանի, Երևան, «Հայրապետ», 2015:

III. Օտարերկրյա պետությունների սահմանադրություններ և օրենսդրական ակտեր

9. Constituição da República Portuguesa, 2 de abril de 1976, artigo 66.º.
10. Constitution of the Republic of South Africa, 1996, section 24.
11. Legge costituzionale 11 febbraio 2022, n. 1, Modifiche agli articoli 9 e 41 della Costituzione in materia di tutela dell'ambiente, Gazzetta Ufficiale n. 44, 22.02.2022.
12. Grundgesetz für die Bundesrepublik Deutschland vom 23. Mai 1949, Art. 20a (eingefügt 27.10.1994, geändert 26.07.2002).
13. Charte de l'environnement de 2004, Loi constitutionnelle n° 2005-205 du 1er mars 2005, article 1er.
14. Kongeriket Norges Grunnlov, 17. mai 1814, § 112 (2014 թ. խմբագրությամբ, նախկին § 110b, 1992 թ.).
15. Constitución de la República del Ecuador, 2008, artículos 71–74.
16. Constitution of Kenya, 2010, articles 42, 69–70.
17. Te Awa Tupua (Whanganui River Claims Settlement) Act 2017, Public Act 2017 No. 7 (New Zealand).
18. Well-being of Future Generations (Wales) Act 2015, sections 17–25.
19. Constitution of the Commonwealth of Pennsylvania, Article I, § 27 (1971).
20. Constitution of the State of Montana, Article II, § 3 and Article IX, § 1 (1972).
21. Constitution of the State of New York, Article I, § 19 (2021).

IV. Միջազգային և ազգային դատական ու կվազիդատական ակտեր

22. International Court of Justice, Obligations of States in respect of Climate Change, Advisory Opinion, 23 July 2025.

[38] Ցանկը կազմվել է հոդվածի 34 ծանոթագրությունների հիման վրա: Աղբյուրները ներկայացված են բնագիր լեզվով, խմբավորված են ըստ տեսակների, համարակալումը՝ շարունակական:

23. International Tribunal for the Law of the Sea, Request for an Advisory Opinion submitted by the Commission of Small Island States on Climate Change and International Law, Case No. 31, Advisory Opinion of 21 May 2024.

24. Corte Interamericana de Derechos Humanos, Opinión Consultiva OC-32/25, Emergencia climática y derechos humanos, 2025.

25. Verein KlimaSeniorinnen Schweiz and Others v. Switzerland [GC], no. 53600/20, ECtHR, judgment of 9 April 2024.

26. BVerfG, Beschluss des Ersten Senats vom 24. März 2021, 1 BvR 2656/18 u.a. (Klimaschutz), Rn. 182–193.

27. Hoge Raad der Nederlanden, 20 december 2019, Staat der Nederlanden t. Stichting Urgenda, ECLI:NL:HR:2019:2006.

28. Held v. State of Montana, Montana First Judicial District Court, judgment of 14 August 2023; affirmed: Montana Supreme Court, 2024 MT 312, 18 December 2024.

29. Corte Suprema de Justicia de Colombia, STC4360-2018, 5 de abril de 2018 (Future Generations v. Ministry of the Environment and Others).

30. Asghar Leghari v. Federation of Pakistan, Lahore High Court, W.P. No. 25501/2015, orders of 4 and 14 September 2015.

31. Subhash Kumar v. State of Bihar, AIR 1991 SC 420 (Supreme Court of India).

32. M.C. Mehta v. Union of India, AIR 1987 SC 1086 (Supreme Court of India).

33. Conseil constitutionnel, décision n° 2019-823 QPC du 31 janvier 2020, Union des industries de la protection des plantes.

34. Aarhus Convention Compliance Committee, findings ACCC/C/2004/8 (Armenia) and ACCC/C/2009/43 (Armenia).

V. Գիտական գրականություն

32. May J. R., Daly E., Global Environmental Constitutionalism, Cambridge, Cambridge University Press, 2015.

33. Boyd D. R., The Environmental Rights Revolution: A Global Study of Constitutions, Human Rights, and the Environment, Vancouver, UBC Press, 2012.

34. Kotzé L. J., Global Environmental Constitutionalism in the Anthropocene, Oxford, Hart Publishing, 2016.

35. Bosselmann K., The Principle of Sustainability: Transforming Law and Governance, 2nd ed., London, Routledge, 2017.

Թումանյան Կ. - Բարձրագույն դատական խորհրդի անդամ, էլհասցե՝ kartumanyan@yahoo.com:

Ներկայացվել է խմբագրություն 20.08.2026 թ., տրվել է գրախոսության 20.08.2026 թ., երաշխավորվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ, ՀՀ վաստակավոր իրավաբան, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ. Թադևոսյանի կողմից, ընդունվել է տպագրության 01.10.2026 թ.:

https://doi.org/10.59546/18290744-2026.7-9-31

ԵՓՐԵՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամ
Հայաստանի Հանրապետության
պետական կառավարման ակադեմիայի հայցորդ

YEPREM KARAPETYAN
Member of the Corruption Prevention Commission
Applicant at the Public Administration Academy of the Republic of Armenia

ЕПРЕМ КАРАПЕТЯН
Член Комиссии по предупреждению коррупции
Академия государственного управления
Республики Армения, соискатель
https://orcid.org/0009-0009-0777-9954

ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

INCOMPATIBILITY REQUIREMENTS AND OTHER RESTRICTIONS IN THE PUBLIC SERVICE SYSTEM

ТРЕБОВАНИЯ НЕСОВМЕСТИМОСТИ И ДРУГИЕ ОГРАНИЧЕНИЯ В СИСТЕМЕ ГОСУДАРСТВЕННОЙ СЛУЖБЫ

Ներածություն

Ներպետական օրենսդրական համակարգում բարեվարքության համակարգի տարրերից են անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների վերաբերյալ կարգավորումները: Սույն կարգավորումները, ուղղված լինելով հավասարակշռելու հանրային իշխանության մարմիններում պաշտոնատար անձանց հանրային և մասնավոր շահերը, պարունակում են քաղաքացիների առանձին կատեգորիաների՝ պաշտոնատար անձանց, հիմնական իրավունքների ու ազատությունների որոշակի սահմանափակումներ, ինչպես նաև վերջիններիս համար նախատեսում են նախատեսված իրավիճակներում դրսևորել համապատասխան վարքագիծ:

Վերոգրյալի հաշվառմամբ, կարևոր է օրենսդրական մակարդակում ունենալ պաշտոնատար անձանց անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների այնպիսի կառուցակարգեր, որոնք պիտանի և անհրաժեշտ կլինեն հետապնդվող նպատակներին հաս-

նելու տեսանկյունից:

Սույն հոդվածի շրջանակում քննարկման առարկա են դարձել վերոգրյալ ինստիտուտների առկա բացերը և բացերի հաղթահարման հնարավոր ուղիները:

Հիմնական հետազոտություն

Հայաստանի Հանրապետությունում պաշտոնատար անձանց համար նախատեսված անհամատեղելիության պահանջները և այլ սահմանափակումները կարգավորվում են «Հանրային ծառայության մասին» օրենքի[1] և այլ իրավական ակտերի շրջանակում: Քննարկվող սահմանափակումները ներառված են բարեվարքության համակարգի տարրերի շրջանակներում և ուղղված են պաշտոնատար անձանց հանրային ու մասնավոր շահերի միջև հավասարակշռության ապահովմանը:

Այս սահմանափակումների և անհամատեղելիության պահանջների վերաբերյալ առավել ամբողջական պատկերացում կազմելու նպատակով անհրաժեշտ է դրանք քննարկել առանձին:

Պաշտոնատար անձանց համար անհամատեղելիության պահանջներ նախատեսվում են մի շարք իրավական ակտերի շրջանակներում՝ հաշվի առնելով պաշտոնի առանձնահատկությունները: Մասնավորապես՝ անհամատեղելիության պահանջներ ամրագրված են Սահմանադրությամբ[2] և այլ օրենքներով, օրինակ՝ «Դատախազության մասին» օրենքով[3], «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով[4] և այլ իրավական ակտերով: Անհամատեղելիության պահանջի ընդհանուր բնորոշումը տրվում է «Հանրային ծառայության մասին» օրենքով (այսուհետ նաև՝ Օրենք) և եթե այլ իրավական ակտերով չեն սահմանվում առանձնահատկություններ ապա կիրառելի են Օրենքի դրույթները:

Օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Պաշտոնում նշանակվելուց (ընտրվելուց) հետո՝ մեկ ամսվա ընթացքում, պաշտոնատար անձինք պարտավոր են ապահովել նշված պահանջների կատարումը:

Սույն հոդվածով սահմանվում է, թե որ գործունեությունն է համարվում ձեռնարկատիրական և որը՝ ոչ, նկարագրվում է գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքի շրջանակը, ինչպես նաև սահմանվում է պաշտոնատար անձի կողմից կազմակերպություններում ունեցած բաժնեմասնակցության՝ հավատարմագրային կառավարման հանձնելու ընթացակարգը:

Նշվածից պարզ է դառնում, որ օրենսդրությունն անհամատեղելիության պահանջների վերաբերյալ դրույթները տարածում է հանրային ծառայության բոլոր տեսակների, ինչպես նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վրա: Այսինքն, նույնիսկ այն պարագայում, երբ հանրային ծառայողը չի զբաղեցնում ղեկավար պաշտոն և նրա կողմից այլ աշխատանքների իրականացումն ունի ցածր ռիսկայնություն, միևնույն է օրենսդիրը վճարովի այլ աշխատանքների իրականացումը չի թույլատրում:

[1] Ընդունվել է 2018 թվականի մարտի 23-ին: Տես ՀՀՏՊ 2018.03.29/24(1382):
[2] Ընդունվել է 2015 թվականի դեկտեմբերի 6-ին: Տես ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 111, Հոդ. 95:
[3] Ընդունվել է 2017 թվականի նոյեմբերի 17-ին: Տես ՀՀՊՏ 2017.12.13/74(1349) Հոդ. 1213, Հոդ. 49:
[4] Ընդունվել է 2018 թվականի փետրվարի 7-ին: Տես ՀՀՊՏ 2018.02.12/10(1368) Հոդ. 143, Հոդ. 5:

Մինչդեռ միջազգային փորձի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ մի շարք երկրներ որդեգրել են այլ մոտեցում:

Մասնավորապես, Լատվիայի «Պաշտոնատար անձանց գործունեությունում շահերի բախման կանխարգելման մասին» օրենքով[5] սահմանվում է, որ պաշտոնատար անձանց թույլատրվում է զուգակցել զբաղեցրած պաշտոնը այլ վճարովի աշխատանքի կամ ձեռնարկատիրական գործունեության հետ, եթե այլ իրավական ակտերով տվյալ խումբ պաշտոնների համար առավել խիստ կարգավորումներ նախատեսված չեն և դա չի հանգեցնի շահերի բախման կամ չի վտանգի հանրային իշխանության հեղինակությունը: Ընդ որում, Լատվիայում քննարկվող ընդհանուր կանոնից բացառություն են նախատեսված մի շարք բարձրաստիճան պաշտոնատար անձանց համար, ինչպիսիք են վարչապետը, փոխվարչապետները, նախարարները, Սեյմի անդամները, Կենտրոնական բանկի նախագահը, Կենտրոնական բանկի խորհրդի անդամները, անկախ և ինքնավար մարմինների անդամները և այլ պետական բարձրաստիճան պաշտոն զբաղեցնող անձինք: Վերջիններիս համար գործում է անհամատեղելիության պահանջների առավել խիստ կարգավորումներ և հիմնականում արգելված է այլ վճարովի աշխատանքների իրականացումը: Այլ վճարովի աշխատանքների իրականացման կամ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար պաշտոնատար անձին իրավասու մարմինը կամ պաշտոնատար անձը տրամադրում է թույլտվություն, իսկ թույլտվության տրամադրումը կարող է մերժվել եթե աշխատանքների համատեղումը կառաջացնի շահերի բախում, կվնասի տվյալ հանրային իշխանության կամ Լատվիայի Հանրապետության հեղինակությանը:

Անհամատեղելիության պահանջների նկատմամբ նմանատիպ մոտեցում են դրսևորել նաև Էստոնիան[6], Լիտվան[7], Շվեդիան[8], Գերմանիան[9], Հոլանդիան[10] և մի շարք այլ Եվրոպական երկրներ: Այս երկրներում զբաղեցրած պաշտոնին զուգահեռ այլ աշխատանքների իրականացումը հիմնականում իրականացվում է հետևյալ միաժամանակյա պայմանների առկայությամբ.

1. չի թույլատրվում պաշտոնին զուգահեռ այլ աշխատանքի իրականացումը, եթե պաշտոնատար անձի մոտ նման դեպքում կառաջանա շահերի բախման իրավիճակ, կամ այլ եղանակով կասկածի տակ կդրվի հանրային իշխանության հեղինակությունը,
2. այլ աշխատանք իրականացնելու նպատակով պաշտոնատար անձը պետք է դիմի իրավասու մարմնի կամ անձի, որը, քննարկելով դիմումը, կտրամադրի թույլտվություն երկրորդ աշխատանքի իրականացման համար: Ընդ որում, երկրորդ աշխատանքի իրականացումը կմերժվի, եթե առկա է վերը նշված կետով նկարագրված ռիսկերի առաջացման հավանականությունը,
3. առկա են ավելի խիստ կարգավորումներ բարձրաստիճան պաշտոններ զբաղեցնող

[5] Տես Legal acts of the republic of Latvia "On Prevention of Conflict of Interest in Activities of Public Officials" 25.04.2002. https://likumi.lv/ta/en/en/id/61913-on-prevention-of-conflict-of-interest-in-activities-of-public-officials (25.05.2026):

[6] Տես Riigikogu "Anti-corruption Act" 06.06.2012 https://www.riigiteataja.ee/en/eli/ee/519122023003/consolide (25.05.2026):

[7] Տես "The Republic of Lithuania Balance of Public and Private Interests" law https://www.infolex.lt/teise/DocumentSinglePart.aspx?AktoId=543029&StrNr=1 (25.05.2026):

[8] Տես Kingdom of Sweden "Public Employment Act" (1994:260) https://www.riksdagen.se/sv/dokument-och-lagar/dokument/svensk-forfattningssamling/lag-1994260-om-offentlig-anstallning_sfs-1994-260/ (25.05.2026):

[9] Տես Federal Republic of Germany "Federal Civil Service Act" https://www.gesetze-im-internet.de/bbg_2009/BJNR016010009.html#BJNR016010009BJNG001200000 (25.05.2026):

[10] Տես The Kingdom of the Netherlands "Civil Service Act" 2017 https://wetten.overheid.nl/BWBR0001947/2022-08-01?g=2023-02-18&z=2023-02-18 (25.05.2026):

անձանց համար:

Քննարկվող երկրների փորձի ուսումնասիրությունը, ինչպես նաև Հայաստանի համատեքստը հաշվի առնելով՝ ներպետական մակարդակում ևս հնարավոր է անհամատեղելիության պահանջների առավել ճկուն համակարգի ներդրումը: Առաջարկվում է քննարկել անհամատեղելիության պահանջների վերաբերյալ տարբերակված մոտեցման հնարավորությունը պաշտոնատար անձանց առկա դասակարգման համատեքստում: Մասնավորապես՝ նպատակահարմար է հիմք ընդունել Օրենքի 3-րդ հոդվածով հանրային ծառայության պաշտոնների տարանջատումը: Ըստ այս կարգավորումների՝ հանրային ծառայությունը հանրային իշխանության մարմիններին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացումն է, որն ընդգրկում է պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը և հանրային պաշտոնները: Ընդ որում, հանրային ծառայությունը (պետական ծառայություն և համայնքային ծառայություն) մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական մարմիններին վերապահված լիազորությունների իրականացմանը: Ի տարբերություն հանրային ծառայության՝ հանրային պաշտոնները դրանք ընտրովի կամ նշանակովի պաշտոններ են, որոնք զբաղեցվում են քաղաքական գործընթացների, հայեցողական որոշումների, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ ընթացակարգերի արդյունքով: Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից է, որ կայացվում է պետական և տեղական իշխանության մարմինների ղեկավարման և կառավարմանն ուղղված որոշումներ:

Նման պայմաններում առավել նպատակահարմար է մասնագիտական գործունեությունն ապահովող հանրային ծառայողներին հնարավորություն տրամադրել իրականացնելու այլ վճարովի աշխատանք կամ զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ, եթե, բնականաբար, վերջիններիս կողմից իրականացվող գործունեությունը չի հանգեցնի շահերի բախման առաջացման իրավիճակների կամ չի վնասի հանրային իշխանության հեղինակությունը:

Ինչ վերաբերում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, ապա առավել նպատակահարմար է վերջիններիս անհամատեղելիության պահանջների խստությունը դիտարկել՝ ըստ քաղաքական, հայեցողական, վարչական և ինքնավար պաշտոնների առանձնահատկությունների: Ընդ որում, միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քաղաքական և ինքնավար պաշտոնների համար կիրառվում են ամենախիստ անհամատեղելիության պահանջները, որը բնական է՝ հաշվի առնելով որոշումների շրջանակը, որը կայացվում է տվյալ պաշտոնատար անձանց կողմից:

Հայաստանի պարագայում, հաշվի առնելով պաշտոնից բխող լիազորությունների շրջանակը, առաջարկվում է քաղաքական, ինքնավար և վարչական պաշտոնների[11] նկատմամբ կիրառել անհամատեղելիության խիստ պահանջներ, այն է՝ Օրենքի ներկայիս 31-րդ հոդվածի առաջին մասի կարգավորումները, իսկ հայեցողական պաշտոնների նկատմամբ կարող է կիրառելի լինել նույն մոտեցումն ինչ հանրային ծառայողների պարագայում է՝ հաշվի առնելով որ հայեցողական պաշտոն զբաղեցնող անձինք ինքնուրույն կերպով որոշումների կայացման լիազորություն չունեն[12]:

[11] Վարչական պաշտոնը հանրային իշխանության մարմիններում նշանակովի պաշտոն է, որն զբաղեցնող պաշտոնատար անձն ապահովում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով տվյալ մարմնին վերապահված լիազորությունների արդյունավետ իրականացումը և պատասխանատվություն է կրում իր պաշտոնից բխող նպատակների և խնդիրների իրականացման համար:

[12] Հայեցողական պաշտոնը նշանակովի պաշտոն է, որն զբաղեցնող անձն իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում կատարում է իր անմիջական ղեկավարի հանձնարարականները և պատասխանատվություն է

Միաժամանակ, 2022 թվականի դեկտեմբերի 7-ին իրականացված օրենսդրական փոփոխություններով վերանայվեցին անհամատեղելիության պահանջների վերաբերյալ առկա օրենսդրական կարգավորումները: Իրականացված օրենսդրական փոփոխությունների արդյունքում բարելավումներին զուգահեռ նաև մնացին որոշակի բացեր:

Մասնավորապես, նախատեսվեց որ պաշտոնատար անձինք առևտրային կազմակերպությունում իրենց մասնակցությունը (բաժնեմաս, բաժնետոմս, փայ) պետք է մեկ ամսվա ընթացքում հանձնեն հավատարմագրային կառավարման, սակայն պայմանով, որ հավատարմագրային կառավարիչ չեն կարող հանդիսանալ պաշտոն զբաղեցնող անձի հետ փոխկապակցված անձինք: Ընդ որում, սույն հոդվածի շրջանակներում փոխկապակցված անձինք են հանդիսանում պաշտոն զբաղեցնող անձի ամուսինը, պաշտոն զբաղեցնող անձի կամ նրա ամուսնու զավակը ծնողը, քույրը, եղբայրը: Հարկ է նշել, որ անհամատեղելիության պահանջների շրջանակներում փոխկապակցված անձանց շրջանակը նեղ է տրված, մասնավորապես, անհամատեղելիության պահանջների շրջանակներում փոխկապակցված անձինք չեն հանդիսանում պաշտոն զբաղեցնող անձի հետ ազգակցական և ոչ ազգակցական սերտ անձնական հարաբերություններ ունեցող անձինք, համատեղ բնակվող անձինք ինչպես նաև այն իրավաբանական անձինք, որոնց կանոնադրական կապիտալի կամ փայաբաժնի կեսից ավելին ուղղակիորեն կամ անուղղակիորեն տնօրինվում են պաշտոնատար անձի կողմից կամ տվյալ կազմակերպության որոշումները կարող են կանխորոշվել, կամ տվյալ կազմակերպությանը կարող են պարտադիր կատարման հանձնարարականներ տրամադրվել պաշտոնատար անձի կողմից: Նշվածից բխում է, որ պաշտոնատար անձինք կարող են առևտրային կազմակերպություններում իրենց մասնակցությունը հանձնել հավատարմագրային կառավարման վերոգրյալ անձանց, ինչն ըստ էության խնդրահարույց է, քանի որ գործող կարգավորումների շրջանակներում փոխկապակցվածության բացակայության պահանջը կրում է ձևական բնույթ և պաշտոնատար անձը կարող է շարունակել մասնակցել ձեռնարկատիրական գործունեությանը: Մասնավորապես, չկա որևէ արգելող դրույթ, կազմակերպություններում մասնակցությունը հանձնել համատեղ բնակվող կամ մերձավոր այլ անձանց, ինչպես նաև այն կազմակերպություններին, որոնց գործունեությունը, ըստ էության, կառավարվում է պաշտոնատար անձի կողմից: Ընդ որում, հարկ է նշել, որ վերոգրյալ փոփոխությունների իրականացումը հետապնդել է, այսպես կոչված, «կույր կառավարման» կառուցակարգի ներդրման նպատակ: Այս մեթոդի ընտրությունը պայմանավորված էր նաև միջազգային կառույցների կողմից առաջարկված ընդունելի հավատարմագրային կառավարման մոդելների համատեքստում[13]:

Այս մեթոդի ամենակարևոր պայմաններից մեկը թերևս կառավարման հիմնադրի և հավատարմագրային կառավարչի միջև փոխկապակցվածության և միասնական շահի բացակայությունն է: Մյուս կարևոր պայմանն այն է, որ հավատարմագրային կառավարման հիմնադիրը չպետք է որևէ կերպով միջամտի հավատարմագրային կառավարման գործընթացին: Այս մեխանիզմը կիրառվում է Կանադայում, Ուկրաինայում, ԱՄՆ-ում, Խորվաթիայում[14], Սերբիայում և այլ երկրներում:

Կանադայում պաշտոնատար անձանց հավատարմագրային կառավարման հետ կապ-

կրում այդ հանձնարարականների կատարման համար:

[13] Տես Managing Conflict of Interest in the Public Sector A toolkit" OECD 2005, էջ 19, 103: https://www.oecd.org/gov/ethics/49107986.pdf (25.05.2026):

[14] Տես World Bank Group ''Managing Conflict of Interest in the Public Sector", Hong Duc publishing house, էջ 123, http://documents.worldbank.org/curated/en/580601478253123042/pdf/AUS11340-WP-p153692-PUBLIC-ConflictofinterestEN.pdf (25.05.2026):

ված հարաբերությունները կարգավորվում են «Շահերի բախման մասին» ակտով[15]: Սույն ակտի համաձայն՝ հավատարմագրային կառավարման հիմնադիրը և կառավարիչը չպետք է ունենան մերձավոր կամ ազգակցական կապեր: Պաշտոնատար անձի ամուսինը, նրանից որոշակի կախվածություն ունեցող անձինք, բարեկամները և ընկերները չեն կարող հանդես գալ որպես կառավարիչներ: Հիմնադիրը չպետք է ունենա կառավարման կամ վերահսկողության որևէ լծակ հավատարմագրային կառավարման հանձնված ակտիվների նկատմամբ:

Ուկրաինայում պաշտոնատար անձի անհամատեղելիության պահանջների, այդ թվում՝ հավատարմագրային կառավարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Կոռուպցիայի կանխարգելման մասին»[16] օրենքով: Օրենքի 36-րդ հոդվածով սահմանվում են հավատարմագրային կառավարման հետ կապված հարաբերությունները: Պաշտոնատար անձանց արգելվում է ձեռնարկատիրական ընկերությունների և կորպորատիվ իրավունքների կառավարումը փոխանցել իրենց ընտանիքի անդամներին: Ստեղծվող կազմակերպությունները պետք է ունենան լիազոր մարմնի կողմից ակտիվների և արժեթղթերի կառավարման լիցենզավորում: Պաշտոնատար անձինք չեն կարող արժեթղթերը, դրամական միջոցները և այլ ֆինանսական գործիքները հանձնել այն կազմակերպությունների կառավարմանը, որում աշխատում են պաշտոնյայի ընտանիքի անդամները:

ԱՄՆ-ում պաշտոնատար անձանց գույքի և ակտիվների հավատարմագրային կառավարման ինստիտուտը ենթարկվել է հանգամանալից կարգավորման: Սույն հարաբերությունների կարգավորումը իրականացվում է 1978 թվականի «Էթիկան կառավարությունում»[17] ակտով: Հավատարմագրային կառավարիչը, կամ հավատարմագրային կառավարմանը ներգրավված կազմակերպությունները, որոնք կրում են ֆիդուցիար պարտականություններ, պետք է լինեն ֆինանսական կազմակերպություններ, հավատարմատար, որակավորված հաշվապահ, բրոքեր, կամ ներդրումային խորհրդատու, որոնք.

- անկախ են և չեն ասոցացվում ցանկացած շահագրգիռ կողմի հետ, այնպես որ հավատարմագրային կառավարիչը և այլ անձինք չվերահսկվեն կառավարման հիմնադրի կողմից կամ լինեն նրա ազդեցության ներքո,
- չեն հանդիսանում կամ հանդիսացել շահագրգիռ կողմերի աշխատող կամ փոխկապակցված անձ, կամ չեն հանդիսանում շահագրգիռ կողմերի գործընկեր, կամ չեն կատարել ներդրումներ նույն կազմակերպություններում,
- չեն հանդիսանում բարեկամ կամ փոխկապակցված անձ:

Միջազգային կազմակերպությունները ևս անդրադարձ կատարել են հանրային ծառայությունում մասնավոր և հանրային շահերի հավասարակշռման հիմնախնդրին: Օրինակ՝ ՏՀԶԿ-ն հանրային ծառայությունում նշված խնդիրը կարգավորելու համար, ի թիվս այլ միջոցների, առաջարկում է կիրառել հավատարմագրային կառավարման նշված մոդելը:[18]

Սույն խնդիրը պարբերաբար բարձրացվել է նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց անհամատեղելիության պահանջների նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) կող-

[15] Տես Government of Canada "Conflict of Interest Act" S.C. 2006, c. 9, s. 2, https://laws-lois.justice.gc.ca/eng/acts/c-36.65/page-1.html#docCont (25.05.2026):
[16] Տես Закон Украины "О предотвращении коррупции" https://urst.com.ua/ru/act/o_predotvraschenii_korruptsii (25.05.2026):
[17] Տես S.555 - Ethics in Government Act of 1978 https://www.congress.gov/bill/95th-congress/senate-bill/555 (25.05.2026).
[18] Տես "Managing Conflict of Interest in the Public Sector A toolkit" OECD https://www.oecd.org/gov/ethics/49107986.pdf էջ 19, 103 (25.05.2026):

մից: Մասնավորապես՝ Հանձնաժողովի կողմից տարեկան գործունեության վերաբերյալ հաշվետվությունների շրջանակում նշվում է, որ անհամատեղելիության պահանջները սահմանող հոդվածի իմաստով փոխկապակցված անձանց շրջանակն իրականացված օրենսդրական փոփոխությունների արդյունքում չի վերանայվել. ներկայիս կարգավորումներով՝ այն ներառում է պաշտոն զբաղեցնող անձի ամուսնուն, պաշտոն զբաղեցնող անձի կամ նրա ամուսնու զավակին, ծնողին, քրոջը և եղբորը: Արդյունքում, հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի ընտանիքի անդամների կողմից հիմնադրած առևտրային կազմակերպությունները հնարավորություն ունեն հանդես գալ որպես գույքի հավատարմագրային կառավարիչներ՝ փաստացի առևտրային կազմակերպության մասնակցության կառավարումը թողնելով հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի վրա[19]:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ առկա է Օրենքի 31-րդ հոդվածով անհամատեղելիության պահանջների շրջանակում տրված փոխկապակցված անձանց շրջանակի վերանայման անհրաժեշտություն: Մասնավորապես, Օրենքի 33-րդ հոդվածով շահերի բախման շրջանակներում արդեն իսկ նախատեսվում է փոխկապակցված անձանց ավելի լայն շրջանակ, որն, ըստ էության, կարգավորում է փոխկապակցվածության հնարավորինս լայն շրջանակ: Նման պարագայում տարբերակված մոտեցման կիրառումը տրամաբանական չէ: Ուստի, առաջարկվում է Օրենքի 31-րդ հոդվածով անհամատեղելիության պահանջների դեպքում ևս դիտարկել Օրենքի 33-րդ հոդվածով նախատեսված փոխկապակցված անձանց շրջանակի կիրառման հնարավորությունը:

Միաժամանակ, Օրենքի 31-րդ հոդվածով նախատեսվում է, որ Օրենքով նախատեսված անհամատեղելիության պահանջները խախտելը նրա լիազորությունների դադարեցման կամ նրան զբաղեցրած պաշտոնից ազատելու հիմք է: «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի» մասին օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն[20]՝ «Հանձնաժողովը՝ քննում և լուծում է (...) պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների (...) վերաբերյալ դիմումներ: (...)»: Միաժամանակ, Հանձնաժողովի գործունեության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անհամատեղելիության պահանջի խախտման հիմքով Հանձնաժողովի՝ համապատասխան մարմնին/իրավասու անձին ներկայացված միջնորդությունները՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձի լիազորությունների դադարեցման վերաբերյալ, որոշ դեպքերում թողնվել են առանց քննության[21]:

Նման պարագայում անհրաժեշտ է օրենսդրությամբ հստակ սահմանել անհամատեղելիության պահանջների խախտման փաստն արձանագրող մարմինների, ներառյալ Հանձնաժողովի կողմից խախտման առկայության վերաբերյալ համապատասխան եզրակացությունների կամ որոշումների կայացման դեպքում վրա հասնող հետևանքը և նման որոշումների իրավական կարգավիճակը:

Անդրադառնալով, Օրենքի 32-րդ հոդվածով ամրագրված այլ սահմանափակումների վե-

[19] Տես Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով «Հաղորդում 2025 թվականի գործունեության վերաբերյալ», էջ 25 https://cpcarmenia.am/wp-content/uploads/2026/05/00-18.pdf (25.05.2026):
[20] Ընդունվել է 2017 թվականի հունիսի 9-ին: Տես ՀՀՊՏ 2017.06.30/42(1317) Հոդ. 660:
[21] Տես Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով «Հաղորդում 2024 թվականի գործունեության վերաբերյալ», էջ 31 https://cpcarmenia.am/wp-content/uploads/2025/05/%D4%B1%D4%BA-%D5%B0%D5%A1%D5%B2%D5%B8%D6%80%D5%A4%D5%B8%D6%82%D5%B4-2024%D5%A9-1.pdf (25.05.2026):

րաբերյալ կարգավորումներին, հարկ է նշել, որ դրանք ևս ունեն բարելավման կարիք: Գործող օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասով յոթ կետերով նկարագրվում է պաշտոնատար անձանց ներկայացվող այլ սահմանափակումները[22]: Այս մասով նկարագրվում է նաև հետաշխատանքային սահմանափակումները, ներկայացուցչություն իրականացնելու արգելքը, պետական գույքի՝ միայն ծառայողական նպատակներով օգտագործելու պահանջը և այլն:

Միաժամանակ, նույն հոդվածի 3-5-րդ մասերով նախատեսվում է այլ սահմանափակումների խախտումների դեպքերով կիրառվող պատասխանատվության տեսակները: Նախատեսվում է, որ քննարկվող յոթ կետերի խախտումներն առաջացնում են կարգապահական պատասխանատվություն, որը կիրառելի չէ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ, իսկ Ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ կարգապահական պատասխանատվության վերաբերյալ դրույթները այդպիսի պատասխանատվություն կարող է կիրառվել օրենքով նախատեսված դեպքերում:

Առանձնահատուկ կարգավորումներ են նախատեսվում վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող պաշտոն զբաղեցնող անձանց համար:

ՏՀԶԿ կողմից Հայաստանի գնահատման հինգերորդ շրջափուլի[23] շրջանակներում վեր են հանվել այն հիմնական խնդիրները, որոնք վերաբերում են այլ սահմանափակումներին, մասնավորապես հետաշխատանքային սահմանափակումներին: Մասնավորապես՝ գնահատման շրջանակներում նշվում է, որ Հայաստանում հետաշխատանքային խախտումների համար սանկցիաներ չեն կիրառվում՝ ներառյալ բարձրաստիճան պաշտոնատար անձանց համար, ինչպես նաև գործնականում հանրային ծառայողների կողմից հետաշխատանքային սահմանափակումների խախտմամբ կնքված աշխատանքային կամ այլ պայմանագրերը չեն դադարեցվում:

Նշված միջոցների սահմանման անհրաժեշտությունը քննարկվում է նաև ՏՀԶԿ կող-

[22] Դրանք հանգում են հետևյալին.

1. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին արգելվում է՝

1) լինել երրորդ անձանց ներկայացուցիչն այն մարմնի հետ կապված հարաբերություններում, որտեղ ինքը ծառայության մեջ է, կամ որն անմիջականորեն ենթակա է իրեն կամ անմիջականորեն վերահսկվում է իր կողմից.

2) որպես պետության ներկայացուցիչ՝ գույքային գործարքներ կնքել իր հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց հետ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի.

3) իր պաշտոնեական (ծառայողական) դիրքն օգտագործել կուսակցությունների, հասարակական, այդ թվում՝ կրոնական միավորումների համար փաստացի առավելություններ կամ արտոնություններ ապահովելու համար.

4) հոնորար ստանալ պաշտոնեական պարտականությունների կատարումից բխող հրապարակումների կամ ելույթների համար.

5) ոչ ծառայողական այդ թվում՝ նախընտրական քարոզչության նպատակներով օգտագործել նյութատեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցները, պետական և (կամ) համայնքային այլ գույքը և ծառայողական տեղեկատվությունը.

6) համատեղ աշխատել իր հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց հետ, եթե նրանց ծառայությունը կապված է միմյանց նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ.

7) պաշտոնից ազատվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, ընդունվել աշխատանքի այն գործատուի մոտ կամ դառնալ այն կազմակերպության աշխատողը, որի նկատմամբ նա անմիջական հսկողություն է իրականացրել իր պաշտոնավարման վերջին մեկ տարվա ընթացքում:

[23] Տես OECD “Baseline Report of the Fifth Round of Monitoring of Anti-Corruption Reforms in Armenia” The Istanbul Anti-Corruption Action Plan
https://www.oecd.org/content/dam/oecd/en/publications/reports/2024/03/baseline-report-of-the-fifth-round-of-monitoring-of-anti-corruption-reforms-in-armenia_fe71d6cc/fb158bf9-en.pdf (25.05.2026):
OECD “Armenia Fifth Round of Anti-Corruption Monitoring Follow-up Report” The Istanbul Anti-Corruption Action Plan
https://www.oecd.org/content/dam/oecd/en/publications/reports/2025/09/armenia-fifth-round-of-anti-corruption-monitoring-follow-up-report_c898674e/3d273009-en.pdf (25.05.2026):

մից հրապարակված հետաշխատանքային սահմանափակումների վերաբերյալ ուղեցույցով[24]: Ուղեցույցում նշվում է, որ հետաշխատանքային գործունեության տեսանկյունից պաշտոնատար անձանց կողմից խնդրահարույց վարքագիծը կարող է դրսևորվել ապագա գործատուի օգտին արտոնություններ տրամադրող որոշումների կայացման, պաշտոնավարումից հետո լոբբիստական գործունեությամբ զբաղվելու, պաշտոնավարումից հետո այլ երրորդ անձանց շահերի ներկայացուցչության իրականացմամբ նախկինում իր աշխատած պետական մարմնի հետ կապված հարաբերություններում, նախկինում ձեռք բերված ծառայողական տեղեկատվության օգտագործմամբ և այլն:

ՏՀԶԿ կողմից հետաշխատանքային սահմանափակումների իրավիճակները կառավարելու տեսանկյունից առաջարկում է այդ համատեքստում առաջացող խնդիրները դիտարկել 4 սկզբունքային կետերի շրջանակներում: Դրանք հանգում են հետևյալին.

1. առաջին խումբ խնդիրները առաջանում են, երբ պաշտոնատար անձինք դեռևս պետական մարմնում զբաղեցնում են պաշտոն,

2. երկրորդ խումբ խնդիրները առաջանում են պաշտոնատար անձի կողմից պաշտոնի դադարեցումից հետո,

3. երրորդ խումբ խնդիրները առաջանում են երբ գործող պաշտոնատար անձինք արտոնյալ վերաբերմունք են ցուցաբերում նախկին պաշտոնատար անձանց նկատմամբ և,

4. չորրորդ խումբ հարցերի շրջանակներում առաջարկվում է մասնավոր ոլորտի կազմակերպություններին ձեռնպահ մնալ նախկին պաշտոնատար անձանց հետ աշխատանքային հարաբերություններում հետաշխատանքային սահմանափակումների խախտման հանգեցնող վարքագծի դրսևորումից:

Միջազգային կառույցների կողմից վերը նկարագրված խնդիրների և առաջարկվող լուծումների հաշվառմամբ մի շարք երկրների օրենսդրությունում հետաշխատանքային սահմանափակումները ստացել են մանրամասն կարգավորումներ: Այդ երկրներից են, օրինակ՝ Էստոնիան[25], Սլովենիան[26], Ուկրաինան, Լիտվան, Մոնտենեգրոն[27] և այլն:

Այս երկրներում կիրառվում է հետաշխատանքային սահմանափակումների լայն շրջանակ: Պաշտոնատար անձանց արգելվում է պաշտոնից ազատվելուց հետո՝ որոշակի ժամանակահատվածով դառնալ այն կազմակերպության աշխատողը, որի նկատմամբ նա իրականացրել է հսկողություն կամ վերահսկողություն: Բացի այդ, արգելվում է որոշակի ժամանակահատվածով երրորդ անձանց շահերը ներկայացնել այն պետական մարմնի հետ կապված հարաբերություններում, որտեղ վերջինս պաշտոնավարել է: Բացի այդ, ուշադրություն է դարձվում պաշտոնատար անձի կողմից պաշտոնավարման ընթացքում ձեռք բերված տեղեկատվության օգտագործմանը: Օրինակ՝ Մոնտենեգրոյում արգելվում է օգտագործել պաշտոնեական գործունեության ընթացքում ստացված տեղեկությունը՝ իր կամ այլ անձի համար շահ ստանալու կամ այլ անձի իրավունքներին կամ օրինական շահերին վնաս պատճառելու նպատակով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ տեղեկությունները հանրային են:

---

[24] Տե՛ս "Post-Public Employment Good Practices for Preventing Conflict of Interest" OECD 2010, https://www.oecd.org/content/dam/oecd/en/publications/reports/2010/08/post-public-employment_g1gh9fe8/9789264056701-en.pdf (25.05.2026):

[25] Տես, "Government of the Republic Act" of Estonia, article 12[1], https://www.riigiteataja.ee/en/eli/502012023006/consolide (25.05.2026):

[26] Տես, "Integrity and Prevention of Corruption Act" Slovenia, article 36, https://www.kpk-rs.si/storage/uploads/ebff0bca-a7d3-401f-b0a9-28aa1ff9c2bf/ZintPK-ENG.pdf (25.05.2026):

[27] Տես, Law on Prevention of Corruption of Montenegro, article 15, 28, available at: https://www.rai-see.org/php_sets/uploads/2021/04/RAI-Law-on-Prevention-of-Corruption-Montenegro-EN.pdf (25.05.2026):

Միջազգային փորձի ուսումնասիրությունը, ինչպես նաև միջազգային կառույցների կողմից իրականացված գնահատումները ցույց են տալիս, որ Հայաստանում հետաշխատանքային սահմանափակումների վերաբերյալ առկա է օրենսդրական թերի կարգավորումներ՝ հաշվի առնելով հետաշխատանքային սահմանափակումների նկարագրությունը և այդ խախտումների համար վրա հասնող պատասխանատվությունը:

Այս նպատակով առաջարկվում է բարելավել այլ սահմանափակումների բաղադրիչ համարվող հետաշխատանքային սահմանափակումների վերաբերյալ Օրենքով առկա կարգավորումները:

Մասնավորապես, առաջարկվում է Օրենքում ոչ միայն գործող պաշտոնատար անձանց համար նախատեսել արգելք՝ լինելու երրորդ անձանց ներկայացուցիչն այն պետական մարմնի հետ կապված հարաբերություններում, որտեղ աշխատում է պաշտոնատար անձը կամ որի նկատմամբ իրականցվում է վերահսկողություն պաշտոնատար անձի կողմից, այլ նաև նման արգելք սահմանել պաշտոնավարումից հետո՝ որոշակի ժամանակահատվածով:

Միաժամանակ, պետք է սահմանափակել պաշտոնատար անձի կողմից սահմանափակ տարածման ծառայողական տեղեկությունները իր կամ այլ երրորդ անձանց մասնավոր շահերին ծառայեցնելու հնարավորությունը: Նշվածը կարող է իրացվել օրենսդրական մակարդակում կա՛մ ամրագրելով այդպիսի տեղեկատվության՝ մասնավոր շահ ստանալու նպատակով օգտագործման արգելք, կամ այնպիսի գործունեությամբ որոշակի ժամանակով զբաղվելու արգելք, որը սահմանափակ տարածման ծառայողական տեղեկությունների ուժով մասնավոր ոլորտում այդ անձին կտա չհիմնավորված արտոնություններ և առավելություններ:

Միաժամանակ՝ հիմք ընդունելով ՏՀԶԿ կողմից Հայաստանի գնահատման հինգերորդ շրջափուլի արդյունքները՝ պետք է հստակեցնել հետաշխատանքային սահմանափակումների խախտումների դեպքում կիրառվող պատասխանատվության մեխանիզմները:

Օրենքի ներկայիս կարգավորումներով հետաշխատանքային սահմանափակումների համար որպես հիմնական պատասխանատվության եղանակ նախատեսվում է կարգապահական պատասխանատվությունը: Սակայն, պարզ չէ թե ինչ եղանակով պետք է կարգապահական ներգործության միջոց կիրառվի արդեն իսկ պաշտոնեական պարտականությունները դադարեցրած անձի նկատմամբ: Միաժամանակ, օրենսդրությունը չի պարունակում կարգավորումներ հետաշխատանքային խախտումների արդյունքում կնքված պայմանագրերի հետագա կարգավիճակի վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է հետաշխատանքային սահմանափակումների խախտումների պարագայում կարգապահական պատասխանատվության փոխարեն նախատեսել վարչական պատասխանատվություն, որը հնարավորություն կտա արդեն իսկ պաշտոնեական պարտականությունները դադարեցրած անձանց նկատմամբ կիրառել ներգործության միջոց: Միևնույն ժամանակ, առաջարկվում է օրենսդրական մակարդակում ամրագրել, թե հետաշխատանքային սահմանափակումների խախտմամբ կնքված պայմանագրերն ինչ իրավական հետևանքներ են առաջացնում: Նման դեպքերը մեր գնահատմամբ կարող են դառնալ գործարքների անվավերության հիմք:

Եզրակացություն

Ամփոփելով իրականացված ուսումնասիրության արդյունքները՝ հարկ է նշել, որ անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների վերաբերյալ «Հանրային ծառայության մասին» գործող օրենքի դրույթները մի շարք ուղղություններով ունեն հստակեցման կարիք: Քննարկման առարկա դարձնելով նշված ինստիտուտների ներպետական կարգավո-

րումները, միջազգային ստանդարտները և միջազգային փորձը առաջարկվում է.

1. Վերանայել պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառելի անհամատեղելիության պահանջները՝ այն համատեքստում, որ այլ վճարովի աշխատանք կամ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքների խստությունը պայմանավորված լինի զբաղեցրած պաշտոնի առանձնահատկություններով:

2. Վերանայել այն անձանց շրջանակը, որոնց պաշտոնատար անձինք կարող են առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում իրենց մասնակցությունը հանձնել հավատարմագրային կառավարման:

3. Հստակեցնել այլ սահմանափակումների, մասնավորապես՝ հետաշխատանքային սահմանափակումների վերաբերյալ առկա օրենսդրական կառուցակարգերը՝ հիմք ընդունելով միջազգային առկա ստանդարտները:

4. Հստակեցնել անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների նկատմամբ կիրառվող պատասխանատվության և վերահսկողության գործիքակազմերը:

Ամփոփագիր: Հոդվածը նվիրված է Հանրային ծառայության համակարգում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների համար օրենսդրությամբ նախատեսված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների արդի հիմնախնդիրներին: Հոդվածի շրջանակներում հեղինակի կողմից քննարկման առարկա է դարձվում նշված ինստիտուտների կարգավորման առանձնահատկությունները, առաջարկում է վերանայել անհամատեղելիության պահանջների առկա կարգավորումները՝ կիրառվող սահմանափակումների խստության մակարդակը պայմանավորելով անձի կողմից զբաղեցվող պաշտոնի ռիսկայնության աստիճանի հետ: Միևնույն ժամանակ, աշխատանքի շրջանակներում քննարկման առարկա է դարձվել այլ սահմանափակումների վերաբերյալ կարգավորումները, մասնավորապես՝ հետաշխատանքային սահմանափակումները՝ առաջարկելով հստակեցնել կիրառվող սահմանափակումների բնույթը և տեսակները: Հոդվածի շրջանակում քննարկման առարկա են դարձվել նաև այս ինստիտուտների շրջանակում կիրառվող պատասխանատվության տեսակները և դրանց կիրառման առանձնահատկությունները:

Annotation. The article is devoted to contemporary issues concerning incompatibility requirements and other restrictions established by legislation for individuals holding public office and public servants within the public service system. Within the scope of the article, the author discusses the peculiarities of regulating these institutions and proposes revising the existing incompatibility requirements by linking the severity of applicable restrictions to the level of risk associated with the position held. At the same time, the paper addresses other restrictions, including post-employment limitations, and suggests clarifying the nature and types of restrictions applied. The article also examines the types of liability applied within these institutions and their specific features.

Аннотация. Статья посвящена современным проблемам требований несовместимости и иных ограничений, предусмотренных законодательством для лиц, занимающих государственные должности, и государственных служащих в системе государственной службы. В рамках статьи автор рассматривает особенности правового регулирования данных институтов и предлагает пересмотреть существующие требования несовместимости, увязывая степень строгости применяемых ограничений с уровнем риска, связанным с занимаемой должностью.

Одновременно в работе рассматриваются и иные ограничения, включая постслужебные ограничения; предлагается уточнить их характер и виды. В статье также анализируются виды ответственности, применяемые в рамках данных институтов, и особенности их реализации.

Բանալի բառեր *– այլ սահմանափակումներ, անհամատեղելիության պահանջներ, ծառայողական բնույթի տեղեկատվություն, հետաշխատանքային սահմանափակումներ, վարչական պատասխանատվություն,*

վճարովի այլ աշխատանք:

Keywords: *other restrictions, incompatibility requirements, service-related information, post-employment restrictions, administrative liability, paid secondary employment.*

Ключевые слова: *иные ограничения, требования несовместимости, служебная информация, постслужебные ограничения, административная ответственность, оплачиваемая дополнительная работа.*

Օգտագործված գրականության ցանկ

Իրավական ակտեր

1. «Հայաստանի հանրապետության սահմանադրության փոփոխություններ», ընդունվել է 06.12.2015թ., ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118,

2. «Հանրային ծառայության մասին» օրենք, ընդունվել է 23.03.2018 թ, ՀՀՊՏ 2018.03.29/24(1382),

3. «Դատախազության մասին» օրենք, ընդունվել է 17.11.2017թ., ՀՀՊՏ 2017.12.13/74(1349) Հոդ.1213,

4. «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենք, ընդունվել է 07.02.2018թ., ՀՀՊՏ 2018.02.12/10(1368) Հոդ.143,

5. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենք, ընդունվել է 09.06.2017 թ., ՀՀՊՏ 2017.06.30/42(1317),

Տեսական աղբյուրներ

1. Legal acts of the republic of Latvia “On Prevention of Conflict of Interest in Activities of Public Officials” 25.04.2002. https://likumi.lv/ta/en/en/id/61913-on-prevention-of-conflict-of-interest-in-activities-of-public-officials (25.05.2026),

2. Riigikogu “Anti-corruption Act” 06.06.2012 https://www.riigiteataja.ee/en/eli/ee/519122023003/consolide (25.05.2026),

3. “The Republic of Lithuania Balance of Public and Private Interests” law https://www.infolex.lt/teise/DocumentSinglePart.aspx?AktoId=543029&StrNr=1 (25.05.2026),

4. Kingdom of Sweden “Public Employment Act” (1994:260) https://www.riksdagen.se/sv/dokument-och-lagar/dokument/svensk-forfattningssamling/lag-1994260-om-offentlig-anstallning_sfs-1994-260/ (25.05.2026),

5. Federal Republic of Germany “Federal Civil Service Act” https://www.gesetze-im-internet.de/bbg_2009/BJNR016010009.html#BJNR016010009BJNG001200000 (25.05.2026),

6. The Kingdom of the Netherlands “Civil Service Act” 2017 https://wetten.overheid.nl/BWBR0001947/2022-08-01?g=2023-02-18&z=2023-02-18 (25.05.2026),

7. Managing Conflict of Interest in the Public Sector A toolkit”, OECD 2005, https://www.oecd.org/gov/ethics/49107986.pdf (25.05.2026),

8. World Bank Group ‘’Managing Conflict of Interest in the Public Sector”, Hong Duc publishing house, http://documents.worldbank.org/curated/en/580601478253123042/pdf/AUS11340-WP-p153692-PUBLIC-ConflictofinterestEN.pdf (25.05.2026),

9. Government of Canada “Conflict of Interest Act” S.C. 2006, c. 9, s. 2,
https://laws-lois.justice.gc.ca/eng/acts/c-36.65/page-1.html#docCont (25.05.2026),

10. Закон Украины “О предотвращении коррупции” https://urst.com.ua/ru/act/o_predotvraschenii_korruptsii (25.05.2026),

11. S.555 - Ethics in Government Act of 1978 https://www.congress.gov/bill/95th-congress/senate-bill/555 (25.05.2026),

12. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով «Հաղորդում 2025 թվականի գործունեության վերաբերյալ», էջ 25 https://cpcarmenia.am/wp-content/uploads/2026/05/00-18.pdf (25.05.2026),

13. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով «Հաղորդում 2024 թվականի գործունեության վերաբերյալ», էջ 31 https://cpcarmenia.am/wp-content/uploads/2025/05/%D4%B1%D4%BA-%D5%B0%D5%A1%D5%B2%D5%B8%D6%80%D5%A4%D5%B8%D6%82%D5%B4-2024%D5%A9-1.pdf (25.05.2026),

14. OECD "Baseline Report of the Fifth Round of Monitoring of Anti-Corruption Reforms in Armenia" The Istanbul Anti-Corruption Action Plan

https://www.oecd.org/content/dam/oecd/en/publications/reports/2024/03/baseline-report-of-the-fifth-round-of-monitoring-of-anti-corruption-reforms-in-armenia_fe71d6cc/fb158bf9-en.pdf (25.05.2026),

15. OECD "Armenia Fifth Round of Anti-Corruption Monitoring Follow-up Report" The Istanbul Anti-Corruption Action Plan

https://www.oecd.org/content/dam/oecd/en/publications/reports/2025/09/armenia-fifth-round-of-anti-corruption-monitoring-follow-up-report_c898674e/3d273009-en.pdf (25.05.2026),

16. "Post-Public Employment Good Practices for Preventing Conflict of Interest" OECD 2010,

https://www.oecd.org/content/dam/oecd/en/publications/reports/2010/08/post-public-employment_g1gh9fe8/9789264056701-en.pdf (25.05.2026),

17. "Government of the Republic Act" of Estonia, article 121, https://www.riigiteataja.ee/en/eli/502012023006/consolide (25.05.2026),

18. "Integrity and Prevention of Corruption Act" Slovenia, article 36, https://www.kpk-rs.si/storage/uploads/ebff0bca-a7d3-401f-b0a9-28aa1ff9c2bf/ZintPK-ENG.pdf (25.05.2026),

19. Law on Prevention of Corruption of Montenegro, article 15, 28, https://www.rai-see.org/php_sets/uploads/2021/04/RAI-Law-on-Prevention-of-Corruption-Montenegro-EN.pdf (25.05.2026):

Կարապետյան Ե. - Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի հայցորդ, էլհասցե՝ karapetyaneprem@gmail.com*:*

Ներկայացվել է խմբագրություն 25.06.2026 թ., տրվել է գրախոսության 25.06.2026 թ., երաշխավորվել է իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Է. Շաթիրյանի կողմից, ընդունվել է տպագրության 01.10.2026 թ.:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CIVIL LAW/ГРАЖДАНСКОЕ ПРАВО

https://doi.org/10.59546/18290744-2026.7-9-44

ԽՈՐԵՆ ՆԱՍԻԲՅԱՆ
«ԳՐԱՏԱ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
կառավարող գործընկեր

KHOREN NASIBYAN
Managing Partner
of GRATA INTERNATIONAL LAW FIRM

ХОРЕН НАСИБЯН
Управляющий партнер
ЮРИДИЧЕСКОЙ ФИРМЫ «ГРАТА ИНТЕРНЕЙШНЛ»
https://orcid.org/0009-0003-0968-2394

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԿՆՔՎՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՎԱՅՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ

ISSUES IN DETERMINING THE PLACE OF CONCLUSION OF INTERNATIONAL COMMERCIAL CONTRACTS CONCLUDED BY ELECTRONIC MEANS UNDER THE CIVIL LAW OF THE REPUBLIC OF ARMENIA

ПРОБЛЕМЫ ОПРЕДЕЛЕНИЯ МЕСТА ЗАКЛЮЧЕНИЯ МЕЖДУНАРОДНЫХ КОММЕРЧЕСКИХ ДОГОВОРОВ, ЗАКЛЮЧАЕМЫХ В ЭЛЕКТРОННОЙ ФОРМЕ, В ГРАЖДАНСКОМ ПРАВЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Ներածություն

Միջազգային առևտրային շրջանառության թվայնացման պայմաններում պայմանագրերի կնքումն առավել հաճախ իրականացվում է էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով՝ առանց կողմերի ֆիզիկական ներկայության և ավանդական փաստաթղթաշրջանառության: Նմանօրինակ պայմաններում առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում պայմանագրի

կնքման վայրի որոշման հարցը, քանի որ այն կարող է ազդեցություն ունենալ կիրառելի իրավունքի և ընդդատության վրա:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը[1], որպես պայմանագրի կնքման վայրի որոշման ընդհանուր կանոն, պայմանագրի կնքումը կապվում է օֆերտա ուղարկած անձի բնակության կամ գտնվելու վայրի հետ: Սակայն էլեկտրոնային եղանակով կնքվող միջազգային առևտրային պայմանագրերի դեպքում պայմանագրային հարաբերությունները հաճախ ձևավորվում են տարբեր պետություններում գտնվող կողմերի, էլեկտրոնային հարթակների և տեղեկատվական համակարգերի փոխգործակցության արդյունքում, ինչը հարց է առաջացնում նշված կանոնի կիրառման բավարարության վերաբերյալ:

Սույն հետազոտության նպատակն է ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 460-րդ հոդվածի կիրառելիությունը էլեկտրոնային եղանակով կնքվող միջազգային առևտրային պայմանագրերի նկատմամբ, վերլուծել միջազգային իրավական կարգավորման շրջանակում ձևավորված մոտեցումները և գնահատել պայմանագրի կնքման վայրի որոշման հնարավոր չափանիշները թվային միջավայրում:

Հիմնական հետազոտություն

Պայմանագրի կնքման վայրի որոշումը քաղաքացիական իրավունքում ունի ոչ միայն տեսական, այլև գործնական նշանակություն: Մասնավորապես, այն կարող է ազդեցություն ունենալ պայմանագրի նկատմամբ կիրառելի իրավունքի որոշման, միջազգային իրավասության կանոնների կիրառման, ինչպես նաև առանձին դեպքերում պայմանագրային հարաբերությունների իրավական տեղայնացման վրա: Այդ պատճառով պայմանագրի կնքման վայրի որոշման հարցը հատուկ նշանակություն է ձեռք բերում օտարերկրյա տարր պարունակող պայմանագրային հարաբերություններում, որտեղ մեկից ավելի պետությունների իրավակարգեր կարող են հավակնել տվյալ հարաբերության կարգավորմանը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 460-րդ հոդվածի համաձայն, եթե պայմանագրում նշված չէ դրա կնքման վայրը, պայմանագիրը կնքված է համարվում օֆերտա ուղարկած քաղաքացու բնակության կամ իրավաբանական անձի գտնվելու վայրում: Նշված կանոնը հիմնված է պայմանագրային հարաբերությունների իրավական տեղայնացման ավանդական մոտեցման վրա, որի նպատակն է պայմանագրի և կոնկրետ իրավակարգի միջև ապահովել բավարար կապ:

Ավանդական պայմանագրային հարաբերությունների պարագայում նման մոտեցումը, որպես կանոն, գործնական դժվարություններ չի առաջացնում, քանի որ պայմանագրի կողմերը և պայմանագրի կնքման գործընթացը սովորաբար կապված են որոշակի աշխարհագրական վայրի հետ: Սակայն էլեկտրոնային եղանակով կնքվող միջազգային առևտրային պայմանագրերի դեպքում իրավիճակը էականորեն տարբերվում է: Տվյալ դեպքում պայմանագրային համաձայնությունը կարող է ձևավորվել տարբեր պետություններում գտնվող կողմերի միջև՝ էլեկտրոնային հաղորդակցության միջոցների, առցանց հարթակների և տեղեկատվական համակարգերի միջոցով, ինչը բարդացնում է պայմանագրի կնքման վայրի ավանդական ընկալումը:

Հարկ է նշել, որ պայմանագրի կնքման վայրի որոշման խնդիրը սերտորեն կապված է նաև պայմանագրի կնքման պահի որոշման հետ: Հայկական իրավաբանական գրականու-

[1] Տես Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք, ՀՕ-239-Ն, ընդունվել է 1998 թվականի մայիսի 5-ին, ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ին, հոդված 460 (գործող խմբագրությամբ):

թյան մեջ Ա. Հայկյանցը, անդրադառնալով պայմանագրի կնքման պահի տեսական հիմքերին, հղում է կատարում «ստացման տեսությունը» և «փոստարկղի տեսությունը»՝ նշելով, որ տարբեր իրավական համակարգերում պայմանագիրը կարող է համարվել կնքված կամ ակցեպտի ուղարկման կամ դրա ստացման պահին[2]:

Նման մոտեցումները լայնորեն ընդունված են նաև անգլիական պայմանագրային իրավունքի դոկտրինայում, որտեղ «փոստարկղի տեսությունը» դիտարկվում է որպես ընդհանուր սկզբունքից բացառություն, իսկ էլեկտրոնային և այլ ակնթարթային հաղորդակցությունների դեպքում կիրառվում են հաղորդակցության փաստացի հասանելիության վրա հիմնված մոտեցումներ[3]:

Այդպիսի դիրքորոշումը զարգացվում է նաև Է. ՄակՔենդրիկի աշխատությունում, որտեղ նշվում է, որ «փոստարկղի տեսությունը» ժամանակակից հաղորդակցության պայմաններում կորցրել է իր գործնական հիմնավորումը, իսկ առավել նախընտրելի մոտեցում է դիտվում այն կանոնը, ըստ որի՝ ակցեպտն իրավական ուժ է ստանում օֆերենտի կողմից ստացվելու պահից[4]:

Թեև նշված տեսությունները վերաբերում են նախևառաջ պայմանագրի կնքման պահին, դրանք գործնական նշանակություն ունեն նաև պայմանագրի կնքման վայրի որոշման համար, քանի որ էլեկտրոնային հաղորդակցության պայմաններում ակցեպտի ստացման կամ ուղարկման վայրի որոշումը կարող է անմիջականորեն ազդել պայմանագրային հարաբերության իրավական տեղայնացման վրա:

Այսպիսով, ինչպես հայկական, այնպես էլ անգլիական պայմանագրային իրավունքի դոկտրինայում պայմանագրի կնքման պահի որոշման տեսությունները շարունակում են պահպանել իրենց նշանակությունը, սակայն էլեկտրոնային հաղորդակցությունների պայմաններում դրանց կիրառումը ձեռք է բերում նոր առանձնահատկություններ:

Միջազգային իրավական կարգավորման շրջանակում[5] էլեկտրոնային հաղորդակցությունների միջոցով ձևավորվող պայմանագրային հարաբերությունների իրավական տեղայնացման հարցը վաղուց դարձել է իրավաբանական քննարկումների առարկա: Թվային միջավայրում պայմանագրի կողմերը, տեղեկատվական համակարգերը և էլեկտրոնային հարթակները կարող են գտնվել տարբեր պետություններում, ինչը բարդացնում է պայմանագրի կնքման վայրի որոշումը՝ ավանդական տարածքային չափանիշների կիրառման դեպքում:

Էլեկտրոնային առևտրի վերաբերյալ միջազգային իրավական փաստաթղթերում ձևավորվել է այն մոտեցումը, համաձայն որի՝ էլեկտրոնային հաղորդագրությունների իրավական տեղայնացումը պետք է կապվի ոչ թե հաղորդագրության փոխանցման համար օգտագործվող տեխնիկական ենթակառուցվածքների, այլ հաղորդագրությունը ուղարկող և ստացող անձանց գործունեության հիմնական վայրի հետ: Մասնավորապես, ՄԱԿ-ի միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի (UNCITRAL) կողմից մշակված փաստաթղթերում ընդգծվում է, որ էլեկտրոնային հաղորդագրության ուղարկման կամ ստացման վայրը որոշելիս իրավական նշանակություն չունի այն հանգամանքը, թե որտեղ են ֆիզիկապես տեղակայված տվյալ հա-

[2] Տես *Հայկյանց Ա.*, Միջազգային մասնավոր իրավունք, 2-րդ հրատարակություն, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2013, էջեր 246-247:

[3] Տես *Peel E.,* Treitel: The Law of Contract, 15th ed., London, Sweet & Maxwell, 2020, էջեր 297-302 (պարագրաֆներ 2-024 - 2-035):

[4] Տես *McKendrick E.,* Contract Law, 16th ed., Oxford, Hart Publishing, 2025, էջ 64–67:

[5] Տես *Tang Z.S.,* Consumer Contracts and the Internet in EU Private International Law, Research Handbook on EU Internet Law, Cheltenham, 2014, էջ 254-258:

ղորդագրության փոխանցման համար օգտագործվող տեղեկատվական համակարգերը կամ սերվերները[6]: Նման մոտեցման նպատակն է ապահովել իրավական որոշակիություն և կանխատեսելիություն էլեկտրոնային առևտրի պայմաններում:

Նշված մոտեցումն առանձնահատուկ նշանակություն է ստանում էլեկտրոնային եղանակով կնքվող միջազգային առևտրային պայմանագրերի պարագայում, որտեղ պայմանագրի կողմերը հաճախ գործունեություն են իրականացնում տարբեր պետություններում, իսկ պայմանագրի կնքման գործընթացը իրականացվում է թվային միջավայրում՝ առանց որևէ կոնկրետ աշխարհագրական վայրի հետ անմիջական կապի:

Ռուսական իրավաբանական գրականության մեջ ևս նշվում է, որ էլեկտրոնային հաղորդակցության միջոցով ձևավորվող պայմանագրային հարաբերությունները դժվարացնում են պայմանագրի կնքման վայրի ավանդական ընկալումը: Մասնավորապես, ուշադրություն է դարձվում այն հանգամանքին, որ թվային միջավայրում պայմանագրի կնքման գործընթացը հաճախ անջատվում է կոնկրետ աշխարհագրական վայրից, ինչի հետևանքով պայմանագրի իրավական տեղայնացման համար անհրաժեշտ է կիրառել այնպիսի չափանիշներ, որոնք կապահովեն իրավական որոշակիություն և կանխատեսելիություն միջազգային առևտրային հարաբերություններում[7]:

Միջազգային մասնավոր իրավունքի դասական դոկտրինայում պայմանագրային հարաբերությունների տեղայնացման հարցում կարևոր նշանակություն է տրվում նաև պայմանագրի կնքման վայրին: Մասնավորապես, Ն. Յու. Երպիլևան նշում է, որ lex loci contractus-ը պայմանագրային հարաբերությունների նկատմամբ կիրառվող ավանդական կապող գործոններից մեկն է և նախատեսում է դրանց կարգավորումն այն պետության իրավունքով, որի տարածքում կնքվել է պայմանագիրը[8]:

Միևնույն ժամանակ ժամանակակից իրավաբանական գրականության մեջ կասկածի տակ է դրվում նշված մոտեցման արդյունավետությունն էլեկտրոնային հաղորդակցության պայմաններում: Մասնավորապես, իրավաբանական գրականության մեջ նշվում է, որ տվյալ մոտեցումը հիմնված է այն ենթադրության վրա, որ պայմանագրի կնքման վայրը հնարավոր է որոշել որպես պայմանագրի ձևավորման համար անհրաժեշտ վերջին իրավաբանական գործողության կատարման վայր: Սակայն էլեկտրոնային հաղորդակցության և էլեկտրոնային առևտրի պայմաններում նման չափանիշի կիրառումը կարող է դժվարություններ առաջացնել, քանի որ պայմանագրի ձևավորման գործընթացը հաճախ իրականացվում է տարբեր պետություններում գտնվող անձանց և տեղեկատվական համակարգերի փոխգործակցության միջոցով, ինչը բարդացնում է պայմանագրի կնքման մեկ հստակ վայրի որոշումը[9]:

Միաժամանակ ռուսական միջազգային մասնավոր իրավունքի գրականության մեջ առանձնահատուկ ուշադրություն է դարձվում նաև «գործունեության հիմնական վայրի» (place of business) չափանիշին: Մասնավորապես, Վ. Ա. Կանաշևսկին նշում է, որ միջազգային առևտրային պայմանագրերի բնորոշման շրջանակում «գործունեության հիմնական վայրը» բնութագրում է ոչ թե իրավունքի սուբյեկտին, այլ նրա հիմնական գործարար գործունեության իրականացման վայրը, ինչը կարևոր նշանակություն ունի միջազգային պայմանագրային հա-

[6] Տես UNCITRAL, Model Law on Electronic Commerce with Guide to Enactment, New York, 1999, Article 15(4), էջ 11:
[7] Տես *Калмык В.,* Момент и место заключения дистанционных договоров с участием потребителей, Conferința științifică națională cu participare internațională «Integrare prin cercetare și inovare», Chișinău, 2020, էջեր 313–316:
[8] Տես *Ерпылева Н.Ю.,* Международное частное право, Москва, 2015, էջեր 88–89:
[9] Տես *Obiri-Korang A.,* Electronic Contracts and Private International Law: Challenges of the Lex Loci Contractus Rule in Electronic Commerce, Lex Portus, 2022, № 5, էջեր 24–26:

րաբերությունների իրավական գնահատման համար[10]:

Վերոնշյալ մոտեցումների համատեքստում հարց է առաջանում, թե որքանով է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 460-րդ հոդվածով նախատեսված կանոնը բավարար էլեկտրոնային եղանակով կնքվող միջազգային առևտրային պայմանագրերի կնքման վայրը որոշելու համար: Թեև նշված հոդվածը պայմանագրի կնքման վայրը կապում է օֆերտա ուղարկած անձի բնակության կամ գտնվելու վայրի հետ, էլեկտրոնային միջավայրում նման չափանիշի կիրառումը կարող է առաջացնել որոշակի դժվարություններ:

Հատկանշական է, որ միջազգային առևտրային գործունեություն իրականացնող անձը կարող է ունենալ մի քանի գործունեության վայր, պայմանագրի կնքումը կարող է իրականացվել առցանց հարթակի միջոցով, իսկ պայմանագրի կատարման հետ առավել սերտ կապված տնտեսական գործունեությունը կարող է իրականացվել այլ պետությունում, քան այն, որտեղ գտնվում է օֆերտա ուղարկած անձի գրանցված հասցեն: Նման պայմաններում պայմանագրի կնքման վայրի ձևական կապումը բացառապես օֆերտա ուղարկած անձի բնակության կամ գտնվելու վայրի հետ ոչ միշտ է ապահովում պայմանագրային հարաբերության բավարար իրավական տեղայնացումը:

Օրինակ, եթե Հայաստանի Հանրապետությունում գրանցված ընկերությունը միջազգային առևտրային պայմանագիր է կնքում գերմանական ընկերության հետ առցանց հարթակի միջոցով, իսկ պայմանագրի կատարման հետ անմիջականորեն կապված գործունեությունը իրականացվում է Գերմանիայում, ապա պայմանագրի կնքման վայրի որոշումը բացառապես հայկական ընկերության գտնվելու վայրով կարող է չարտացոլել տվյալ գործարքի իրական տնտեսական և իրավական կապերը:

Նման իրավիճակներում պայմանագրի կնքման վայրի ձևական որոշումը կարող է հանգեցնել այնպիսի արդյունքի, որը չի համապատասխանում տվյալ իրավահարաբերության իրական տնտեսական կենտրոնին:

Միջազգային իրավական կարգավորման շրջանակում մշակված մոտեցումները ցույց են տալիս, որ էլեկտրոնային հաղորդակցությունների դեպքում առավել նշանակալից կարող է լինել ոչ թե պայմանագրի կնքման գործընթացում օգտագործված տեխնիկական միջոցների կամ տեղեկատվական համակարգերի տեղակայման վայրը, այլ այն գործունեության հիմնական վայրը, որի հետ տվյալ գործարքն ունի առավել սերտ կապ: Նման մոտեցումը թույլ է տալիս ապահովել իրավական կանխատեսելիություն և նվազեցնել այն անորոշությունները, որոնք կարող են առաջանալ թվային միջավայրում ձևավորվող միջազգային պայմանագրային հարաբերություններում:

Հետևաբար, կարելի է պնդել, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 460-րդ հոդվածը սկզբունքորեն կիրառելի է նաև էլեկտրոնային եղանակով կնքվող միջազգային առևտրային պայմանագրերի նկատմամբ, սակայն դրա կիրառումը պահանջում է ընդլայնված մեկնաբանություն: Մասնավորապես, հոդվածի կիրառման ընթացքում նպատակահարմար է հաշվի առնել ոչ միայն օֆերտա ուղարկած անձի բնակության կամ գտնվելու վայրը, այլ նաև այն գործունեության հիմնական վայրը, որի հետ տվյալ գործարքն ունի առավել սերտ և իրական կապ:

Էլեկտրոնային եղանակով կնքվող միջազգային առևտրային պայմանագրերի դեպքում լրացուցիչ խնդիր է առաջանում այն իրավիճակներում, երբ պայմանագրի կողմերից մեկը գործունեություն է իրականացնում մեկից ավելի պետություններում: Ժամանակակից միջազ-

[10] Տե՛ս *Канашевский В.А.,* Международные сделки: правовое регулирование, 2-е изд., Москва., 2019, էջեր 16-19:

գային առևտրում տարածված են այնպիսի կազմակերպական կառուցվածքներ, որոնց շրջանակում ընկերությունն ունի գրանցված գտնվելու վայր մեկ պետությունում, հիմնական վարչական գործունեությունը՝ այլ պետությունում, իսկ պայմանագրի կատարման հետ անմիջականորեն կապված գործունեությունը՝ երրորդ պետությունում:

Այսպիսի պայմաններում պայմանագրի կնքման վայրը բացառապես իրավաբանական անձի գրանցված գտնվելու վայրի հետ կապելը կարող է հանգեցնել այնպիսի արդյունքի, որը չի արտացոլում տվյալ գործարքի իրական տնտեսական բովանդակությունը: Հատկապես դա ակնհայտ է էլեկտրոնային միջավայրում կնքվող պայմանագրերի դեպքում, երբ կողմերի փոխգործակցությունը հաճախ իրականացվում է առանց որևէ ֆիզիկական ներկայության և առանց որոշակի աշխարհագրական վայրի հետ անմիջական կապի:

Միջազգային իրավական կարգավորման շրջանակներում նման իրավիճակների համար կիրառվում է այն մոտեցումը, ըստ որի մի քանի գործունեության վայրերի առկայության դեպքում իրավական նշանակություն ունի այն գործունեության հիմնական վայրը, որն առավել սերտ կապ ունի տվյալ գործարքի հետ: Նման չափանիշը հնարավորություն է տալիս պայմանագրային հարաբերությունը կապելու ոչ թե ձևական, այլ գործնական և տնտեսական տեսանկյունից առավել հիմնավորված իրավակարգի հետ:

Վերը նշվածը ևս վկայում է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 460-րդ հոդվածի կիրառման ընթացքում էլեկտրոնային եղանակով կնքվող միջազգային առևտրային պայմանագրերի նկատմամբ անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն օֆերտա ուղարկած անձի բնակության կամ գտնվելու վայրը, այլև այն հանգամանքը, թե որ գործունեության վայրն է առավել սերտ կապված տվյալ պայմանագրի կնքման և կատարման հետ:

Վերոնշյալը վկայում է, որ էլեկտրոնային եղանակով կնքվող միջազգային առևտրային պայմանագրերի դեպքում պայմանագրի կնքման վայրի որոշումը չի կարող միշտ հիմնվել բացառապես օֆերտա ուղարկած անձի բնակության կամ գտնվելու վայրի վրա: Գործնականում հնարավոր են իրավիճակներ, երբ պայմանագրի կողմը գործունեություն է իրականացնում մի քանի պետություններում, իսկ պայմանագրի կնքման և կատարման հետ առավել սերտ կապված գործունեությունը իրականացվում է այլ վայրում: Այդ պատճառով էլեկտրոնային պայմանագրերի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 460-րդ հոդվածի կիրառման ընթացքում նպատակահարմար է հաշվի առնել նաև այն գործունեության հիմնական վայրը, որի հետ տվյալ գործարքն ունի առավել սերտ և իրական կապ:

Նշված մոտեցումը հիմնավորվում է նաև այն հանգամանքով, որ պայմանագրի կնքման վայրի որոշման նպատակը միայն պայմանագրի ձևական տեղայնացումը չէ: Քաղաքացիաիրավական և միջազգային մասնավոր իրավունքի տեսանկյունից պայմանագրի կնքման վայրի ինստիտուտը կոչված է ապահովելու պայմանագրային հարաբերության կապը այն իրավակարգի հետ, որի հետ տվյալ հարաբերությունն ունի առավել իրական և կանխատեսելի կապ: Այդ պատճառով էլեկտրոնային եղանակով կնքվող միջազգային առևտրային պայմանագրերի դեպքում առավել հիմնավորված է այնպիսի մեկնաբանությունը, որի շրջանակում օֆերտա ուղարկած անձի գտնվելու վայրը դիտարկվում է ոչ թե որպես ինքնանպատակ չափանիշ, այլ որպես պայմանագրային հարաբերության իրավական տեղայնացման ելակետ:

Նման մեկնաբանությունը հնարավորություն է տալիս պահպանելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 460-րդ հոդվածի բովանդակությունը՝ միաժամանակ ապահովելով դրա համապատասխանությունը թվային միջավայրում ձևավորվող ժամանակակից պայմանագրային հարաբերությունների առանձնահատկություններին: Բացի այդ,

այն համահունչ է միջազգային առևտրային շրջանառության մեջ ձևավորված այն մոտեցումներին, որոնց համաձայն էլեկտրոնային հաղորդակցությունների օգտագործումն ինքնին չի փոխում պայմանագրային հարաբերության իրավական բնույթը, սակայն կարող է պահանջել ավանդական իրավական չափանիշների ժամանակակից մեկնաբանություն:

Նշված հանգամանքը չի նշանակում, որ գործող կարգավորումը գործնականում անկիրառելի է: Ընդհակառակը, այն կարող է կիրառվել նաև գործող խմբագրությամբ՝ համակարգային մեկնաբանության միջոցով, սակայն օրենսդրական հստակեցումը կնպաստի իրավական որոշակիության բարձրացմանը:

Եզրակացություն

Վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 460-րդ հոդվածով նախատեսված պայմանագրի կնքման վայրի որոշման կանոնը սկզբունքորեն կիրառելի է նաև էլեկտրոնային եղանակով կնքվող միջազգային առևտրային պայմանագրերի նկատմամբ: Միաժամանակ թվային միջավայրում ձևավորվող պայմանագրային հարաբերությունների առանձնահատկությունները ցույց են տալիս, որ պայմանագրի կնքման վայրի ձևական կապումը բացառապես օֆերտա ուղարկած անձի բնակության կամ գտնվելու վայրի հետ առանձին դեպքերում կարող է չարտացոլել տվյալ գործարքի իրական իրավական և տնտեսական կապերը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ նպատակահարմար է օրենսդրական մակարդակով քննարկել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 460-րդ հոդվածի լրացման հնարավորությունը՝ նախատեսելով, որ էլեկտրոնային եղանակով կնքվող միջազգային առևտրային պայմանագրերի դեպքում, եթե պայմանագրի կնքման վայրը հնարավոր չէ բավարար որոշակիությամբ կապել օֆերտա ուղարկած անձի բնակության կամ գտնվելու վայրի հետ, պայմանագրի կնքման վայրը կարող է որոշվել նաև այն գործունեության հիմնական վայրով, որի հետ տվյալ գործարքն ունի առավել սերտ և իրական կապ: Նման կարգավորումը թույլ կտա պահպանել գործող նորմի բովանդակությունը՝ միաժամանակ ապահովելով դրա առավել արդյունավետ կիրառումը ժամանակակից միջազգային առևտրային շրջանառության պայմաններում:

Ամփոփագիր: Սույն հոդվածը նվիրված է էլեկտրոնային եղանակով կնքվող միջազգային առևտրային պայմանագրերի կնքման վայրի որոշման հիմնախնդիրների ուսումնասիրությանը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունքում: Հոդվածում վերլուծվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 460-րդ հոդվածի դրույթները, միջազգային իրավական կարգավորման շրջանակում ձևավորված մոտեցումները և իրավաբանական գրականության մեջ արտահայտված դիրքորոշումները: Հիմնավորվում է, որ էլեկտրոնային միջավայրում ձևավորվող միջազգային առևտրային պայմանագրերի նկատմամբ պայմանագրի կնքման վայրի որոշման հարցում անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն գործունեության հիմնական վայրը, որի հետ տվյալ գործարքն ունի առավել սերտ և իրական կապ:

Annotation. This article examines the problems of determining the place of conclusion of international commercial contracts concluded by electronic means under the civil law of the Republic of Armenia. The paper analyses Article 460 of the Civil Code of the Republic of Armenia, relevant international legal approaches and doctrinal views. It is argued that, in the context of electronically concluded international commercial contracts, the determination of the place of conclusion should also take into account the principal place of business that has the closest and most substantial connection with the transaction.

Аннотация. Настоящая статья посвящена исследованию проблем определения места заключения международных коммерческих договоров, заключаемых в электронной форме, в гражданском праве Республики Армения. В статье анализируются положения статьи 460 Гражданского кодекса Республики Армения, международно-правовые подходы и доктринальные позиции по рассматриваемому вопросу. Обосновывается необходимость учитывать при определении места заключения международного коммерческого договора, заключённого в электронной форме, также основное место осуществления деятельности, наиболее тесно связанное с соответствующей сделкой.

Բանալի բառեր – *միջազգային առևտրային պայմանագիր, էլեկտրոնային պայմանագիր, պայմանագրի կնքման վայր, գործունեության հիմնական վայր, միջազգային մասնավոր իրավունք*

Keywords: *international commercial contract, electronic contract, place of conclusion of contract, principal place of business, private international law*

Ключевые слова: *международный коммерческий договор, электронный договор, место заключения договора, основное место деятельности, международное частное право.*

Օգտագործված իրավական ակտերի և գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք, ՀՕ-239-Ն, ընդունման ամսաթիվ 05.05.1998 թ., ուժի մեջ մտնելու ամսաթիվ 01.01.1999 թ.:
2. UNCITRAL, Model Law on Electronic Commerce with Guide to Enactment, New York, 1999.
3. United Nations, United Nations Convention on the Use of Electronic Communications in International Contracts, New York, 2005.
4. Հայկյանց Ա., Միջազգային մասնավոր իրավունք, 2-րդ հրատարակություն, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2013, էջեր 246-247:
5. Peel E., Treitel: The Law of Contract, 15th ed., London, Sweet & Maxwell, 2020, էջեր 297-302 (պարագրաֆներ 2-024 - 2-035):
6. McKendrick E., Contract Law, 16th ed., Oxford, Hart Publishing, 2025, էջ 64–67:
7. Tang Z.S., Consumer Contracts and the Internet in EU Private International Law, in: Research Handbook on EU Internet Law, Cheltenham, 2014, էջեր 254–273:
8. Калмык В., Момент и место заключения дистанционных договоров с участием потребителей, Conferința științifică națională cu participare internațională «Integrare prin cercetare şi inovare», Chişinău, 2020, էջեր 313–316:
9. Ерпылева Н.Ю., Международное частное право, Москва, 2015, էջեր 88–89:
10. Obiri-Korang A., Electronic Contracts and Private International Law: Challenges of the Lex Loci Contractus Rule in Electronic Commerce, Lex Portus, 2022, № 5, էջեր 24–26:
11. Канашевский В.А., Международные сделки: правовое регулирование, 2-е изд., Москва., 2019, էջեր 16-19:

Նասիբյան Խ. - «ԳՐԱՏԱ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ կառավարող գործընկեր, էլ. հասցե՝ khnasibyan@gratanet.com:

Ներկայացվել է խմբագրություն 06.07.2026 թ., տրվել է գրախոսության 06.07.2026 թ., երաշխավորվել է պրոֆեսոր, ի.գ.դ., ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ Ա.Մ.Հայկյանցի կողմից, ընդունվել է տպագրության 01.10.2026 թ.:

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/CIVIL PROCEDURE/
ГРАЖДАНСКИЙ ПРОЦЕСС**

https://doi.org/10.59546/18290744-2026.7-9-52

ԳՈՀԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ
*Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր
իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր,
Երևանի պետական համալսարանի
քաղաքացիական դատավարության ամբիոնի դասախոս*

GOHAR GRIGORYAN
*Judge of the Court of First Instance of General
Jurisdiction of Civil Cases of Yerevan City,
Lecturer at the Chair of Civil Procedure of Yerevan State University*

ГОАР ГРИГОРЯН
*Судья суда общей юрисдикции первой инстанции города
Еревана по гражданским делам,
преподаватель кафедры гражданского судопроизводства
Ереванского государственного университета*
https://orcid.org/0000-0003-1674-391X

ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՃԱՆԱՉՈՒՄԸ ԵՎ ԿԱՏԱՐՈՒՄԸ

RECOGNITION AND ENFORCEMENT OF FOREIGN JUDGMENTS IN BANKRUPTCY CASES

ПРИЗНАНИЕ И ИСПОЛНЕНИЕ ИНОСТРАННЫХ СУДЕБНЫХ АКТОВ ПО ДЕЛАМ О БАНКРОТСТВЕ

Ներածություն

Անձին սնանկ ճանաչելու իրավական ինստիտուտի հիմքում ընկած է քաղաքացիական շրջանառության կայունության ապահովման նպատակը: Այն իրականացվում է անվճարունակ մասնակիցների ֆինանսական առողջացման, իսկ դրա անհնարինության դեպքում՝ քաղաքացիական շրջանառությունից նրանց դուրս մղելու միջոցով՝ կանխելու վերջիններիս անվճարունակության բացասական ազդեցությունը մյուս մասնակիցների իրավունքների և օրինական շահերի վրա:

Սնանկության վարույթի շրջանակը, սակայն, չի սահմանափակվում պարտապանին

սնանկ ճանաչելու դիմումի քննությամբ: Դրա շրջանակում կարող են լուծվել նաև այլ բազմաբնույթ իրավական հարցեր, հետևաբար, սնանկության վարույթը բնութագրվում է ոչ միայն պարտապանի անվճարունակության փաստի իրավական արձանագրմամբ, այլև դրա հետևանքով առաջացող հարաբերությունների համալիր կարգավորմամբ:

Այս առանձնահատկությունը պայմանավորում է սնանկության վարույթի շրջանակում կայացվող դատական ակտերի բազմազանությունը և դրանց իրավական նշանակության տարբերակված բնույթը, իսկ անդրսահմանային սնանկության առնչությամբ ծագող իրավահարաբերությունների բազմաբովանդակ բնույթն իր ազդեցությունն է ունենում, ի թիվս այլնի, օտարերկրյա դատական ակտերի ճանաչման կառուցակարգերի վրա՝ ձևավորելով անդրսահմանային սնանկության հարաբերություններով պայմանավորված առանձնահատկություններ: Դրանց շարքում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում օտարերկրյա դատական ակտերի ճանաչման վարույթում ճանաչման ենթակա օբյեկտի վերաբերյալ հարցը:

Հիմնական հետազոտություն:

Ի տարբերություն օտարերկրյա դատական ակտերի ճանաչման դասական մեխանիզմի, որտեղ որպես ճանաչման օբյեկտ, որպես կանոն, հանդես է գալիս դատական ակտը՝ դրանից բխող նյութահիրավական հետևանքներով, անդրսահմանային սնանկության իրավահարաբերություններում այս հարցն ունի առավել բարդ կառուցվածք:

Այսպես, տեսական մակարդակում ընդունված է տարանջատել երկու հիմնական մոտեցում: Առաջին մոտեցման համաձայն՝ ճանաչման անմիջական օբյեկտն օտարերկրյա դատարանի իրավասության, օտարերկրյա կառավարչի լիազորությունների ճանաչումն է: Իսկ երկրորդ մոտեցման համաձայն՝ ճանաչման անմիջական օբյեկտը բացառապես այդ վարույթի շրջանակում կայացվող դատական ակտերի նյութահիրավական հետևանքներն են: Նշված տեսության համաձայն՝ դատական ակտի ճանաչումն ինքնին հանգեցնում է համապատասխան դատական ակտի դատավարական հետևանքների ճանաչման: Այլ խոսքով, օտարերկրյա դատարանի իրավասությունը և օտարերկրյա կառավարչի լիազորություններն օտարերկրյա սնանկության վարույթով ճանաչման միջնորդավորված օբյեկտներ են:

Երկրորդ մոտեցումն առավել հետևողականորեն ներկայացված է Բորկի աշխատություններում: Հեղինակը, անդրադառնալով եվրոպական երկրների իրավական համակարգում անդրսահմանային անվճարունակության վարույթի շրջանակում կայացվող դատական ակտերի ճանաչման հարցին, տարանջատել է օտարերկրյա սնանկության վարույթի ճանաչումը դրա շրջանակում կայացվող առանձին դատական ակտերի ճանաչումից: Բորկի դիրքորոշմամբ՝ ճանաչման օբյեկտը ոչ թե ինքնին սնանկության վարույթն է, այլ այդ վարույթի ընթացքում կայացվող առանձին դատական ակտը:[1]

Բորկը նույն տեսակետը պահպանում է նաև իր հետագա աշխատություններում[2]՝ որպես ճանաչման օբյեկտ դիտարկելով սնանկության վարույթում կայացված առանձին դատական ակտերը, և ոչ թե սնանկության վարույթն առանձին:

Ճանաչման օբյեկտի մեկ այլ կառուցակարգ է առաջարկում Սոբինան: Հեղինակի կողմից օտարերկրյա սնանկության վարույթների ճանաչումը դիտարկվում է որպես անդրսահմանային անվճարունակության իրավակարգավորման ինքնուրույն ինստիտուտ: Մասնավորապես, Սո-

[1] *Reinhard Bork,* "European Cross-Border Insolvency Law", Oxford University Press, 2016, p. 168, https://www.scribd.com/document/969757875/Recognition-and-Enforcement?utm:

[2] *Reinhard Bork, Renato Mangano,* "European Cross-Border Insolvency Law", 2nd ed., Oxford University Press, 2022, p. 173–200:

բինան առանձնացնում է ճանաչման օբյեկտների մի քանի փոխկապակցված խմբեր՝ դրանց շարքում օտարերկրյա դատական ակտը դիտարկելով որպես ճանաչման առանցքային ու անմիջական օբյեկտ, իսկ օտարերկրյա դատարանի իրավազորությունն ու օտարերկրյա սնանկության կառավարչի լիազորությունները՝ որպես ածանցյալ: Դրանց իրավական ճանաչումը հեղինակը պայմանավորվում է այն դատական ակտերի ճանաչմամբ, որոնցով օտարերկրյա դատարանի կողմից հարուցվել է սնանկության վերաբերյալ համապատասխան վարույթը: Այսինքն, դատական ակտի ճանաչումն ունի առաջնային բնույթ, իսկ օտարերկրյա դատարանի իրավազորության, սնանկության կառավարչի լիազորությունների և վարույթի այլ իրավական հետևանքների ճանաչումը դրա հետ կապված և դրանից բխող ածանցյալ իրավական արդյունք է[3]:

Օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման հարցերի կարգավորման հարցում կարևորագույն միջազգային փաստաթղթերից է «ՄԱԿ-ի Միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի (UNCITRAL) սնանկության վարույթին առնչվող դատական ակտերի ճանաչման և կատարման մասին» Մոդելային օրենքը[4]՝ ընդունված 2018 թվականին: Մոդելային օրենքի հիմնական նպատակն է սահմանել սնանկության վարույթի շրջանակում կամ դրա հետ էականորեն կապված օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման առավել արդյունավետ ու կանխատեսելի գործիքակազմ՝ ներդաշնակացնելով դատական ակտի տարբեր պետությունների իրավական համակարգերի միջև առկա տարբերությունները:

Մոդելային օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ «սնանկության վարույթին առնչվող դատական ակտ» է համարվում այն դատական ակտը, որը բխում է սնանկության վարույթից կամ դրա հետ գտնվում է էական իրավական կապի մեջ, անկախ նրանից՝ տվյալ վարույթն ավարտվել է, թե ոչ, և որը կայացվել է սնանկության վարույթի հարուցումից հետո: Միաժամանակ, տվյալ հասկացությունից բացառություն է նախատեսվում այն դատական ակտերի համար, որոնցով անմիջականորեն հարուցվում է սնանկության վարույթը: Այլ խոսքով, այս սահմանումը հնարավորություն է տալիս հստակ տարբերակել օտարերկրյա սնանկության վարույթի և այդ վարույթի շրջանակում կայացված առանձին դատական ակտերի ճանաչման իրավական մեխանիզմները[5]:

ՀՀ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով օտարերկրյա դատական ակտերի ճանաչման վարույթի առանձնահատկություններին, իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ կատարում պահանջող օտարերկրյա դատական ակտի ճանաչումն իրենից ներկայացնում է ՀՀ դատարանների կողմից այդ ակտերին այնպիսի իրավական հատկանիշների տրամադրում, որոնցով օժտված են Հայաստանի Հանրապետության դատարանների՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը, և թույլատրում այդ ակտի իրավական գործողությունը Հայաստանի Հանրապետության տարածքում[6]:

Նշվածից կարող ենք եզրակացնել, որ ՀՀ դատարանի կողմից օտարերկրյա դատական ակտի ճանաչման արդյունքում այդ ակտը ձեռք է բերում էքստերիտորիալ բնույթ՝ իր իրավական ներգործությունը ապահովելով նաև ՀՀ տարածքում:

ՀՀ-ում պետք է ճանաչվեն գործն ըստ էության լուծող օտարերկրյա բոլոր դատական ակ-

[3] *Собина Л.Ю.,* Признание иностранных банкротств в международном частном праве, Москва, Статут, 2012, стр. 84:

[4] *UNCITRAL Model Law* on Recognition and Enforcement of Insolvency-Related Judgments with Guide to Enactment,https://uncitral.un.org/sites/default/files/media-documents/uncitral/en/ml_recognition_gte_e.pdf:

[5] Տես նույն տեղում, էջ 4:

[6] Թիվ *ԵԿԴ/0024/16/12* քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշում:

տերը, իսկ գործի միայն իրավաբանական ճակատագիրը որոշող՝ այսինքն գործն ըստ էության չլուծող դատական ակտերը, ինչպես նաև միջանկյալ դատական ակտերը ՀՀ-ում ճանաչման և կատարման ենթակա չեն: Նշված պահանջներից միակ բացառությունը հայցի ապահովման միջոցների կիրառման վերաբերյալ որոշումների մասով է, որոնք դիտարկվել են որպես ՀՀ-ում ճանաչման ենթակա՝ պայմանով, որ պատասխանող կողմը հնարավորություն ունեցած լինի մասնակցելու դրանց կայացմանը[7]:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի[8] 346-րդ հոդվածի 3-րդ մասը ևս, որպես բացառություն, սահմանում է, որ Հայաստանի Հանրապետությունում կարող են ճանաչվել նաև օտարերկրյա դատարանի՝ հայցի ապահովման մասին որոշումները՝ ի լրումն նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգավորման առ այն, որ ճանաչման ենթակա է համարվում այլ պետության դատական մարմնի ընդունած այն եզրափակիչ դատական ակտը՝ անկախ դրա անվանումից, որն ունի իրավական ուժ այն պետությունում, որտեղ կայացվել է:

Նշված դրույթի բովանդակային ուսումնասիրությունից կարելի է հանգել հետևության առ այն, որ ՀՀ-ում ճանաչվել կարող են այն դատական ակտերը, որոնք միաժամանակ բավարարում են հետևյալ պահանջներին.

- կայացվել են դատական մարմնի կողմից,
- եզրափակիչ են դատավարական կարգավիճակով՝ անկախ դրա անվանումից,
- կայացման պետությունում ունեն իրավական ուժ:

Ի լրումն նշված պահանջների՝ հարկ ենք համարում հավելել, որ որպես ճանաչման օբյեկտ՝ առանձնանում են դատական ակտի նյութաիրավական հետևանքները, իսկ վերջինիս դատավարական հետևանքները բխում են հենց դատական ակտի նյութաիրավական հետևանքների ճանաչումից: Ասվածը փորձենք ներկայացնել օրինակով: Սնանկության դիմումը մերժվելու դեպքում դատարանը, ի թիվս այլնի, անդրադառնում է նաև ժամանակավոր կառավարչի վարձատրության փոխհատուցման հարցին, և վճարման նման պարտավորություն ծագելու դեպքում դատական ակտի ճանաչման փուլում գործ կունենանք դրանից բխող նյութաիրավական հետևանքի ճանաչման հարցի հետ: Իսկ դատավարական հետևանքներն, օրինակ՝ գործի վարույթը կարճելու կամ դիմումն առանց քննության թողնելու հիմքերի հնարավոր հիմքերի քննարկման փուլում, արդեն բխում են հենց նյութաիրավական հետևանքների ճանաչումից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վկայակոչված հոդվածի 3-րդ մասը, որպես բացառություն, սահմանում է, որ Հայաստանի Հանրապետությունում կարող են ճանաչվել նաև օտարերկրյա դատարանի՝ հայցի ապահովման մասին որոշումները:

Վերոգրյալի հետ մեկտեղ՝ տեղին է նկատել, որ սնանկության վարույթի շրջանակում կայացվող միջանկյալ դատական ակտերի իրավական բնույթն ու նշանակությունը, պայմանավորված հենց սնանկության վարույթի առանձնահատկություններով, կարող են ենթադրել ուշադրության արժանի հատկանիշներ, որոնք ենթակա են հաշվառման օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման վարույթի շրջանակներում: Մասնավորապես, ի համեմատություն քաղաքացիական գործերի քննության ընթացքում կայացվող միջանկյալ քաղաքացիադատավարական ակտերի՝ սնանկության վարույթի ընթացքում կայացվող համանման ակտերը առանձնանում են ինչպես քանակական բազմազանությամբ, այնպես էլ

[7] *Թադևոսյան Պ.,* Օտարերկրյա դատարանների քաղաքացիական գործերով կայացված դատական ակտերի ճանաչումը և կատարումը ՀՀ-ում, Երևան, ԵՊՀ հրատ., 2014, էջ 89-102:

[8] ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ընդունվել է 09.02.2018թ., ուժի մեջ է մտել 09.04.2018թ. ՀՀՊՏ 2018.03.05/16(1374) Հոդ.208:

որակական՝ բովանդակային առանձնահատկություններով, ինչպես օրինակ՝ գործի քննության կամ գործին մասնակցող անձանց իրավունքների և պարտականությունների վրա ազդեցությունն ու ծավալն է: Այս առումով սնանկության վարույթի շրջանակում օտարերկրյա դատարանի կողմից կայացվող միջանկյալ դատական ակտերի ճանաչման հնարավորության հարցը քննարկելիս հարկ է չբավարարվել միայն դատական ակտի դատավարական կարգավիճակի բացահայտմամբ: Վերոգրյալի համատեքստում հարց է առաջանում, թե **արդյոք թույլատրելի է ճանաչել որպես այդպիսին դատավարական կարգավիճակով եզրափակիչ ակտ չհանդիսացող, սակայն սնանկության գործի շրջանակներում ըստ էության նյութաիրավական հարցեր լուծող օտարերկրյա դատական ակտերը, թե՝ ոչ:**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վերը հիշատակված օրենսդրական դրույթների տառացի մեկնաբանությունից հետևում է, որ ներպետական օրենսդրությունը բացառում է եզրափակիչ չհանդիսացող դատական ակտի ճանաչման հնարավորությունը, բացի օտարերկրյա դատարանի՝ հայցի ապահովման մասին որոշումների, որոնք նույն օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի ուժով ենթակա են կիրառման նաև սնանկության գործերի վարման և սնանկության վարույթի նկատմամբ:

Մեր համոզմամբ, սակայն, վերոգրյալ կանոնակարգումները ամբողջությամբ չեն արտահայտում սնանկության վարույթի և դրանցից բխող՝ սնանկության գործի քննության ընթացքում կայացվող դատական ակտերի առանձնահատկությունները: Հատկանշական է, որ ինչպես սնանկության ինստիտուտին բնորոշ դատավարական հատուկ բնորոշիչները, այնպես էլ ժամանակակից աշխարհում հասարակական հարաբերությունների փոխկապակցվածության, խտացման, աճող բազմազանության միտումները՝ պահանջում են համարժեք ճկուն կանոնակարգումներ, որոնք հնարավորինս կապահովեն դատավարական համապատասխան ինստիտուտների հետապնդած նպատակների պատշաճ իրացումը:

Այս կապակցությամբ գտնում ենք, որ սնանկության կապակցությամբ ծագող հարաբերությունների և սնանկության վարույթի շրջանակում կայացվող դատական ակտերի նկատմամբ նպատակահարմար է կիրառել տարբերակված մոտեցում:

«Քաղաքացիական և առևտրային վեճերով վճիռների իրավասության, ճանաչման և կատարման մասին» թիվ 44/2001 ԵՄ կանոնակարգի 33-րդ կետի համաձայն՝ որպես վճիռ է դիտարկվում մասնակից պետության դատական հաստատության կողմից կայացված ցանկացած դատական ակտ՝ անկախ դրա անվանումից (որոշում, դատական վճիռ, կատարման կարգադրություն), ինչպես նաև դատական ծախսերի հարցը կարգավորող դատական ակտ: Գերմանիայի Դաշնությունում օտարերկրյա վճռի ներքո հասկացվում է ցանկացած վճիռ, որն օրինական ուժով վերջնականապես լուծել է կողմերի միջև գոյություն ունեցող քաղաքացիական վեճը՝ դատական պաշտպանության երաշխավորված իրավունքի հիման վրա, և որն ընդունվել է դատավարական ձևով ՝ մրցակցային գործընթացի արդյունքների հիման վրա[9]:

Վերոգրյալ կարգավորումների համակարգային վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ միջազգային պրակտիկան ճանաչման ենթակա է դիտարկում ցանկացած դատական ակտ՝ անկախ անվանումից, եթե վերջինս «հանգուցալուծում է» նյութաիրավական վեճը, նույնիսկ եթե նշված վեճի լուծման արդյունքում բուն դատավարական գործընթացները դեռևս չեն ավարտվում:

18.06.2026 թվականին ընդունված, 03.07.2027 թվականին ուժի մեջ մտնող ՀՀ սնան-

[9] *Собина Л.Ю.,* Признание иностранных банкротств в международном частном праве, Москва, Статут, 2012, стр. 84:

կության օրենսգիրքը, անդրադառնալով օրենսգրքում օգտագործվող հիմնական հասկացություններին, սահմանում է հետևյալը՝

45) եզրափակիչ դատական ակտ՝

ա. Սնանկության դատարանի վճիռը, գործի վարույթը կարճելու, դիմումն առանց քննության թողնելու, պահանջների վերջնական ցուցակը հաստատելու, գույքի իրացումը թույլատրելու, սնանկության վարույթի առանձին ընթացակարգի ընթացքը եզրափակող այլ որոշումներ,

բ. վերաքննիչ դատարանի՝ Սնանկության դատարանի եզրափակիչ դատական ակտերի դեմ բերված բողոքի քննության արդյունքով կայացրած, ինչպես նաև վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու և վերաքննիչ վարույթը կարճելու մասին որոշումները,

գ. Վճռաբեկ դատարանի՝ վերաքննիչ դատարանի եզրափակիչ դատական ակտերի դեմ բերված բողոքի քննության արդյունքով կայացրած, ինչպես նաև վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու, վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու և վճռաբեկ վարույթը կարճելու մասին որոշումները.

46) միջանկյալ դատական ակտ՝ եզրափակիչ դատական ակտ չհանդիսացող դատարանի այլ որոշում:

Վերոգրյալի հետ մեկտեղ, ՀՀ սնանկության օրենսգրքի 9-րդ բաժինը, կարգավորելով անդրսահմանային սնանկության հետ կապված հարցերը, չի նախատեսում օտարերկրյա դատական ակտերի կատարման կամ ճանաչման մասով հատուկ կարգավորումներ:

Ուստի, նշված իրավական նորմերի հաշվառմամբ գտնում ենք, որ թեև եզրափակիչ դատական ակտերի շարքում, ի թիվս այլնի, ներառվել են սնանկության վարույթի որոշ միջանկյալ վարույթային փուլերի ընթացքը եզրափակող առանձին որոշումներ, սակայն նշվածը բավարար չէ սնանկության վարույթի ընթացքում կայացվող և միևնույն ժամանակ ճանաչման և կատարման ենթակա՝ նյութահիրավական հետևանքներ ունեցող միջանկյալ դատական ակտերի ծավալը օրենսդրական մակարդակում ընդգրկելու համար:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ թեև ՀՀ սնանկության օրենսգրքում սպառիչ սահմանված չէ եզրափակիչ դատական ակտերի շրջանակը, այդուհանդերձ սպառիչ ցանկում չներառված դատական ակտերը որպես եզրափակիչ որակելու չափանիշ է ընտրվել «առանձին ընթացակարգի ընթացքը եզրափակող» հատկանիշը: Գտնում ենք, որ գնահատման նշված ստանդարտը գործնականում կարող է հանգեցնել այնպիսի մեկնաբանության, որը անհարկի կընդլայնի կամ կսահմանափակի նշված իրավանորմի գործողության շրջանակը՝ շեղվելով օրենսդրի հետապնդած իրական նպատակներից: Բացի դա, եթե նշված ձևակերպումն ընկալում և մեկնաբանում ենք այնպես, որ տվյալ դեպքում խոսքը վերաբերում է վարույթային առանձին փուլերի արդյունքները եզրափակող միջանկյալ դատական ակտերին, արդյունքում կրկին ստացվում է այնպես, որ դատական ակտերի ճանաչման ենթակա լինելու չափանիշը ոչ թե դրա նյութահիրավական հետևանքներ առաջացնելու հատկությունն է, այլ պարզապես դատավարական տեսակը՝ եզրափակիչ լինելը:

Օտարերկրյա դատական ակտի ճանաչման իրավական հետևանքների համատեքստում քննարկման առարկա դարձնելով արդեն **ճանաչված և կատարում պահանջող դատական ակտերի կատարման իրավական կառուցակարգերը**՝ հարկ է նկատել, որ վերոգրյալի վերաբերյալ առկա է երկու հիմնական տեսություն:

Մասնավորապես՝ կոմուլյատիվության տեսության համաձայն՝ օտարերկրյա դատական ակտի հետևանքը չի կարող գերազանցել ճանաչող պետության դատական ակտի հետևանքները, ուստի նման ակտի գործողությունը տարածվում է բացառապես այն սահմաններում,

որպիսի սահմաններում կտարածվեր ճանաչող պետության համանման ակտը: Իրավական հետևանքների տարածման տեսության համաձայն՝ դատական ակտի ճանաչմամբ՝ նշված ակտի բոլոր հետևանքները (այդ թվում նաև՝ ճանաչող պետության օրենսդրությամբ չնախատեսված) ևս տարածվում են ճանաչող պետությունում[10]:

Կիսում ենք այն հեղինակների մոտեցումը, որոնք նախապատվությունը տալիս են կոմուլյատիվության տեսությունը՝ վերապահումով առ այն, որ օտարերկրյա դատական ակտի հետևանքները չեն կարող գերազանցել նման ակտի ընդունման պետության օրենսդրությամբ նախատեսված իրավական հետևանքներից:

Այլ խոսքով, օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման ընթացակարգերի համատեքստում կոմուլյատիվությունը հարկ է դիտարկել որպես ելակետային դրույթ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատական ակտի ճանաչմամբ, ըստ էության, նշված ակտին տրվում են այն նույն իրավական հատկանիշները, որոնք բնորոշ են ներպետական ակտին, ուստի և իրավական հետևանքները պետք է լինեն նույնանման ներպետական ակտին համարժեք (վերապահումով առ այն, որ ճանաչված ակտի հետևանքները չեն կարող գերազանցել նման ակտի ընդունման պետության օրենսդրությամբ նախատեսված իրավական հետևանքներից):

Եթե դատական ակտի ճանաչմամբ պետությունն օտարերկրյա դատական ակտին օժտում է իր իսկ դատարանների կողմից կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերին բնորոշ իրավական հատկանիշներով, ապա օտարերկրյա դատական ակտի կատարմամբ պետությունն, ըստ էության, սանկցավորում է նշված դատական ակտով սահմանված ցուցումների հարկադիր կատարումը և տարածում է այդ ակտի գործողությունն իր տարածքում[11]:

Այսինքն՝ կատարում պահանջող են դիտարկվում այն դատական ակտերը, որոնց կամավոր չկատարման դեպքում պետությունն իրավասու է օգտագործել հարկադրանքի լծակներ՝ իր պետության տարածքում գործող համապատասխան մարմինների միջամտությամբ:

Վերոգրյալ դատողությունների լույսի ներքո ավելորդ չէ հավելել այն փաստը, որ դատական ակտի ճանաչումը չի ենթադրում մեխանիկական կատարում. որպեսզի օտարերկրյա դատական ակտը ենթակա լինի կատարման ՀՀ-ում, անհրաժեշտ է դատարանի որոշումը՝ օտարերկրյա դատական ակտի կատարման թույլտվության վերաբերյալ:

Այսպես, օտարերկրյա դատական ակտերի կատարման համատեքստում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համաձայն՝ կատարում պահանջող դատական ակտերը նաև կատարվում են Հայաստանի Հանրապետությունում, եթե այդպիսի կատարումը նախատեսված է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով կամ փոխադարձության հիման վրա:

Նույն օրենսգրքի 357-րդ հոդվածը նախատեսում է, որ օտարերկրյա դատական ակտը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած որոշումը կատարվում է «Կատարողական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Վերոգրյալ կարգավորումների համակարգային վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել, որ ներկա պահին, ինչպես և սննդկության գործերով օտարերկրյա դատական ակտերի ճանաչման նման, նշված ակտերի կատարման վերաբերյալ ևս չունենք որևէ առանձնահա-

[10] *Թադևոսյան Պ.,* Օտարերկրյա դատարանների քաղաքացիական գործերով կայացված դատական ակտերի ճանաչումը և կատարումը ՀՀ-ում, Երևան, ԵՊՀ հրատ., 2014, էջ 40-45:
[11] Տես նույն տեղում, էջ 45-46:

տուկ կարգավորում: Ուստի գտնում ենք, որ անհրաժեշտ է ՀՀ սնանկության օրենսգրքում նախատեսել համապատասխան կարգավորումներ նաև սնանկության գործերով օտարերկրյա դատական ակտերի կատարման մասին: Այլ կերպ ասած՝ առաջարկում ենք սնանկության գործերով օտարերկրյա դատական ակտերի կատարման համատեքստում նախատեսել քաղաքացիադատավարական ընդհանուր կարգից տարբերվող կանոններ՝ համապատասխան կարգավորումները նախատեսելով սնանկության մասին օրենսգրքում:

Այստեղ հարկ է նաև ընդգծել, որ ի տարբերություն քաղաքացիաիրավական այլ վարույթի շրջանակներում կայացվող դատական ակտերի՝ սնանկության գործով կայացվող որոշումների կատարման հարցը պրակտիկայում պետությունները պայմանավորում են նաև ներպետական մակարդակում սեփական պարտատերերի շահերի պաշտպանության համատեքստում: Նշվածը հատկապես առարկայական է դառնում պարտապանի գույքի հնարավոր իրացման փուլում, երբ գոյություն ունեն միմյանց զուգահեռ ընթացող, տարբեր պետություններում բացված մի քանի վարույթներ, իսկ նախապատվությունը գործնականում տրվում է տեղական տնտեսվարողներին:

Եզրակացություն

Ամփոփելով՝ կարող ենք եզրահանգել, որ օտարերկրյա դատական ակտերի ճանաչման փուլում վերջինիս օբյեկտ պետք է դիտարկվեն բացառապես դատական ակտի նյութաիրավական հետևանքները, իսկ դատավարական հետևանքների ընդունման համար էկզեկվատուրա անհրաժեշտ չէ, այն բխում է նյութաիրավական հետևանքների ճանաչումից: Ընդ որում՝ այդ դեպքում դատական ակտի անվանումը չի կարող որևէ էական ու կանխորոշիչ նշանակություն ունենալ, այլ անհրաժեշտ է, որ նույնիսկ դատավարական գործընթացները չավարտվելու դեպքում այն հանգուցալուծի որոշակի նյութաիրավական հարցադրումներ:

Նշվածի համատեքստում առաջարկում ենք ՀՀ սնանկության օրենսգրքում կատարել փոփոխություններ՝ հստակեցնելով «եզրափակիչ դատական ակտ» հասկացությունը:

Բացի դրանից՝ սնանկության գործերով կայացվող օտարերկրյա դատական ակտի ճանաչումը չի ենթադրում մեխանիկական կատարում, այլ պահանջում է համապատասխան որոշման կայացում դատարանի կողմից, որի հիման վրա արդեն տրվում է կատարողական թերթ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկա պահին ներպետական օրենսդրությունը չի սահմանում առանձնահատուկ կարգ՝ սնանկության գործերով օտարերկրյա դատական ակտերի կատարման ընթացակարգի վերաբերյալ, գտնում ենք, որ ելնելով սնանկության ինստիտուտի ոլորտային առանձնահատկություններից, անհրաժեշտ է սնանկության օրենսգրքի նախագծում սահմանել համապատասխան կարգավորումներ սնանկության գործերով օտարերկրյա դատական ակտերի կատարման մասին դատարանի կողմից որոշումների կայացման վերաբերյալ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ որոշակի վերապահումներով առավել ընդունելի է դիտարկվում կոմուլյատիվության տեսությունը, համաձայն որի՝ ճանաչման ենթակա ակտի իրավական ազդեցությունը չի կարող գերազանցել ճանաչող պետության դատարանի կողմից կայացվող համանման ակտի իրավական ազդեցությանը, նպատակահարմար ենք համարում որպես կատարման ենթակա սահմանել բացառապես այն օտարերկրյա դատական ակտերը, որոնք նախատեսվող սնանկության օրենսգրքի կարգավորումների համաձայն՝ համանման պայմաններում ներպետական մակարդակով ևս ենթակա են լինելու կատարման:

Ամփոփագիր: Սույն գիտական հոդվածում ուսումնասիրվում են սնանկության գործերով օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման իրավական հիմնախնդիրները՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով ճանաչման օբյեկտի որոշման հարցին: Հոդվածում հեղինակը զարգացնում է այն հայեցակարգային մոտեցումը, համաձայն որի՝ անդրսահմանային սնանկության վարույթի ճանաչումը և դրա շրջանակում ընդունված առանձին դատական ակտերի ճանաչումը փոխկապակցված, սակայն իրավական բնույթով ոչ նույնական գործընթացներ են: Հիմնավորվում է, որ ճանաչման օբյեկտի որոշման համար անհրաժեշտ է տարբերակել ոչ միայն սնանկության վարույթը և դրա շրջանակում ընդունված դատական ակտը, այլև վերջինիս առաջացրած իրավական հետևանքների բնույթը:

Հոդվածում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում դատական ակտի նյութական և դատավարական հետևանքների տարանջատմանը: Այս համատեքստում վերլուծվում է նաև ճանաչման և կատարման հարաբերակցությունը՝ բացահայտելով դրանց իրավական նշանակության տարբերությունները:

Հոդվածում ձևակերպվում են ճանաչման օբյեկտի որոշման տեսական չափանիշներ և ներկայացվում են օտարերկրյա դատական ակտերի ճանաչման ու կատարման իրավակարգավորման կատարելագործման վերաբերյալ գիտագործնական առաջարկություններ:

Annotation. This scientific article examines the legal issues surrounding the recognition and enforcement of foreign judicial acts in insolvency proceedings, with particular emphasis on the determination of the object of recognition. The author develops a conceptual approach according to which the recognition of cross-border insolvency proceedings and the recognition of individual judicial acts rendered within such proceedings constitute interconnected, yet legally distinct, processes. It is substantiated that, in determining the object of recognition, it is necessary to distinguish not only between the insolvency proceedings themselves and the judicial act rendered within those proceedings, but also between the nature of the legal effects produced by such acts.

Particular attention is paid to the distinction between the substantive and procedural effects of a judicial act. In this context, the relationship between recognition and enforcement is also examined, with a view to identifying the differences in their legal significance.

The article formulates theoretical criteria for determining the object of recognition and puts forward scholarly and practical proposals for improving the legal regulation of the recognition and enforcement of foreign judicial acts.

Аннотация. В настоящей научной статье исследуются правовые проблемы признания и исполнения иностранных судебных актов по делам о несостоятельности (банкротстве), с особым вниманием к вопросу определения объекта признания. Автор развивает концептуальный подход, согласно которому признание трансграничного производства по делу о несостоятельности и признание отдельных судебных актов, принятых в рамках такого производства, представляют собой взаимосвязанные, но не идентичные по своей правовой природе процессы. Обосновывается, что для определения объекта признания необходимо разграничивать не только производство по делу о несостоятельности и судебный акт, принятый в его рамках, но и характер правовых последствий, порождаемых последним.

Особое внимание в статье уделяется разграничению материально-правовых и процессуальных последствий судебного акта. В данном контексте также анализируется соотношение признания и исполнения, выявляются различия в их правовом значении.

В статье сформулированы теоретические критерии определения объекта признания и представлены научно-практические предложения по совершенствованию правового регулирования признания и исполнения иностранных судебных актов.

Բանալի բառեր *– անդրսահմանային, սնանկություն, օտարերկրյա, դատական ակտ, ճանաչում, կատարում, դատավարություն:*

Keywords: *cross-border, insolvency, foreign, judicial act, recognition, enforcement, proceedings.*

Ключевые слова: *трансграничный, несостоятельность, иностранный судебный акт, признание, исполнение, судопроизводство*

Օգտագործված գրականության ցանկ

1. Թադևոսյան Պ., Օտարերկրյա դատարանների քաղաքացիական գործերով կայացված դատական ակտերի ճանաչումը և կատարումը ՀՀ-ում, Երևան, ԵՊՀ հրատ., 2014:
2. Reinhard Bork, "European Cross-Border Insolvency Law", Oxford University Press, 2016:
3. Reinhard Bork, Renato Mangano, "European Cross-Border Insolvency Law", 2nd ed., Oxford University Press, 2022:
4. Собина Л.Ю., Признание иностранных банкротств в международном частном праве, Москва, Статут, 2012:
5. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք:
6. ՀՀ սնանկության օրենսգիրք:
7. «Սնանկության մասին» ՀՀ օրենք:
8. Թիվ ԵԿԴ/0024/16/12 քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշում:
9. UNCITRAL Model Law on Recognition and Enforcement of Insolvency-Related Judgments with Guide to Enactment:

Գրիգորյան Գ. - Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր, Երևանի պետական համալսարանի քաղաքացիական դատավարության ամբիոնի դասախոս, էլհասցե՝ grigoryan.gohar95@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 08.09.2026 թ., տրվել է գրախոսության 08.09.2026 թ., երաշխավորվել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական դատավարության ամբիոնի դոցենտ, պրոֆեսոր Վ. Հովհաննիսյանի կողմից, ընդունվել է տպագրության 01.10.2026 թ.:

https://doi.org/10.59546/18290744-2026.7-9-62

ЛИЛИАНА СИСАКЯН
Главный специалист службы правовой экспертизы аппарата Кассационного суда Республики Армения, Ассистент кафедры гражданского права и гражданско-процессуального права Российско-Армянского университета

ԼԻԼԻԱՆԱ ՍԻՍԱԿՅԱՆ
ՀՀ Վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննության ծառայության գլխավոր մասնագետ, Հայ-ռուսական համալսարանի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի ասիստենտ

LILIANA SISAKYAN
Chief Specialist of the Legal Expertise Service of the Staff of the Cassation Court of the Republic of Armenia, Assistant Lecturer at the Chair of Civil Law and Civil Procedure Law, Russian-Armenian University
https://orcid.org/0009-0003-0099-2716

СУДЕБНАЯ ОШИБКА, ДЕФЕКТЫ ВСТУПИВШЕГО В ЗАКОННУЮ СИЛУ СУДЕБНОГО АКТА И ПЕРЕСМОТР ПО ВНОВЬ ОТКРЫВШИМСЯ И НОВЫМ ОБСТОЯТЕЛЬСТВАМ

ԴԱՏԱԿԱՆ ՍԽԱԼԸ, ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏԱԾ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ ՆՈՐ ԵՐԵՎԱՆ ԵԿԱԾ ԵՎ ՆՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՔՈՎ

JUDICIAL ERROR, DEFECTS OF FINAL JUDICIAL DECISIONS, AND REVIEW BASED ON NEWLY DISCOVERED AND NEW CIRCUMSTANCES

Введение

Вопрос о соотношении категории судебной ошибки и института пересмотра вступивших в законную силу судебных актов по вновь открывшимся и новым обстоятельствам принадлежит к числу наиболее дискуссионных в науке гражданского процессуального права, и от его разрешения непосредственно зависят как определение функционального назначения исследуемого производства, так и конструирование полномочий пересматривающего суда. В доктрине сложились два полярных подхода: согласно первому, именно судебная ошибка

образует основание рассматриваемого пересмотра[1]; согласно второму — судебная ошибка основанием такого пересмотра не является и устраняется исключительно в инстанционном порядке[2]. Как отмечает Р. К. Петручак, изначально производство по пересмотру по новым или вновь открывшимся обстоятельствам не предназначалось для исправления нарушений норм материального или процессуального права, допущенных при рассмотрении дела, поскольку такие нарушения подлежат устранению в ином — инстанционном — порядке[3]; в дореволюционной доктрине И.Е. Энгельман усматривал цель просьбы о пересмотре в отмене решения и замене его другим, соответствующим по своему содержанию настоящим обстоятельствам дела[4].

Полагаем, что причина устойчивости данной контроверзы носит методологический характер: полемизирующие стороны вкладывают в понятие судебной ошибки различное содержание, вследствие чего спор о соотношении понятий подменяется спором о словах. Продуктивное разрешение проблемы требует, во-первых, определения понятия судебной ошибки с фиксацией его конститутивных признаков и, во-вторых, дифференцированного анализа оснований пересмотра, поскольку, как будет показано ниже, единый ответ на вопрос о соотношении исследуемых категорий невозможен в принципе: он различен для различных оснований, предусмотренных статьями 418 и 419 Гражданского процессуального кодекса Республики Армения[5].

Основная часть

Отправной точкой анализа служит презумпция законности и обоснованности вступившего в законную силу судебного акта: выводы суда считаются подтверждёнными исследованными доказательствами, а акт — соответствующим требованиям законности, обоснованности и мотивированности, закреплённым статьёй 6 названного Кодекса. Вместе с тем правосудие как деятельность, осуществляемая человеком, не гарантировано от ошибок (errare humanum est), и само существование исследуемого института свидетельствует о том, что законодатель признаёт риск сохранения в правовом обороте вступивших в законную силу, но неправосудных актов[6]. Как справедливо указал Конституционный Суд Российской Федерации, ошибочное судебное решение не может считаться правосудием, и государство обязано гарантировать защиту прав и свобод от судебной ошибки, предусмотрев механизм (процедуру) исправления таких ошибок, в том числе на стадии пересмотра судебного решения по вновь открывшимся

[1] См. *Зайцев И.М.* Устранение судебных ошибок в гражданском процессе. Саратов: Изд-во Саратовского университета, 1985; *Терехова Л.А.* Право на исправление судебной ошибки как компонент судебной защиты. Дис. … док. юрид. наук. Екатеринбург, 2008.

[2] См. *Лесницкая Л.Ф.* Пересмотр решения суда по вновь открывшимся обстоятельствам // Комментарий судебной практики. Вып. 4. М., 1998; *Блажеев В.В.* Пересмотр судебных постановлений по вновь открывшимся обстоятельствам в механизме судебной защиты прав и законных интересов граждан и организаций // Законы России: опыт, анализ, практика. 2008. № 11.

[3] См. *Петручак Р.К.* Производство по пересмотру вступивших в законную силу судебных актов по новым или вновь открывшимся обстоятельствам в гражданском судопроизводстве. Дис. … канд. юрид. наук. М., 2015.

[4] См. *Энгельман И.Е.* Курс русского гражданского судопроизводства. Юрьев, 1912.

[5] См. Гражданский процессуальный кодекс Республики Армения под номером ՀՕ-110-Ն, вступил в законную силу 09.04.2018 г.

[6] См. *Давыдов В.А.* Возобновление уголовного судопроизводства ввиду новых или вновь открывшихся обстоятельств: теория и практика исправления судебных ошибок. М.: Изд-во «Юрайт», 2012.

обстоятельствам[7].

«Ошибки» или, как иногда называют правоведы[8], «дефекты» судебных актов могут возникать не только из-за ошибки, допущенной судом (судьей) при рассмотрении и разрешении дела, но и по различным другим причинам. Одним из таких возможных случаев является, например, возникновение обстоятельств, которые не были или не могли быть известны участникам процесса в ходе судебного разбирательства. В случае существования таких обстоятельств, которые привели к неправильному разрешению дела, судебный акт, вынесенный судом, нуждается в определенной точности, с целью обеспечения справедливого и правильного рассмотрения дела и его разрешения. При таких условиях есть возможность дополнительно проверить законность и обоснованность уже вступившего в законную силу судебного акта.

Обзор доктринальных определений судебной ошибки обнаруживает конкуренцию широкого и узкого подходов. Сторонники широкого (объективного) подхода определяют судебную ошибку как любое действие судебных органов, не соответствующее целям правосудия, либо как любое нарушение субъективных прав участников процесса, в том числе допущенное невиновно[9]. Так, А. Н. Резуненко усматривает суть судебной ошибки в том, что она нарушает субъективное право на судебную защиту: материальное право остаётся незащищённым, а цель правосудия — недостигнутой; недостатком решения, вынесенного без учёта вновь открывшихся обстоятельств, автор считает его необоснованность[10]. Сторонники узкого (субъективного) подхода, напротив, связывают судебную ошибку с упречным правоприменением самого суда. Классическую формулу предложил А. Х. Гольмстен: неправильным может быть названо лишь такое решение, которое постановлено при неправильном отношении судьи к наличным данным; решение же, постановленное судьёй, не знавшим о существовании фактов, опровергающих факты, им признанные, нельзя назвать неправильным — «оно совершенно правильно и разве только несовершенное, одностороннее решение»[11]. В том же русле В. В. Блажеев подчёркивает, что судебная ошибка в применении права всегда является следствием нарушения норм материального или процессуального права, допущенного судом при производстве по делу, и выражается в виновном действии или бездействии судей; нельзя признать ошибкой суда неустановление обстоятельства, о существовании которого суд по объективным причинам не должен был знать[12]. Ещё И. Бентам замечал, что судью нельзя обвинить ни в несправедливости, ни в ошибке только потому, что он не рассмотрел доказательств, которые ему не были представлены[13].

Разделяя в основе своей узкий подход, считаем необходимым уточнить его двумя кумулятивными признаками. *Судебная ошибка, по нашему мнению, есть допущенное судом*

---

[7] См. Постановление Конституционного Суда Российской Федерации от 03.02.1998 года № 5-П «По делу о проверке конституционности статей 180, 181, пункта 3 части 1 статьи 187 и статьи 192 Арбитражного процессуального кодекса Российской Федерации».

[8] См. например, *Петручак Р.К.* Производство по пересмотру вступивших в законную силу судебных актов по вновь открывшимся или новым обстоятельствам в гражданском судопроизводстве, Дисс./ Москва, 2015г., стр. 20.

[9] См. *Терехова Л.А.* Указ. соч.; *Резуненко А.Н.* Пересмотр судебных актов, вступивших в законную силу, по вновь открывшимся обстоятельствам как стадия гражданского процесса. Дис. … канд. юрид. наук. Волгоград, 2001.

[10] См. *Резуненко А.Н.* Указ. соч.

[11] См. *Гольмстен А.Х.* Учебник русского гражданского судопроизводства. СПб., 1913.

[12] См. *Блажеев В.В.* Указ. соч.

[13] См. *Бентам И.* О судебных доказательствах. Киев, 1876.

упречное (то есть такое, которого суд мог и должен был избежать при надлежащем осуществлении правосудия) нарушение норм материального или процессуального права, которое предопределило неправильный по существу исход дела. Из предложенного определения следуют два ограничения объёма понятия. Во-первых, не всякое нарушение нормы права образует судебную ошибку: судебный акт, вынесенный с нарушением или неприменением определённой нормы, но содержащий по существу правильное разрешение дела, страдает пороком законности, однако судебной ошибки в собственном смысле не содержит, поскольку отсутствует каузальная связь нарушения с исходом дела. Во-вторых, не всякий дефект судебного акта имеет своим источником ошибку суда: недостижение целей судопроизводства, обусловленное исключительно упущениями самой стороны (например, непредставлением доказательств), не может служить поводом для пересмотра, поскольку лица, участвующие в деле, несут риск наступления последствий совершения или несовершения ими процессуальных действий, — что подтверждается и новейшей практикой Кассационного суда Республики Армения, отклонившего жалобу лица, не проявившего при рассмотрении дела достаточной заботливости и осмотрительности[14].

Изложенное позволяет предложить в порядке научной новизны **трёхчленную типологию дефектов вступившего в законную силу судебного акта**, каждому элементу которой соответствует собственная процессуальная форма устранения. Дефекты первого типа — *судебные ошибки stricto sensu* — представляют собой упречное правоприменение, предопределившее исход дела; адекватной формой их устранения является инстанционный контроль (апелляционное и кассационное производство). Дефекты второго типа — *объективная неполнота фактической основы судебного акта* — возникают вследствие неизвестности суду и лицам, участвующим в деле, существенных обстоятельств, объективно существовавших на момент разрешения дела; они устраняются пересмотром по вновь открывшимся обстоятельствам. Дефекты третьего типа — *последующее отпадение правового или фактического основания судебного акта* — обусловлены обстоятельствами, возникшими после вступления акта в законную силу (признание применённой нормы неконституционной, констатация нарушения Конвенции, отмена акта-основания), и устраняются пересмотром по новым обстоятельствам. Смешение названных типов дефектов, как представляется, и является источником доктринальной контроверзы о соотношении судебной ошибки и исследуемого института.

Применение предложенной типологии к основаниям статьи 418 Кодекса приводит к следующему выводу: производство по пересмотру по вновь открывшимся обстоятельствам, по общему правилу, не направлено на исправление судебной ошибки. Пересматриваемый по данному основанию судебный акт вызывает сомнения с точки зрения обоснованности, но не законности: в нём не отражены обстоятельства, имеющие существенное значение для дела, однако это обусловлено не нарушением судом норм права, а объективной неизвестностью соответствующих фактов. Суд, вынесший акт, руководствовался всей доступной ему системной совокупностью фактических обстоятельств, доказательств и правовых норм, вследствие чего его поведение неупречно. Данный вывод согласуется с позицией Л.Ф. Лесницкой, отмечавшей, что в рассматриваемом производстве, в отличие от кассационного и,

[14] См. Постановление Кассационного суда Республики Армения от 19.07.2024 года по гражданскому делу под номером ԵԴ/28729/02/19.

законность и обоснованность проверяемого акта оцениваются не с точки зрения соответствия материалам дела, а в свете вновь открывшихся обстоятельств, вследствие чего данный вид пересмотра не основан на судебной ошибке[15]. Исключение составляют специальные составы пунктов 2 и 3 части 1 статьи 418 Кодекса: фальсификация доказательств, заведомо ложные показания и заключения, а равно преступные деяния судьи, подтверждённые вступившим в законную силу судебным актом, порождают гибридную ситуацию — внешне акт также страдает пороком фактической основы, однако в случае преступного деяния судьи дефект акта имеет одновременно и субъективно упречное происхождение, вплотную приближаясь к судебной ошибке в узком смысле.

թական համակարգի ներդրումը՝ կապելով այն նաև դատապարտյալների հոգեբանական վիճակի բարելավման հետ: Ըստ Նովոյի[6]՝ «… մարդը ծնվել է ազատ և նրա բնությանը հարիր չէ մնալ անազատության մեջ: Նույնիսկ երբ կրթությունն իրականացվում է քրեակատարողական հիմնարկներում, դեռևս հնարավոր է հանդիպել ուսանող-բանտարկյալների, որոնք վստահորեն պնդում են, որ կրթական գործընթացում որևէ հետաքրքրություն չկա, բայց հաճախ նախընտրում են մասնակցություն ունենալ այս ծրագրերին՝ պատիժներից խուսափելու համար»: Որոշ հեղինակներ, շեշտելով, որ այս ազատությունը բոլորին հավասարապես տրված բարիք է, նշում են, որ բանտը հիմնված է «ազատազրկման» վրա[7]: Այս տեսանկյունից առավել խոցելի են պատիժ կրող անչափահասները: Ըստ Youth Justice-ի (2020թ.)[8]՝ Մեծ Բրիտանիայում օրական մոտ 1995 երեխայի մեղադրանք է առաջադրվում: Հատկանշական է, որ այս երեխաները հաճախում են դպրոց, և կրթական բնականոն գործընթացը խաթարվում է նույնիսկ այն ժամանակ, երբ նրանց գործերը դեռևս գտնվում են նախնական քննության փուլում: Որոշ հեղինակներ նշում են. «Դատապարտյալների կրթությունը պետական մարմինների կողմից միաժամանակ և՛ հասարակության շահերից բխող անփոխարինելի նախազգուշական միջոց է, և՛ պարտավորություն. այն մտածողության մեծագույն ուժն է»[9]:

II. Կրթության իրացման իրավական երաշխիքները

Կրթությունը օրենքով երաշխավորված իրավունք է թե՛ միջազգային և թե՛ ներպետական իրավական համակարգերում: Դատապարտյալների կրթության իրավունքի ապահովումը նպատակ ունի վերափոխել նրանց կյանքը, դարձնել քրեակատարողական հիմնարկներում պատժի կրումն ավելի մարդակենտրոն՝ ստեղծելով նոր հնարավորություններ և թույլ տալով դատապարտյալներին կրթության միջոցով վերադառնալ հասարակություն՝ որպես լիիրավ քաղաքացիներ: Կրթությունն անհատի ինքնազարգացման հիմքն է, իսկ դատապարտյալի համար այն նաև հիմնական գործիքներից է, որով հնարավոր է վերափոխվել, ընդլայնել աշխարհաճանաչողությունը և, ինչու չէ, վերականգնել ինքնագնահատականը: Կարևոր է, որ հասարակության կողմից որդեգրվի այն գիտակցումը, որ ազատազրկումը չպետք է հանգեցնի անձի քաղաքացիական ինքնության լիակատար կորստի:

2.1 Դատապարտյալների կրթության իրավունքի միջազգային իրավական երաշխիքները

Կրթության իրավունքն ամրագրված է մի շարք միջազգային փաստաթղթերում և կոնվենցիաներում: Դրանցից կարևորագույնն է ***«Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը» (1948):*** Այն մասնավորապես սահմանում է, որ *«Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք (…), կրթությունը պետք է ուղղված լինի մարդկային անհատականության լիակատար զարգացմանը և մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների նկատմամբ հարգանքի մեծացմանը (…)»* (26-րդ հոդված): Նորմի ձևակերպման մեջ օգտագործվում է

rge.22.Extra.1409

[6] Տես *Barreiro-Gen, M., Novo-Corti, I., & Ramil-Díaz, M.* (2013). Employment, education and social exclusion: Analyzing the situation of people at prison in Galicia. Revista Galega de Economía, 22(ex), էջեր 89-100. https://doi.org/10.15304/rge.22.Extra.1409

[7] Տես *Foucault, M.* (1977). Discipline and Punish: The Birth of the Prison. (A. Sheridan, թարգմ.). Pantheon Books, New York, 1977, էջ 270 **ISBN-10:** 0394499425

[8] Տես Youth Justice Board / Ministry of Justice (2020). *Youth Justice Statistics 2019/20: England and Wales.*

[9] Տես *Foucault, M.* (1977). Discipline and Punish: The Birth of the Prison. (A. Sheridan, թարգմ.). Pantheon Books, New York, 1977, էջ 270 **ISBN-10:** 0394499425

«յուրաքանչյուր ոք» արտահայտությունը, ինչը փաստում է, որ իրավունքը վերաբերելի է նաև դատապարտյալներին: Նման դրույթներ են պարունակում նաև ***«Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը» (1966թ.)***, նշելով, որ *«(…) կրթությունը պետք է ուղղված լինի մարդկային անհատականության լիակատար զարգացմանը և պետք է հասանելի լինի բոլորին (ներառյալ միջնակարգ և բարձրագույն կրթությունը)»* (հոդված 13): Իսկ ***Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) (Արձանագրություն 1)*** 2-րդ հոդվածը հստակորեն ամրագրում է՝ *«Յուրաքանչյուր ոք ունի կրթության (…) իրավունք»:* Այս համատեքստում կարևոր նշանակություն ունեն նաև ***Եվրոպական բանտային կանոնները և ՄԱԿ-ի «Նելսոն Մանդելայի կանոնները» (Բանտարկյալների հետ վարվելու նվազագույն ստանդարտ կանոններ, այսուհետ՝ Նվազագույն ստանդարտ կանոններ):*** Մասնավորապես՝ Եվրոպական բանտային կանոնների Կանոն 28-ի համաձայն՝*«(…) յուրաքանչյուր բանտ պետք է ապահովի կրթական ծրագրերի հասանելիություն, որոնք պետք է դիտարկվեն նույն առաջնահերթությամբ, ինչ աշխատանքը»,* Կանոն 60.4-ն էլ սահմանում է՝ *«(…) կրթությունը պետք է հասանելի լինի ազատությունից զրկված բոլոր անձանց»:* Նվազագույն ստանդարտ կանոնների Կանոն 104-ը պահանջում է, որ կրթությունը հասանելի լինի *«(…) բոլոր դատապարտյալների համար, հատկապես նրանց, ովքեր անգրագետ են կամ չունեն տարրական կրթություն: Կրթությունը պետք է լինի շարունակական և փոխկապակցված երկրի ընդհանուր կրթական համակարգի հետ»*: Այս փաստաթղթերն ուսումնասիրելով՝ եզրակացնում ենք, որ նրանցում կրթությունն ամրագրված չէ որպես «արտոնություն», այլ պարտադիր իրավունք, որը պետությունը պարտավոր է ապահովել՝ անկախ անձի գտնվելու վայրից: Նմանատիպ նորմեր պարունակում են նաև ***«Կրթության բնագավառում խտրականության դեմ կոնվենցիան» (UNESCO)*** (հոդվածներ 3,4 և 5), ***Վիեննայի հռչակագիրը և գործողությունների ծրագիրը (1993)***, ***Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան (UNCRC)***, ***Պեկինի հռչակագիրը և գործողությունների հարթակը (1995)*** և այլն:

2.2 ՄԻԵԴ նախադեպային իրավունքը դատապարտյալների կրթության իրավունքի վերաբերյալ

Թեև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվածը ուղղակիորեն չի սահմանում պետության պոզիտիվ պարտավորությունը՝ ՔԿՀ-ներում բոլոր տեսակի կրթական ծրագրերն ապահովելու համար, դատարանի որոշումները տարիների ընթացքում ձևավորել են նախադեպային պրակտիկա: Կարևորագույն նախադեպերից է Jankovskis v. Lithuania (2017)[10] գործը, որի շրջանակում ՄԻԵԴ-ը հաստատել է, որ համացանցի հասանելիության բացարձակ արգելքը կրթական նպատակներով խախտում է անձի՝ տեղեկատվություն ստանալու իրավունքը: Դատարանը նշեց, որ պետությունները պետք է դիտարկեն կոնկրետ կրթական կայքերի հասանելիության հնարավորությունը՝ պահպանելով անվտանգությունը: Հատկանշական է նաև Chaldayev v. Russia (2019)[11] գործը, որով Դատարանը վերահաստատեց, որ պետության կողմից կրթության նկատմամբ ցանկացած սահմանափակում պետք է լինի համաչափ և ունենա հստակ իրավական նպատակ: Իսկ Mehmet Reşit Arslan and Orhan Bingöl v. Turkey (2019)[12] գործով ՄԻԵԴ-ը գտավ, որ տեղի է ունեցել դատապարտյալի հիմնարար իրավունքների խախտում, մասնավորապես՝ կիրառվել էր համա-

[10] Տես Jankovskis v. Lithuania (2017) https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:[%22001-170354%22]}
[11] Տես Chaldayev v. Russia (2019) https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:[%22001-193262%22]}
[12] Տես Mehmet Reşit Arslan and Orhan Bingöl v. Turkey (2019) https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:[%22001-194194%22]}

կարգիչների ընդհանուր արգելք՝ առանց հաշվի առնելու, որ համակարգիչը դատապարտյալի կողմից օգտագործվելու էր վերահսկվող պայմաններում և միայն կրթական նպատակներով: Դատարանը շեշտեց, որ կրթությունը կարևոր դեր ունի դատապարտյալների վերականգնման և վերասոցիալականացման գործում: Թեև անվտանգությունը լեգիտիմ նպատակ է, սակայն թվային տեխնոլոգիաների բացարձակ արգելքը՝ առանց այլընտրանքային լուծումներ դիտարկելու (օրինակ՝ սահմանափակ և վերահսկվող մուտք համացանց), համաչափ չէր հետապնդվող նպատակին:

2.3 Դատապարտյալների կրթության իրավունքի ներպետական իրավական երաշխիքները

Ինչպես մի շարք պետություններում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում բոլորի կրթության իրավունքը սահմանադրական մակարդակով ամրագրված իրավունք է: Դեռևս 1990-ականների սկզբից ՀՀ-ն միացել է այնպիսի միջազգային առանցքային փաստաթղթերի, ինչպիսիք են ***Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան (1992)*** և ***Կրթության ոլորտում խտրականության դեմ կոնվենցիան (1993)***: Դրանով իսկ պետությունը ստանձնել է միջազգային իրավական պարտավորություններ՝ ապահովելու կրթության իրավունքը յուրաքանչյուրի համար՝ անկախ նրա գտնվելու վայրից կամ իրավական կարգավիճակից: Սա նշանակում է, որ քրեակատարողական հիմնարկներում կրթական ծրագրերի ներդրումը ոչ թե պարզապես բարի կամքի դրսևորում է, այլ պետության ստանձնած միջազգային պարտավորությունների ուղղակի կատարում:

Ինչ վերաբերում է ներպետական իրավական ակտերին, ապա հատկանշական է այն փաստը, որ ՀՀ նոր ՔԿՕ-ն[13] (2022) ամբողջությամբ վերափոխեց «պատժի» վերաբերյալ պետության որդեգրած քաղաքականությունը: Մասնավորապես՝ օրենսգրքում վերասոցիալականացումը դիտարկվում է որպես առաջնահերթություն, իսկ կրթությունը՝ դրա անբաժանելի տարր: Նմանատիպ դրույթներ են պարունակում նաև «Կրթության մասին» ՀՀ օրենքը[14] (1999), «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը[15] (2009), «Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին» ՀՀ օրենքը[16] (2025), «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» ՀՀ օրենքը[17] (2024), «Երիտասարդական քաղաքականության մասին» ՀՀ օրենքը[18] (2025), որոնցում ամրագրվում է կրթության իրավունքի իրականացման հավասարությունը բոլորի, այդ թվում՝ նաև քրեակատարողական հիմնարկներում գտնվող անձանց համար: Այս համատեքստում առավել կարևոր են նաև անչափահասների վերաբերյալ դրույթները:

[13] Տես ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, ընդունան ամսաթիվ՝ 15.06.2022 թ., ուժի մեջ մտնելու ամսաթիվ՝ 01.07.2022 թ., https://www.arlis.am/hy/acts/164938/latest

[14] Տես «Կրթության մասին» ՀՀ օրենքը, ընդունման ամսաթիվ՝ 14.04.1999 թ., ուժի մեջ մտնելու ամսաթիվ՝ 14.05.1999 թ., https://www.arlis.am/hy/acts/220897/latest

[15] Տես «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը, ընդունման ամսաթիվ՝ 10.07.2009 թ., ուժի մեջ մտնելու ամսաթիվ՝ 15.08.2009 թ., https://www.arlis.am/hy/acts/216725/latest

[16] Տես «Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին» ՀՀ օրենքը, ընդունման ամսաթիվ՝ 22.10.2025 թ., ուժի մեջ մտնելու ամսաթիվ՝ 2.11.2025թ., https://www.arlis.am/hy/acts/216720/latest

[17] Տես «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» ՀՀ օրենքը, ընդունման ամսաթիվ՝ 22.05.2024թ., ուժի մեջ մտնելու ամսաթիվ՝ 24.06.2024 թ., https://www.arlis.am/hy/acts/199594/latest

[18] Տես «Երիտասարդական քաղաքականության մասին» ՀՀ օրենքը ընդունման ամսաթիվ՝ 05.03.2025թ., ուժի մեջ մտնելու ամսաթիվ՝ 29.03.2025 թ., https://www.arlis.am/hy/acts/204846/latest

III. Կրթության իրավունքի ապահովման խնդիրները ՀՀ քրեակատարողական հիմնարկներում, հատկապես՝ անչափահասների շրջանում

Վերոնշյալ իրավական ակտերում ամրագրված են քրեակատարողական հիմնարկներում գտնվող անչափահասների կրթական գործընթացը պատշաճ կազմակերպելու մի շարք երաշխիքներ: Մասնավորապես՝ ամրագրվում է երիտասարդության ոլորտում իրականացվող ծրագրերին երիտասարդների առավելագույն մասնակցության ապահովումը, որը պետք է հիմնված լինի ներառականության սկզբունքի վրա: Այս դրույթներով ապահովված իրավունքների կրողներն են նաև քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող երիտասարդները:

Ներպետական իրավական համակարգում շրջադարձային փոփոխություն տեղի ունեցավ 2022 թվականին: 2022 թվականի մայիսին ՀՀ կառավարության նախաձեռնած փոփոխությունների արդյունքում «Կրթության մասին» օրենքում ամրագրվեց, որ պարտադիր տասներկուամյա միջնակարգ կրթության իրավունքի իրացման համար տարիքային սահմանափակումը (մինչև 19 տարեկան) չի տարածվում քրեակատարողական հիմնարկներում ազատազրկման ձևով պատիժ կրող այն դատապարտյալների վրա, որոնց պատժի կրման ժամկետը լրանալուն կրթության իրավունքի վերաբերյալ գրավոր դիմում ներկայացնելու պահին մնացել է մեկ տարուց ավելի: Վերջիններս իրենց ցանկությամբ կարող են իրացնել իրենց կրթության իրավունքը (միջնակարգ կրթություն ստանալ) ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին: Սա նշանակալից քայլ էր վերասոցիալականացման քաղաքականության իրականացման ոլորտում, հատկապես հաշվի առնելով այն փաստը, որ 2022 թվականի մայիսի դրությամբ ՀՀ քրեակատարողական հիմնարկներում 19 տարեկանից բարձր շուրջ 300 անձ չուներ հանրակրթություն: Հանրակրթություն չունեցող դատապարտյալներին պատժի կրումից հետո առավել բարդ էր լինում գտնել աշխատանք, ինչն իր հերթին բարձրացնում էր կրկնահանցագործությունների մակարդակը: Կային նաև այլ խնդիրներ, մասնավորապես՝ քրեակատարողական հիմնարկներում (այսուհետ՝ ՔԿՀ) անգործությունը հանգեցնում էր անձանց հոգեբանական հետընթացի, իսկ կրթական ծրագրերը (այդ թվում՝ գեղագիտական դաստիարակությունը) ծառայում են որպես բարոյահոգեբանական վերականգնման միջոց՝ օգնելով փոխել դատապարտյալի արժեքային համակարգը:

Անչափահասների պարագայում կրթության իրավունքի իրացումը դադարում է լինել պարզապես իրավունք և վերածվում է վերասոցիալականացման հիմնասյան: ՀՀ ՔԿՀ-ներում, սակայն, այս ոլորտը դեռևս բախվում է մի շարք համակարգային խնդիրների, որոնք խաթարում են պատժի նպատակների արդյունավետ իրականացումը:

Թեև ՀՀ օրենսդրությամբ հանրակրթությունը պարտադիր է, այնուամենայնիվ գործնականում առկա են մի շարք բարդություններ: Ամենաառաջնային խնդիրներից է ուսումնական ծրագրերի հարմարեցումը: ՔԿՀ-ներում սովորող անչափահասները հաճախ ունենում են նախկինում ձևավորված կրթական մեծ բացթողումներ: Առաջարկվող հանրակրթական ծրագրերը միշտ չէ, որ հաշվի են առնում նրանց հոգեբանական առանձնահատկությունները և կրթական ցածր մեկնարկային մակարդակը: Բացի այդ՝ ՔԿՀ-ներում դասավանդող ուսուցիչները միշտ չէ, որ տիրապետում են պենիտենցիար մանկավարժության մեթոդներին, ինչը դժվարացնում է կրթական գործընթացում դատապարտյալի լիարժեք ներգրավումը:

ՀՀ ՔԿՀ-ներում պատիժ կրող անչափահասների համար կրթությունը պետք է լինի կամուրջ դեպի աշխատաշուկա, սակայն առաջարկվող մասնագիտությունների շրջանակը խիստ սահմանափակ է և հաճախ չի համապատասխանում ժամանակակից աշխատաշուկայի պահանջներին: Բացի այդ՝ առկա են նաև բարձրագույն կրթության բազմաթիվ խոչընդոտներ,

որոնք անմատչելի են դարձնում լիարժեք կրթական գործընթացը: Թեև օրենքը չի արգելում, սակայն հեռավար ուսուցման տեխնիկական և կազմակերպչական մեխանիզմների բացակայությունը գործնականում անհնար է դարձնում անչափահասի մուտքը բուհական համակարգ:

Խնդրահարույց է նաև թվային կրթության և տեխնիկական մեկուսացման հանգամանքը: Ժամանակակից աշխարհում կրթությունն անհնար է առանց համացանցի և թվային գործիքների: Ինչպես մի շարք պետություններում, այնպես էլ ՀՀ ՔԿՀ-ներում անչափահասները մեծամասամբ զրկված են լինում կրթական առցանց հարթակներից և գրադարաններից, ինչը հանգեցնում է նրանց թվային հետամնացությանը հասակակիցների համեմատ:

Որոշ դեպքերում էլ ուսումնառությունը դիտվում է որպես «համագործակցություն վարչակազմի հետ», ինչը նվազեցնում է անչափահասի հետաքրքրվածությունը, ավելին՝ կրթական առաջադիմությունը ոչ միշտ է ազդում պատժի կրման պայմանների բարելավման կամ վաղաժամկետ ազատման վրա, ինչը նույնպես բացասական ազդեցություն է ունենում անչափահասների մոտիվացիայի վրա:

IV. Կրթության իրավունքի իրացման առանձնահատկությունները ՀՀ ՔԿՀ-ներում՝ ըստ համապատասխան անվտանգային գոտու

ՀՀ նոր ՔԿՕ-ի համաձայն՝ դատապարտյալների կրթության իրավունքի իրացումը զգալիորեն կախված է այն անվտանգային գոտուց, որտեղ անձը կրում է պատիժը: Անվտանգային գոտիներն անմիջականորեն ազդում են կրթական գործընթացի կազմակերպման ձևի, տեղաշարժի ազատության և արտաքին աշխարհի հետ կապի վրա:

Ցածր անվտանգային գոտում կրթության իրավունքի իրացման համար առկա են լավագույն պայմանները, քանի որ շեշտը դրված է սոցիալական վերաինտեգրման վրա: Այստեղ պատիժ կրող դատապարտյալները կարող են իրավունք ստանալ լքելու հիմնարկի տարածքը՝ ուսումնական հաստատություններում դասերին մասնակցելու համար: Վերջիններս՝ ի տարբերություն այլ անվտանգային գոտիներում պատիժ կրող դատապարտյալների, հնարավորություն ունեն ներգրավվելու մասնագիտական ուսումնական ծրագրերում, որոնք իրականացվում են քաղաքացիական հասարակության կամ մասնավոր հատվածի հետ համագործակցության շրջանակում: Ցածր անվտանգային գոտում սահմանափակումները նվազագույն են, ինչը թույլ է տալիս ավելի լայնորեն օգտվել գրադարաններից և կրթական այլ ռեսուրսներից:

Միջին անվտանգային գոտում կրթական գործընթացը հիմնականում սահմանափակվում է հիմնարկի ներսում: Այն հիմնականում կազմակերպվում է ՔԿՀ-ի տարածքում գործող կրթական խմբակների միջոցով: Այս գոտում՝ ի տարբերություն նախորդի, դատապարտյալների տեղաշարժը թույլատրվում է հիմնարկի ներսում՝ դասասենյակներ հաճախելու նպատակով: Բացի այդ՝ առկա են նաև հեռավար կրթության կազմակերպման լրջագույն խնդիրներ, մասնավորապես՝ ելքը դեպի արտաքին ուսումնական հաստատություններ խիստ սահմանափակված է կամ լիովին արգելված:

Ինչ վերաբերում է **բարձր անվտանգային գոտուն**, ապա այստեղ կրթության իրավունքի իրացումը բախվում է ամենամեծ դժվարություններին՝ անվտանգային խիստ միջոցառումների պատճառով: Քանի որ դատապարտյալների տեղաշարժն ու շփումը խիստ սահմանափակ են, կրթությունը հաճախ կրում է անհատական բնույթ: Այստեղ բացակայում են համապատասխան թվային բավարար պայմանները՝ արդյունավետ ուսուցում ապահովելու համար: Գրեթե անհնար է դառնում նաև մասնագիտական (արհեստագործական) կրթությունը, քանի որ գործիքների և արտադրական տարածքների հասանելիությունը խիստ սահմանափակված է: Այնուամենայնիվ, կարևոր է հիշել, որ անվտանգային գոտին չպետք է դառնա կրթության

իրավունքի բովանդակային զրկման հիմք: Եթե անձը գտնվում է բարձր անվտանգային գոտում, պետությունը պոզիտիվ պարտավորություն ունի ապահովելու այլընտրանքային (օրինակ՝ տեխնիկական) միջոցներ, որպեսզի մեկուսացումը չհանգեցնի մտավոր լճացման:

ՀՀ նոր քրեակատարողական օրենսդրության տրամաբանությունը հիմնված է կրթության՝ որպես անվտանգային գոտու առաջխաղացման գործոնի դիտարկման վրա: Այսպես, դատապարտյալի «առաջխաղացումը»՝ բարձր գոտուց միջին, միջինից՝ ցածր, իրականացվում է անհատական պլանի հիման վրա: Կրթական ակտիվությունը դրական վարքագծի ապացույցն է: Գոտիականության փոփոխության հարցը քննարկելիս սոցիալական-հոգեբանական բաժնի կողմից տրվող բնութագրում կրթական ցուցանիշները կարող են լինել վճռորոշ: Ընդ որում, կրթական գործոնի ազդեցությունը տարբերվում է՝ ըստ գործոնների: Բարձր անվտանգային գոտում կրթությունը դիտարկվում է որպես մեկուսացման բացասական ազդեցությունը մեղմող միջոց, միջին անվտանգային գոտում այն դառնում է հիմնական զբաղվածություն և հարթակ՝ ցածր անվտանգային գոտի անցնելու համար: Ցածր անվտանգային գոտում կրթությունն արդեն դառնում է անմիջական նախապատրաստում ազատմանը:

Այստեղ առկա հիմնական խնդիրներից է, սակայն, անհավասար մեկնարկային պայմանների փաստը: Այսպես, ի սկզբանե բարձր կրթական մակարդակ ունեցող դատապարտյալներն ավելի հեշտ են առաջադիմում, քան նրանք, ովքեր ունեն մտավոր կամ տարրական գրագիտության խնդիրներ: Սա կարող է հանգեցնել անուղղակի սկզբունքային անհավասարության:

V. Բուհերի և ՔԿՀ-ների համագործակցության ներկայիս իրավիճակը

Թեև ՀՀ օրենսդրությամբ սահմանված է դատապարտյալների՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթություն ստանալու իրավունքը, այնուամենայնիվ այս դրույթը շարունակում է մեծամասամբ մնալ զուտ հռչակագրային, քանի որ ՀՀ ոչ բոլոր բուհերն են ապահովված հեռավար կրթության կազմակերպման հնարավորությամբ: Օրինակ՝ ըստ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի (ՀԱՊՀ) պաշտոնական պարզաբանման (Գրություն №2/02/2158-25)՝ *«(…) բուհն ունի դատապարտյալ ուսանողների հետ աշխատանքի որոշակի փորձառություն: Համալսարանն իր գործունեության մեջ առաջնորդվում է ՀՀ ՔԿՕ-ով, որը սահմանում է դատապարտյալների կրթության իրավունքը: Ավարտական կուրսերի ուսանողների համար բուհը կազմակերպում է քննական հանձնաժողովների արտագնա նիստեր անմիջապես ՔԿՀ-ներում: Բաց ուղղիչ հիմնարկներում գտնվող անձանց համար կիրառվում է անհատական ժամանակացույցով ուսուցում: Այնուամենայնիվ, տեխնիկական կրթության լիարժեք իրացմանը խոչընդոտում է լաբորատոր պարապմունքների անհասանելիությունը»:*

ՀՀ ԱՆ ՔԿԾ-ի նախաձեռնությամբ՝ 2023 թվականի հունվարին քարտեզագրվել են բարձրագույն և հետբուհական կրթություն տրամադրող բուհերը՝ մեկ միասնական հարթակ ստեղծելու նպատակով: Օրինակ, ըստ 2023 թվականի վիճակագրության[19] «Արմավիր» ՔԿՀ-ում 5 դատապարտյալներից 4-ը բարձրագույն կրթություն է ստանում Ուրարտու, իսկ 1-ը՝ Եվրասիա միջազգային համալսարանում: Ընդ որում՝ նշված բուհերը ևս արձանագրել են մի շարք խոչընդոտներ ուսուցման կազմակերպման գործընթացում: Մասնավորապես՝ համապատասխան կրթական ծրագրերը հաճախ հնարավոր չի լինում իրականացնել ՔԿՀ-ներում՝ տեխնի-

[19] Տես ՀՀ արդարադատության նախարարության իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն https://lawinstitute.am/

կական միջոցների խիստ սահմանափակ և հին լինելու պատճառով:

Խնդրահարույց է նաև այն փաստը, որ հանրակրթական, բուհական և ոչ ֆորմալ կրթական ծրագրերին մասնակցությունը համապատասխան խրախուսական միջոցառումների կազմակերպման տեսանկյունից գնահատվում է հավասար միավորներով: Նման իրավիճակը հանգեցնում է նրան, որ դատապարտյալների մեծ մասը, պարզապես խրախուսական միավորներ կուտակելու նպատակով, նախապատվություն է տալիս կարճաժամկետ, ոչ ֆորմալ կրթական միջոցառումներին: Այսպիսով, թեև մասնակիորեն լուծվում է վերջիններիս զբաղվածության հարցը, այդուհանդերձ ստացված գիտելիքները հաճախ մակերեսային են և անբավարար՝ հետագայում աշխատաշուկայում մրցունակ լինելու համար: Նման մեխանիզմով պետությունը չի իրագործում դատապարտյալների կրթության իրավունքի ապահովման առանցքային նպատակը՝ վերջիններիս արդյունավետ վերասոցիալականացումը:

VI. Օտարերկրացի դատապարտյալների կրթության հիմնախնդիրները ՀՀ ՔԿՀ-ներում

Մի շարք խոչընդոտներ են առաջանում նաև օտարերկրացի դատապարտյալների կրթական գործընթացի կազմակերպման հարցերում: Այս դեպքում կրթության իրավունքի իրացումը հաճախ բախվում է լեզվական և մշակութային պատնեշներին: ՔԿՀ-ներում կրթական գործընթացները հիմնականում հայերենով են: Եթե դատապարտյալը չի տիրապետում հայերենին, նա փաստացի զրկվում է ընդհանուր կրթական գործընթացին մասնակցելու հնարավորությունից: Բացի այդ՝ ՔԿՀ գրադարաններում օտար լեզուներով ուսումնական նյութերի տեսականին խիստ սահմանափակ է, ինչը դժվարացնում է ինքնակրթությունը:

Օտարերկրացիների համար լավագույն լուծումը կարող էր լինել հեռավար կրթությունն իրենց պետությունների բուհերում, սակայն ՀՀ ՔԿՀ-ներում համացանցի հասանելիության և տեխնիկական միջոցների հագեցվածության խնդիրները սահմանափակում են այս հնարավորությունները: Ավելին, հաճախ օտարերկրացիները պատշաճ կերպով չեն տեղեկացվում իրենց կրթական իրավունքների և առկա ծրագրերի մասին՝ լեզվի չիմացության պատճառով:

Առկա խնդիրների լուծում կարող էին հանդիսանալ հայոց լեզվի դասընթացներն օտարերկրացի դատապարտյալների համար, որոնք հնարավորություն կտային վերջիններիս ներգրավվելու հետագա կրթական ծրագրերին: Այլընտրանքային լուծում կարող է լինել կրթական գործընթացներում թարգմանիչների պարտադիր ներկայությունը և բազմալեզու հարթակների կիրառումը: Կարևոր է նաև ՀՀ արդարադատության նախարարության համագործակցությունների հաստատումը այլ պետությունների դեսպանությունների հետ՝ դատապարտյալներին իրենց մայրենի լեզվով ուսումնական նյութերով ապահովելու համար:

VII. Համապատասխան ենթակառուցվածքների և տեխնիկական միջոցների բացակայության խնդիրները ՔԿՀ-ներում

Մեր օրերում անհնար է պատկերացնել առօրյա գործունեությունն առանց տեխնոլոգիական մի շարք միջոցների կիրառման: Եթե պետությունը նպատակ է հետապնդում ի դեմս դատապարտյալի՝ ձևավորել այնպիսի անհատի, որը ոչ միայն հնարավորություն կունենա արդյունավետորեն օգտագործելու պատժի կրման ժամանակահատվածը, այլև ձեռք կբերի բավարար գիտելիքներ՝ պատժի կրումից հետո աշխատանքի անցնելու, սեփական կեցությունն ապահովելու և այդպիսով իսկ կրկնահանցագործությունից զերծ մնալու համար, ապա դատապարտյալներին տեխնոլոգիական հենքային գիտելիքներով ապահովելը ևս պետք է ներառվի պետական օրակարգում: ՀՀ մի շարք ՔԿՀ-ներում այժմ էլ բացակայում են տեխ-

նիկական սարքավորումների, տեխնոլոգիական միջոցների, այդ թվում՝ հեռավար ուսուցման կիրառման հնարավորությունները, իսկ որոշ ՔԿՀ-ներում էլ չկան կրթական ծրագրերի իրականացման համար ներկառուցված ուսումնական սենյակներ: Հաճախ նմանատիպ խնդիրները լուծում են գտնում հասարակական կազմակերպությունների դրամաշնորհային ծրագրերի արդյունքում: Սակայն պետական մարմինները պետք է գիտակցեն, որ հասարակական կազմակերպություններն ինքնուրույն ի վիճակի չեն լուծում տալ առկա բոլոր խնդիրներին: Ավելին՝ խոչընդոտներ են առաջանում ՔԿՀ-ներում իրականացված բարեփոխումների հավասարաչափ լինելն ապահովելու հարցում, այսպիսով առաջացնելով նաև դատապարտյալների իրավունքների իրացման անհավասար պայմաններ, որոնք չեն համապատասխանում ոչ միայն ներպետական, այլև միջազգային մի շարք փաստաթղթերով պետության ստանձնած պարտավորություններին: Ինչ վերաբերում է տեխնոլոգիական միջոցների օգտագործմանն ու համապատասխան գիտելիքներին, ապա ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (ԿԳՄՍ) նախարարության հետ համագործակցության արդյունքում հանրակրթությունից բացի՝ ՔԿՀ-ներում նաև ոչ ֆորմալ կրթական ծրագրեր են իրականացվում, մասնավորապես՝ օտար լեզուներ, հոգեբանություն, կարուձև, կահույքագործություն, ինչպես նաև համակարգչային հմտություններ: Այնուամենայնիվ, տեխնիկական սուղ միջոցների առկայությունն ունենում է իր բացասական ազդեցությունը մի շարք դատապարտյալների կրթական գործընթացում:

Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթության կազմակերպման գործընթացը խիստ կանոնակարգված է օրենսդրությամբ, որը սահմանում է հեռավար ուսուցումը որպես կրթական ծրագրերի իրականացման մեթոդ: Սակայն, ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության պաշտոնական պարզաբանման[20]՝ *«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի հեռավար (դիստանցիոն) ուսուցման կարգի»-ի պահանջները՝ հեռավար ուսուցում կարող են կազմակերպել համապատասխան կրթական ծրագրի իրականացման լիցենզիա ունեցող միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները կամ դրանց առանձնացված ստորաբաժանումները՝ անհրաժեշտ հատուկ սարքավորումներով հագեցած տարածքների և պայմանների առկայության դեպքում: Ներկայում հանրապետության ոչ մի միջին մասնագիտական ուսումնական հաստատություն չունի որևէ մասնագիտության գծով հեռավար ուսուցման լիցենզիա: Համաձայն գործող կարգի՝ ազատազրկման ձևով պատիժ կրող դատապարտյալների համար ավարտական քննությունները կազմակերպվում են դրսեկության (էքստեռն) ձևով: Այս գործընթացն իրականացվում է «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից ձևավորվող հանձնաժողովների միջոցով, ինչը հնարավորություն է տալիս դատապարտյալներին ստանալ հիմնական կամ միջնակարգ կրթության պետական վկայականներ:*

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությանն (այսուհետ՝ ՀՀ ԱՆ ՔԿԾ) կատարած հարցմանն[21] ի պատասխան՝ ՀՀ ԱՆ ՔԿԾ-ից նշվում է, որ *ՀՀ ՔԿՀ-ներում իրականացվում են հանրակրթական ծրագրերով նախատեսված դասընթացներ: ՊՈԱԿ-ի կողմից 2025 թվականին իրականացվել են մասնագիտական հմտությունների դասընթացներ, ինչպիսիք են ծրագրավորման հիմունքներ, հաշվապահական հաշվառում, կահույքագործություն, գրաֆիկական դիզայն և այլն: Ըստ ՀՀ ԱՆ ՔԿԾ-ի պաշտոնական պար-*

[20] Տես ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն. (2025). *Պատասխան գրություն № 02/10.1/41189-2025*

[21] Տես ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայություն: (2025): *Պատասխան գրություն № 640/12-8426*

զբաղման՝ դատապարտյալներն ունեն բարձրագույն ուսումնական հաստատություններում հեռավար կրթություն ստանալու հնարավորություն: «Իրավական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի հետ իրականացվել են «Ներուժի բացահայտում» և «Դիմադրության ձայներ» ծրագրերը՝ ուղղված դատապարտյալների, այդ թվում՝ կանանց, հոգեբանական և իրավագիտակցության բարձրացմանը: Շախմատի ակադեմիայի հետ կազմակերպված առցանց մրցաշարերի արդյունքում ՀՀ դատապարտյալների հավաքականը աշխարհի առաջնությունում զբաղեցրել է 2-րդ և 5-րդ հորիզոնականները:

Միևնույն ժամանակ Մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետ՝ ՄԻՊ) աշխատակազմի գրության[22] համաձայն՝ ՄԻՊ-ը, որպես կանխարգելման ազգային մեխանիզմ, իրականացնում է մշտադիտարկման այցեր քրեակատարողական հիմնարկներ, որոնց ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվում ազատությունից զրկված անձանց, այդ թվում՝ անչափահասների կրթության իրավունքի ապահովմանը: Այցերի[23] ընթացքում արձանագրվում են թե՛ առանձին և թե՛ կրկնվող (շարունակական լուծում չստացող) խնդիրներ:

Այսպիսով, ուսումնասիրելով առկա տվյալները, կարող ենք եզրակացնել, որ թեև ՀՀ ԱՆ ՔԿԾ-ից նշում են, որ դատապարտյալներն ունեն բուհերում հեռավար կրթություն ստանալու հնարավորություն, սակայն ինչ վերաբերում է միջին մասնագիտական կրթությանը, ապա ԿԳՄՍ նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ Հայաստանում ոչ մի միջին մասնագիտական ուսումնական հաստատություն չունի հեռավար ուսուցման լիցենզիա: Սա նշանակում է, որ պետության կողմից հռչակված «հեռավար կրթության իրավունքը» շատ դեպքերում մնում է զուտ տեսական, քանի որ չկան լիցենզավորված հաստատություններ, որոնք կարող են այդ ծառայությունը մատուցել օրենքով սահմանված կարգով: Իսկ ՀԱՊՀ-ի պատասխանը հստակ ցույց է տալիս, որ կրթության կազմակերպումը ՔԿՀ-ներում կրում է դրվագային, այլ ոչ թե համակարգային բնույթ: Բախվում ենք մի իրականության, երբ մի շարք ոլորտներում, հատկապես տեխնիկական և բնագիտական մասնագիտություններով կրթությունը ՔԿՀ-ներում գրեթե անհնար է իրականացնել պատշաճ մակարդակով, ինչն իր հերթին սահմանափակում է դատապարտյալի մասնագիտական ընտրության ազատությունը: Ավելին, պաշտոնական տվյալները փաստում են, որ հիմնական շեշտը դրվում է ոչ թե երկարատև ակադեմիական կրթության, այլ կարճատև, ոչ ֆորմալ դասընթացների վրա: Թեև դրանք կարևոր նշանակություն ունեն դատապարտյալների զբաղվածության և կրթական գործընթացներում, այնուամենայնիվ չեն կարող փոխարինել համապարփակ հանրակրթությանը կամ մասնագիտական բարձրագույն կրթությանը, որոնք անհրաժեշտ են դատապարտյալի հետագա վերասոցիալականացման համար: Ներկայումս ՀՀ-ում դատապարտյալների կրթության իրավունքի իրականացման գործում առկա է խորը անջրպետ պաշտոնական իրավական կարգավորումների և դրանց գործնական կիրառության միջև: Քանի դեռ պետությունը չի լուծել հեռավար կրթության լիցենզավորման և ՔԿՀ-ներում անհրաժեշտ տեխնիկական բազայի ապահովման հարցերը, կրթության իրավունքը կշարունակի մնալ սահմանափակված:

VIII. ՄԻՊ տարեկան զեկույցի վերլուծությունը

ՄԻՊ 2024 թվականի տարեկան զեկույցում[24] տեղ են գտել կրթական ծրագրերին ներգ-

[22] Տես ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ: (2025): *Պատասխան գրություն № 14/14.1/6201-2025*

[23] Տես Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2024 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցը
https://ombuds.am/images/files/d5710fc4f92befa5d09747c30bdf3c41.pdf կայքէջում, էջեր 212-215

[24] Տես Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2024 թվականի

րավված դատապարտյալների վերաբերյալ մի շարք վիճակագրական տվյալներ: Համաձայն այդ տվյալների՝ 2024 թվականի ընթացքում «Արմավիր», «Նուբարաշեն», «Վանաձոր», «Արթիկ», «Սևան», «Գորիս» և «Աբովյան» ՔԿՀ-ներում իրականացված հանրակրթական ծրագրերում ներգրավվել է 112 դատապարտյալ (տարվա ավարտին ներգրավված է եղել 94 դատապարտյալ): Ազատությունից զրկված մինչև 19 տարեկան անձանց շրջանում իրականացվող հանրակրթական ծրագրերում 2023-2024 և 2024-2025 թվականների ուսումնական տարիների ընթացքում ընդգրկված է եղել 11 անձ, ծրագիրն իրականացվել է «Աբովյան» և «Արմավիր» ՔԿՀ-ներում: Ըստ նույն աղբյուրների՝ 2024 թվականի ընթացքում բարձրագույն և հետբուհական կրթություն է ստացել 7 դատապարտյալ: Այսպիսով, ուսումնասիրվող ժամանակահատվածում արձանագրվել է ժամանակային խզում. տարեսկզբի և տարեվերջի տվյալների համադրումը ցույց է տալիս շուրջ 16% բացասական շեղում: Հուսադրող չեն նաև ՊՈԱԿ-ի հրապարակած վիճակագրական տվյալները[25]. վերջին ուսումնական տարիներում դատապարտյալների՝ կրթական ծրագրերին ներգրավվածության և դրանք ավարտին հասցնելու վերաբերյալ: Մասնավորապես՝ 2022-2023 ուսումնական տարում 306 հոգուց միայն 92-ն են ընդգրկվել կրթական ծրագրում, իսկ այն ավարտին է հասցրել ընդամենը 56-ը: Համապատասխան վկայական/ատեստատ ստացել է ընդամենը 31-ը: 2023-2024-ին կրթության կարիք ունեցողների միայն 21%-ն է ընդգրկվել ուսման մեջ, իսկ ավարտողների թիվը կտրուկ նվազել է՝ հասնելով 28-ի: Ինչ վերաբերում է էքստեռն քննություններին, ապա դիմողների զգալի մասը կամ չի ներկայացել քննություններին, կամ ստացել է բացասական գնահատական: Իրավիճակը առանձնապես չի փոխվել նաև 2024-2025 ուստարում: Կրթական գործընթացներում նախապես ընդգրկված 71 դատապարտյալներից դասերին մասնակցություն է ունեցել ընդամենը 53-ը: Այս տվյալներն ուղղակիորեն հաստատում են, որ ՔԿՀ-ներում գործող կրթական քաղաքականությունը, որը հաճախ հիմնված է կարճաժամկետ և ոչ ֆորմալ միջոցառումների վրա, չի ապահովում կրթության իրավունքի իրացման համար անհրաժեշտ որակական վերջնարդյունք: Այս իրավիճակում անտեսվում են նաև միջազգային փաստաթղթերով ամրագրված սկզբունքները, մասնավորապես՝ Նվազագույն ստանդարտ կանոնների 104-րդ հոդվածը պահանջում է, որ կրթությունը լինի ոչ թե պարզապես հասանելի, այլև կազմակերպված այնպես, որ խրախուսի դատապարտյալների հետևողական մասնակցությունը գործընթացին:

IX. Քրեակատարողական համակարգի կրթական ոլորտի կադրային ապահովվածության հիմնախնդիրները

Դատապարտյալների կրթության կազմակերպման գործում կարևոր նշանակություն ունեն հիմնարկի աշխատակազմի և համապատասխան դասընթացներ վարող ուսուցիչների մոտեցումները: Ներկայումս առավել ակնառու խնդիրներից է նաև ՔԿՀ-ներում դասավանդող ուսուցիչների հարցը, քանի որ, ինչպես ցույց են տալիս վերոնշյալ մարմինների կատարած վիճակագրությունները, այժմ դասավանդողների մեծ մասը թեև ոլորտային լավ մասնագետներ են և երկար տարիներ ներգրավված են հանրակրթության մեջ, այնուամենայնիվ ուսուցիչների միջին տարիքը բարձր է: Երիտասարդ մասնագետների կողմից դատապարտյալների կրթական ծրագրերին ներգրավվելու ցանկությունը մեծ չէ: Պետությունն այս հարցում նույնպես

գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցը
https://ombuds.am/images/files/d5710fc4f92befa5d09747c30bdf3c41.pdf կայքէջում, էջեր 212-215

[25] Տես ՀՀ արդարադատության նախարարության իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքէջում https://lawinstitute.am/

կարևոր անելիքներ ունի. ՔԿՀ-ներում կրթական ծրագրերի իրականացմանը և դատապարտյալների ուսուցման կազմակերպումը պահանջում է ուսուցիչների լրացուցիչ վերապատրաստում, իրազեկվածություն և պատրաստվածություն: Դատապարտյալների նախապատմությանը ծանոթանալը, նրանց մտավոր, հուզական և սոցիալական կարիքների գիտակցումը ստիպում է ուղղիչ կրթության մեջ ներգրավված բոլոր կողմերին աշխատել ավելի ջանասիրաբար և արդյունավետ, կյանքի կոչելով այնպիսի կրթական ծրագրեր ու ուսումնական միջոցառումներ, որոնք կնպաստեն բանտարկյալների հետագա վերասոցիալականացմանն ու հասարակությանը վերաինտեգրմանը: Ակնհայտ է, որ ոչ բոլոր ուսուցիչներն են պատրաստ առերեսվելու այս իրականությանը. անհրաժեշտ է հոգեբանական պատրաստվածություն և վստահություն, որ ցանկացած իրավիճակի պետք է մոտենալ բարձր պատրաստվածությամբ և վստահությամբ:

X. Առկա հիմնախնդիրների առաջարկվող լուծումները

Կատարված հետազոտությունների արդյունքում կարող ենք արձանագրել, որ ՀՀ-ում դատապարտյալների կրթության իրավունքի իրացումը դեռևս կրում է ֆրագմենտար բնույթ: Վերոնշյալ խնդիրները լուծելի են համապատասխան իրավական կարգավորումների փոփոխման և ներդրման դեպքում:

Կարևոր փոփոխություն կարող է լինել հեռավար կրթության որակի ապահովման հատուկ չափորոշիչների մշակումը հենց ՔԿՀ-ների համար՝ հիմնվելով միջազգային (օրինակ՝ EPEA - European Prison Education Association) փորձի վրա: Մասնավորապես՝ կարելի է դիտարկել առցանց լաբորատորիաների (Virtual Labs) և սիմուլյացիոն ծրագրերի ներդրման հնարավորությունը տեխնիկական մասնագիտությունների համար՝ այսպիսով լուծելով դատապարտյալների կողմից համապատասխան մասնագիտացումներ ստանալու հնարավորության սահմանափակման, գործնական և լաբորատոր պարապմունքների անհնարինության խնդիրները:

Որպես կրթական ծրագրերի արդյունավետության երաշխիք՝ անհրաժեշտ է սահմանել կրթական արդյունքի արտաքին աուդիտի մեխանիզմ: Թեև ՊՈԱԿ-ն իրականացնում է դատապարտյալների ուսուցման կազմակերպումը, այնուամենայնիվ դրա արդյունավետությունը պետք է գնահատվի անկախ փորձագիտական խմբերի (օրինակ՝ հանրային դիտորդների կամ մասնագիտական համայնքի) կողմից: Սա թույլ կտա բացառել այն դեպքերը, երբ ՊՈԱԿ-ի կողմից իրականացված կարճատև դասընթացը ՔԿՀ վարչակազմի կողմից ներկայացվում է որպես դատապարտյալի վերասոցիալականացման և իրավահպատակ վարքագծի ձևավորման հիմնական ապացույց՝ առանց անձի մասնագիտական պատրաստվածության իրական ստուգման:

Ինչ վերաբերում է լիցենզավորման գործընթացին, ապա անհրաժեշտ է վերացնել գերատեսչական հակասությունները և սահմանել «Հեռավար կրթության հատուկ կարգ»՝ բացառապես ՔԿՀ-ների համար, որը թույլ կտա բուհերին և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին համապատասխան նորմերի պահպանմամբ, առանց լրացուցիչ լիցենզավորման, իրականացնել դատապարտյալների կրթական ծրագրերը:

Կարևոր է նաև ներդնել կրթական ծրագրերի գնահատման աստիճանակարգված համակարգ, որտեղ երկարատև ակադեմիական և մասնագիտական կրթությունը կունենա առավել բարձր կշիռ դատապարտյալի վարքագծի գնահատման և պատժից պայմանական վաղաժամկետ ազատման գործընթացում՝ ի տարբերություն կարճաժամկետ դասընթացների:

ՔԿՀ-ներում անհրաժեշտ է ստեղծել «փակ կրթական ցանցեր» (intranet), որոնք հնարավորություն կտան դատապարտյալներին օգտվելու թվային գրադարաններից և առցանց դա-

սախոսություններից՝ միաժամանակ չխախտելով հիմնարկի անվտանգային պահանջները:

Պենիտենցիար մանկավարժության զարգացման նպատակով կարևոր է մշակել և իրականացնել ՔԿՀ-ներում դասավանդող մասնագետների վերապատրաստման հատուկ ծրագրեր՝ կենտրոնանալով դատապարտյալների հոգեբանական առանձնահատկությունների և ուղղիչ կրթության մեթոդաբանության վրա:

Օտարերկրացի դատապարտյալների ներառականության ապահովման նպատակով անհրաժեշտ է ներդնել հայոց լեզվի ուսուցման ծրագրեր և ապահովել բազմալեզու կրթական նյութերի հասանելիություն՝ բացառելու համար լեզվական պատնեշի հետևանքով առաջացող խտրականությունը:

Մասնագիտական կրթական ծրագրերը ձևավորելիս կարևոր է հիմնվել աշխատաշուկայի ընթացիկ պահանջարկի հիման վրա՝ ապահովելով, որ ստացված որակավորումը թույլ տա դատապարտյալին ազատվելուց հետո անմիջապես ներգրավվել աշխատանքային գործընթացներում:

Բարձր անվտանգային գոտիներում պատիժ կրող դատապարտյալների կրթության իրավունքի ապահովումը պակաս ուշադրության արժանի հիմնախնդիր չէ: Անհրաժեշտ է խիստ մեկուսացման պայմաններում գտնվող անձանց համար մշակել անհատականացված կրթական ծրագրեր, որոնք կիրականացվեն հեռահաղորդակցության միջոցներով՝ կանխելով մտավոր լճացումը:

XI. Եզրակացություն

ՀՀ ՔԿՀ-ներում դատապարտյալների կրթության իրավունքի իրացման վերաբերյալ կատարված հետազոտությունը թույլ է տալիս հանգել հետևյալ եզրահանգումներին.

1) Չնայած կրթության իրավունքը երաշխավորված է ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային հիմնարար փաստաթղթերով, Հայաստանում առկա է խորը անդունդ պաշտոնական իրավական կարգավորումների և դրանց գործնական կիրառության միջև: Կրթության իրավունքը հաճախ մնում է հռչակագրային՝ չունենալով իրացման անհրաժեշտ մեխանիզմներ:

2) Գերատեսչական հակասությունների պատճառով հեռավար կրթության իրավունքը փաստացի լիարժեքորեն չի գործում: Մինչ Արդարադատության նախարարությունը նշում է դրա հնարավորության մասին, ԿԳՄՍ նախարարությունը փաստում է, որ հանրապետության ոչ մի միջին մասնագիտական ուսումնական հաստատություն չունի հեռավար ուսուցման լիցենզիա:

3) Ներկայում գործող խրախուսական համակարգը, որը հավասար միավորներ է շնորհում թե՛ լիարժեք ակադեմիական կրթության և թե՛ կարճաժամկետ ոչ ֆորմալ դասընթացների համար, հանգեցնում է կրթության որակի անկման: Դատապարտյալները նախապատվություն են տալիս մակերեսային ծրագրերին՝ զուտ միավորներ կուտակելու նպատակով:

4) Վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ կրթական ծրագրերում ներգրավվածների միայն չնչին մասն է հասնում վերջնարդյունքի և ստանում պետական նմուշի վկայական:

5) Կրթության իրավունքի իրացումը խիստ անհամաչափ է՝ կախված անվտանգային գոտուց: Հատկապես բարձր անվտանգային գոտիներում պատիժ կրող անձինք փաստացի զրկված են մասնագիտական կրթություն ստանալու հնարավորությունից՝ տեխնիկական սարքավորումների պատճառով:

6) ՔԿՀ-ներում դասավանդողների ներգրավվածության ցածր մակարդակը, ինչպես նաև

տեխնիկական միջոցների բացակայությունը կազմալուծում են կրթական բնականոն գործընթացը:

Ամփոփելով, կարող ենք արձանագրել, որ առաջնային կարևորություն ունեն նշված ոլորտներում արմատական փոփոխությունները, կրթական համակարգի արմատական վերափոխումը, թվայնացման և լիցենզավորման կարգերի հստակեցումը:

Ամփոփագիր: Հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալների կրթության իրավունքի իրացման արդիական հիմնախնդիրների համալիր վերլուծությանը: Հետազոտության շրջանակներում, օգտագործելով համեմատական-իրավական և վիճակագրական մեթոդները, վերլուծվում են գործող իրավական կարգավորումների և պրակտիկ կիրառության միջև առկա էական անհամապատասխանությունները: Մասնավորապես՝ հոդվածում առանձնակի շեշտադրվում են դատապարտված անձանց կրթական իրավունքների անհիմն սահմանափակումները և հեռավար կրթության լիցենզավորման ընթացակարգերի բացակայությունը, ինչը խոչընդոտում է բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ լիարժեք փոխգործակցությանը: Աշխատանքում քննադատական մոտեցմամբ անդրադարձ է կատարվում «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի և քրեակատարողական ծառայության համագործակցության արդյունավետությանը՝ վեր հանելով շենքային պայմանների և տեխնիկական հագեցվածության անբավարարության խնդիրները: Անդրադարձ է կատարվում նաև միջազգային ստանդարտներին համապատասխանող թվային ենթակառուցվածքների ներդրման հրատապությանը, որոնք հնարավորություն կտան ապահովել կրթության շարունակականությունը բոլոր տիպի հիմնարկներում: Առաջարկվում են կոնկրետ օրենսդրական փոփոխություններ և կազմակերպչական լուծումներ՝ ուղղված կրթական իրավունքի լիարժեք իրացմանն ու դրա միջոցով կրկնահանցագործությունների մակարդակի նվազեցմանը: Սույն հետազոտությունը կարող է հիմք հանդիսանալ քրեակատարողական ոլորտի բարեփոխումների ռազմավարության մշակման համար:

Annotation. The article is devoted to a comprehensive analysis of contemporary issues regarding the implementation of the right of convicts to education in the penitentiary institutions of the Republic of Armenia. Within the framework of the study, using comparative-legal and statistical methods, significant discrepancies between existing legal regulations and practical application are analyzed. In particular, the article specifically emphasizes the unjustified restrictions on the educational rights of convicted persons and the lack of distance education licensing procedures, which hinders full cooperation with higher education institutions. The work critically examines the effectiveness of cooperation between the "Legal Education and Rehabilitation Programs Implementation Center" SNCO and the penitentiary service, highlighting issues of inadequate building conditions and technical equipment. Reference is also made to the urgency of introducing digital infrastructures that meet international standards, which would ensure the continuity of education in all types of institutions. Specific legislative changes and organizational solutions are proposed to ensure the full realization of the right to education and the subsequent reduction of recidivism rates. This research can serve as a basis for developing a strategy for reforms in the penitentiary sector.

Аннотация. Статья посвящена комплексному анализу актуальных проблем реализации права осужденных на образование в уголовно-исполнительных учреждениях Республики Армения. В рамках исследования, с использованием сравнительно-правового и статистического методов, анализируются существенные несоответствия между действующим правовым регулированием и практикой его применения. В частности, в статье особо подчеркиваются необоснованные ограничения образовательных прав осужденных лиц и отсутствие процедур лицензирования дистанционного обучения, что препятствует полноценному сотрудничеству с высшими учебными заведениями. В работе с критической точки зрения рассматривается эффективность взаимодействия ГНКО «Центр реализации юридического образования и реабилитационных программ» и уголовно-исполнительной службы, выявляются проблемы, связанные с

ненадлежащими условиями и технической оснащенностью учреждений. Также рассматривается актуальность внедрения цифровой инфраструктуры, соответствующей международным стандартам, которая позволит обеспечить непрерывность образования во всех типах учреждений. Предлагаются конкретные законодательные изменения и организационные решения, направленные на полноценную реализацию права на образование и снижение на этой основе уровня рецидивной преступности. Данное исследование может послужить основой для разработки стратегии реформ в пенитенциарной сфере.

Բանալի բառեր *- դատապարտյալ, կրթության իրավունք, վերասոցիալականացում, քրեակատարողական հիմնարկ, հեռավար ուսուցում, կալանավորված անձ, կրկնահանցագործություն:*

Keywords: *Convict; right to education; resocialization; penitentiary institution; distance learning; detained person; recidivism.*

Ключевые слова: *осужденный; право на образование; ресоциализация; уголовно-исполнительное учреждение; дистанционное обучение; арестованное лицо; рецидивная преступность.*

Օգտագործված գրականության ցանկ

1. Միջազգային իրավական ակտեր

1. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, ընդունված ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից, 10.12.1948 թ., Փարիզ:

2. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, ՄԱԿ, ընդունվել է՝ 16.12.1966 թ., ուժի մեջ է մտել՝ 23.03.1976թ., Նյու Յորք:

3. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր, ՄԱԿ, ընդունվել է՝ 16.12.1966 թ., ուժի մեջ է մտել՝ 03.01.1976 թ., Նյու Յորք:

4. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա,ընդունվել է՝ 04.11.1950 թ., ուժի մեջ է մտել՝ 03.09.1953 թ., Հռոմ

5. Ազատությունից զրկված անձանց հետ վարվեցողության նվազագույն սպանդարտ կանոններ (Մանդելայի կանոններ), ՄԱԿ, ընդունվել է՝ 17.12.2015 թ., Նյու Յորք:

6. Եվրոպական բանտային կանոններ, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ Rec(2006)2 հանձնարարական ընդունվել է՝ 11.01.2006 թ., Ստրասբուրգ:

2. ՀՀ ներպետական իրավական ակտեր

7. *Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2015 թ. փոփոխություններով) ընդունման ամսաթիվ՝ 06.02.2015 թ., ուժի մեջ մտնելու ամսաթիվ՝ 22.12.2015 թ.:*

8. ՀՀ Քրեակատարողական օրենսգիրք, ընդունման ամսաթիվ՝ 15.06.2022թ., ուժի մեջ մտնելու ամսաթիվ՝ 01.07.2022 թ.:

9. «Ձերբակալված և կալանավորված անձանց մասին» ՀՀ օրենք, ընդունման ամսաթիվ՝ 06.02.2002թ., ուժի մեջ մտնելու ամսաթիվ՝ 01.04.2002 թ.:

10. «Կրթության մասին» ՀՀ օրենք ընդունման ամսաթիվ՝ 14.04.1999 թ., ուժի մեջ մտնելու ամսաթիվ՝ 14.05.1999 թ.:

11. ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի N 1543-Ն որոշումը «ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության ներքին կանոնակարգը հաստատելու մասին»:

3. Պաշտոնական փաստաթղթեր և պարզաբանումներ

12. «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի աշխատակազմի ղեկավարի պաշտոնական պարզաբանումը՝ քրեակատարողական հիմնարկներում սովորող ուսանողների կրթության կազմակերպման վերաբերյալ, N 2/02/2158-25, 04.12.2025 թ.:

13. ՀՀ արդարադատության նախարարության «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնական դիրքորոշումը՝ ՔԿՀ-ների շենքային պայմանների և հեռավար կրթության տեխնիկական հնարավորությունների վերաբերյալ (աշխատանքային փաստաթուղթ), 2025թ.:

14. ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության պաշտոնական գրությունը՝ ՔԿՀ-ներում իրականացվող կրթական և մարզական միջոցառումների վերաբերյալ, No 640/12-8426, 16.12.2025 թ.:

15. ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալի պաշտոնական պարզաբանումը՝ դպրոցապարտյալների կրթության կազմակերպման և հեռավար ուսուցման լիցենզավորման վերաբերյալ, № 02/10.1/41189-2025, 2025 թ.:

16. ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի պաշտոնական պարզաբանումը՝ ազատությունից զրկված անձանց կրթության իրավունքի վերաբերյալ, No 14/14.1/6201-2025, 16.12.2025թ.:

4. Օգտագործված գիտական գրականություն

17. J. A. Badejo, J. Chakraborty, «The effects of technology on incarcerated student motivation and engagement in classroom-based learning», doi.org/10.1007/s42454-022-00044-8, «Human-Intelligent Systems Integration», 4, 2022, 10 էջ .

18. M. S. Msoroka, B. Findsen, J. Barnes, «Barriers to Prison Education: A Tanzanian Perspective», «Journal of Issues and Practice in Education» (Jipe), ISSN: 1821-5548, 12(2), Dar es Salaam, 2020, 24 էջ :

19. R. Romero-Carazas, F. Del Carpio-Delgado, et al., «Prison education in the resocialization of incarcerated individuals», doi.org/10.3389/feduc.2025.1592692, «Frontiers in Education», 10:1592692, 2025, 9 էջ:

20. B. Stickle, S. S. Schuster, «Are Schools in Prison Worth It? The Effects and Economic Returns of Prison Education», doi.org/10.1007/s12103-023-09747-3, «American Journal of Criminal Justice», 48, 2023, 32 էջ:

21. G. Chloupis, D. Kontompasi, «Examining the relation between education, recidivism & crime prevention», doi.org/10.1007/s44282-025-00153-0, «Discover Global Society», 2025,12 էջ:

22. E. Gashi, «Prison Education Characteristics and Classroom Management by Prison Teachers», doi.org/10.2478/seeur-2021-0023, «SEEU Review», Vol. 16, Issue 2, 2021, 10 էջ:

23. E. Gashi, «Formal Education System in Kosovo Prisons: Formative and Summative Assessments of Prisoner Students», ECLSS 2025, «International Conference on Economics & Social Sciences», Balikesir, 2025, 16 էջ:

24. Д. Ю. Кондратов, К. Є. Шевелев, І. Ю. Тур, «Проблемні питання організації загальноосвітнього навчання засуджених до позбавлення волі», doi.org/10.24144/2788-6018.2025.05.3.6, «Аналітично-порівняльне правознавство», № 5, 2025, 5 էջ:

Իսահակյան Մ. - ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի դասախոս, էլհասցե՝ m.isahakyan@ysu.am:

Գրիգորյան Մ. - ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ, բակալավրիատի ուսանող, էլհասցե՝ milen.grigoryan@edu.ysu.am:

Ներկայացվել է խմբագրություն 17.07.2026 թ., տրվել է գրախոսության 17.07.2026 թ., երաշխավորվել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի վարիչ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Մարգարյանի կողմից, ընդունվել է տպագրության 01.10.2026 թ.:

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/CRIMINAL PROCEDURE/УГОЛОВНЫЙ ПРОЦЕСС

https://doi.org/10.59546/18290744-2026.7-9-112

ԱՐՄԻՆԵ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ
Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
ԵՎԳԵՆՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի իրավագիտության ֆակուլտետի ուսանող

ARMINE MELIKSETHYAN
Judge of the Court of First Instance of General Jurisdiction of Yerevan City (Criminal Division)
Candidate of Legal Sciences, Associate Professor
YEVGENYA GEVORGYAN
Student of the Faculty of Law,
Educational Complex of the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia

АРМИНЕ МЕЛИКСЕТЯН
Судья суда общей юрисдикции первой инстанции города Еревана по уголовным делам, кандидат юридических наук, доцент
https://orcid.org/0009-0007-5899-6145
ЕВГЕНИЯ ГЕВОРГЯН
Студентка юридического факультета Образовательного комплекса Министерства внутренних дел Республики Армения
https://orcid.org/0009-0005-9347-0128

ՏՈՒԺՈՂԻ ԵՎ ՀԱՆՑԱՆՔ ԿԱՏԱՐԱԾ ԱՆՁԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

CURRENT ISSUES IN THE LEGAL REGULATION OF RECONCILIATION BETWEEN THE VICTIM AND THE PERSON WHO COMMITTED THE OFFENSE

СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ ПРИМИРЕНИЯ ПОТЕРПЕВШЕГО И ЛИЦА, СОВЕРШИВШЕГО ПРЕСТУПЛЕНИЕ

АРМИНЕ МЕЛИКСЕТЯН

Ներածություն

Պատժի և քրեական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի համաձայն՝ հանցանք կատարած յուրաքանչյուր անձ ենթակա է քրեական պատասխանատվության: Սակայն, դրա հետ մեկտեղ, օրենքով նախատեսված մի շարք դեպքերում հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից: Այս ամենով հանդերձ հարկ է նկատել, որ բազմաթիվ պետությունների քրեական օրենսգրքեր պատասխանատվության անխուսափելիության հետ միասին ամրագրում են քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու ինստիտուտ: Բացառություն չէ նաև Հայաստանի Հանրապետությունը:

Քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը, չնայած առաջին հայացքից հակասության մեջ է մտնում պատժի և պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի հետ, սակայն դա միայն առաջին հայացքից է, որքանով որ գործնականում միշտ չէ, որ նպատակահարմար է հանցանք կատարած անձին ենթարկել քրեական պատասխանատվության և պատժի՝ ելնելով նրա կողմից կատարած հանրորեն վտանգավոր արարքի բնույթից, ծանրության աստիճանից, անձի դրսևորած վարքագծից, նրան բնութագրող հանգամանքներից և այլն[1]: Դրա հետ մեկտեղ պետք է նկատել, որ տարբեր պետությունների քրեական օրենսգրքերը, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգիրքը, նախատեսում են քրեական օրենսդրության այնպիսի հիմնարար սկզբունքներ, ինչպիսիք են՝ օրինականության, արդարության և պատասխանատվության անհատականացման և այլ սկզբունքները, որոնց դրսևորման եղանակներից է քրեական պատասխանատվությունից ազատելը տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության դեպքում:

2022 թ. հուլիսի 1-ից գործողության մեջ է դրվել 2021 թ. հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական նոր օրենսգիրքը: Դրանում տեղ գտած նորամուծությունները, հայեցակարգային փոփոխություններն ու նոր կարգավորումները կոչված են լրացնել ՀՀ քրեական օրենսգրքում նախկինում եղած բացերը, վերացնել թերությունները, ներմուծել արտասահմանյան լավագույն փորձը, բարձրացնել քրեական արդարադատության արդյունավետությունը, երաշխավորել մարդու իրավունքների պաշտպանությունն ու ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումը: Ի թիվս այլ փոփոխությունների՝ փոփոխության են ենթարկվել նաև տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտին վերաբերելի դրույթները: ՀՀ նոր քրեական օրենսգրքի ընդունմամբ իրավական կարգավորման ենթարկվեց այս ինստիտուտին վերաբերելի հաճախ վեճերի տեղիք տվող և հրատապ լուծում պահանջող մի շարք հարցեր:

Հատկանշանական է այն փաստը, որ ՀՀ ՆԳՆ հանցավորության վիճակագրության և հետազոտական կենտրոնի կողմից տրամադրված և մեր կողմից ուսումնասիրված տվյալները փաստում են այն մասին, որ 2020-2025 թթ. ընկած ժամանակահատվածում, հատկապես ՀՀ քրեական նոր օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո, էականորեն աճել է այն քրեական վա-

1 Տե՛ս *Александров А.С., Куцова Э.Ф.,* Восстановительное правосудие в уголовном процессе: проблемы и перспективы, М.: Юрист, 2021, էջ 2:

րույթների թիվը, որոնք ավարտվել են տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության հիմքով քրեական հետապնդման դադարեցմամբ և վարույթի կարճմամբ: Այսպես, 2020-2025 թթ. ընկած ժամանակահատվածում տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության հիմքով քրեական հետապնդման դադարեցմամբ և վարույթի կարճմամբ ավարտված վարույթների թվի ընդհանուր տեսակարար կշիռը աճել է 6.1 %-ից հասնելով մինչև 33.3 %-ի: Հատկանշական է, որ քննարկվող ժամանակահատվածում հաշտության հիմքով ավարտվել է շուրջ 8970 քրեական վարույթ, սակայն ՀՀ քրեական նոր օրենսգրքի կիրառման պայմաններում ի հայտ են եկել և շարունակվում են ի հայտ գալ այնպիսի խնդիրներ, որոնք օրենսդրի կողմից չեն կարգավորվել և դրանց վերաբերյալ առկա իրարամերժ մեկնաբանությունները խոչընդոտում են միատեսակ իրավակիրառ պրակտիկայի ձևավորմանը:

Բացի դրանից՝ ՀՀ քրեական նոր օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո ՀՀ-ում նշված ինստիտուտի վերաբերյալ հատուկ ուսումնասիրություններ ու հետազոտություններ գրեթե չեն իրականացվել, ուստի պետք է արձանագրել, որ սույն հետազոտության թեման ամբողջությամբ սպառված չէ, քննարկվող ոլորտի մի շարք հիմնախնդիրներ լուծված չեն կամ լուծված են մասամբ, հետևապես և այն հետագա ուսումնասիրությունների կարիք ունի: Հենց այս հանգամանքներով անհրաժեշտություն է ստեղծվում հետազոտման առարկա դարձնել տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության իրավական կարգավորման արդի հիմնահարցերը և առաջարկել համապատասխան լուծումներ:

Հիմնական հետազոտություն

Քրեական օրենսդրության բոլոր ժամանակների կիրառման պրակտիկան ցույց է տվել, որ ոչ բոլոր դեպքերում է նպատակահարմար (կամ գոնե՝ արդյունավետ) հանցանք կատարելու համար անձին քրեական պատասխանատվության ենթարկելը և պատժելը[2]: Ավելին, քրեական օրենքը խախտած և հասարակությանը լուրջ վնաս չհասցրած անձին պատժելը կարող է մի շարք դեպքերում լինել ոչ թե օգտակար, այլ հակառակը՝ ոչ արդյունավետ և, նույնիսկ, վնասակար: Ուստի պատահական չէ, որ հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը հայտնի է արդեն վաղուց և կիրառվում է ոչ միայն Հայաստանում, այլև աշխարհի շատ պետություններում:

Պետական հարկադրանքը պետք է գնահատվի միայն որպես քրեական օրենքը խախտած անձանց նկատմամբ քրեաիրավական ներգործության բացառիկ, ծայրահեղ միջոց[3]: Այդ իսկ պատճառով, ժամանակակից ժողովրդավարական բոլոր պետությունների քրեական և քրեադատավարական օրենսդրությամբ համապատասխան իրավասու մարմիններին (դրանց պաշտոնատար անձանց) իրավունք է վերապահվում որոշելու՝ իրականացնել արդյո՞ք կոնկրետ անձանց նկատմամբ քրեական հետապնդում, թե՞ որոշակի հիմքերի առկայության դեպքում ազատել նրանց քրեական պատասխանատվությունից: Ընդ որում՝ օրենքով նախատեսված որոշակի դեպքերում այն կարող է լինել իրավակիրառ մարմնի ոչ թե հայեցողական լիազորությունը, այլ օրենքով իր վրա դրված պարտականություն:

Արևմտյան գիտնականներն արդարացիորեն նշում են, որ օրինականության և նպատա-

[2] Տե՛ս *Кленова Т.В.,* Основания освобождения от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим, М.: Статут, 2020., էջ 2:

[3] Տե՛ս *Головко Л.,* Прощение долга одно из оснований прекращения уголовного дела// Российская юстиция, 1998, №4, էջեր 15-16; *Сабанин С.Н.,* Некоторые вопросы освобождения от уголовной ответственности// Актуальные вопросы совершенствования уголовно-правовых норм на современном этапе. Свердловск, 1986, № 53, էջեր 37-40:

կահարմարության սկզբունքների ճիշտ հարաբերակցության բացահայտումը և գնահատումը, վերջին հաշվով, հանցավորության դեմ պայքարի արդյունավետությունը պայմանավորող հիմնական գործոններից են:[4]

ՀՀ քրեական նախկին օրենսգրքի համեմատությամբ քրեական պատասխանատվությունից ազատման տեսակներն էական փոփոխությունների են ենթարկվել: Ուսումնասիրելով վերջին տարիների իրավակիրառ պրակտիկան և առհասարակ ընդունվող նորմատիվ իրավական ակտերի բովանդակությունը կարելի է եզրահանգել, որ գործուն քայլեր են ձեռնարկվել ընտանեկան բռնության կանխարգելման ուղղությամբ, մասնավորապես այդ քայլերից է հանդիսանում այս համատեքստում կարևորագույն նշանակալություն ունեցող միջազգային և ներպետական մի շարք նորմատիվ իրավական ակտերի ընդունումը[5]: Ընտանեկան բռնության կանխարգելման համատեքստում միանգամայն արդարացված ենք համարում օրենսդրի կողմից որդեգրված այն քաղաքականությունը, որով քննարկվող հիմքով անձը քրեական պատասխանատվությունից չի կարող ազատվել, երբ կատարված հանցանքում առկա են **ընտանիքում բռնության հատկանիշներ**: Մեր կարծիքով՝ նման կարգավորում նախատեսելով օրենսդիրը մի կողմից նպատակ է ունեցել այս ճանապարհով կանխարգելել ընտանեկան բռնությունը՝ հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելով, մյուս կողմից՝ փորձ է կատարվել ընտանիքում բռնության ենթարկված տուժողին պաշտպանել բռնություն գործադրած անձի ապօրինի ազդեցությունից:

Անդրադարձ կատարելով խնդրո առարկա հանդիսացող իրավակարգավորման կիրառման պայմանների վերլուծությանը՝ եզրակացնում ենք, որ տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության հիմքով անձը ենթակա է քրեական պատասխանատվությունից ազատման հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

1. անձը հանցանքը կատարել է առաջին անգամ,
2. կատարված արարքը ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք է,
3. հանցանք կատարած անձի և տուժողի միջև առկա է հաշտության վերաբերյալ ինքնուրույն և ազատ կամահայտնության վրա հիմնված փոխադարձ համաձայնություն:
4. **հանցանքում առկա չէ ընտանիքում բռնության հատկանիշներ**
5. հանցանք կատարած անձը չի առարկում իր նկատմամբ ոչ ռեաբիլիտացնող հիմքով քրեական հետապնդման դադարեցման վերաբերյալ
6. հանցանք կատարած անձը նախկինում նույն հիմքով չի ազատվել քրեական պատասխանատվությունից:

Այս համատեքստում հարկ ենք համարում նշել, որ «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» ՀՀ օրենքում 2024 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած փոփոխություններով օրենքի կարգավորման առարկան ընդլայնվել է՝ իրավական պաշտպանության

[4] Տե՛ս *Figueiredo Dias J.* Роль прокуратуры в уголовном судопроизводстве, Revue internatioale de criminologie et de police technique. V. 49, 1995, № 4, էջեր 387-394:

[5] Օրինակ՝ «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» եվրոպայի խորհրդի կոնվենցիան, «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքի ընդունումը և դրա շարունակական կատարելագործումը, ՀՀ քրեական օրենսգրքի 508-րդ հոդվածով պատասխանատվության սահմանումը «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 1-4-րդ կետերից որևէ մեկով, 11.2-րդ մասով, ինչպես նաև 8-րդ հոդվածի 5-րդ մասի 1-4-րդ կետերից որևէ մեկով, 9.2-րդ մասով նախատեսված պահանջն ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի կողմից չկատարելու համար:

տակ ներառելով նաև կենցաղային բռնության ենթարկված անձանց: Նշված փոփոխությունը նախատեսող օրենքի հիմնավորման մեջ արձանագրվել է, որ «domestic violence» արտահայտությունը թարգմանվում է նաև որպես տնային բռնություն, կենցաղային բռնություն, կենցաղում բռնություն, ներկենցաղային բռնություն, որոնք ենթադրում են նաև բռնություն նախկին ամուսինների միջև կամ զուգընկերային հարաբերություններում: Վերոնշյալից բխում է, որ օրենսդրի կամքն ուղղված է ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց հավասար իրավական պաշտպանություն տրամադրելուն, մինչդեռ ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի գործող ձևակերպումը հաշտության կիրառման օրենսդրական արգելք է սահմանում միայն **ընտանիքում բռնության հատկանիշների** առկայության դեպքում: Մինչդեռ կարծում ենք, որ հաշտության հիմքով պետք է արգելք նախատեսել նաև կենցաղային բռնության պարագայում: Թեև պետք է նշել, որ իրավակիրառ պրակտիկայում տառացի մեկնաբանման արդյունքում հնարավոր է հաշտություն արձանագրվի այն դեպքերում, երբ առկա է կենցաղային բռնության իրավիճակ: Ուստի, միատեսակ իրավակիրառ պրակտիկայի ապահովման անհրաժեշտություններից, ինչպես նաև կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության ապահովման նպատակով, ելնելով նաև օրենսդրի կամքի և օրենսդրության միասնականության ապահովման տրամաբանությունից՝ առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածում և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետում օգտագործված «ընտանիքում բռնություն» եզրույթը փոխարինել «ընտանեկան և կենցաղային բռնություն» եզրույթով:

Կատարված հետազոտության արդյունքներով՝ քրեական պատասխանատվությունից տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության հիմքով ազատելու ինստիտուտի վերաբերյալ կարելի է կատարել մի շարք հիմնարար եզրահանգումներ, որոնք բնութագրում են թե՛ գործող իրավակարգավորումների էությունը, և թե՛ դրանց հետագա կատարելագործման անհրաժեշտությունը

Քրեական պատասխանատվությունից ազատման ինստիտուտը, հանդիսանալով քրեական իրավունքի ժամանակակից և հումանիստական գործիքակազմի կարևորագույն բաղադրիչներից մեկը, բնավ չի հակասում պատժի անխուսափելիության սկզբունքին: Ընդհակառակը, այն իրավակիրառ պրակտիկայում ապահովում է իրավական նպատակահարմարության, արդարության և անհատականացման սկզբունքների կիրառումը: Հետազոտությունը ցույց է տալիս, որ բոլոր դեպքերում անձին քրեական պատասխանատվության ենթարկելը չէ, որ հանդիսանում է հանցավորության դեմ պայքարի ամենաարդյունավետ ճանապարհը: Պետական հարկադրանքի միջոցները պետք է կիրառվեն որպես ծայրահեղ և բացառիկ միջոց, իսկ հաշտության ինստիտուտը հնարավորություն է ընձեռում խուսափել ոչ արդյունավետ կամ նույնիսկ վնասակար քրեաիրավական ներգործությունից՝ այն դեպքերում, երբ հակամարտությունը հնարավոր է լուծել կողմերի միջև՝ առանց դատական ատյանների երկարատև միջամտության:

Անցումը ՀՀ քրեական նոր օրենսգրքին, որը գործում է 2022 թ. հուլիսի 1-ից, նոր որակի հարաբերություններ է ձևավորել այս ոլորտում: Վիճակագրական տվյալների վերլուծությունը վկայում է, որ հաշտության հիմքով քրեական հետապնդման դադարեցման և վարույթի կարճման դեպքերի աճը (6.1 %-ից հասնելով 33.3 %-ի) փաստում է ինստիտուտի գործնական պահանջարկի և կարևորության մասին: Այնուամենայնիվ, այս դինամիկան ուղեկցվում է նաև նոր մարտահրավերներով, քանի որ օրենսդրական մի շարք ձևակերպումներ շարունակում են վեճերի տեղիք տալ և խոչընդոտել միասնական իրավակիրառ պրակտիկայի ձևավորմանը:

Հետազոտության առանցքային եզրահանգումներից է ընտանեկան և կենցաղային բռնու-

թյան կանխարգելման գործում քրեաիրավական արգելքների դերի կարևորումը: Օրենսդրի որդեգրած քաղաքականությունը, ըստ որի՝ ընտանիքում բռնության հատկանիշներ պարունակող հանցանքների դեպքում հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատումն անթույլատրելի է, միանգամայն արդարացված է: Այն նպատակաուղղված է ինչպես բռնության կանխարգելմանը, այնպես էլ տուժողին բռնություն գործադրած անձի հնարավոր ճնշումներից պաշտպանելուն:

Միաժամանակ, սույն հետազոտությունը բացահայտեց էական իրավական բաց՝ կապված «ընտանիքում բռնություն» եզրույթի հետ: Հաշվի առնելով «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» ՀՀ օրենքում 2024 թ. հուլիսի 1-ից կատարված փոփոխությունները, որոնք ընդլայնել են պաշտպանության շրջանակը՝ ներառելով նաև կենցաղային բռնությունը (ներառյալ զուգընկերային հարաբերություններում), առաջանում է անհրաժեշտություն քրեական օրենսդրությունը համապատասխանեցնելու այս նոր իրողություններին: Գործող ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածը, սահմանափակվելով միայն «ընտանիքում բռնություն» եզրույթով, թերի է լուծում կենցաղային բռնության պայմաններում հաշտության համաձայնության հնարավորության հարցը:

Եզրակացություն

Վերոգրյալի հիման վրա եզրակացնում ենք, որ օրենսդրության միասնականության և տրամաբանության ապահովման համար հրատապ է ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածում և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետում «ընտանիքում բռնություն» եզրույթը «ընտանեկան և կենցաղային բռնություն» եզրույթով փոխարինելու անհրաժեշտությունը: Այս փոփոխությունը թույլ կտա ապահովել անձանց հավասար իրավական պաշտպանություն, վերացնել առկա հակասությունները և խթանել իրավակիրառ պրակտիկայի միատեսակությունը:

Այսպիսով, տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատման ինստիտուտը, հանդիսանալով քրեական արդարադատության արդյունավետության բարձրացման կարևոր երաշխիք, պահանջում է շարունակական հետազոտություն և օրենսդրական ճշգրտումներ՝ ժամանակակից սոցիալական մարտահրավերներին և օրենսդրական համակարգի զարգացման տրամաբանությանը համահունչ:

Անփոփագիր: Սույն հետազոտությունը նվիրված է տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի իրավական կարգավորման արդի հիմնահարցերին: Չնայած պատժի և քրեական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքին, գործնականում անձին քրեական պատասխանատվության ենթարկելը միշտ չէ, որ նպատակահարմար է, ուստի պետական հարկադրանքը պետք է կիրառվի որպես բացառիկ և ծայրահեղ միջոց:

ՀՀ քրեական նոր օրենսգրքի ներդրումից հետո վիճակագրությունը փաստում է հաշտության հիմքով վարույթի կարճման դեպքերի էական աճ՝ 6.1%-ից հասնելով 33.3%-ի: Միաժամանակ, իրավակիրառ պրակտիկայում ի հայտ են եկել խնդիրներ, որոնց վերաբերյալ առկա իրարամերժ մեկնաբանությունները խոչընդոտում են միատեսակ պրակտիկայի ձևավորմանը:

Հետազոտությունը հիմնավորում է ընտանեկան բռնության կանխարգելման համատեքստում հաշտության հիմքով պատասխանատվությունից ազատման անթույլատրելիությունը՝ ընդգծելով օրենսդրի որ-

դեգրած քաղաքականության արդարացվածությունը: Սակայն, հաշվի առնելով «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» ՀՀ օրենքում 2024թ. հուլիսի 1-ից կատարված փոփոխությունները, որոնք ընդլայնել են պաշտպանության շրջանակը՝ ներառելով նաև կենցաղային բռնությունը, ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածը դառնում է թերի:

Խնդրի լուծման համար առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածում և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետում «ընտանիքում բռնություն» եզրույթը փոխարինել «ընտանեկան և կենցաղային բռնություն» եզրույթով: Այս փոփոխությունը կապահովի օրենսդրության միասնականությունը, անձանց հավասար իրավական պաշտպանությունը և կնպաստի միատեսակ իրավակիրառ պրակտիկայի ձևավորմանը:

Annotation. This research is dedicated to the current legal issues surrounding the institution of exemption from criminal liability based on the reconciliation between the victim and the perpetrator. Despite the principle of the inevitability of punishment and criminal liability, subjecting a person to criminal liability is not always expedient in practice; therefore, state coercion should be applied only as an exceptional and extreme measure.

Following the introduction of the new Criminal Code of the Republic of Armenia, statistics show a significant increase in the number of proceedings terminated due to reconciliation, rising from 6.1% to 33.3%. At the same time, practical application has revealed issues where conflicting interpretations hinder the formation of a unified legal practice.

The study substantiates the inadmissibility of exemption from criminal liability based on reconciliation in the context of domestic violence, emphasizing the justification of the policy adopted by the legislature. However, considering the amendments that entered into force on July 1, 2024, to the Law of the Republic of Armenia “On the Prevention of Domestic and Household Violence and Protection of Persons Subjected to Domestic and Household Violence,” which expanded the scope of protection to include household violence, Article 82 of the Criminal Code of the Republic of Armenia has become inadequate.

To address this issue, it is proposed to replace the term “domestic violence” (ընտանիքում բռնություն) with “family and household violence” (ընտանեկան և կենցաղային բռնություն) in Article 82 of the Criminal Code of the Republic of Armenia and Article 11, Part 4, Clause 1 of the Criminal Procedure Code of the Republic of Armenia. This amendment will ensure legislative consistency, provide equal legal protection for individuals, and contribute to the formation of a unified law enforcement practice.

Аннотация. Данное исследование посвящено актуальным правовым вопросам института освобождения от уголовной ответственности в связи с примирением потерпевшего с лицом, совершившим преступление. Несмотря на принцип неотвратимости наказания и уголовной ответственности, привлечение лица к уголовной ответственности на практике не всегда является целесообразным, в связи с чем государственное принуждение должно применяться лишь как исключительная и крайняя мера.

После введения в действие нового Уголовного кодекса Республики Армения статистика свидетельствует о существенном росте числа производств, прекращённых на основании примирения, — с 6,1 % до 33,3 %. В то же время в правоприменительной практике возник ряд проблем, противоречивое толкование которых препятствует формированию единообразной практики.

В исследовании обосновывается недопустимость освобождения от уголовной ответственности на основании примирения в контексте домашнего насилия, подчёркивается оправданность политики, избранной законодателем. Вместе с тем с учётом поправок, вступивших в силу 1 июля 2024 года в Закон РА «О предупреждении насилия в семье и быту и защите лиц, подвергшихся насилию в семье и быту», которые расширили сферу правовой защиты, включив в неё также насилие в быту, статья 82 Уголовного кодекса Республики Армения стала неполной.

Для решения данной проблемы предлагается заменить термин «насилие в семье» термином «семейно-

бытовое насилие» в статье 82 Уголовного кодекса Республики Армения и пункте 1 части 4 статьи 11 Уголовно-процессуального кодекса Республики Армения. Данное изменение обеспечит единообразие законодательства, равную правовую защиту лиц и будет способствовать формированию единообразной правоприменительной практики.

Բանալի բառեր *- տուժող, հանցանք կատարած անձ, հաշտություն, քրեական պատասխանատվություն, քրեական իրավունք, վերականգնողական արդարադատություն, քրեական պատասխանատվությունից ազատում, հաշտության ինստիտուտ:*

Keywords: *victim, offender, reconciliation, criminal liability, criminal law, restorative justice, exemption from criminal liability, institution of reconciliation.*

Ключевые слова: *потерпевший; лицо, совершившее преступление; примирение; уголовная ответственность; уголовное право; восстановительное правосудие; освобождение от уголовной ответственности; институт примирения.*

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ օրենքը «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին», ընդունված՝ 13.12.2017 թ.:
2. «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա (Լանզարոտեի կոնվենցիա):
3. Александров А. С., Куцова Э. Ф., Восстановительное правосудие в уголовном процессе: проблемы и перспективы, М.: Юрист, 2021, 182 էջ:
4. Кленова Т. В., Основания освобождения от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим, М.: Статут, 2020., 160 էջ:
5. Головко Л., Прощение долга одно из оснований прекращения уголовного дела// Российская юстиция, 1998, №4, 30 էջ:
6. Сабанин С.Н., Некоторые вопросы освобождения от уголовной ответственности// Актуальные вопросы совершенствования уголовно-правовых норм на современном этапе. Свердловск, 1986, № 53, 50 էջ:
7. Figueiredo Dias J., Роль прокуратуры в уголовном судопроизводстве, Revue internatioale de criminologie et de police technique. V. 49, 1995, № 4, 400 էջ:

Մելիքսեթյան Ա. - Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, էլհասցե՝ arminemeliqsetyan81@gmail.com:

Գևորգյան Ե. - ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի իրավագիտության ֆակուլտետի ուսանող, էլհասցե՝ yevagevorgian@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 14.07.2026 թ., տրվել է գրախոսության 14.07.2026 թ., երաշխավորվել է իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ն. Տոնոյանի կողմից, ընդունվել է տպագրության 01.10.2026 թ.:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ/INTERNATIONAL LAW/МЕЖДУНАРОДНОЕ ПРАВО

https://doi.org/10.59546/18290744-2026.7-9-120

MIKAEL ARSHAKYAN
PhD Student, Department of Public International and European Law, Institute of Law, Russian-Armenian University

ՄԻՔԱՅԵԼ ԱՐՇԱԿՅԱՆ
Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի ինստիտուտի միջազգային հանրային և եվրոպական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

МИКАЕЛ АРШАКЯН
Аспирант кафедры международного публичного и европейского права Института права Российско-Армянского университета
https://orcid.org/0009-0001-8631-9658

DO *PACTA* STILL *SERVANDA*? REASSESSING THE GENERAL RULE OF TREATY CONTINUATION IN ARMED CONFLICT

ԱՐԴՅՈ՞Ք *PACTA*-Ն ԴԵՌԵՎՍ *SERVANDA* Է. ԶԻՆՎԱԾ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆԻ ՎԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄԸ

PACTA ВСЁ ЕЩЁ *SERVANDA*? ПЕРЕОЦЕНКА ОБЩЕГО ПРАВИЛА О ПРОДОЛЖЕНИИ ДЕЙСТВИЯ МЕЖДУНАРОДНЫХ ДОГОВОРОВ В УСЛОВИЯХ ВООРУЖЁННОГО КОНФЛИКТА

INTRODUCTION

There are few questions upon which people concerned with the practical application of the rules of international law find the text-books less helpful than that of the effect of war upon treaties in force between belligerents.[1]

Armed conflict has ceased to be a collateral anomaly in treaty law and now carries sharp practical consequences for States and courts. At the centre lies a deceptively simple question: *What*

[1] C Hurst, 'The Effect of War on Treaties' (1921–22) 2 BYBIL 37, 37–47 ('Hurst').

does the outbreak of hostilities do to treaties already in force between the parties? The answer affects regulatory regimes, commercial undertakings and humanitarian protections alike.

The research problem addressed in this article is twofold: *Do the Draft Articles accurately reflect the contemporary customary position on the continuation of treaties during armed conflict?* And *does their formulation properly distinguish the negative rule that armed conflict does not, by itself, terminate or suspend treaties from the separate question whether a State may invoke the conflict to do so?* The article tackles this ambiguity by re-examining the "general rule of continuation" in the International Law Commission's Draft Articles on the Effects of Armed Conflicts on Treaties and by analysing relevant State and judicial practice. Scholarship and practice have long moved away from the traditional presumption of abrogation towards a stability-oriented model grounded in continuity, informed by treaty subject matter and party intent. Courts and tribunals have repeatedly applied treaties even during hostilities, while doctrinal bodies such as the Institute of International Law and the ILC have attempted to rationalise that evolution. Yet significant gaps remain.

The article's central thesis is that contemporary customary international law supports a general presumption of continuity, but the wording of the Draft Articles blurs the distinction between continuity and operability. The article clarifies the content of the general rule of continuation and pairs its customary understanding with the reflection given in article 3 of the Draft Articles. Properly understood, the effects of armed conflict are not automatic but invokable, conflict does not itself terminate or suspend treaties, but it may render certain treaties or provisions susceptible to termination or suspension following a structured analysis and procedural safeguards. It is therefore suggested that Article 3 should be read and normatively reformulated, to pair the negative rule against *ipso facto* effects with an explicit susceptibility standard. Such analysis suggests a more appropriate wording of the general rule which is formed based on the will of States and prior doctrinal debates within and outside of the ILC. In this way, the analysis contributes to the interpretation of the contemporary law of treaties by clarifying the doctrinal limits of reliance on armed conflict as a ground for modifying treaty relations.

The article is separated into 2 parts, which help the gradual discovery of the issues discussed herein. Chapter 1 examines the structure and status of the Draft Articles, arguing that, with exclusion of the general continuity principle, they largely reflect progressive development rather than codification. Accordingly, the remaining Draft Articles are treated as having primarily guiding value and are addressed only insofar as they clarify the ILC's understanding of the effects of armed conflict on treaties. Chapter 2 reviews in detail the codification of the general rule of continuation, the whole process of its formation and the evolution of doctrinal approaches. It, *inter alia*, exposes the tension between 'operation' and 'susceptibility', and proposes a recalibrated statement and analytic framework that makes the invokable (not automatic) nature of the doctrine explicit. The conclusion crystallises a practical guidance for application of the rule in contemporary conflicts.

BASIC RESEARCH

1. The role and framework of Draft articles on effect of Armed Conflicts on International Treaties

1.1. Introduction to the Draft Articles

While the focus of the present article is on examination of broader scope of treaty regulation rules applicable in times of armed conflicts, the issues arising from the formulation and the contents of the Draft Articles on Effects of Armed Conflicts on Treaties (Draft Articles) remain at its centre,

as they are considered to cover the issue comprehensively and are based on a comprehensive study of the State practice and doctrine. They reflect almost a decade of research initiated by the General Assembly in 2000[2] and undertaken by the ILC from 2004 onwards.[3] The ILC completed its work in 2010 by adopting eighteen draft articles and an annex[4], recommending that the General Assembly take note of the text, append it to a resolution, and consider, at a later stage, the elaboration of a convention.[5] The General Assembly followed this recommendation in 2011[6], sought Government comments in 2014[7], and placed the topic on the agenda of its seventy second session. In 2017 it recognised the value of the Draft Articles, encouraged their use as a reference, and decided to return to the question at an appropriate time.[8]

These articles constitute a significant step in the codification and potential progressive development of the law in this field. However, their practical impact remains uncertain due to the limited State practice and scarce references in jurisprudence. Structurally, articles 3 to 7 form the core of the Draft Articles, setting out the principles and mechanisms for assessing the operability of treaties. Article 3 starts with the refusal of the presumption of discontinuation, providing that 'the existence of an armed conflict does not *ipso facto* terminate or suspend the operation of treaties'. It is important here to put an emphasis on the difference between *refusal of presumption of discontinuation* and *adoption of presumption of continuation*. The first one implies a more cautious approach by setting a negative definition and leaving more room for cases when despite the armed conflict, additional circumstances linked with the armed conflict may affect the operation of the treaty or its susceptibility to termination and suspension. Such view has a firm practical foundation and is well acknowledged among international community of states. On the issue of establishing a positive formulation, the Special Rapporteur commented that 'it would be difficult to go so far, given the present state of international law'.[9] As will be discussed further in the article, article 3 carries near-transparent flaws in formulation of a rule that is so widely accepted.

Article 4 emphasizes prioritizing the initial will of the State over the treaty's nature, giving primary significance to any provisions addressing operability, intentionally avoiding the term 'expressly'[10] to allow provisions such as standard war clauses to reflect the state's intent to keep a treaty operable. Article 5 reinforces the application of general treaty interpretation rules under Articles 31 and 32 VCLT[11], clarifying connections with general treaty law without creating a new interpretative regime.

Article 6 identifies internal factors such as subject matter, object and purpose, content, and number of parties, and external factors such as duration, scale, territorial extent, and foreign

[2] ILC, 'Report on the 52nd Session' (2000) II (2) YBILC 1, para 729.
[3] International Law Commission, 'Summary record of the 2830th meeting' (56th session, 2004) YBILC vol I, 239, 241.
[4] ILC, 'Report of the International Law Commission on the Work of its 63rd Session' (2011) II YBILC, Part Two, paras 94–95, 100–101.
[5] *Ibid* para 97.
[6] UNGA, 'Report of the International Law Commission on the Work of its Sixty-Third Session' UN Doc A/66/10 (2011).
[7] UNGA, 'Effects of Armed Conflicts on Treaties: Comments and Observations Received from Governments' UN Doc A/69/495 (2014).
[8] UNGA (7 December 2017) UN Doc A/RES/72/121.
[9] Lucius Caflisch, 'First Report on the Effects of Armed Conflicts on Treaties' (2010) II(1) YBILC 91, para 34 ('Caflisch, First Report').
[10] ILC, 'Draft Articles on the Effects of Armed Conflicts on Treaties, with Commentaries' (2011) vol II(2) YBILC 101, 112, art 4 para 2 ('ILC Draft Articles with Commentaries').
[11] *Ibid* 113, Article 5, para 2.

involvement. These factors without hierarchical gradation[12] guide the assessment of a treaty's susceptibility to termination or suspension.

The assessment process proceeds as follows: first, review any express provisions under Article 4, second, interpret the treaty's subject matter under Article 5 and third, consider all relevant factors under Article 6. Two further safeguards apply: Article 15 bars an aggressor State from invoking the regime, and Article 12 removes the right to terminate or suspend where the State has expressly or implicitly accepted the treaty's continued operation.

Article 7 and its annex provide an indicative list of treaties that, due to their nature and subject matter, generally continue in whole or in part. This categorization has drawn both praise and criticism.[13] Some states also highlighted its vagueness, with the UK suggesting reconsideration because the categories may not always be easily identifiable. [14] Nonetheless, the list is non-binding and indicative, reflecting a cautious approach by the drafters.[15] It creates 'a set of rebuttable presumptions based on the subject matter of those treaties: the subject matter of the treaty implies that the treaty survives an armed conflict'.[16]

While, the Draft Articles draw on extensive analysis of State practice, tribunal decisions, and doctrine, positions regarding the effectiveness of the approaches adopted by the drafters remain separated. They adopt a presumption against the automatic discontinuation of treaties and provide guidance for assessing their operability. At the same time the Articles have received mixed opinions from scholars[17] and states[18], which in relevant part are addressed further. Some criticism concerns the questionable added value of the Articles, while other critiques cast doubt on their normative usefulness. The following section will uncover their normative character by drawing a line between the provisions that are reflecting customary law and the ones that are of merely guiding value.

1.2. Customary character of the Draft Articles and their relationship with the VCLT

In order to shed light on the existing framework regarding the operation of treaties in times of armed conflict and to provide doctrinal guidance for practical use, it is necessary, after examining the content of the Draft Articles, to clarify their practical implications and legal authority.

This section considers the role of the Draft Articles as the culmination of the ILC's work on the topic. The ILC was established to support Article 13(1)(a) of the UN Charter, which mandates the General Assembly to encourage both the progressive development and codification of international law.[19] States have traditionally resisted granting the ILC law-making authority, limiting its mandate

[12] *Ibid* 113, Article 6, paras 1-2.
[13] Zrilič notes: 'While the classification approach ensures greater clarity, it is also problematic because it creates artificial categories based on one feature of a treaty' in Jure Zrilič, 'The Effects of Armed Conflicts on Investment Treaties' in *The Protection of Foreign Investment in Times of Armed Conflict* (Oxford 2019) 61.
[14] *Ibid* SR.20, para 1 (UK).
[15] Lucius Caflisch, 'First Report on the Effects of Armed Conflicts on Treaties' (2010) II(1) YBILC 91, para 53 ('Caflisch, First Report').
[16] ILC, Draft Articles with Commentaries (n 10) 120, Annex, para 2.
[17] Ryk-Lakhmann, *The Protection of Foreign Investments in Armed Conflicts* (PhD thesis, University College London 2019) 117-118 ('Ryk-Lakhmann'), Benny Tan Zhi Peng, 'The International Law Commission's Draft Articles on the Effects of Armed Conflicts on Treaties: Evaluating the Applicability of Impossibility of Performance and Fundamental Change' (2013) 3 Asian J Intl L 51, 51–76; T Ackermann, *The Effects of Armed Conflict on Investment Treaties* (Cambridge University Press 2022) ch 2, 52-65 ('Ackermann'); Zrilič (n 13) 60-62.
[18] See ILC, 'Effects of Armed Conflicts on Treaties: Comments and Information Received from Governments' (UN Doc A/CN.4/622, 15 March 2010) (China, Colombia, Ghana, Poland) 125.
[19] United Nations, 'Statute of the International Law Commission' in *The Work of the International Law Commission* (9th edn, UN 2017) 283–90.

to these two functions.[20] Progressive development concerns areas not yet regulated or insufficiently developed in State practice, while codification involves formulating and systematising rules where practice, precedent and doctrine already exist.[21] Thus, an important question is whether the Draft Articles are seen by states as progressive development or codification of the matter. Understanding their normative character will lead to the framing of their practical usefulness, as well as create a possibility for assessment of adherence of Draft Articles to such customary rules, namely regarding issues of formulation of general rule of continuity.

The Draft Articles on the effects of armed conflicts on treaties, as has been stated above, have been met both with praise and criticism, one bone of contention being the customary foundation and legal authority of the articles. Notwithstanding the research conducted by the ILC in pursuit of revealing and codifying the State practice concerning the topic, majority of states expressed the view, that they do not see the Draft Articles as anything more than a guidance,[22] meanwhile some states, although recognizing them as a 'valuable resource' saw certain articles as a step too forward, regulating 'mainly untouched domain', leaning 'more towards progressive development than codification'.[23] During the meeting of the Sixth Committee African states expressed the view that they 'did not support [the] elaboration [of the Draft Articles] in the form of a binding legal instrument' because of their flaws.[24] Russia refused the possibility of regarding the articles 'as reproducing norms of international customary law', adding that 'they could be useful as a guide for States and might enable future practice to develop in a more precise framework'.[25] Similarly, delegation of the United States asserted that 'the Draft Articles were best used as a resource to which States might refer when determining the effect of particular armed conflicts on particular treaties'.[26]

In 2014 Belarus, by endorsing 'the broadly shared view reflected in the draft articles that an armed conflict did not ipso facto terminate or suspend international treaties', hinted on accepting it as a customary rule in the form given in article 3, although refraining from elaborations concerning customary character of other articles.[27] Customary character of the rule enshrined in article 3 was similarly upheld by number of states.[28] Greece on its behalf acknowledged the principle of continuity and endorsed the general approach of the Draft Articles without touching upon their customary character.[29] Argentinian delegation stated that there was no general practice among states on the issue.[30]

[20] *Ibid* article 1(1).
[21] *Ibid* article 15.
[22] UNGA Sixth Committee, 69th Session, 18th Meeting (31 October 2014) UN Doc A/C.6/69/SR.18, para 38 (India) ('UNGA Sixth Committee, 18th Meeting'); UNGA Sixth Committee, 72nd Session, 17th Meeting (16 October 2017) UN Doc A/C.6/72/SR.17, paras 8 (Australia), 16 (Sudan), 24 (Bangladesh), 33 (Iran), 38 (Estonia), 40 (Malaysia), 43 (Saudi Arabia) ('UNGA Sixth Committee, 17th Meeting').
[23] UNGA Sixth Committee, 17th meeting (n 22), paras 6 (Finland on behalf of the Nordic Countries) and 17 (Singapore); UNGA Sixth Committee, 18th meeting (n 22), para 6 (Finland on behalf of the Nordic Countries) and para 17 (Singapore).
[24] UNGA Sixth Committee, 18th meeting (n 22), para 8 (South Africa on behalf of the African Group); UNGA Sixth Committee, 17th meeting (n 22), para 5 (Algeria on behalf of the African Group) and para 27 (South Africa).
[25] UNGA Sixth Committee, 18th meeting (n 22), para 20; UNGA Sixth Committee, 17th meeting (n 22), para 18.
[26] UNGA Sixth Committee, 18th meeting (n 22), para 46; UNGA Sixth Committee, 17th meeting (n 22), para 22.
[27] UNGA Sixth Committee, 18th meeting (n 22), para 13-14.
[28] *Ibid* (Singapore) para 27, (India) para 38
[29] *Ibid* para 39.
[30] *Ibid* para 43.

Such *un*acceptance of the articles by states clearly shows absence of a formed *opinio juris,* which, paired with questionable State practice strips the Draft Articles of any possibility of creating or reflecting customary rules. Therefore, ILC's work falls in the realm of progressive development rather than codification. Hence, it is only logical that the doctrinal views are not acknowledging the customary character of the Articles.[31] This is of course without prejudice to the general principle enshrined in article 3[32], which has been supported by the states almost unanimously and, as shown earlier, is based on sufficient amount of practice to be accepted indicative of international custom.

In 21st century the tribunals have rarely touched upon the issue of effects of armed conflicts on treaties. One of the recent instances being the discussion unfolded in the framework of Eritrea-Ethiopia Claims Commission in its Partial Award in Claim 7.[33] Interestingly, at the first glance, this case suggests, that the main principles of continuity, which form the foundation of Draft Articles, are not applicable by establishing that 'there is a broad consensus that bilateral treaties, especially those of a political or economic nature, are at the very least suspended by the outbreak of a war'.[34] This decision has frequently been interpreted in this way[35] and criticised for such approach[36] in the scholarship as well. However, a more nuanced and careful analysis shows a different reality. While it lacks a direct link to the Draft Articles or the general rule of treaty continuity, it nevertheless looks at the 'nature and objectives' of the treaties at hand. Considering this, Ryk-Lakhmann suggests that the review of EECC's jurisprudence 'demonstrates that the Commission's decision is mostly consistent, but not fully congruent, with the ILC Articles and law that they reflect'.[37] This brought him to a conclusion that 'arguably then, with a grain of context, the jurisprudence of the Commission does not take away from what was established as the prevailing legal position'[38], thereby rejecting the seemingly present contradiction between the prevailing position and the position of the tribunal.

Although the Commission considered the nature and objectives of the treaties and thereby approached elements of the assessment later reflected in the Draft Articles, it would go too far to treat its reasoning as coherently aligned with the prevailing interpretation of the general rule of treaty continuity. In Guris v Syria, the tribunal considered the treaty at issue before it to be of a fundamentally different nature from those examined by the EECC and rather than rejecting the Commission's reasoning, it applied a similar analytical framework while emphasising the differences in the nature and purpose of the treaty that justified a different conclusion.

---

[31] Yaël Ronen, 'Treaties and Armed Conflicts' in Christian J Tams, Antonios Tzanakopoulos and Andreas Zimmermann (eds), *Research Handbook on the Law of Treaties* (Edward Elgar 2014) 548; Federica Paddeu, 'Self-Defence as a Circumstance Precluding Wrongfulness: Understanding Article 21 of the Articles on State Responsibility' (2015) 85 *BYBIL* n 123; Ackermann (n 17) 59–62.

[32] UNGA Sixth Committee, 17th Meeting (n 22) para 23 (Bangladesh); UNGA, 'Effects of Armed Conflicts on Treaties: Comments and Information Received from Governments' UN Doc A/65/95 (2010) 2 (El Salvador); UNGA Sixth Committee, 18th Meeting (n 22) paras 10, 13, 15, 27, 36 (South Africa on behalf of the African Group; Belarus; Russia; Singapore; India); Arnold N Pronto, 'The Effect of War in Law: What Happens to Their Treaties When States Go to War?' (2013) 2(2) *Cambridge Journal of International and Comparative Law* 227, 235.

[33] Eritrea-Ethiopia Claims Commission, PCA Case No. 2001-02, *Partial Award: Economic Loss Throughout Ethiopia – Ethiopia's* Claim 7 (19 December 2005).

[34] *Ibid* para 18.

[35] M Paparinskis, 'Circumstances Precluding Wrongfulness in International Investment Law' (2016) 31(2) *ICSID Review – Foreign Investment Law Journal* 484, 492.

[36] Ackermann (n 17), 60.

[37] Ryk-Lakhmann (n 17) 125 (with reference to S Murphy, M Paparinskis, and others, *Litigating War: Mass Civil Injury and the Eritrea-Ethiopia Claims Commission* (OUP 2013)).

[38] Ryk-Lakhmann (n 17), 126.

In the same Guris v Syria the Tribunal applied the steps given in the Draft Articles and came to the conclusion that the obligations under the BIT at issue were 'not inexorably contingent upon the absence of armed conflict between the States Parties' and concluded that it continued its operation notwithstanding the existence of an armed conflict. It agreed with ILC's approach and called it 'consistent with other rules of general international law which protect private rights at times of uncertainty or dispute in international relations'.[39]

Accordingly, it can be deduced from the abovesaid, that although with occasional exceptions the general principle of continuation of treaties is the prevailing view in international law and has a significant support among the states to an extent where it reflects customary international law. However, the remaining substantial provisions of the Draft Articles have insufficient State practice and *opinion juris* to be considered customary.

2. The intricacies of formulation and evolution of the general rule of continuation

Taking into account the guiding role of the Draft Articles it is important insure that, when looking at them States encounter as little confusions as possible and that their interpretations of the articles do not differ significantly. The central argument of the article is that despite such importance, the ILC has failed to adopt a text that would provide relatively uniform understanding, especially regarding the general principle of legal stability and continuity. Further, it will be shown that Draft article 3, although widely endorsed by states and aimed at reflecting the customary principle of continuity, is not enjoying a uniform interpretation neither from states nor from members of the ILC.

Անձին ապաստան տրամադրելու գործընթացն իր էությամբ մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության հատուկ իրավական մեխանիզմ է, որի նպատակն է ապահովել այն անձի պաշտպանությունը, ով իր քաղաքացիության կամ նախկին մշտական բնակության երկրից դուրս գտնվելով՝ չի կարող կամ հիմնավոր երկյուղի պատճառով չի ցանկանում օգտվել այդ պետության պաշտպանությունից: Փախստականի կարգավիճակի որոշման ընթացակարգի առանձնահատուկ նշանակությունը բխում է նաև Հայաստանի Հանրապետության ստանձնած մի շարք միջազգային պարտավորություններից:

Այսպես. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 14-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի հետապնդումից ապաստան որոնելու ուրիշ երկրներում և օգտվելու այդ ապաստանից:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով փախստականների և ապաստան հայցողների իրավունքների արդյունավետ պաշտպանությանը, նշել է, որ պետություններն իրավունք ունեն վերահսկելու օտարերկրացիների մուտքը, բնակությունը և արտաքսումը: Կոնվենցիայի 13-րդ հոդվածը երաշխավորում է Կոնվենցիայով նախատեսված իրավունքների և ազատությունների էության ապահովման համար ազգային մակարդակում իրավական պաշտպանության միջոցի առկայությունը՝ անկախ նրանից, թե դրանք ինչպես են ապահովվում ներպետական իրավական կարգում: Այնուամենայնիվ, 13-րդ հոդվածով պահանջվող իրավական պաշտպանության միջոցը պետք է լինի «արդյունավետ» ինչպես գործնականում, այնպես էլ իրավական առումով: Որպեսզի 13-րդ հոդվածով պահանջվող միջոցը արդյունավետ լինի, այն պետք է հասանելի լինի ինչպես գործնականում, այնպես էլ օրենքով, մասնավորապես այն իմաստով, որ դրա իրականացումը չպետք է անհիմն խոչընդոտվի պատասխանող պետության իշխանությունների գործողություններով կամ անգործությամբ: Բացի այդ, հատուկ ուշադրություն պետք է դարձնել իրավական պաշտպանության միջոցի արագությանը, քանի որ չի կարելի բացառել, որ դրա չափազանց երկար տևողությամբ կարող է խաթարվել իրավական պաշտպանության միջոցի համարժեք բնույթը (*տե՛ս, Դե Սուզա Ռիբեիրոն ընդդեմ Ֆրանսիայի գործով Եվրոպական դատարանի 13.12.2012 թվականի վճիռը, կետեր 77, 78, 80, 81*):

Վերոնշյալ հարցին անդրադարձել է նաև ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գործակալության՝ Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի ծրագրի գործադիր կոմիտեն իր մի շարք փաստաթղթերում և մասնավորապես՝ 1987 թվականի թիվ 46 եզրակացության *(j)* կետով նշել է, որ ապաստանի ընթացակարգերի չարաշահման կանխարգելմանն ուղղված միջոցառումները վնասակար ազդեցություն չպետք է ունենան միջազգային պաշտպանության հիմնարար սկզբունքների, այդ թվում՝ ապաստանի ինստիտուտի վրա:

Հաշվի առնելով վերոնշյալ միջազգային կարգավորումները և Եվրոպական դատարանի դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ միջազգային իրավական երաշխիքները պահանջում են, որ հետապնդման վտանգի առկայության պայմաններում անձն ունենա այլ պետության տարածքում պաշտպանություն հայցելու իրական և արդյունավետ հնարավորություն: Միևնույն ժամանակ, նշվածը չի կարող ընկալվել որպես պետության՝ ապաստան տրամադրելու անվերապահ պարտականություն, և պետություններն ունեն

օտարերկրացիների մուտքը, բնակությունը և վտարումը կարգավորելու իրավասություն, որն, այնուամենայնիվ, սահմանափակվում է մարդու իրավունքների պաշտպանության միջազգային պարտավորություններով:

Ապաստան տրամադրելու գործընթացը պետք է լինի արդյունավետ ոչ միայն օրենքով, այլև՝ գործնականում: Այդ արդյունավետությունը, ի թիվս այլնի, ենթադրում է, որ իրավասու մարմինները չեն կարող ապաստան հայցելու իրավունքի իրացումը պայմանավորել այնպիսի ձևական պահանջներով, որոնք օրենքից ուղղակիորեն չեն բխում: Այս պահանջը ենթադրում է, որ ապաստան հայցող անձը պետք է ունենա իր դիմումը պատշաճ ներկայացնելու իրական հնարավորություն, պետք է ապահովվի դիմումի անհատական, բազմակողմանի և լրիվ քննությունը, իսկ պաշտպանության միջոցի կիրառումը չպետք է անհարկի խոչընդոտվի պետական մարմինների գործողություններով կամ անգործությամբ: Նշված գործընթացի արդյունավետությունը գնահատելիս առանձնահատուկ նշանակություն ունի նաև ընթացակարգի տևողությունը, քանի որ ապաստանի տրամադրման հարցի անհիմն կամ անորոշ ժամկետով ձգձգումը կարող է հանգեցնել ծանր հետևանքների (այդ թվում նաև՝ անձին ազատությունից զրկելուն): Բացի այդ՝ այս ընթացակարգերի հնարավոր չարաշահումները կանխելու նպատակով նախատեսվող միջոցառումները չեն կարող ունենալ այնպիսի բնույթ կամ ծավալ, որը վնասում է միջազգային պաշտպանության հիմնարար սկզբունքներին, և չարաշահումների կանխարգելման նպատակը չի կարող արդարացնել այնպիսի ընթացակարգային պահանջների կիրառումը, որոնք իրենց բնույթով կամ գործնական ազդեցությամբ անհամաչափորեն դժվարացնում կամ փաստացի խոչընդոտում են ապաստան հայցելու իրավունքի իրականացումը:

Փախստականների և ապաստան հայցողների իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշներն իրենց անմիջական արտացոլումն են ստացել նաև Հայաստանի Հանրապետության ներպետական իրավական համակարգում:

Այսպես. Փախստականների և ապաստան հայցող անձանց ՀՀ Սահմանադրությամբ, վավերացված միջազգային պայմանագրերով և օրենքներով սահմանված իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության պատշաճ երաշխիք ապահովելու նպատակով, ի թիվս այլնի, ՀՀ Ազգային ժողովի կողմից 27.11.2008 թվականին ընդունվել է «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ Օրենք), որի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենքը Հայաստանի Հանրապետությունում կարգավորում է փախստականի ճանաչման, ապաստանի տրամադրման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև ապահովում է Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի, դրա 1967 թվականի Արձանագրության կիրառումը և ճանաչում է բոլոր օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց՝ Հայաստանի Հանրապետության տարածքում և Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետերում ապաստան հայցելու, ինչպես նաև ապաստան ստանալու իրավունքը, եթե նրանք բավարարում են ապաստանի տրամադրման համար նույն օրենքով սահմանված անհրաժեշտ պահանջները:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքը, միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան, ապահովում է նաև բոլոր օտարերկրացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց իրենց քաղաքացիության կամ նախկին մշտական բնակության կամ որևէ այլ երկիր վտարելուց պաշտպանությունը, որտեղ նրանց սպառնում է խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ենթարկվելու վտանգ:

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապաստանի հայցը օտարերկրյա քաղաքացու

կամ քաղաքացիություն չունեցող անձի կողմից Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստանալու նպատակով նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված մարմիններին ներկայացված խնդրանք է կամ դիմում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ապաստանի խնդրանք է համարվում Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետերում Ազգային անվտանգության ծառայության (...) կազմում գործող Հայաստանի Հանրապետության սահմանապահ զորքերին (...), իսկ Հայաստանի Հանրապետության տարածքում՝ լիազոր մարմնին, ինչպես նաև Ոստիկանության, կամ եթե անձը գտնվում է ազատազրկման վայրում՝ ազատազրկման վայրի վարչակազմին բանավոր, գրավոր, ժեստերի լեզվով կամ հաղորդակցության որևէ այլ միջոցով առերես արված ցանկացած հայտարարություն, որն արտահայտում է Հայաստանի Հանրապետությունում պաշտպանություն գտնելու նրա ցանկությունը: Նույն մարմինները նաև պարտավոր են տրամադրել տեղեկատվություն Հայաստանի Հանրապետությունում ապաստանի հայց ներկայացնելու հնարավորության մասին այն անձանց, որոնք, հնարավոր է, որ ապաստանի կարիք ունեն:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապաստանի դիմումը օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի կողմից ապաստանի ստացման նպատակով Հայաստանի Հանրապետության տարածքում լիազոր մարմնին ներկայացված գրավոր խնդրանքն է: Դիմումի ձևը հաստատում է Կառավարությունը: Ապաստանի դիմումը կարող է ներկայացվել ինչպես հաջորդելով ապաստանի խնդրանքին՝ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ապաստան հայցելու գործընթացն ավարտելու նպատակով, այնպես էլ անմիջապես՝ առանց ապաստանի խնդրանքի:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով սահմանված՝ ապաստան հայցող ամբողջ ընտանիքի համար ապաստանի խնդրանքը և դիմումը կարող է ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող ընտանիքի որևէ անդամ, ինչը, սակայն, չի սահմանափակում ընտանիքի մյուս անդամների՝ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով անձնական պատճառների հիման վրա անհատական դիմումներ ներկայացնելու իրավունքը:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապաստան հայցողների և փախստականների՝ նույն օրենքով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված բոլոր իրավունքները հարգվում են Հայաստանի Հանրապետության պետական և ոչ պետական բոլոր մարմինների կողմից:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Միգրացիայի և քաղաքացիության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը նախարարությանը ենթակա Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունն է:

Օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքի իմաստով ապաստանի տրամադրման ընթացակարգ է համարվում լիազոր մարմնի կողմից իրականացվող փախստականի կարգավիճակի և ապաստանի տրամադրման վարչական վարույթը (...):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ապաստանի տրամադրման ընթացակարգն իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստանալու ցանկություն ունեցող օտարերկրյա քաղաքացիները ապաստան

ստանալու խնդրանք են ներկայացնում նույն օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված մարմիններին:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սահմանապահ զորքերը, Ոստիկանությունը կամ ազատազրկման վայրի վարչակազմը հարցազրույց են անցկացնում ապաստան հայցողի հետ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված անհրաժեշտ տեղեկատվությունը ստանալու համար և ապաստանի խնդրանքը գրանցում են համապատասխան գրանցամատյանում:

(…)

Հարցազրույցը գրավոր արձանագրվում է ապաստանի խնդրանք ստացած մարմինների կողմից, ապա գրավոր ներկայացված ապաստանի խնդրանքի հետ, եթե այդպիսին կա, փոխանցվում է լիազոր մարմնին, իսկ պատճենները մնում են վերը նշված մարմինների մոտ:

Օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական հիմքերով գտնվող օտարերկրյա քաղաքացիները, որոնք ապաստան ստանալու մտադրություն ունեն, դիմում են լիազոր մարմին և անմիջապես ներկայացնում են ապաստանի դիմումը՝ նույն օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն (…):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում անօրինական գտնվող օտարերկրյա քաղաքացիները, որոնք ապաստան ստանալու մտադրություն ունեն կամ անմիջապես դիմում են լիազոր մարմին և ներկայացնում են ապաստանի դիմումը, նույն օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն (…):

Նույն հոդվածի 2.1-ին մասի համաձայն՝ այն օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը, որն ապօրինի հատել է Հայաստանի Հանրապետության պետական սահմանը, կամ որի նկատմամբ քրեական հետապնդում է իրականացվում Հայաստանի Հանրապետության տարածքում, կամ որը ենթակա է հանձնման օտարերկրյա պետությանը, կարող է դիմել ապաստան ստանալու կամ փախստականի կարգավիճակ ձեռք բերելու համար այդ իրավունքի մասին ծանուցման պահից՝ 15 օրվա ընթացքում: Իրավասու մարմնի պաշտոնատար անձը նույն մասում նշված անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու, նրան ազատությունից զրկելու կամ նրա ազատությունը այլ կերպ սահմանափակելու պահից սկսած՝ անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում, պարզաբանում է ապաստան կամ փախստականի կարգավիճակ հայցելու նրա իրավունքը, որի վերաբերյալ նրան տալիս է գրավոր ծանուցագիր և ապահովում է նրա իրավունքի իրացումը՝ Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստանալու մասին նրա դիմումն ուղարկելով լիազոր մարմնին:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապաստանի դիմումը ապաստան հայցողը գրավոր ներկայացնում է լիազոր մարմնին՝ հայերեն կամ իր մայրենի լեզվով կամ Միավորված ազգերի կազմակերպության լեզուներից մեկով:

Վերոնշյալ իրավանորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Օրենքը Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցելու իրավունքը դիտարկում է որպես օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հիմնարար պաշտպանական իրավունքներից մեկը, որն ուղղված է նաև ապահովելու միջազգային իրավական փաստաթղթերով նախատեսված անձի՝ պաշտպանություն ստանալու իրական հնարավորությունը, որն իրացվում է ապաստանի տրամադրման ընթացակարգով, այն է՝ լիազոր մարմնի կողմից իրականացվող փախստականի կարգավիճակի և ապաստանի տրամադրման վարչական վարույթով: Անձը Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստանալու նպատակով կարող է ներկայացնել ապաստանի հայց, որը կարող է դրսևորվել ապաստանի խնդրանքի կամ ապաստանի դիմումի ձևով:

Ընդ որում՝ ապաստանի հայցի այս երկու տեսակները տարբերվում են իրարից ինչպես ներկայացման եղանակով, այդպես էլ՝ հասցեատիրոջով:

Մասնավորապես՝ եթե անձը գտնվում է ազատազրկման վայրում, ապաստանի խնդրանքը կարող է ներկայացվել այդ թվում նաև՝ գրավոր եղանակով, և այն ներկայացվում է ազատազրկման վայրի վարչակազմին: Միևնույն ժամանակ, եթե անձը գտնվում է ազատազրկման վայրում, ազատազրկման վայրի վարչակազմի դերը ոչ թե ապաստանի տրամադրման հարցը լուծելն է, այլ խնդրանքը ընդունելը, գրանցամատյանում այն գրանցելը, հարցազրույց իրականացնելը և համապատասխան ընթացակարգով նյութերը ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայությանը փոխանցելը: Մինչդեռ՝ ապաստանի դիմումը ներկայացվում է միայն գրավոր եղանակով անմիջապես ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայությանը: Այլ կերպ ասած, փախստականի կարգավիճակի և ապաստանի տրամադրման վարչական վարույթում օրենսդիրը ազատազրկման վայրի վարչակազմին օժտել է ոչ թե դիմումն ընդունելու բացառիկ լիազորությամբ՝ արգելելով լիազոր մարմնին քննության առնել այլ կերպ ներկայացված դիմումները, այլ ազատազրկման վայրի վարչակազմին պատվիրակել է միջանկյալ գործառույթ՝ ընդունել և լիազոր մարմնին փոխանցել համապատասխան փաստաթղթերը, որն, ի լրումն անձի կողմից դիմումը անձամբ ներկայացնելու ընթացակարգի, ուղղված է ազատազրկման վայրում գտնվող անձանց պատշաճ վարչարարության և այլ իրավունքներն առավել արդյունավետ և հավասար պայմաններում իրացնելն ապահովելուն:

Հետևաբար, չնայած այն հանգամանքին, որ ապաստանի խնդրանքը և ապաստանի դիմումը կարող են ներկայացվել գրավոր եղանակով և ապաստանի խնդրանքի համար առկա է հատուկ կարգավորում, որը վերաբերում է ազատազրկման վայրում գտնվող անձի կողմից ներկայացվող ապաստանի խնդրանքի հասցեատիրոջը, այնուամենայնիվ, հաշվի առնելով նախ միջազգային իրավական երաշխիքներն առ այն, որ ապաստան տրամադրելու գործընթացը պետք է լինի արդյունավետ ոչ միայն օրենքով, այլև գործնականում, ինչպես նաև ներպետական կարգավորումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ազատազրկման վայրում գտնվելու հանգամանքը, ինքնին, չի սահմանափակում անձի՝ ապաստան հայցելու իրավունքի իրացման ձևի ընտրության հնարավորությունը: Ազատազրկման վայրում գտնվող անձը կարող է ապաստան հայցել՝ ներկայացնելով ապաստանի խնդրանք ազատազրկման վայրի վարչակազմին, կամ ապաստանի դիմում՝ անմիջապես լիազոր մարմնին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև իրացնելով երկու ընթացակարգային հնարավորություններն էլ: Ուստի ազատազրկման վայրում գտնվող անձը ապաստանի հայցը ապաստանի դիմումի տեսքով կարող է անմիջականորեն հասցեագրել ու ներկայացնել լիազոր մարմնին, այն է տվյալ դեպքում՝ ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայությանը:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործը հարուցվել է Մաքսիմ Պուզանովի կողմից ներկայացված գործողության կատարման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է պարտավորեցնել ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայությանը հարուցել իրեն ապաստան տրամադրելու և փախստական ճանաչելու վերաբերյալ վարչական վարույթ:

Դատարանը 19.03.2025 թվականի վճռով Մաքսիմ Պուզանովի հայցը մերժել է՝ պատճառաբանելով, որ *«(...) ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության 30.07.2024 թվականի թիվ 42/94/3/127965-24 գրությամբ հիմնավորվել է, որ ի պատասխան Հայցվորի 2024 թվականի հուլիսի 29-ի գրության՝ տեղեկացրել են, որ Մաքսիմ Պուզանովի*

ՀՀ-ում փախստականի կարգավիճակ տալու մասին դիմումին ընթացք տրվել չի կարող, քանի որ չի պահպանվել «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 13-րդ և 46-րդ հոդվածներով նախատեսված ազատազրկման վայրում գտնվող անձանց կողմից ապաստանի հայց ներկայացնելու ընթակարգը, համաձայն որի՝ տվյալ անձանց ապաստանի խնդրանքը լիազոր մարմնին փոխանցվում է ազատազրկման վայրի վարչակազմի միջոցով (...)»:

Վերաքննիչ դատարանը 24.09.2025 թվականի որոշմամբ Մաքսիմ Պուզանովի վերաքննիչ բողոքը մերժել է և Դատարանի 19.03.2025 թվականի վճիռը թողել է անփոփոխ՝ այն պատճառաբանությամբ, որ *«(...) Մաքսիմ Պուզանովը պետք է ի սկզբանե դիմեր ազատազրկման վայրի իրավասու մարմնի պաշտոնատար անձին, իսկ վերջինս էլ դիմումը պետք է ուղարկեր ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն: Որպիսի պարագայում հնարավոր չէ պարտավորեցնել ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայությանն ընթացք տալ դիմումին այն պարզ պատճառաբանությամբ, որ նշյալ պարագայում դիմումը վարչական մարմինը պետք է ստանար հենց ազատազրկման վայրի իրավասու մարմնի պաշտոնատար անձին կողմից (...)»:*

Վճռաբեկ դատարանը, վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո, անդրադառնալով Վերաքննիչ դատարանի հետևությունների հիմնավորվածությանը, արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերից հետևում է, որ ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ պետի 10.06.2024 թվականի թիվ 1097 գրությամբ ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայությանն է փոխանցվել կալանավորված անձ Մաքսիմ Պուզանովի դիմումը, որով վերջինս խնդրել է իրեն տրամադրել քաղաքական ապաստան ՀՀ-ում:

ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը 17.06.2024 թվականի գրությամբ հայտնել է, որ դիմումին ընթացք տրվել չի կարող, քանի որ չեն ներկայացվել քաղաքական գործունեություն իրականացնելու կամ քաղաքական հետապնդման ենթարկվելու հանգամանքը հաստատող փաստաթղթեր:

25.07.2024 թվականին Մաքսիմ Պուզանովի ներկայացուցիչը դիմում է ներկայացրել ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն՝ խնդրելով հարուցել վարչական վարույթ Մաքսիմ Պուզանովին ՀՀ-ում փախստական ճանաչելու և ապաստան տրամադրելու համար: Ի պատասխան վերոնշյալ դիմումի՝ ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը 30.07.2024 թվականի գրությամբ հայտնել է, որ այդ դիմումին ևս ընթացք տրվել չի կարող, քանի որ ազատազրկման վայրում գտնվող անձանց կողմից ապաստանի հայց ներկայացնելու՝ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 13-րդ և 46-րդ հոդվածներով սահմանված կարգը չի պահպանվել. տվյալ անձանց ապաստանի խնդրանքը լիազոր մարմնին փոխանցվում է ազատազրկման վայրի վարչակազմի միջոցով:

Դատարանը և Վերաքննիչ դատարանն արձանագրել են, որ հայցվորը պետք է ի սկզբանե դիմեր ազատազրկման վայրի իրավասու մարմնի պաշտոնատար անձին: Որպիսի պարագայում հնարավոր չէ պարտավորեցնել ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայությանն ընթացք տալ դիմումին:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում Դատարանի և Վերաքննիչ դատարանի վերոնշյալ դիրքորոշմանն անդրադառնալ օրինականության սկզբունքի շրջանակներում:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ

օրենքներով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ իրավական այլ ակտերով: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

ՀՀ վճռաբեկ դատարանը, իր նախկին որոշումներից մեկում անդրադառնալով օրինականության սկզբունքին, նշել է, որ այս սկզբունքն ուղղակիորեն պահանջում է, որ պետական մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեությունը հիմնված լինի Սահմանադրության և օրենքի վրա. (...): Օրինականության սկզբունքը բացառիկ կարևոր նշանակություն ունի հատկապես այն ժամանակ, երբ պետական մարմիններն առնչվում են մասնավոր անձանց հիմնական իրավունքների հետ (*տե՛ս, «Ինեկոբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ՎԴ/2127/05/11 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված է առանցքային նշանակություն ունեցող սահմանադրական այն պահանջը, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց լիազորությունները պետք է սահմանված լինեն ՀՀ Սահմանադրությամբ կամ օրենքով: Միաժամանակ, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով օրենսդիրը նախատեսել է օրինականության ենթասկզբունք հանդիսացող օրենքի վերապահումը: Օրենքի վերապահում նշանակում է, որ վարչական մարմինը որևէ գործողություն իրականացնելու համար պետք է լիազորված լինի օրենքով կամ օրենքով նախատեսված դեպքում նաև այլ իրավական ակտով (*տե՛ս, ՀՀ ֆինանսների նախարարության Կապանի տարածքային հարկային տեսչությունն ընդդեմ «Վարդանի Զարթոնքը» ՍՊԸ-ի թիվ ՎԴ/11193/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ իրավական պետությունում վարչական մարմիններն իրենց գործունեությունում «ազատ» չեն, այլ կապակցված են իրավունքով և օրենքով, ինչը դրսևորվում է նաև օրենքի գերակայությամբ (վարչական մարմնի ոչ մի իրավական ակտ, գործողություն կամ անգործություն չպետք է հակասի օրենքին) և օրենքի վերապահմամբ (վարչական մարմինը որևէ լիազորություն իրականացնելու համար պետք է լիազորված լինի օրենքով): Վարչարարություն իրականացնող բոլոր մարմինները պարտավոր են պահպանել վարչարարության հիմնարար սկզբունքները, որոնցից առավել մեծ նշանակությամբ, թերևս, առանձնանում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածում ամրագրված՝ վարչարարության օրինականության սկզբունքը: Այն իրավական պետության հիմնաքարերից մեկն է, քանի որ, եթե վարչական մարմինները գործում են ոչ թե իրավաչափորեն, այլ կամայականորեն, ապա մյուս սկզբունքների պահպանումն այլևս իմաստազրկվում է (*տե՛ս, «ԱՄՈԿԱ ԳԼԱՍ» ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ/7522/05/17 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.03.2022 թվականի որոշումը*):

Վկայակոչված իրավակարգավորումների և իրավական դիրքորոշումների լույսի

ներքո, կարևորելով նաև օրինականության՝ որպես իրավունքի սկզբունքների հիմնաքար հանդիսացող ելակետային հիմնադրույթի դերակատարությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական մարմինը, ստանալով ապաստանի հայց, պարտավոր էր այն գնահատել ոչ թե ձևական-ընթացակարգային սահմանափակումների, այլ անձի՝ ապաստան հայցելու իրավունքի արդյունավետ իրացման երաշխիքների համատեքստում:

Սույն գործի փաստական հանգամանքներից հետևում է, որ Մաքսիմ Պուզանովի ներկայացուցիչը ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայությանը ներկայացրել է ոչ թե ապաստանի խնդրանք՝ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով, այլ ապաստանի դիմում՝ նույն հոդվածի 3-րդ մասի իմաստով՝ խնդրելով հարուցել վարչական վարույթ Մաքսիմ Պուզանովին Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչելու և ապաստան տրամադրելու հարցի կապակցությամբ:

Մինչդեռ ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը նշված դիմումին ընթացք չտալու իր դիրքորոշումը հիմնավորել է այն կարգավորումներով, որոնք վերաբերում են ազատազրկման վայրում գտնվող անձի կողմից ապաստանի խնդրանք ներկայացնելու ընթացակարգին: Այսպիսով, վարչական մարմինը փաստացի նույնացրել է ապաստանի խնդրանքը և ապաստանի դիմումը, այն դեպքում, երբ Օրենքը դրանց համար նախատեսում է տարբեր իրավական ռեժիմներ, ներկայացման տարբեր եղանակներ և տարբեր հասցեատերեր: Ընդ որում, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ապաստան ստանալու կամ փախստականի կարգավիճակ ձեռք բերելու դիմումին ընթացք չտալու լիազորություն Օրենքով սահմանված չէ, ինչը ենթադրում է, որ այդպիսի դիմում ստանալու դեպքում լիազոր մարմինը պարտավոր է իրականացնել համապատասխան վարչարարություն՝ դիմումը եզրափակելով բարենպաստ կամ միջամտող վարչական ակտի կայացմամբ կամ վարույթը եզրափակող այլ ակտի ընդունմամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի փաստերի նկատմամբ թե՛ պատասխանող վարչական մարմնի, թե՛ ստորադաս դատարանների մոտեցումը չի բխում «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 13-րդ, 46-րդ և 47-րդ հոդվածների համակարգային մեկնաբանությունից: Ազատազրկման վայրում գտնվելու հանգամանքը չի կարող անձին զրկել ապաստանի դիմում անմիջապես լիազոր մարմնին ներկայացնելու հնարավորությունից: Հակառակ մեկնաբանությունը կհանգեցներ ապաստան հայցելու իրավունքի անհամաչափ սահմանափակման և այդ իրավունքի իրականացումը կդարձներ կախված այնպիսի ձևական պահանջից, որն Օրենքից ուղղակիորեն չի բխում:

Ուստի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Մաքսիմ Պուզանովի ներկայացրած ապաստանի հայցը ենթակա էր գնահատման ապաստանի դիմումի կառուցակարգերի շրջանակներում: Ըստ այդմ՝ ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը պարտավոր էր դիմումին տալ օրենքով նախատեսված ընթացք՝ իրականացնելով համապատասխան վարչական վարույթ: Վարչական մարմինը իրավասու չէր մերժել դիմումին ընթացք տալը այն պատճառաբանությամբ, որ այն չի փոխանցվել ազատազրկման վայրի վարչակազմի միջոցով, ընդհակառակը պատասխանող վարչական մարմինը պարտավոր էր իրականացնել համապատասխան վարչարարություն՝ դիմումը եզրափակելով բարենպաստ կամ միջամտող վարչական ակտի կայացմամբ, որպիսի պայմաններում հայցվորի պահանջն իրավաչափ է և բավարարման ենթակա:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-151-րդ և 163-րդ հոդվածների

ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու և փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի վերոգրյալ հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են՝ ապաստան հայցողները և փախստականները՝

ա. ապաստանի հայցի և փախստականի ճանաչման վերաբերյալ ընդունված որոշումները բողոքարկելու վերաբերյալ հայցերով,

բ. ապաստանի հայցի կամ փախստականի ճանաչման առնչությամբ հարուցված՝ ապաստանի ընթացակարգի շրջանակներում իրենց իրավունքների և երաշխիքների խախտման վերաբերյալ հայցերով:

Հաշվի առնելով, որ տվյալ դեպքում Մաքսիմ Պուզանովը ազատված է եղել պետական տուրքի վճարումից, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոք ներկայացնելու համար պետական տուրքի հարցը վերոգրյալ իրավանորմի ուժով պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 24.09.2025 թվականի որոշումը և փոփոխել այն՝ բեկանել ՀՀ վարչական դատարանի 19.03.2025 թվականի վճիռը և փոփոխել այն. Մաքսիմ Պուզանովի հայցն ընդդեմ ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության բավարարել. պարտավորեցնել

ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայությանը հարուցել Մաքսիմ Պուզանովին ապաստան տրամադրելու և փախստական ճանաչելու վերաբերյալ վարչական վարույթ:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ԳԴ/0268/01/24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ ՈՐՈՇՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԸ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ)

28 օգոստոսի 2026 թվական ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով մեղադրյալ Ժորա Վալոդյայի Դալլաքյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2025 թվականի հունիսի 30-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Արամյանի վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

Վարույթի դատավարական նախապատմությունը.

1. 2023 թվականի ապրիլի 13-ին ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնվել է թիվ 42107923 քրեական վարույթը:

2024 թվականի ապրիլի 22-ին ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության Սևանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 323-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնվել է թիվ 42102224 քրեական վարույթը, որը նույն օրը միացվել է թիվ 42107923 քրեական վարույթին:

2024 թվականի ապրիլի 29-ին ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության Սևանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնվել է թիվ 42102424 քրեական վարույթը, որը նույն օրը միացվել է թիվ 42107923 քրեական վարույթին:

2024 թվականի ապրիլի 29-ին Ժորա Վալոդյայի Դալլաքյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով:

2024 թվականի հունիսի 27-ին Ժորա Դալլաքյանի նկատմամբ հարուցվել է նոր հանրային քրեական հետապնդում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով:

2024 թվականի հուլիսի 4-ին Ժորա Դալլաքյանի վերաբերյալ թիվ 42107923 քրեական վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի

դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2025 թվականի ապրիլի 4-ի դատավճռով Ժորա Դալլաքյանին ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքը վերաորակվել է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 11 (տասնմեկ) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 79-րդ հոդվածի կարգով հաշվակցվել և նշանակված պատժից հանվել է 2024 թվականի ապրիլի 30-ից մինչև 2025 թվականի ապրիլի 4-ն արգելանքի տակ գտնվելու 11 (տասնմեկ) ամիս 4 (չորս) օր ժամկետը, և պատիժը համարվել է կրված:

Ժորա Դալլաքյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ տնային կալանքը, վերացվել է, վերջինս ազատ է արձակվել դատական նիստերի դահլիճում, իսկ խափանման միջոց բացակայելու արգելքը թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելը:

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2025 թվականի հունիսի 30-ի որոշմամբ Գեղարքունիքի մարզի դատախազի տեղակալ Ա.Հովհաննիսյանի վերաքննիչ բողոքը մերժվել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2025 թվականի ապրիլի 4-ի թիվ դատավճիռը թողնվելով անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Արամյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2025 թվականի դեկտեմբերի 30-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ փաստարկներով.

5. Բողոքի հեղինակը գտել է, որ Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատավճիռը անփոփոխ թողնելով, թույլ է տվել դատական սխալ՝ նյութական օրենքի խախտում, որն ազդել է գործի ելքի վրա: Մասնավորապես, դատարաններն ապացույցների սխալ գնահատման արդյունքում ճիշտ չեն կիրառել նյութական օրենքը, այն է՝ կիրառվել է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածը, որը ենթակա չէր կիրառման, և չի կիրառվել ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածը, որը ենթակա էր կիրառման:

Բողոքաբերի պնդմամբ՝ դատաքննության ընթացքում հետազոտված ապացույցների համադրված վերլուծությունը ցույց է տալիս, որ մեղադրյալ Ժորա Դալլաքյանին ներկայացված մեղադրանքը եղել է հիմնավորված, ինչի մասին են վկայում պատշաճ իրավական ընթացակարգերի շրջանակներում ձեռք բերված ապացույցները:

Բողոք բերած անձը փաստարկել է, որ Ժորա Դալլաքյանի նկատմամբ իրականացված «Թվային, այդ թվում՝ հեռախոսային խոսակցության վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառման ընթացքում ստացված հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումների ուսումնասիրությամբ պարզ է դառնում, որ վերջինը մի քանի անգամ միջոցներ է ձեռնարկել քրեակատարողական հիմնարկում գտնվող անձի համար հանձնուքներ ուղարկելու ուղղությամբ՝ նշելով, որ «մեծ ախպոր» համար «տուլիկ է» պատրաստում, միաժամանակ մի շարք խոսակցությունների ընթացքում, այդ թվում՝ Ա.Ա-ի և նրա *****՝ Լ.Մ-ի հետ, ինքն իրեն «գողական» տղա է համարում, հայտնում է, որ ապրում է «գողական կյանքով»:

6. Վերոգրյալի հիման վրա, բողոքաբերը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2025 թվականի հունիսի 30-ի որոշումը, և կայացնել դրան փոխարինող դատական ակտ՝ մեղադրյալ Ժորա

Դալլաքյանին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի կատարման մեջ և նշանակելով համաչափ պատիժ, կամ վարույթը փոխանցել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

7. Ժորա Դալլաքյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է հանրային քրեական հետապնդում հետևյալ արարքի համար՝ *«(…) [Ն]ա ներգրավված է եղել քննությամբ դեռևս չպարզված ժամանակահատվածում ստեղծված քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացմանը:*

Այսպես.

*Ժորա Վալոդյայի Դալլաքյանը, ներգրավված լինելով քննությամբ դեռևս չպարզված ժամանակահատվածում ստեղծված, քրեական աստիճանակարգությամբ ու միջանձնային հիերարխիկ հարաբերություններով օժտված անձանց միավորում հանդիսացող, իր սահմանած և ճանաչած վարքագծի կանոնների համաձայն գործող, քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացմանը, քրեական ենթամշակույթ կրող խմբավորման սահմանած և ճանաչած վարքագծի կանոնների համաձայն՝ նպատակ ունենալով լուծելու պետության սահմանած վարքագծի համապարտադիր կանոններին և դրանց իրացման իրավաչափ ձևերին չհամապատասխանող, անօրինական այլ գործողությունների միջոցով հանրային կամ մասնավոր հարցերին առնչվող վեճերը (խնդիրները), սպանձնել է ***** մարզի ******** համայնքի բնակիչ Ա.Ա-ի մասնավոր հարցին առնչվող՝ Ա.Ա-ի՝ Ա.Ա-ին պարտք մնացած գումարի՝ ենթադրյալ բռնությամբ կամ անօրինական այլ գործողությունների միջոցով վերադարձման խնդրի լուծումը: Հիշյալ հարցի վերաբերյալ պարզաբանումներ կատարելու նպատակով Ժորա Դալլաքյանը 2022 թվականի դեկտեմբերից 2023 թվականի փետրվարի վերջն ընկած ժամանակահատվածում Ա.Ա-ին պարտք մնացած 150.000 ՀՀ դրամն իրեն վերադարձնելու պահանջով պարբերաբար հեռախոսային խոսակցություններ է ունեցել ինչպես Ա.Ա-ի հետ, այնպես էլ վերջինի *****՝ Լ.Մ-ի հետ՝ վերջինների կողմից նշված գումարներն իրեն վերադարձնելու պահանջների համար վերջնաժամկետ սահմանելով»*[1]*:*

8. Առաջին ատյանի դատարանի դատավճռով արձանագրվել է հետևյալը. *«Քրեական վարույթի դատաքննությամբ հիմնավորվել է, որ՝*

*- Ճամբարակ համայնքի Վահան բնակավայրի բնակիչ Ժորա Վալոդյայի Դալլաքյանը, սպանձնել է ****** մարզի ********* համայնքի բնակիչ Ա.Ա-ի մասնավոր հարցին առնչվող՝ Ա.Ա-ի՝ Ա.Ա-ին պարտք մնացած գումարի՝ ենթադրյալ բռնությամբ կամ անօրինական այլ գործողությունների միջոցով վերադարձման խնդրի լուծումը.*

*- Ժորա Վալոդյայի Դալլաքյանը հիշյալ հարցի վերաբերյալ պարզաբանումներ կատարելու նպատակով 2022 թվականի դեկտեմբերից 2023 թվականի փետրվարի վերջն ընկած ժամանակահատվածում Ա.Ա-ին պարտք մնացած 150.000 ՀՀ դրամն իրեն վերադարձնելու պահանջով պարբերաբար հեռախոսային խոսակցություններ է ունեցել Ա.Ա-ի և վերջինիս *****՝ Լ.Մ-ի հետ:*

*- Ժորա Վալոդյայի Դալլաքյանը Ա.Ա-ի և վերջինիս ******՝ Լ.Մ-ի կողմից Ա.Ա-ին պարտք մնացած գումարներն իրեն վերադարձնելու պահանջների համար վերջնաժամկետ է սահմանել:*

[1] Տես քրեական գործ, հատոր 1-ին թերթեր 200-201:

*- Ժորա Վալոդյայի Դալլաքյանը Ա.Ա-ին և վերջինիս *****՝ Լ.Մ-ին, նրանց մերձավոր ազգականներին, խնամքի տակ գտնվողների նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով, Ա.Ա-ի գույքի նկատմամբ իրավունքն իրեն հանձնելու պահանջ է ներկայացրել:*

Դատարանն արձանագրում է, որ Ժորա Վալոդյայի Դալլաքյանի կողմից քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելու կամ դրա հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված լինելու կամ քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հավաքներ կազմակերպելու կամ դրանց մասնակցելու վերաբերյալ փաստը հիմնավորող ապացույցներ քրեական գործում առկա չեն: Հարցաքննված վկաները Դատարանին չներկայացրեցին փաստեր, որ Ժորա Վալոդյայի Դալլաքյանը որևէ առնչություն ունի քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը: Ինչ վերաբերվում է հեռախոսային խոսակցությունների ընթացքում Ժորա Վալոդյայի Դալլաքյանի կողմից արտահայտած մտքերին, որ նա «գողավարի» է ապրում կամ հարցը պետք է «գողավարի» լուծվի, ապա Դատարանը դա չի կարող գնահատել, որպես Ժորա Վալոդյայի Դալլաքյանի քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանն առնչության փաստ: Քրեական վարույթում չկա գեթ մեկ ապացույց, որը տեղեկություն կպարունակեր Ժորա Վալոդյայի Դալլաքյանի կողմից քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելու կամ դրա հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված լինելու կամ քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հավաքներ կազմակերպելու կամ դրանց մասնակցելու վերաբերյալ: Դեռ ավելին, «Թվային, այդ թվում՝ հեռախոսային խոսակցության վերահսկում» օպերատիվ հետախուզական միջոցառման ընթացքում ստացված հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումները պարունակող լազերային սկավառակի զննությամբ, 2023 թվականի ապրիլի 1-ին, ժամը 14:30:27-ին Ժորա Դալլաքյանի և Լ.Մ-ի միջև տեղի ունեցած խոսակցության ժամանակ Լ.Մ-ը Ժորա Դալլաքյանին ասում է, որ ավելորդ չխոսի, դատարկ, մանկապարտեզի զրույցներ չանի: Այսինքն՝ Լ.Մ-ը Ժորա Դալլաքյանին վերաբերվում է ավելորդ, դատարկ մանկապարտեզի զրույցներ անողի, այլ ոչ թե քրեական ենթամշակույթ կրող անձի:

*Այսպիսով՝ Դատարանը հիմնավորված է համարում, որ ***** մարզի ********** համայնքի բնակիչ Ա.Ա-ի մասնավոր հարցին առնչվող՝ Ա.Ա-ի՝ Ա.Ա-ին պարտք մնացած գումարի՝ ենթադրյալ բռնությամբ կամ անօրինական այլ գործողությունների միջոցով վերադարձման խնդիրը լուծելու նպատակով Ժորա Դալլաքյանը 2022 թվականի դեկտեմբերից 2023 թվականի փետրվարի վերջն ընկած ժամանակահատվածում Ա.Ա-ին պարտք մնացած 150.000 ՀՀ դրամն իրեն վերադարձնելու պահանջով պարբերաբար հեռախոսային խոսակցություններ է ունեցել ինչպես Ա.Ա-ի հետ, այնպես էլ վերջինիս ******՝ Լ.Մ-ի հետ՝ վերջիններիս կողմից նշված գումարներն իրեն վերադարձնելու պահանջների համար վերջնաժամկետ սահմանելով:*

Փաստորեն սույն քրեական գործում առկա են բազմաթիվ ապացույցներ, որոնք վկայում են ամբաստանյալ Ժորա Վալոդյայի Դալլաքյանի կողմից անձի, նրա մերձավոր ազգականի, մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով, ուրիշի գույքը մեկ այլ անձին հանձնելու և գույքային բնույթի պարտավորություն ստանձնելու մասին, դրանք հավաստի են, արժանահավատ, թույլատրելի և բավարար մեղադրյալի նկատմամբ մեղադրական դատական ակտ կայացնելու համար:

(…) Դատարանը գտնում է, (…) [որ] հիմնավորվում է Ժորա Վալոդյայի Դալլաքյանի կողմից անձի, նրա մերձավոր ազգականի, մերձավորի, անձի դաստիարակության, խնամքի տակ գտնվողի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով, ուրիշի գույքը մեկ այլ անձին հանձնելու հանգամանքը:

(…) Դատարանն արձանագրում է, որ մեղադրյալ Ժորա Վալոդյայի Դալլաքյանի կատարած

հանցանքը չի համապատասխանում ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներին, այլ համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշներին, հետևաբար Ժորա Վալոդյայի Դալլաքյանին առաջադրված մեղադրանքը ենթակա է վերաորակման (...)»[2]*:*

9. Վերաքննիչ դատարանի՝ 2025 թվականի հունիսի 30-ի որոշման համաձայն՝ *«(...) Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նկատել, որ Առաջին ատյանի դատարանը, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում հետազոտելով սույն գործով ձեռք բերված ապացույցները և դրանք գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ գործի համար բավարարության տեսանկյունից, դրանց բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ քննության վրա հիմնված ներքին համոզմամբ, եկել է ճիշտ եզրահանգման, որ Ժորա Դալլաքյանի կատարած հանցանքը չի համապատասխանում ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներին, այլ համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշներին:*

*Վերաքննիչ դատարանը, ուսումնասիրելով սույն քրեական գործի փաստական հանգամանքները և գործում առկա ապացույցները, հարկ է համարում արձանագրել, որ սույն դեպքում Ա.Ա-ի և Ա.Ա-ի միջև առկա են եղել ֆինանսական խնդիրներ, մասնավորապես՝ Ա.Ա-ն ավտոմեքենա է վարձակալել Ա.Ա-ից, որից հետո որոշակի գումար է պարտք եղել վերջինին, իսկ որոշ ժամանակ անց Ա.Ա-ն Ա.Ա-ին և վերջինի *******՝ Լ.Մ-ին հայտնել է, որ այդ գումարային հարցերը լուծեն Ժորայի հետ և գումարը փոխանցեն նրան, քանի որ պետք է մեկնի համայնքից: Դրանից հետո, Ա.Ա-ը պայմանավորվել է Ժորա Դալլաքյանի հետ՝ նշված գումարը մաս-մաս վճարել: Այնուհետև, Ա.Ա-ը մեկնել է երկրից, ուստի նշված գումարի վճարման հարցի հետ կապված Ժորա Դալլաքյանը կապ է հաստատել Ա.Ա-ի ****՝ Լ.Մ-ի հետ, որի ընթացքում գումարը վերադարձնելու վերջնաժամկետ է սահմանել, և երբ նշված ժամկետում գումարը չի վերադարձվել, Ժորա Դալլաքյանը գումարը պահանջելու հետ կապված սկսել է պարբերաբար զանգել Լ.Մ-ին, որի ընթացքում հնչեցրել է հայհոյանքներ, սպառնալիքներ՝ ասելով, որ փունը կվառի, մեքենան կխլի և նմանատիպ այլ արտահայտություններ, որի արդյունքում Լ.Մ-ը վախից դրդված գումարի մի մասը փոխանցել է Ժորա Դալլաքյանի նշած քարտային հաշիվներին:*

*Այսինքն՝ վերոգրյալից հետևում է, որ Ժորա Դալլաքյանն Ա.Ա-ի կողմից Ա.Ա-ին պարտք մնացած գումարը վերադարձնելու հարցի հետ կապված պարբերաբար զանգել է Ա.Ա-ին և վերջինի *****՝ Լ.Մ-ին, և պահանջել՝ վերադարձնել պարտք մնացած գումարը՝ սահմանելով վերջնաժամկետ, և երբ նշված ժամկետում գումարը չի վերադարձվել, Ժորա Դալլաքյանի կողմից բռնություն գործադրելու սպառնալիքներ են հնչեցվել:*

Անդրադառնալով Ժորա Դալլաքյանի կողմից քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելու կամ դրա հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված լինելու հանգամանքին՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանն իրավացիորեն արձանագրել է, որ քրեական գործում առկա չեն ապացույցներ, որոնք կհիմնավորեն, որ Ժորա Դալլաքյանն առնչություն ունի քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը: Իսկ Ժորա Դալլաքյանի կողմից հեռախոսային խոսակցությունների ընթացքում հնչեցված արտահայտությունները և մտքերը բավարար հիմք չեն կարող

[2] Տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթեր 110-135:

հանդիսանալ հաստատված համարելու նրա առնչությունը քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը:

*Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ Ա.Ա-ը նախաքննական ցուցմունքով հայտնել է, որ ***** պատմելով իմացել է, որ Ժորան անընդհատ զանգահարել է *****, սպառնալիքներ է հնչեցրել իրենց ընտանիքի անդամների հասցեին, ասել է, որ իրեն չկա խաթեր անելու, որպես ռայոնցի ****** է խաթեր արել, ժամկետ է տվել, որ փողը փակվի, նա գողական տղա է, նայեն այդ հարցը ուրիշ ձևով չլուծվի, ապա Վերաքննիչ դատարանի համար հատկանշական է, որ Լ.Մ-ը ցուցմունքով հայտնել է, որ Ժորան, երբ զանգել, ներկայացել է, չի ներկայացել որպես հեղինակություն, ներկայացել է որպես իրենց շրջանի բնակիչ, Ժորայի և իր խոսակցությունների ընթացքում չի եղել ժարգոնային կամ քրեական հեղինակության մասին խոսակցություն, նա ուղղակի գումարն է պահանջել, չի հիշում, որ Ժորան ասած լինի, որ «գողական տղա է»:*

Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը գտնում է, որ քրեական գործում առկա չեն բավարար ապացույցներ, որոնցով կհիմնավորվի, որ Ժորա Դալլաքյանն առնչություն ունի քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը և ներգրավված է եղել նշված խմբավորման հետապնդած նպատակների իրականացմանը:

Այսպիսով՝ վերոգրյալից հետևում է, որ Առաջին ատյանի դատարանի հետևությունները հիմնավորված ու պատճառաբանված են, իսկ քրեական գործի փաստական հանգամանքների մասին Առաջին ատյանի դատարանի հետևությունները հետազոտված ապացույցներին չհամապատասխանելու և ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով Ժորա Դալլաքյանին ներկայացված մեղադրանքը հիմնավորված լինելու վերաբերյալ փաստարկները քրեական գործի նյութերում իրենց հաստատումը չեն գտնում, հետևաբար՝ չեն կարող հիմք հանդիսանալ Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելու համար:

Հետևաբար՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ վիճարկվող դատավճիռը բեկանելու իրավաչափ հիմքերը բացակայում են, Առաջին ատյանի դատարանը կայացրել է բավարար չափով հիմնավորված և պատճառաբանված դատական ակտ, որն անհրաժեշտ է թողնել անփոփոխ, իսկ ներկայացված վերաքննիչ բողոքը՝ մերժել»[3]*:*

<u>Վճռաբեկ դատարանի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հասկացության, ինչպես նաև քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը ներգրավելու հանցակազմի մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր, ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման և իրավունքի զարգացման համար:

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորվա՞ծ են արդյոք մեղադրյալ Ժորա Դալլաքյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի հատկանիշների բացակայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

11. *ՀՀ* քրեական օրենսգրքի 323-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Սույն գլխի իմաստով՝ քրեական ենթամշակույթ կրող խմբավորում (գողական աշխարհ) է համարվում քրեական աստիճանակարգությամբ ու միջանձնային հիերարխիկ հարաբերություններով օժտված անձանց միավորումը, որը գործում է իր սահմանած և ճանաչած վարքագծի*

[3] Տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթեր 56-72:

կանոնների համաձայն, որոնք չեն համապատասխանում պետության սահմանած վարքագծի համապարտադիր կանոններին կամ դրանց իրացման իրավաչափ ձևերին, և որի նպատակը հանցագործություն կատարելն է կամ հանցագործության կատարումը հովանավորելը կամ այլ անձանց հանցագործության կատարմանը ներգրավելը կամ բռնության, սպառնալիքի, հարկադրանքի կամ անօրինական այլ գործողությունների միջոցով հանրային կամ մասնավոր հարցերին առնչվող վեճերը (խնդիրները) լուծելը կամ անօրինական օգուտ կամ այլ առավելություն ստանալը»:

Քրեական ենթամշակույթը՝ որպես կազմակերպված հանցավորության դրսևորում, լուրջ սպառնալիք է հասարակության անվտանգության ապահովման և իրավական պետության հիմնարար արժեքների պահպանման տեսանկյունից, քանզի իրենից ենթադրում է հանցավոր գործունեության վերարտադրմանը նպաստող ոչ ֆորմալ նորմերի, վարքականոնների, հիերարխիկ հարաբերությունների և արժեքային համակարգի ամբողջություն, որն ուղղված է պետական իրավական համակարգին ոչ օրինական այլընտրանք ձևավորելուն և հանցավոր ազդեցությունը պահպանելուն: Քրեական ենթամշակույթը հակադրվում է ՀՀ Սահմանադրությամբ հռչակված իրավական պետության գաղափարին՝ հիմնվելով իրավական նորմերի ժխտման, ոչ իրավական հեղինակությունների գերակայության, հանցավոր վարքագծի խրախուսման և հանցավոր կապերի ամրապնդման վրա:

Հետևաբար, քրեական ենթամշակույթ կրող խմբավորումը կամ գողական աշխարհը կազմակերպված հանցավորության առավել վտանգավոր դրսևորումներից է, որի դեմ արդյունավետ պայքար մղելը, միջազգային իրավունքի տեսանկյունից, պետությունների առաջնային պարտականություններից է: Մասնավորապես, «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան» (Պալերմոյի կոնվենցիա) պարտավորեցնում է պետություններին ձեռնարկել անհրաժեշտ իրավական մեխանիզմներ՝ կազմակերպված հանցավորության նախազգուշացման, բացահայտման և կանխարգելման համար:

Այսպիսով, ընդհանրացնելով վերոշարադրյալը, կարող ենք փաստել, որ քրեական ենթամշակույթ կրող խմբավորումը կամ «գողական աշխարհը» բնութագրվում է հետևյալ հիմնական հատկանիշներով.

-Քրեական աստիճանակարգության և միջանձնային հիերարխիկ հարաբերությունների առկայություն, որի պայմաններում խմբավորման անդամների միջև հարաբերությունները կառուցվում են ենթակայության, հեղինակության և զբաղեցրած կարգավիճակի վրա: Այլ կերպ ասած՝ պետական իշխանության և իրավական կարգավորման փոխարեն գործում է ոչ ֆորմալ իշխանության և հեղինակության համակարգ, որտեղ անձի կարգավիճակը (հատկապես՝ «օրենքով գողի») պայմանավորված է նրա ճանաչմամբ, համբավով, պատկանելությամբ և, որոշ դեպքերում, հատուկ ծիսակարգի՝ «մկրտության» միջոցով:

- Սեփական նորմատիվ համակարգի և ներքին վարքագծի կանոնների առկայություն, այսինքն՝ խմբավորման կողմից սահմանված և ճանաչված վարքագծի կանոնների ամբողջություն, որը ներկայացվում և ընկալվում է որպես պետական իրավական համակարգին այլընտրանք՝ կարգավորելով խմբավորման անդամների վարքագիծը, միմյանց միջև հարաբերությունները, ինչպես նաև խմբավորման ներսում կարգավիճակի ձեռքբերման և պահպանման ընթացակարգերը:

- Կոլեկտիվ ֆինանսատնտեսական կառուցվածքի («օբշյակ») առկայություն, որը հանդես է գալիս որպես խմբավորման անդամների նյութական համախմբման, փոխադարձ աջակցության և ընդհանուր նպատակների ֆինանսական ապահովման մեխանիզմ:

- Զուգահեռ «արդարադատության» գործառույթի իրականացում և վեճերի լուծման

ոչ իրավական մեխանիզմների կիրառում, որի պայմաններում հանրային կամ մասնավոր բնույթի հարցերի և վեճերի լուծումն իրականացվում է պետական իրավական մեխանիզմներից դուրս՝ խմբավորման հեղինակության, ազդեցության, կապերի, ինչպես նաև ապօրինի ներգործության այլ միջոցների օգտագործմամբ:

- **Ինստիտուցիոնալ վերարտադրության և շարունակականության ապահովում**, հատկապես՝ քրեակատարողական հիմնարկներում, որտեղ ձևավորվում, պահպանվում և վերարտադրվում են խմբավորման ներքին հիերարխիան, վարքագծի կանոնները և վերահսկողական մեխանիզմները՝ ապահովելով քրեական ենթամշակույթի փոխանցումն ու շարունակականությունը:

- **Քրեական նպատակների և հանցավոր վարքագծի խրախուսում**, ինչը վկայում է այն մասին, որ «գողական աշխարհը» պարզապես անձանց ոչ ֆորմալ միավորում չէ, այլ այնպիսի կազմակերպված հանցավոր խմբավորում, որի գործունեությունը կապված է հանցանքներ կատարելու, դրանք հովանավորելու, այլ անձանց հանցավոր գործունեությանը ներգրավելու, բռնության, սպառնալիքի, հարկադրանքի կամ անօրինական այլ գործողությունների միջոցով հանրային կամ մասնավոր հարցերին առնչվող վեճերը (խնդիրները) լուծելու կամ անօրինական օգուտ կամ այլ առավելություն ստանալու հետ:

11.1. Վերոնշյալ հանգամանքների հաշվառմամբ և քրեական ենթամշակույթի դեմ արդյունավետ քրեաիրավական հակազդեցություն ապահովելու նպատակով՝ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2020 թվականի հունվարի 22-ի թիվ ՀՕ-87-Ն օրենքով քրեական ենթամշակույթի դեմ պայքարը ստացավ օրենսդրական կարգավորում, ինչի արդյունքում 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը համալրվեց քրեական ենթամշակույթի առանձին դրսևորումները քրեականացնող իրավանորմերով: Մասնավորապես, քրեական պատասխանատվություն սահմանվեց քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալու կամ ստանալու կամ պահպանելու, քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելու կամ ղեկավարելու, քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելու կամ ներգրավելու, քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակցին կամ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձին դիմելու համար (2003 թվականի ապրիլի 18-ի ՀՀ քրեական օրենսգրքի 223.1–223.4-րդ հոդվածներ):

Վերոնշյալ հանցակազմերը՝ որոշակի փոփոխություններով, տեղ են գտել նաև գործող ՀՀ քրեական օրենսգրքի 322-325-րդ հոդվածներում:

12. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) քրեական ենթամշակույթի՝ որպես կազմակերպված հանցավորության դրսևորման առանձնահատկություններին անդրադարձել է *Աշլարբան ընդդեմ Վրաստանի* գործով վճռի շրջանակներում:

Մասնավորապես, իրականացված համեմատաիրավական ուսումնասիրության արդյունքում Եվրոպական դատարանը փաստել է, որ *«գողական աշխարհը» հետխորհրդային երկրների, այդ թվում՝ Վրաստանի, ժամանակակից կազմակերպված հանցավորության հիմնական հենասյունն է, որն ունի իր ճանաչված առաջնորդները, անդամակցության հատուկ կարգերը և վարքագծի կանոնների համակարգը: «Օրենքով գողերը» կազմակերպված հանցավոր աշխարհի վերնախավն են, որոնք նախկին Խորհրդային Միության երկրների քրեական ենթամշակույթում վայելում են անվիճելի հեղինակություն և ունեն բարձր*

կարգավիճակ[4]*:*

Անդրադառնալով *«գողական աշխարհ»* հանցավոր համայնքի վտանգավորությանը և վրացական հասարակության, հատկապես՝ երիտասարդության վրա դրա ունեցած բացասական ազդեցությանը՝ Եվրոպական դատարանն ընդգծել է, որ *առկա էին այն հիմնավորումները, որոնցով պայմանավորված Վրաստանը 2005 թվականի դեկտեմբերի 20-ին ստեղծեց օրենսդրական հիմքեր՝ կազմակերպված հանցավորության վերոնշյալ դրսևորման դեմ առավել արդյունավետ պայքար մղելու նպատակով: Մասնավորապես, հանցավոր այդ երևույթն այնքան խոր արմատներ էր գցել հասարակության մեջ և «օրենքով գողերի» հեղինակությունն այնքան բարձր էր, որ հասարակության շարքային անդամների համար «գողական աշխարհ», «օրենքով գող», «վեճերի լուծում՝ օրենքով գողի հեղինակության միջոցով», «օբշյակ» և նմանատիպ հասկացությունները լայնորեն հայտնի և հասկանալի էին: Այլ կերպ, 2005 թվականի դեկտեմբերի 20-ի օրենսդրական փաթեթով «գողական աշխարհի» անդամ և «օրենքով գող» լինելու երկու նոր հանցակազմեր սահմանելով, վրաց օրենսդիրը պարզապես քրեականացրել է հանցավոր («գողական») ենթամշակույթին առնչվող հասկացություններն ու գործողությունները, որոնց ճշգրիտ բովանդակությունն արդեն իսկ լավ հայտնի էր լայն հասարակությանը:*

Ընդ որում, վրաց օրենսդիրը նախընտրել է այդ հանցակազմերի իրավական սահմանումներում պահպանել խոսակցական լեզուն, ինչը, Եվրոպական դատարանի կարծիքով, արվել է, որպեսզի նոր քրեականացված արարքների էությունը հասարակության համար հեշտ ընկալելի լինի[5]*:*

13. Ամփոփելով վերոշարադրյալը՝ հարկ է փաստել, որ պատմականորեն Հայաստանում նույնպես քրեական ենթամշակույթն աչքի է ընկել տարածվածությամբ և հասարակության վրա ունեցած որոշակի ազդեցությամբ, ինչը շարունակում է մեր օրերում արդիական խնդիր լինել: Ընդ որում, ինչպես փաստել է Եվրոպական դատարանը Վրաստանի պարագայում, հայ հասարակությունում ևս քրեական ենթամշակույթին առնչվող երևույթներն ու հասկացությունները լայնորեն հայտնի են և հասկանալի, ինչով էլ պայմանավորված, օրենսդիրը նպատակահարմար է գտել որոշ իրավական եզրույթները ներկայացնել նաև խոսակցական լեզվով, որպեսզի հանրության համար առավել ընկալելի լինեն (օրինակ՝ գողական աշխարհ, օրենքով գող, քրեական հեղինակություն):

Նշվածի համատեքստում անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 323-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հասկացությանը, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ օրենսդիրը, որպես դրա հոմանիշ օգտագործում է «գողական աշխարհ» արտահայտությունը, այսինքն՝ «քրեական ենթամշակույթ կրող խմբավորում» և «գողական աշխարհ» հասկացություններն օրենսդրական կարգավորման տեսանկյունից, ըստ էության, նույնանում են և վերաբերում են միևնույն երևույթին: Հետևաբար, վերոնշյալ իրավանորմի շրջանակներում որպես քրեական ենթամշակույթ կրող խմբավորում պետք է դիտարկել ոչ թե առանձին խմբերը կամ խմբավորումները, այլ ամբողջ գողական աշխարհը՝ որպես միասնական համակարգ, իր ոչ ֆորմալ հիերարխիայով, հեղինակություններով և ազդեցությամբ, որը գործում է իր սահմանած և ճանաչած վարքագծի կանոնների համաձայն: Վերջինին բնորոշ է «խնդիրների լուծումը» բռնությամբ, ահաբեկումով և հարկադրանքով: Ընդ որում, գողական աշխարհի գոյությունը, որպես հանրահայտ փաստ, քրեական վարույթի

[4] Տես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Ashlarba v. Georgia* գործով 2014 թվականի հուլիսի 15-ի վճռի 22-23-րդ կետերը, գանգատ թիվ 45554/08:
[5] Տես նույն տեղում, 36-38-րդ կետեր:

շրջանակներում ինքնին ապացուցման կարիք չունի: Այլ կերպ՝ վարույթն իրականացնող մարմինը պարտավոր չէ յուրաքանչյուր կոնկրետ գործով հիմնավորել և ապացուցել գողական աշխարհի՝ որպես քրեական ենթամշակույթ կրող համակարգի գոյությունը:

Այլ հարց է, որ գողական աշխարհին կամ քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցությունը կամ դրա հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավվածությունը կամ խմբավորման հավաքների կազմակերպումը կամ դրանց մասնակցությունը յուրաքանչյուր վարույթի շրջանակներում պետք է հաստատվի բավարար ապացույցների համակցությամբ:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է սահմանում հետևյալ արարքի համար՝ *«Քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելը կամ դրա հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված լինելը կամ քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հավաքներ կազմակերպելը կամ դրանց մասնակցելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 319-րդ և 321-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների հատկանիշները (…)»:*

Հիշյալ իրավանորմը նախատեսելով՝ օրենսդիրը նպատակ է հետապնդել ապահովել քրեական ենթամշակույթի դեմ պայքարի ոլորտում քրեական հակազդեցության արդյունավետությունը՝ քրեական պատասխանատվություն սահմանելով ոչ միայն քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձանց, այլև քրեական ենթամշակույթ կրող խմբավորման (գողական աշխարհի) մյուս անդամների, ինչպես նաև այդ խմբավորման անդամ չհանդիսացող, սակայն դրա գաղափարախոսությամբ առաջնորդվող, դրա արժեքները կրող և, միաժամանակ, դրա ընդհանուր նպատակների իրագործմանը նպաստող անձանց նկատմամբ:

Քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելու կամ ներգրավելու հանցակազմի հիմնական անմիջական օբյեկտն անձանց, հասարակության և պետության անվտանգության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերություններն են, իսկ որպես լրացուցիչ օբյեկտ կարող են հանդես գալ կյանքի, առողջության, անձնական ազատության, պատվի, արժանապատվության, ֆիզիկական, հոգեկան անձեռնմխելիության կամ սեփականության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունները:

Հանցակազմի օբյեկտիվ կողմը նկարագրված է երկընտրելի արարքներով, մասնավորապես՝ քրեական պատասխանատվություն է նախատեսված քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելու կամ նման խմբավորման հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված լինելու կամ քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հավաքներ կազմակերպելու կամ դրանց մասնակցելու համար: Միևնույն ժամանակ, նորմում նախատեսվել է բացասական հատկանիշ, քանի որ քննարկվող հանցակազմի մասին կարող է խոսք գնալ, եթե անձի արարքում բացակայում են հանցավոր կազմակերպությանը և օրենքով չնախատեսված զինված միավորմանը մասնակցելու հանցակազմերի հատկանիշները:

ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը նկարագրված է ձևական հանցակազմով և ավարտված է համարվում երկընտրելի արարքներից որևէ մեկը կատարելու պահից, իսկ սուբյեկտիվ կողմից դրսևորվում է դիտավորությամբ:

14.1. Անդրադառնալով քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված լինելու հանցակազմին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դրսևորվում է քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը չանդամակցող անձի կողմից խմբավորման հետապնդած նպատակներին որևէ կերպ ներգրավված լինելու, դրանց իրականացմանը նպաստելու ձևով: Այլ կերպ՝ վերոնշյալ

անձինք ըստ էության քրեական աստիճանակարգությունից դուրս են գտնվում, քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը (գողական աշխարհին) չեն անդամակցում կամ մասնակցում, պարզապես դրա նպատակների իրագործման հարցում ունենում են օժանդակ ներգրավվածություն:

Ընդ որում, հարկ է նկատել, որ քրեական պատասխանատվությունը վրա է հասնում այն դեպքում, երբ անձը ներգրավված է հենց քրեական ենթամշակույթ կրող խմբավորման (գողական աշխարհի) հետապնդած նպատակների իրագործմանը, այն է՝ հանցագործություն կատարելուն կամ հանցագործության կատարումը հովանավորելուն կամ այլ անձանց հանցագործության կատարմանը ներգրավելուն կամ բռնության, սպառնալիքի, հարկադրանքի կամ անօրինական այլ գործողությունների միջոցով հանրային կամ մասնավոր հարցերին առնչվող վեճերը (խնդիրները) լուծելուն կամ անօրինական օգուտ կամ այլ առավելություն ստանալուն (ՀՀ քրեական օրենսգրքի 323-րդ հոդվածի 3-րդ մաս):

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ՝

- Ժորա Դալլաքյանին մեղադրանք է առաջադրվել քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված լինելու համար: Մասնավորապես, վերջինս ստանձնել է ***** մարզի ******** համայնքի բնակիչ Ա.Ա-ի մասնավոր հարցին առնչվող՝ Ա.Ա-ի՝ Ա.Ա-ին պարտք մնացած գումարի՝ ենթադրյալ բռնությամբ կամ անօրինական այլ գործողությունների միջոցով վերադարձման խնդրի լուծումը[6]:

- Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ Ժորա Դալլաքյանի կողմից քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելու կամ դրա հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված լինելու կամ քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հավաքներ կազմակերպելու կամ դրանց մասնակցելու փաստը հիմնավորող ապացույցներ քրեական գործում առկա չեն: Միաժամանակ, դատարանը եզրահանգել է, որ Ժորա Դալլաքյանի արարքում առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության՝ շորթման, հատկանիշները[7]:

- Վերաքննիչ դատարանը փաստել է, որ Առաջին ատյանի դատարանը, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում հետազոտելով վարույթով ձեռք բերված ապացույցները, Ժորա Դալլաքյանի արարքին տրված իրավական գնահատականի հարցում եկել է ճիշտ եզրահանգման[8]:

16. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-14.1-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և կատարված իրավական վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները պատշաճ կերպով չեն վերլուծել և գնահատել գործում առկա փաստական տվյալների ամբողջությունը, ինչի արդյունքում մեղադրյալի արարքի քրեաիրավական գնահատականի հարցում հանգել են սխալ հետևության:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նախևառաջ ընդգծել, որ սույն վարույթի նյութերով հիմնավորվում է, որ Ժորա Դալլաքյանը ****** մարզի ******* համայնքի բնակիչ Ա.Ա-ի մասնավոր հարցին առնչվող՝ Ա.Ա-ի՝ Ա.Ա-ին պարտք մնացած՝ 150.000 ՀՀ դրամ գումարի՝ ենթադրյալ բռնությամբ կամ անօրինական այլ գործողությունների միջոցով վերադարձման խնդիրը լուծելու նպատակով, 2022 թվականի դեկտեմբերից մինչև 2023 թվականի փետրվարի վերջն ընկած ժամանակահատվածում, պարբերաբար հեռախոսային

[6] Տես սույն որոշման 7-րդ կետը:
[7] Տես սույն որոշման 8-րդ կետը:
[8] Տես սույն որոշման 9-րդ կետը:

խոսակցություններ է ունեցել ինչպես Ա.Ա-ի, այնպես էլ վերջինիս *****՝ Լ.Մ-ի հետ՝ սահմանելով վերջնաժամկետ նշված գումարն իրեն վերադարձնելու համար: Սահմանված ժամկետում գումարը չվերադարձնելու պատճառով Ժորա Դալլաքյանը պարբերաբար զանգահարել է Լ.Մ-ին, ինչեցրել է հայհոյանքներ և սպառնալիքներ, որի արդյունքում Լ.Մ-ը վախից դրդված գումարի մի մասը փոխանցել է Ժորա Դալլաքյանի կողմից նշված քարտային հաշիվներին[9]:

Վերը նշված փաստական տվյալները թեև հաստատված են համարել նաև ստորադաս դատարանները, այնուամենայնիվ ընդգծել են, որ դրանք վկայում են անձի արարքում ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածով նախատեսված՝ քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելու կամ ներգրավելու հանցակազմի, այլ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով նախատեսված՝ շորթման հանցակազմի հատկանիշների առկայության մասին, քանի որ քրեական վարույթում առկա չեն քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը Ժորա Դալլաքյանի առնչությունը հիմնավորող ապացույցներ:

16.1. Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ վերոնշյալ եզրահանգմանը գալով, ստորադաս դատարանները պատշաճ վերլուծության չեն ենթարկել գործում առկա ապացույցների համակցությունը: Մասնավորապես, «Թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառման ընթացքում ստացված հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումները զննելու մասին արձանագրության ուսումնասիրությունից երևում է, որ ի պատասխան երկու օրում 20.000 դրամով պարտքը մարելու՝ Լ.Մ-ի խնդրանքին, Ժորա Դալլաքյանն ասում է, որ փոխանցեն նրան, որ ***սա ուրիշ թեմա է, գողական, գողավարի է ամեն ինչը, ինքն ուրիշ կյանքով է ապրում, թող խելոք մնան՝ չընկնի հետևից, չմտնի փուն՝ ինչ կա չկա վերցնի:*** Բացի այդ, տարբեր հեռախոսազրույցների ընթացքում մեղադրյալը շեշտում է, որ ապրում է ***«գողական» կյանքով, իր բոլոր հարցերը «գողավարի է», նշում է նաև, որ «գրեֆ է ուղարկել բերդ», որին ի պատասխան, զրուցակիցն ընդգծում է, որ «գողականի կյանքը» նրան չի մոռանա:***

Միաժամանակ, հեռախոսային խոսակցություններից երևում է, որ Ժորա Դալլաքյանը, ըստ էության, առնչություն ունի նաև քրեական աստիճանակարգությունն ընդգծող՝ «քերոբ» հանդիսացող անձանց հետ՝ կազմակերպելով ու ակտիվ ներգրավվածություն ունենալով քրեակատարողական հիմնարկ հանձնուքներ և այլ անհրաժեշտ միջոցներ հավաքելու ու ուղարկելու հարցերում[10]:

Այս առումով Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ թեև հանձնուքներ ուղարկելը, ըստ էության, օրենսդրությամբ թույլատրելի է և չի կարող ինքնին քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցությունը կամ ներգրավվածությունը հաստատված համարելու հիմք լինել, այնուամենայնիվ, գործում առկա փաստական այլ տվյալների համատեքստում՝ ի թիվս այլ ապացույցների, կարող է վերոնշյալ հանգամանքները գնահատելու հարցում որոշակի նշանակություն ունենալ՝ հաշվի առնելով, մասնավորապես, անձանց շրջանակը, որոնց ուղարկվում են հանձնուքները, դրա պարբերականությունը, ինչպես նաև նրանց և ուղարկողի միջև առկա կապի բնույթը (օրինակ՝ ուղարկողի մերձավորը կամ մերձավոր ազգականը չեն հանդիսանում և այլն):

16.2. Վճռաբեկ դատարանը փաստում է նաև, որ 2023 թվականի ապրիլի 12-ին Լ.Մ-ը բանավոր հաղորդում է տվել այն մասին, որ դեկտեմբեր ամսին ամուսնուն է զանգահարել ***** գյուղի բնակիչ Ժորա Դալլաքյանը և հայտնել, որ ***Ա-ին պարտք մնացած գումարը***

[9] Տես սույն որոշման 7-9-րդ կետերը:
[10] Տես քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 138-172:

պետք է տան իրեն, որի համար իրեն դիմել է Ա.ը՝ գումարը վերադարձնելու խնդրանքով: Դրանից հետո Ժորա Դալլաքյանը կրկին զանգահարել է իրեն և ասել է, ***որ ինքը գողական կյանքով է ապրում ու հարգված փղա է և իրենց կողմից Ա-ին պարտք մնացած գումարը պետք է տան իրեն,*** այնուհետև հաճախակի զանգահարել է իր հեռախոսահամարին և սպառնալիքներով ժամկետ է նշել՝ մինչև փետրվար ամսվա վերջ, ամբողջ գումարն իրեն փոխանցելու պահանջով:

2023 թվականի ապրիլի 12-ին բանավոր հաղորդում է տվել նաև Ա.Ա-ն այն մասին, որ դեկտեմբեր ամսին իրեն է զանգահարել Ժորա Դալլաքյանը և ասել, որ ***Ա-ը դիմել է իրեն պարտքը վերցնելու խնդրանքով:*** Դրանից հետո զանգահարել է նաև իր **** և ամբողջ գումարն իրեն տալու պահանջով սպառնալիքով ժամկետ է սահմանել մինչև փետրվար ամսվա վերջ: Ինքն ու կինը վախենալով՝ նրա կողմից ուղարկված երկու հաշվեհամարներին են փոխանցել 95.000 ՀՀ դրամ գումար, իսկ մնացած 55.000 ՀՀ դրամը տալու համար ժամկետ են պայմանավորվել՝ մինչև 2023 թվականի ապրիլի 16-ը[11]:

Միաժամանակ, վկա Ա.Ա-ը նախաքննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ 2022 թվականի դեկտեմբեր ամսին հեռախոսային խոսակցություն է ունեցել Ա-ի հետ, վերջինս հեռախոսազրույցի ընթացքում իրեն ասել է, որ պարտք մնացած գումարի հարցով կզանգեն իրեն: 2022 թվականի դեկտեմբեր ամսվա վերջերին ***իրեն է զանգահարել Ժորա անունով մի փղա, ով ներկայացել է Օրջոյից Ժորա անունով,*** և հեռախոսային խոսակցության ժամանակ ասել է, որ «Ա-ն այդ փողի հետ գործ չունի, էտ գումարը ինձի էս տալու» և իրենք բանավոր պայմանավորվածություն են ձեռք բերել, որ մինչև 2023 թվականի փետրվարի վերջ գումարը կփոխանցի նրան: Այնուհետև ***** պատմելով է իմացել, որ Ժորան անընդհատ զանգահարել է նրան, սպառնալիքներ է հնչեցրել իրենց ընտանիքի անդամների հասցեին, ասել է, ***որ իրեն չկա խաթեր անելու, որպես ռայոնցի ****** է խաթեր արել, ժամկետ է փվել, որ փողը փակվի, նա գողական փղա է, նայեն այդ հարցը ուրիշ ձևով չլուծվի:***

Որքանով որ լսել է Ժորայի մասին, ***նա հանդիսանում է քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձ և շրջանառվող խոսակցություններից լսել է, որ ամեն ինչի ընդունակ անձնավորություն է:*** Այդքան ժամանակ տեղի ունեցած հեռախոսազրույցների ընթացքում անընդհատ իր ընտանիքի հասցեին հնչեցվել են սպառնալիքներ, թե եթե գումարը չտան, ապա կվերցնի ավտոմեքենան, կվառի տունը, մեր ու մանուկ կուրանա, ինչից հետո իր մեջ վախի զգացում է առաջացել, և հնչեցրած սպառնալիքներն ինքը ընկալել է որպես իրական:

Ընդորում, նախաքննական և դատաքննական ցուցմունքների միջև առկա հակասությունների վերաբերյալ վկան հայտնել է, որ նախաքննության ընթացքում իրականությունն է հայտնել, ընդ որում՝ հայտնել է *****՝ Լ.Մ-ի պատմածով, և պնդել է նախաքննության ընթացքում տված ցուցմունքները[12]:

17. Ընդհանրացնելով սույն որոշման 16-16.2-րդ կետերում մեջբերված փաստական տվյալները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարույթի նյութերում առկա են փաստական տվյալներ առ այն, որ Ժորա Դալլաքյանն Ա.Ա-ի մասնավոր հարցի լուծմանը ձեռնամուխ է եղել ոչ թե որպես մասնավոր անձ, այլ որպես քրեական ենթամշակույթի բարքեր կրող՝ իր արարքները պայմանավորելով տվյալ երևույթի գաղափարախոսության և հետապնդելի նպատակների շրջանակներում, որպիսի գործողություններն արդեն իսկ

[11] Տես քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 3-4:
[12] Տես քրեական գործ, հատոր 5-րդ, թերթեր 110-135:

դուրս են զուտ սեփականության դեմ ուղղված հարաբերությունների շրջանակներից: Այլ կերպ՝ Ժորա Դալլաքյանի գործողությունները, ըստ էության, արտահայտվել են քրեական ենթամշակույթ կրող խմբավորման նպատակների իրագործմանը ներգրավված լինելով, այն է՝ բռնությամբ կամ անօրինական այլ գործողությունների միջոցով մասնավոր հարցին առնչվող վեճը լուծելով, որի ընթացքում նա ներկայացել է որպես «գողական» կյանքով ապրող անձ: Ընդ որում, վերոնշյալը հաստատվում է նաև վարույթի ընթացքում իրականացված՝ «Թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքներով:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանն իր անհամաձայնությունն է արտահայտում ստորադաս դատարանների այն պատճառաբանություններին, որ քրեական վարույթում չկա գեթ մեկ ապացույց, որը տեղեկություն կպարունակի Ժորա Դալլաքյանի կողմից քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելու կամ դրա հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված լինելու վերաբերյալ:

18. Անդրադառնալով Առաջին ատյանի դատարանի այն դատողությանը, որ *«Թվային, այդ թվում՝ հեռախոսային խոսակցության վերահսկում» օպերատիվ հետախուզական միջոցառման ընթացքում ստացված հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումները պարունակող լազերային սկավառակի զննությամբ, 2023 թվականի ապրիլի 1-ին, ժամը 14:30:27-ին Ժորա Դալլաքյանի և Լ.Մ-ի միջև տեղի ունեցած խոսակցության ժամանակ Լ.Մ-ը Ժորա Դալլաքյանին ասում է, որ ավելորդ չխոսի, դատարկ, մանկապարտեզի զրույցներ չանի, այսինքն՝ Լ.Մ-ը Ժորա Դալլաքյանին վերաբերվում է ավելորդ, դատարկ մանկապարտեզի զրույցներ անողի, այլ ոչ թե քրեական ենթամշակույթ կրող անձի,* Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալը որևէ կերպ չի կարող վկայել Ժորա Դալլաքյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշների բացակայության մասին: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ, նախևառաջ, Ժորա Դալլաքյանի և Լ.Մ-ի միջև տեղի ունեցած խոսակցության այդ հատվածը գնահատվել է մեկուսի, անտեսելով այն իրողությունը, որ Ժորա Դալլաքյանի կողմից սահմանած ժամկետում գումարը չվերադարձնելու պատճառով վերջինը պարբերաբար զանգահարել է Լ.Մ-ին, **հնչեցրել է հայհոյանքներ և սպառնալիքներ, որի արդյունքում Լ.Մ-ը, վախից դրդված, գումարի մի մասը փոխանցել է Ժորա Դալլաքյանի կողմից նշված քարտային հաշիվներին**, որպիսի փաստը ստորադաս դատարանները հաստատված են համարել: Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի իմաստով արարքը տվյալ հոդվածով որակելիս անձի ընկալումը չի կարող որոշիչ լինել:

19. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, Ժորա Դալլաքյանին ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրվող արարքը վերորակելով ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով, պատշաճ վերլուծության և գնահատման չեն ենթարկել գործում առկա ապացույցների ամբողջությունը:

Հետևաբար, մեղադրյալ Ժորա Դալլաքյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի հատկանիշների բացակայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավորված չեն:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 387-րդ հոդվածով նախատեսված՝ նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են և հիմք են ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու և վարույթը Գեղարքունիքի

մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության փոխանցելու համար:

Նոր քննության ընթացքում Առաջին ատյանի դատարանը, վերացնելով արձանագրված խախտումները, պետք է Ժորա Դալլաքյանին առաջադրված մեղադրանքի հիմնավորվածության հարցում հանգի համապատասխան հետևության՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ժորա Դալլաքյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված բացակայելու արգելքը պետք է թողնել անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ, 33-րդ, 34-րդ, 264-րդ, 281-րդ, 352-րդ, 359-րդ, 361-րդ, 363-րդ և 385-387-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Ժորա Վալոդյայի Դալլաքյանի վերաբերյալ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2025 թվականի ապրիլի 4-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2025 թվականի հունիսի 30-ի որոշումը բեկանել և վարույթը փոխանցել Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Ժորա Վալոդյայի Դալլաքյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված բացակայելու արգելքը թողնել անփոփոխ:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

ՀԿԴ/0089/15/25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ ՈՐՈՇՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԸ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ)

2026 թվականի սեպտեմբերի 16-ին քաղաք Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան)՝ 2025 թվականի օգոստոսի 7-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Վարդապետյանի հատուկ վերանայման վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

Վարույթի դատավարական նախապատմությունը.

1. 2025 թվականի ապրիլի 1-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 277-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով նախաձեռնվել է թիվ 12157725 քրեական վարույթը, որը 2025 թվականի ապրիլի 11-ին նախաքննություն կատարելու նպատակով փոխանցվել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե:

1.2. 2025 թվականի ապրիլի 14-ի, ապրիլի 15-ի, ապրիլի 21-ի, ապրիլի 28-ի, մայիսի 5-ի, մայիսի 7-ի և հունիսի 9-ի որոշումներով թիվ 12157825, 12158025, 62217825, 11165324, 11165425, 11165525, 11166025, 62237925, 11152325, 12167825, 12167925, 12168025 և 11188925 քրեական վարույթները միացվել են թիվ 12157725 քրեական վարույթին:

2. 2025 թվականի մայիսի 7-ին Սևակ Մերուժանի Հովհաննիսյանի նկատմամբ երկու դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերով և տասը դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 277-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է հանրային քրեական հետապնդում:

3. 2025 թվականի հունիսի 12-ին ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի սեփականության դեմ ուղղված կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ Վ.Զարգարյանը (այսուհետ նաև՝ Քննիչ) որոշում է կայացրել Ս.Հովհաննիսյանի գույքն արգելադրելու մասին, և հաջորդ օրը ՀՀ հակակոռուպցիոն դատարան է ներկայացրել այդ որոշման իրավաչափությունը հաստատելու վերաբերյալ միջնորդություն:

4. ՀՀ հակակոռուպցիոն դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ 2025

թվականի հուլիսի 1-ի որոշմամբ Քննիչի վերը նշված միջնորդությունը մերժվել է, իսկ գույքն արգելադրելու մասին 2025 թվականի հունիսի 12-ի որոշումը՝ վերացվել:

5. Վերաքննիչ դատարանը ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչություն գործուղված դատախազ Մ.Սաֆարյանի հատուկ վերանայման բողոքի քննության արդյունքում 2025 թվականի օգոստոսի 7-ին որոշում է կայացրել Առաջին ատյանի դատարանի՝ 2025 թվականի հուլիսի 1-ի որոշումն անփոփոխ թողնելու մասին:

6. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Վարդապետյանի կողմից բերվել է հատուկ վերանայման վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2025 թվականի սեպտեմբերի 11-ի որոշմամբ ընդունվել է վարույթ, և սահմանվել է դատական վարույթի իրականացման գրավոր ընթացակարգ:

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, դրանք հիմնավորող փաստարկները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ փաստարկներով.

7. Բողոքաբերի պնդմամբ՝ վիճարկվող դատական ակտն օրինական և հիմնավոր չէ, դրանով թույլ է տրվել քրեադատավարական օրենքի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 133-րդ հոդվածի էական խախտում, որն ազդել է վարույթի ելքի վրա:

Միևնույն ժամանակ, ըստ բողոքաբերի՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ գույքի արգելադրման իրավաչափության վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումների միատեսակ կիրառության համար:

7.1. Բողոքաբերի գնահատմամբ՝ քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված լինելու փաստն ինքնին չի կարող բացառել նախաքննության ընթացքում սեփականության իրավունքի սահմանափակման նկատմամբ դատական վերահսկողությունը՝ հաշվի առնելով, որ գույքի արգելադրման վերաբերյալ որոշումը ենթակա է հետագա (*post factum*) դատական ստուգման, ինչն ինքնին ենթադրում է, որ դատարանն իր այս գործառույթի իրականացման շրջանակներում պետք է գնահատման ենթարկի գույքի արգելադրման որոշման իրավաչափությունը դրա կայացման պահի դրությամբ:

7.2. Վերոգրյալի հետ մեկտեղ, անդրադառնալով նախաքննության մարմնի՝ տվյալ վարույթով այլևս վարույթն իրականացնող մարմին չհանդիսանալու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի դիտարկմանը՝ բողոքաբերը փաստարկել է, որ քննիչի համապատասխան որոշման առկայությունն ինքնին հարկադրանքի այդ միջոցի կիրառումն իրավաչափ է դարձնում, ինչը պայմանավորված է նրանով, որ արգելադրման ենթակա գույքը թաքցնելու կամ սպառելու վտանգը երբեմն կարող է դրա վերահսկումը խիստ անհետաձգելի դարձնել, ուստի նախաքննության ընթացքում գույքի փաստացի արգելադրումն իրականացվում է քննիչի կողմից այդ որոշումը կայացվելուց, ոչ թե դատարանի կողմից դրա իրավաչափությունը հաստատվելուց հետո:

7.3. Ամփոփելով բողոքաբերը նշել է, որ դատական վարույթում գույքի արգելադրման հարցի քննարկման հնարավորության առկայությունը որևէ կերպ չի բացառում արդեն իսկ նախաքննության ընթացքում կայացված որոշման հետագա դատական ստուգման հնարավորությունը:

8. Արդյունքում բողոքաբերը խնդրել է Վերաքննիչ դատարանի՝ 2025 թվականի օգոստոսի 7-ի որոշումն ամբողջությամբ բեկանել և կայացնել դրան փոխարինող դատական ակտ:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

9. 2025 թվականի հունիսի 12-ին Քննիչը կայացրել է Ս.Հովհաննիսյանի տրանսպորտային միջոցն արգելադրելու մասին որոշում[1] և նույն օրն այն ուղարկել է ՀՀ ներքին գործերի նախարարության հաշվառման-քննչական ծառայությունների մատուցման, թույլտվությունների և լիցենզավորման վարչության պետին[2]: Միևնույն ժամանակ 2025 թվականի հունիսի 13-ին նշված որոշման իրավաչափությունը հաստատելու մասին միջնորդություն է ներկայացրել Առաջին ատյանի դատարան[3]:

10. Ըստ *«Datalex»* դատական տեղեկատվական համակարգի՝ Ս.Հովհաննիսյանի վերաբերյալ քրեական վարույթը 2025 թվականի հունիսի 26-ին ստացվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարան[4]:

11. Առաջին ատյանի դատարանը 2025 թվականի հուլիսի 1-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Դատարանը չանդրադառնալով միջնորդության մեջ նշված հիմքերին և դրանց իրավաչափության պայմաններին՝ հարկ է համարում արձանագրել մի կարևոր փաստ, որի առկայության պայմաններում սույն միջնորդությունը պետք է մերժել, մասնավորապես՝ «Դատալեքս» տեղեկատվական համակարգի ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ 2025 թվականի հունիսի 26-ին ՀՀ հակակոռուպցիոն դատարան է սպացվել թիվ 12157725 քրեական վարույթը, որը մակագրվել է դատավոր Վարդգես Սարգսյանին, այսինքն տվյալ վարույթով նախաքննությունից անցում է կատարվել դատական քննության փուլ, ուստի Դատարանի համար անհասկանալի է սույն միջնորդության ներկայացումը, քանի որ գույքի արգելադրումը կանխարգելիչ բնույթ կրող քրեադատավարական հարկադրանքի միջոց է համարվում, իսկ սույն դեպքում այն իր նպատակին ծառայել չի կարող:*

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, Դատարանը գտնում է, որ քննիչի կողմից ներկայացված նյութերը բավարար չեն անձի սեփականության իրավունքի սահմանափակման, ինչպես նաև Դատարանի կողմից դրա իրավաչափության գնահատման համար:

Վերոգրյալի համատեքստում Դատարանն արձանագրում է, որ 2025 թվականի հունիսի 12-ի գույքն արգելադրելու վերաբերյալ որոշումն իրավաչափ չէ, ուստի քննիչի միջնորդությունը հիմնավոր չէ և ենթակա է մերժման, իսկ գույքի արգելադրման որոշումը՝ վերացման: (…)»[5]:

12. Վերաքննիչ դատարանի՝ 2025 թվականի օգոստոսի 7-ի որոշման համաձայն՝ *«(…) Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի որոշման հիմնավորումները համադրելով (…) իրավական նորմերի, ՀՀ Վճռաբեկ դատարանի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրությամբ արտահայտած իրավական դիրքորոշումների հետ, գտնում է, որ այդ հիմնավորումներն ամբողջությամբ բխում են դրանցից, որպիսի պայմաններում այդ հիմնավորումներն ընդունելի են նաև Վերաքննիչ դատարանի համար:*

(…)

Այս համատեքստում անդրադառնալով Բողոքաբերի փաստարկներին առ այն, որ՝ «(…) Վերոգրյալի հետ մեկտեղ պետք է արձանագրել, որ 2022 թվականի հուլիսի 1-ից գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում սեփականության իրավունքի սահմանափակման նկատմամբ դատական վերահսկողության կառուցակարգը ենթարկվել

[1] Տես վարույթի նյութեր, հատոր 3, թերթեր 125-133:
[2] Տես վարույթի նյութեր, հատոր 3, թերթ 134:
[3] Տես վարույթի նյութեր, հատոր 1, թերթեր 3-12:
[4] Տես *www.datalex.am* դատական տեղեկատվական համակարգ, թիվ ՀԿԴ/0151/01/25 քրեական գործը:
[5] Տես վարույթի նյութեր, հատոր 3, թերթեր 146-158:

է հիմնարար փոփոխությունների: Այսպես, պետք է փաստել, որ գույքի արգելադրումը չի ենթադրում նախնական դատական վերահսկողություն: Այլ խոսքով՝ նախաքննության ընթացքում գույքի արգելադրման վերաբերյալ որոշում կայացնելիս վարույթն իրականացնող մարմինը դատարանի թույլտվություն չի հայցում, իսկ քննիչի համապատասխան որոշման առկայությունը հարկադրանքի այդ միջոցի կիրառումն իրավաչափ է դարձնում: (...): Հարկ է փաստել, որ դատարանն իր այս գործառույթի իրականացման շրջանակներում պետք է գնահատման ենթարկի գույքի արգելադրման որոշման իրավաչափությունը՝ դրա կայացման պահին առկա վարութային իրողությունների հաշվառմամբ (...)»՝ Վերաքննիչ դատարանն ընդգծում է, որ Բողոքաբերի նշված հետևությունների մեջ առկա է ներքին հակասություն, քանի որ մի դեպքում՝ Բողոքաբերը նշել է, որ նախաքննության ընթացքում գույքի արգելադրման վերաբերյալ որոշում կայացնելիս վարույթն իրականացնող մարմինը դատարանի թույլտվություն չի հայցում, այնուհետև հանգում է հետևության, որ դատարանն իր այս գործառույթի իրականացման շրջանակներում պետք է գնահատման ենթարկի գույքի արգելադրման որոշման իրավաչափությունը՝ դրա կայացման պահին առկա վարութային իրողությունների հաշվառմամբ:

(...) Վերաքննիչ դատարանը փաստում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 294-րդ հոդվածի իրավակարգավորումները բացառապես վերաբերելի են մինչդատական վարույթի ընթացքում քննիչի կողմից կայացված՝ գույքի արգելադրման կամ այն վերացնելու մասին որոշումները դատական կարգով սպուգման ենթարկելու կառուցակարգերին, այսինքն՝ ներառված են քրեադատավարական օրենքի համապատասխան՝ «ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ» գլխում: Սույն դեպքում այն քրեական վարույթը, որի սահմաններում քննիչը միջնորդություն է ներկայացրել դատարան՝ «Գույքն արգելադրելու մասին» որոշման իրավաչափությունը սպուգելու և հաստատելու նպատակով, արդեն իսկ ըստ էության քննության համար սպացվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարանում, հետևաբար դատարանի վարույթում գտնվող քրեական գործով քննիչի՝ 2025 թվականի հունիսի 12-ի «Գույքն արգելադրելու մասին» որոշման իրավաչափության սպուգման հարցն այլևս չի գտնվում սեփականության իրավունքի սահմանափակման դատական երաշխիքների քննության ենթակա դատական ակտերի շրջանակներում, ավելին՝ հիշյալ գործառույթն այլևս դուրս է նաև քննիչի դատավարական լիազորություններից:

Ինչ վերաբերում է Բողոքաբերի փաստարկին առ այն, որ՝ «(...) Անհրաժեշտ է արձանագրել, որ ի տարբերություն օրինակ անձի նկատմամբ կիրառվող խափանման միջոցի հարցի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը որպես նախնական դատալսումների ընթացքում քննարկման ենթակա հարց չի նախատեսում գույքի արգելադրման քննարկումը, որպիսի պայմաններում առկա չէ նաև վարույթն իրականացնող դատարանի և գույքի արգելադրման իրավաչափությունը գնահատող դատարանի դիրքորոշումների տարբերության ռիսկ (...)», Վերաքննիչ դատարան[ը] (...) փաստում է, որ թեև գույքի արգելադրման քննարկման հարցը հատուկ նախատեսված չէ նախնական դատալսումների ժամանակ հիշյալ հոդվածի 1-ին մասի 1-8-րդ կետերում թվարկված քննարկման ենթակա հարցերի ցանկում, այդուամենայնիվ, Վերաքննիչ դատարանի գնահատմամբ նշված հարցը կարող է քննարկվել այլ վերաբերելի հարցերի շրջանակներում, քանի որ այս առնչությամբ օրենսդիրը որևէ հատուկ սահմանափակում չի նախատեսել, իսկ անձի գույքի նկատմամբ կիրառվող կամ արդեն կիրառված արգելանքի հարցը հանդիսանում է նրա՝ սահմանադրորեն երաշխավորված իրավունքներից մեկի՝ սեփականության իրավունքի պաշտպանության իրավունքի խնդիր և կարող է քննարկման առարկա դառնալ քրեական գործի նախնական դատալսումների

ժամանակ:

Վերաքննիչ դատարանը փաստում է նաև, որ եթե անգամ տեսականորեն ընդունելի համարվի, որ ՀՀ հակակոռուպցիոն դատարանը քննարկեր և հաստատեր քննիչի՝ 2025 թվականի հունիսի 12-ի «Գույքն արգելադրելու մասին» որոշման իրավաչափությունը, ապա առաջանում է տրամաբանական հարց, թե քննիչը նշված գույքի արգելադրման հետ կապված հետագա գործողությունները՝ մասնավորապես համապատասխան պետական իրավասու մարմնին նշված գույքի հետ կապված որևէ գործարք չկատարելու վերաբերյալ որոշումն ու գրություն ուղարկելը, ինչ դատավարական կարգավիճակում պետք է իրականացներ, հատկապես այն պայմաններում, երբ փաստացի նշված գործով այլևս չէր հանդիսանում վարույթն իրականացնող մարմին:

Վերաքննիչ դատարանն ընդգծում է, որ քրեական դատավարության փուլային կառուցվածքն ինքնանպատակ չէ, և այդ փուլերից յուրաքանչյուրում որպես վարույթն իրականացնող մարմին հանդիսացող սուբյեկտը կամ սուբյեկտները տարբերակվում են, հետևաբար քրեական գործն արդեն իսկ դատարան ուղարկված լինելու պարագայում քննիչը որևէ կերպ չի կարող հանդիսանալ վարույթն իրականացնող նախաքննական մարմին և չի կարող իրականացնել քրեադատավարական հիշյալ կարգավիճակից բխող որևէ գործողություն:

Արդյունքում, Վերաքննիչ դատարանը հանգում է հետևության, որ Առաջին ատյանի դատարանը հանգել է իրավաչափ հետևության, ուստի վիճարկվող որոշումը բեկանելու օրենսդրական հիմքերը բացակայում են: (…)»[6]:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

13. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նախաքննության մարմնի՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետում դատարան ներկայացված՝ գույքի արգելադրման որոշման իրավաչափությունը հաստատելու մասին միջնորդությունը նախաքննությունն ավարտված լինելու հիմքով դատարանների կողմից ըստ էության քննության չառնելու կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր, ուստի անհրաժեշտ է համարում սույն վարույթով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղենիշային նշանակություն ունենալ համանման փաստական հանգամանքներ ունեցող վարույթներով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման և իրավունքի զարգացման համար:

13.1. Սույն վարույթով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչա՞փ են արդյոք գույքն արգելադրելու մասին որոշման իրավաչափությունը հաստատելու՝ նախաքննության մարմնի միջնորդությունը քրեական վարույթի նախաքննությունն ավարտված լինելու հիմքով մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի և այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումները:

14. ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը»:

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

(…)

3. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության

[6] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 4, թերթեր 37-48:

շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

4. Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի: (…)»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Եվրոպական կոնվենցիա) 1-ին արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝

«Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *Borzhonov v. Russia* գործով նշել է, որ պետք է լինի ողջամիտ հավասարակշռություն պետության կողմից կիրառվող, այդ թվում՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը վերահսկելու հետ կապված միջոցների և այդ միջոցների կիրառման արդյունքում ակնկալվող նպատակների միջև: Այս պահանջն արտահայտվում է «արդարացի հավասարակշռություն» ձևակերպմամբ, որը պետք է առկա լինի հասարակության ընդհանուր շահի պահանջների և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության միջև:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդգծել է, որ մեղադրյալի գույքի վրա կալանք դնելն ինքնին ենթակա չէ քննադատության՝ հաշվի առնելով, մասնավորապես, Եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի երկրորդ պարբերությունը, սակայն պետք է հաշվի առնել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքից օգտվելու սահմանափակմամբ անձի վրա չափազանց ծանր բեռ դնելու ռիսկը և, հետևաբար, պետք է ապահովել համապատասխան դատավարական երաշխիքներ՝ համոզվելու համար, որ անձի սեփականության իրավունքի վրա առկա ազդեցությունը կամայական կամ անկանխատեսելի չէ[7]:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝

«Վարույթի ընթացքում անձի գույքի արգելադրումը ենթակա է պարտադիր դատական սպրուգման»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 133-րդ հոդվածի համաձայն՝

«1. Նախաքննության ընթացքում գույքն արգելադրվում է քննիչի որոշման հիման վրա: Այդ որոշումը և այն հիմնավորող նյութերը եռօրյա ժամկետում ներկայացվում են իրավասու դատարանի հաստատմանը: Դատական վարույթում գույքն արգելադրվում է դատարանի որոշմամբ:

(…)

3. Սույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-4-րդ կետերով և 3-րդ մասով

[7] Տես *Borzhonov v. Russia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2009 թվականի հունվարի 22-ի վճիռը, գանգատ թիվ 18274/04, կետեր 59-60:

նախատեսված հիմքերի առերևույթ առկայության դեպքում քննիչը համապատասխան գույքի արգելադրումն իրականացնում է անհապաղ: (…)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի համաձայն՝

«1. Գույքի արգելադրումը պահպանվում է մինչև փվյալ վարույթով եզրափակիչ դատավարական ակտն օրինական ուժի մեջ մտնելը: Տուժողի կամ այլ շահագրգիռ անձի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ դատարանն իրավասու է գույքի արգելադրումը պահպանելու նաև քրեական վարույթի ավարտից հետո՝ մինչև դատական ակտի կատարումը:

2. Վարույթի ընթացքում հսկող դատախազի հաստատմամբ՝ քննիչի կամ դատարանի որոշմամբ գույքը հանվում է արգելանքից, եթե ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք վկայում են գույքի արգելադրումը վերացնելու անհրաժեշտության մասին: (…)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 294-րդ հոդվածի համաձայն՝

«1. Սույն օրենսգրքով սահմանված պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում դատարանը քննում է՝

1) գույքի արգելադրման մասին քննիչի որոշման իրավաչափությունը հաստատելու վերաբերյալ միջնորդությունը. (…)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 295-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափության սպուգման վարույթը հարուցվում է գույքի արգելադրման մասին որոշման իրավաչափությունը հաստատելու՝ քննիչի միջնորդության հիման վրա, որը դատարան է ներկայացվում համապատասխան գույքն արգելադրելուց հետո՝ եռօրյա ժամկետում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 297-րդ հոդվածի համաձայն՝

«1. Գույքի արգելադրման մասին որոշման իրավաչափությունը հաստատելու միջնորդության քննության արդյունքով դատարանը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

1) միջնորդությունը մերժելու և գույքի արգելադրման մասին քննիչի որոշումը վերացնելու մասին.

2) միջնորդությունը բավարարելու և գույքի արգելադրման մասին քննիչի որոշման իրավաչափությունը հաստատելու մասին: (…)»:

16. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը մեկնաբանելիս Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գույքի տիրապետման, տնօրինման և օգտագործման՝ սեփականատիրոջ իրավազորությունները մեծ կարևորության իրավական արժեքներ են, որոնք ունեն սահմանադրական բնույթ: Դրանց սահմանափակման համար անհրաժեշտ է, որ հակակշիռ իրավական շահն ունենա բացառիկ նշանակություն[8]:

Զարգացնելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ անձի կոնվենցիոն և սահմանադրական մակարդակով ամրագրված սեփականության իրավունքի լավագույնս պաշտպանությանն է ուղղված նոր քրեադատավարական այն կարգավորումը, ըստ որի՝ **գույքի արգելադրման վերաբերյալ նախաքննության մարմնի որոշումն անպայմանորեն ենթակա է դատական վերահսկողության**: Վերջինս ընդգծում է անձի սեփականության իրավունքի կարևորությունը և հանդիսանում է լրացուցիչ երաշխիք կամայականությունների և իրավունքին անհարկի

[8] Տես, *mutatis mutandis,* Վճռաբեկ դատարանի՝ *Արթուր Հայրապետյանի* գործով 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԵՇԴ/0001/11/10 որոշումը, կետ 19:

միջամտությունների դեմ[9]:

Վերոգրյալի հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ գույքի արգելադրումը, անկախ հետապնդվող նպատակից և օրենսդրական հիմքից, մշտապես իրենից ներկայացնում է ինտենսիվ միջամտություն անձի սեփականության իրավունքին, ուստի դատարանի խնդիրն է յուրաքանչյուր գործով պարզել, թե որքանով է անձի իրավունքին միջամտությունը հիմնավորված, և առկա է արդյոք համաչափություն՝ հետապնդվող իրավաչափ նպատակի և վերջինիս հասնելու համար գործադրված միջոցների միջև:

16.1. Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ գույքի արգելադրումը՝ որպես կանխարգելիչ բնույթ կրող քրեադատավարական հարկադրանքի միջոց, կոչված է սեփականության կամ այլ գույքային իրավունքների սահմանափակման միջոցով ապահովելու ենթադրյալ հանցագործությամբ պատճառված հնարավոր վնասի, վարութային հնարավոր ծախսերի հատուցումը, գույքի հնարավոր բռնագրավումը և բռնագանձումը: Միաժամանակ օրենսդիրը, պայմանավորված վարույթի փուլով, նախատեսել է գույքի արգելադրման տարբեր կառուցակարգեր. նախաքննության ընթացքում գույքն արգելադրվում է քննիչի որոշման հիման վրա, որը եռօրյա ժամկետում պարտադիր ներկայացվում է իրավասու դատարանի հաստատմանը, իսկ դատական վարույթում գույքի արգելադրման հարցի լուծման իրավասությունը վերապահված է դատարանին: Հարկ է նշել, որ նախաքննության ընթացքում գույքի արգելադրման նպատակը չի սահմանափակվում բացառապես նախաքննության փուլի խնդիրների լուծմամբ և, որպես կանոն, կարող է պահպանվել նաև դատական քննության ընթացքում:

Այս համատեքստում էական նշանակություն ունի այն հանգամանքը, որ, ի տարբերություն մինչդատական վարույթի երաշխիքների մյուս վարույթների, նախաքննության ընթացքում գույքի արգելադրման նախնական դատական թույլտվության ընթացակարգ նախատեսված չէ, և քննիչի համապատասխան որոշման առկայությունն ինքնին հարկադրանքի այդ միջոցի կիրառումն իրավաչափ է դարձնում: Միաժամանակ, հաշվի առնելով արդեն իսկ կիրառված հարկադրանքի բավականին լուրջ միջամտությունն անձի իրավաչափ շահերին, նախաքննության ընթացքում **գույքն արգելադրելու մասին քննիչի որոշման իրավաչափությունը պարտադիր ենթակա է հետագա (*post factum*) դատական ստուգման**, որի առաջնային նպատակը մինչդատական վարույթում անձի սեփականության իրավունքի պաշտպանությունն ապահովելն է[10]:

Վերոգրյալից բխում է, որ օրենսդիրը գույքի արգելադրումն իրավաբանորեն կապում է քննիչի կողմից համապատասխան որոշում կայացնելու հետ, հետևաբար այն ինքնին, նախքան իրավասու դատարանի կողմից հետագա դատական վերահսկողության առարկա դառնալը, կարող է առաջացնել օրենքով նախատեսված իրավական հետևանքներ: Դատարանի միջամտությունն այս դեպքում իր բնույթով նախորդող թույլտվություն չէ, այլ արդեն իսկ կիրառված հարկադրանքի միջոցի նկատմամբ օրենքով նախատեսված արդյունավետ դատական վերահսկողության ձև, որը հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանությունն արդյունավետորեն ապահովելու նպատակ է հետապնդում: Այլ կերպ՝ քննիչի՝ գույքի արգելադրման մասին որոշման իրավաչափությունը դատական ստուգման է

[9] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Անդրանիկ Ավագյանի* գործով 2025 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ ԵԴ1/0188/15/23 որոշումը:

[10] Տե՛ս, *mutatis mutandis,* Վճռաբեկ դատարանի՝ 2024 թվականի նոյեմբերի 19-ի թիվ ՀԿԴ/0069/15/23 որոշման 11-րդ կետը:

ենթարկվում, սակայն՝ ոչ թե թույլատրելու գույքի արգելադրումը, այլ հաստատելու դրա ի կատար ածման հիմք հանդիսացող որոշման իրավաչափությունը:

17. Այդ առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ գույքի արգելադրման մասին որոշումը կայացվել է նախաքննության ընթացքում, իսկ դրա իրավաչափությունը հաստատելու **միջնորդությունը ներկայացվել է օրենքով սահմանված կարգով և ժամկետում**, ապա դատական վարույթի առարկան կազմում է հենց այդ որոշման իրավաչափության ստուգումը, հետևաբար քրեական վարույթի հետագա՝ դատական քննության փուլ անցնելն ինքնին չի կարող հանգեցնել դատարանի կողմից նշված որոշման իրավաչափությունը չստուգելուն: Հակառակ մոտեցման դեպքում կստացվի, որ քրեական վարույթի փուլերի փոփոխությունը կարող է հանգեցնել նրան, որ քննիչի որոշման նկատմամբ վերահսկողություն չիրականացվի միայն նախաքննության ավարտի պատճառով, ինչը կհանգեցնի արդեն հարուցված դատական վերահսկողության վարույթի անարդյունավետության՝ այն դեպքում, երբ հենց այդ վերահսկողության իրականացումն է կոչված երաշխավորելու անձի սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափությունը:

Այս համատեքստում հարկ է ընդգծել, որ սեփականության իրավունքի դատական երաշխիքների շրջանակում դատարանը քննարկման առարկա է դարձնում քննիչի կողմից նախաքննության ընթացքում կայացված որոշման իրավաչափությունը՝ դրա կայացման պահի դրությամբ, մինչդեռ դատական քննության փուլում գույքի արգելադրման հետագա իրավական ճակատագիրը քրեական գործն ըստ էության քննող դատարանի իրավասության շրջանակում է: Ուստի դատական ստուգման վարույթն իրականացնող դատարանը քրեական վարույթը դատական քննության փուլ անցնելուց հետո իրավասու է գնահատելու քննիչի որոշման իրավաչափությունը՝ դրա կայացման պահին համապատասխան հիմքերի և նպատակների առկայության տեսանկյունից՝ միևնույն ժամանակ ձեռնպահ մնալով այնպիսի որոշում կայացնելուց, որը կմիջամտի գործն ըստ էության քննող դատարանի կողմից արդարադատության իրականացմանը[11]:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ գույքի արգելադրման մասին որոշման իրավաչափության ստուգման արդյունքում դատարանը, իր կողմից կայացվող որոշման կապակցությամբ որոշակի սահմանափակում ունենալով հանդերձ, եթե հանգում է գույքի արգելադրման մասին քննիչի որոշման իրավաչափության մասին հետևության, ապա կարող է հաստատել այն, քանի որ, ինչպես նշվեց, գույքի արգելադրման իրավական հիմքը քննիչի կողմից համապատասխան որոշման կայացումն է: Այսինքն՝ գույքի արգելադրման մասին որոշման իրավաչափության մասին հետևության հանգելիս սեփականության իրավունքի սահմանափակման դատական երաշխիքն իրականացնող դատարանը զրկված չէ միջնորդությունը բավարարելուց և որոշման իրավաչափությունը հաստատելուց, որպիսի պայմաններում գործն ըստ էության քննող դատարանին վերապահված իրավասության յուրացում տեղի չի ունենա:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նման տարանջատումը հնարավորություն է տալիս միաժամանակ ապահովել երկու փոխկապակցված նպատակ՝ մի կողմից երաշխավորել անձի սեփականության իրավունքի նկատմամբ արդյունավետ դատական վերահսկողությունը, իսկ մյուս կողմից՝ չխաթարել գործն ըստ էության քննող դատարանի՝ քրեական գործի շրջանակում գույքի արգելադրման հետագա ճակատագիրը որոշելու բացառիկ դատավարական

[11] Տես նաև, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Լևոն Զաքոյանի* գործով 2018 թվականի մարտի 20-ի թիվ ԵԿԴ/0255/11/15 որոշման 23.1-ին կետը:

իրավասությունը:

18. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

- 2025 թվականի հունիսի 12-ին Քննիչը, կայացնելով Ս.Հովհաննիսյանի գույքի արգելադրման մասին որոշում, այն ուղարկել է ՀՀ ներքին գործերի նախարարության հաշվառման-քննչական ծառայությունների մատուցման, թույլտվությունների և լիցենզավորման վարչության պետին[12],

- 2024 թվականի հունիսի 13-ին Քննիչն Առաջին ատյանի դատարան է ներկայացրել վերը նշված որոշման իրավաչափությունը հաստատելու վերաբերյալ միջնորդություն[13],

- 2025 թվականի հունիսի 26-ին Ս.Հովհաննիսյանի վերաբերյալ քրեական վարույթը, ըստ էության քննության համար, ստացվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարան[14],

- քրեական վարույթի՝ այլևս դատաքննության փուլում գտնվելու հանգամանքով պայմանավորված՝ Առաջին ատյանի դատարանը Քննիչի՝ գույքի արգելադրման մասին որոշման իրավաչափությունը հաստատելու վերաբերյալ վերը նշված միջնորդությունը մերժել է՝ առանց այն բովանդակային քննության ենթարկելու[15],

- Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի որոշումը, ըստ էության, գտել է, որ նախաքննությունն ավարտված լինելու պարագայում դատարանի վարույթում գտնվող քրեական գործով գույքի արգելադրման մասին քննիչի որոշման իրավաչափության ստուգման հարցն այլևս չի գտնվում սեփականության իրավունքի սահմանափակման դատական երաշխիքների շրջանակում:

Միևնույն ժամանակ, ստորադաս դատարանի գնահատմամբ՝ գույքի արգելադրման հարցը կարող է քննարկման առարկա դառնալ քրեական գործով նախնական դատալսումների ընթացքում՝ այլ վերաբերելի հարցերի շրջանակում:

Վերոգրյալի հետ մեկտեղ, Վերաքննիչ դատարանը գտել է, որ քրեական գործը դատարան ուղարկված լինելու պարագայում քննիչն այլևս չի կարող հանդիսանալ վարույթն իրականացնող մարմին և իրականացնել այդ կարգավիճակից բխող որևէ քրեադատավարական գործողություն, հետևաբար, ըստ ստորադաս դատարանի, անհասկանալի է, թե ինչ դատավարական կարգավիճակով քննիչը պետք է իրականացներ գույքի արգելադրման հետ կապված հետագա գործողությունները, մասնավորապես՝ համապատասխան պետական իրավասու մարմնին գույքի հետ կապված որևէ գործարք չկատարելու վերաբերյալ որոշումն ու գրություն ուղարկելը[16]:

19. Նախորդ կետում ներկայացված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ մեջբերված իրավակարգավորումների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քննիչի՝ գույքի արգելադրման մասին որոշման իրավաչափությունը հաստատելու միջնորդությունը քրեական վարույթով նախաքննությունն ավարտված լինելու հիմքով մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի և այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումներն իրավաչափ չեն:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ այն դեպքում, երբ քննիչի կողմից գույքի արգելադրման մասին որոշումը կայացվել է նախաքննության ընթացքում, իսկ դրա

[12] Տես սույն որոշման 9-րդ կետը:
[13] Տես նույն տեղում:
[14] Տես սույն որոշման 10-րդ կետը:
[15] Տես սույն որոշման 11-րդ կետը:
[16] Տես սույն որոշման 12-րդ կետը:

իրավաչափությունը ստուգելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացվել է օրենքով սահմանված կարգով և ժամկետում, ապա քրեական վարույթի հետագա՝ դատական քննության փուլ անցնելն ինքնին չի կարող հանգեցնել դատարանի կողմից նշված որոշման իրավաչափությունը չստուգելուն: Հակառակ մեկնաբանության դեպքում քննիչի որոշման իրավաչափությունը չի ենթարկվի պարտադիր հետագա (*post factum*) դատական ստուգման, որի առաջնային նպատակը, ինպես նշվեց, անձի սեփականության իրավունքի արդյունավետ դատական պաշտպանությունն ապահովելն է:

Տվյալ դեպքում Քննիչի կողմից միջնորդությունը ներկայացվել է դեռևս նախաքննության ընթացքում՝ օրենքով սահմանված կարգի պահպանմամբ, ուստի Առաջին ատյանի դատարանը, ստանձնելով դատական երաշխիքների վարույթը, պետք է բովանդակային քննարկման առարկա դարձներ գույքի արգելադրման մասին որոշման իրավաչափությունը հաստատելու վերաբերյալ Քննիչի միջնորդությունը՝ ապահովելով անձի սեփականության իրավունքի արդյունավետ դատական պաշտպանությունը: Բացի այդ, հարկ է նշել, որ քրեական վարույթով դատաքննության անցում կատարվելու հանգամանքը չի հանգեցնում գույքի արգելադրման մասին քննիչի որոշման իրավական նշանակության կորստին:

19.1. Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն դիտարկմանը, որ քրեական վարույթը դատարան ուղարկված լինելու պարագայում քննիչն այլևս չի կարող հանդիսանալ վարույթն իրականացնող մարմին և իրականացնել այդ կարգավիճակից բխող որևէ քրեադատավարական գործողություն, մասնավորապես՝ համապատասխան պետական իրավասու մարմնին գույքի հետ կապված որևէ գործարք չկատարելու վերաբերյալ որոշումն ու գրությունն ուղարկել, ապա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նախաքննության ավարտի պահից, այսինքն՝ մեղադրական եզրակացությունը կամ քրեական վարույթը կարճելու մասին որոշումը հսկող դատախազին հանձնելու պահից ավարտվում է քրեական վարույթով քննիչի իրավասությունը, սակայն գույքի փաստացի արգելադրումը քննիչի կայացրած որոշման իրավական հետևանքն է, որը կամ անմիջականորեն հաջորդում է գույքի արգելադրման մասին որոշում կայացնելուն, կամ պահանջում է իրավասու պետական մարմնի կամ իրավաբանական անձի կողմից համապատասխան գործողության իրականացում[17]: Տվյալ դեպքում Քննիչը, 2024 թվականի հունիսի 12-ին որոշում կայացնելով Ս.Հովհաննիսյանի գույքն արգելադրելու մասին, նույն օրը նշված որոշումն ուղարկել է ՀՀ ներքին գործերի նախարարության հաշվառման-քննչական ծառայությունների մատուցման, թույլտվությունների և լիցենզավորման վարչության պետին[18], որպիսի հանգամանքը Վերաքննիչ դատարանը գնահատման չի ենթարկել, ուստի նշվածի կապակցությամբ ստորադաս դատարանի հետևությունը հիմնավոր չէ:

20. Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գույքն արգելադրելու մասին որոշման իրավաչափությունը հաստատելու՝ նախաքննության մարմնի միջնորդությունը քրեական վարույթով նախաքննությունն ավարտված լինելու հիմքով մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշումը և այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումն իրավաչափ չեն:

21. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Առաջին ատյանի դատարանը, Քննիչի՝ գույքի արգելադրման մասին որոշման իրավաչափությունը հաստատելու միջնորդությունը քրեական վարույթի նախաքննությունն ավարտված լինելու հիմքով մերժելով, իսկ Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի

[17] Տե՛ս, *mutatis mutandis,* Վճռաբեկ դատարանի՝ 2025 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ ՀԿԴ/0141/15/24 որոշման 14.1-ին կետը:
[18] Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

դատական ակտն անփոփոխ թողնելով, թույլ են տվել դատական սխալ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 133-րդ և 294-րդ հոդվածների դրույթների խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ հանգեցրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածով սահմանված՝ վարույթի հանրայնության սկզբունքի խախտման, ինչն ազդել է վարույթի ելքի վրա, հետևաբար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 362-րդ հոդվածի համաձայն՝ հիմք է ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու և վարույթը ՀՀ հակակոռուպցիոն դատարան՝ նոր քննության փոխանցելու համար[19]: Նոր քննության ընթացքում դատարանը ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի սեփականության դեմ ուղղված կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության վարչության ՀԿԳ ավագ քննիչ Վ.Զարգարյանի՝ գույքի արգելադրման մասին 2025 թվականի հունիսի 12-ի որոշման իրավաչափությունը հաստատելու վերաբերյալ միջնորդության քննության արդյունքում պետք է հանգի համապատասխան հետևության՝ հաշվի առնելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 31-րդ, 33-րդ, 34-րդ 264-րդ, 281-րդ, 352-րդ, 359-րդ, 361-363-րդ և 400-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ 2025 թվականի հուլիսի 1-ի որոշումը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի՝ 2025 թվականի օգոստոսի 7-ի որոշումը բեկանել և վարույթը փոխանցել ՀՀ հակակոռուպցիոն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

[19] Տես, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Հրայր Հովսեփյանի* գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴ/0426/11/18 և *Ավաթ Ամինիի* գործով 2023 թվականի հունվարի 25-ի թիվ ԵԴ/0752/06/22 որոշումները:

ՇԴ1/0945/02/22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԸ
(ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ)

2026 թվականի սեպտեմբերի 23-ին

գրավոր ընթացակարգով քննելով ըստ Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի (այսուհետ՝ Համայնքապետարան) հայցի ընդդեմ Ֆելիքս Հարությունյանի՝ վնասը հատուցելու պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.02.2026 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ Համայնքապետարանի բերած վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Համայնքապետարանը պահանջել է Ֆելիքս Հարությունյանից բռնագանձել 2.487.000 ՀՀ դրամ՝ որպես պատճառված վնասի հատուցում:

Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 22.12.2025 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 09.02.2026 թվականի որոշմամբ Համայնքապետարանի բերած վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Համայնքապետարանը (ներկայացուցիչ Արտակ Մովսիսյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 7-րդ և 8-րդ հոդվածները, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ ու 22-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պատճառաբանել է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ քրեական վարույթի ընթացքում հատուցման

ենթակա գույքային վնասը հնարավոր չի եղել բռնագանձել, քանի որ վարույթը կարճվել է վաղեմության ժամկետն անցնելու՝ ոչ արդարացնող հիմքով, ուստի ինքը դիմել է դատարան նշված վնասը քաղաքացիական դատավարության կարգով փոխհատուցելու հայցով, հետևաբար «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով ազատված է պետական տուրք վճարելու պարտականությունից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 09.02.2026 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ քրեական վարույթի ընթացքում հափշտակման ենթակա գույքային վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով անձին պետական տուրքի վճարումից ազատելու արտոնության կիրառման ընթացակարգին՝ վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները:

Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների

սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները (…), ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Մինչև 14.03.2024 թվականը գործած խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ բողոքին կցվում է օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքը վճարած լինելը հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ համապատասխան գանձապետական հաշվին փոխանցումը հավաստող համապատասխան ծածկագիրը՝ տրամադրված վճարահաշվարկային կազմակերպության կողմից, (…): Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարման գծով արտոնություն, ապա վերաքննիչ բողոքին կցվում է կամ բողոքում ներառվում է դրա վերաբերյալ միջնորդությունը, ***եթե բողոք բերողն օրենքի ուժով ազատված չէ պետական տուրք վճարելու պարտականությունից***: (…):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը սահմանվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի «ա» ենթակետի համաձայն՝ պետական տուրքի գծով կարող են սահմանվել հետևյալ արտոնությունները՝ պետական տուրքի վճարումից ազատում:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են հայցվորները՝ քրեական վարույթի ընթացքում հատուցման ենթակա գույքային վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասում նշված անձինք տուրքի վճարումից ազատվում են նաև դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու հիմքերի բացակայության դեպքում վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե չեն պահպանվել նույն օրենսգրքի 368-րդ հոդվածի պահանջները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ բողոքին կցվում են օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքը վճարած լինելը հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ համապատասխան գանձապետական հաշվին փոխանցումը հավաստող համապատասխան ծածկագիրը՝ տրամադրված վճարահաշվարկային կազմակերպության կողմից, (…): Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարման գծով արտոնություն, ապա վերաքննիչ բողոքին կցվում է կամ բողոքում ներառվում է դրա վերաբերյալ միջնորդությունը, եթե բողոք բերողն օրենքի ուժով ազատված չէ պետական տուրք վճարելու պարտականությունից: (…):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 1-ին, (…) կետերով նախատեսված հիմքերով վերաքննիչ

բողոքը վերադարձնելուց հետո բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու ու որոշումն ստանալուց հետո՝ վճռի դեմ ներկայացված բողոքով 15-օրյա ժամկետում, (...) սահմանված կարգով կրկին վերաքննիչ բողոք ներկայացնելու դեպքում այն համարվում է վերաքննիչ դատարան ներկայացված սկզբնական ներկայացման օրը: Կրկին ներկայացված վերաքննիչ բողոքում առկա խախտումները վերացնելու համար նոր ժամկետ չի տրվում:

ՀՀ վճռաբեկ դատարանը բազմիցս արձանագրել է, որ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկը բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտը իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովել դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը *(տե՛ս, ի թիվս այլնի, «Ֆասթ Սփլայ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ3/0347/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.03.2015 թվականի որոշումը)*:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան), անդրադառնալով բողոքարկման իրավունքին և դրա իրացման պայմաններին, արձանագրել է, որ պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, «(...) պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը չի համապատասխանի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին, եթե այն չհետապնդի իրավաչափ նպատակ, և եթե կիրառված միջոցների ու հետապնդվող նպատակի միջև չլինի համաչափության ողջամիտ հարաբերակցություն» *(տե՛ս Khalfaoui v. France գործով (թիվ 34791/97 գանգատ) Եվրոպական դատարանի 14.03.2000 թվականի վճիռը, 36-րդ կետ)*:

Միաժամանակ Եվրոպական դատարանը նշել է, որ թեև Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է դատարան դիմելու արդյունավետ իրավունք, այնուամենայնիվ, պետության հայեցողությանն է թողնված նշված նպատակի համար անհրաժեշտ միջոցների ընտրության հարցը *(տե՛ս Airey v. Ireland գործով (թիվ 6289/73 գանգատ) Եվրոպական դատարանի 09.10.1979 թվականի վճիռը, 26-րդ կետ)*:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դատաքննության իրավունքների երաշխավորման սահմանադրական իրավաչափության խնդիրներին՝ դրանք դիտարկելով որպես դատական պաշտպանության իրավունքի անհրաժեշտ բաղադրատարրեր և արձանագրել է, որ՝

- վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հարցում դատարանները պետք է ունենան ոչ թե հայեցողական անսահմանափակ ազատություն, այլ՝ օրենսդրորեն նախատեսված, հստակ և անձանց համար միակերպ ընկալելի հիմքերով բողոքը վարույթ ընդունելու կամ մերժելու իրավունք և պարտականություն,

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստազրկել Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ,

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի մատչելիությունը կարող է ունենալ այնպիսի սահմանափակումներ, որոնք չեն խաթարում այդ իրավունքի բուն էությունը,

-իրավական որոշակիության ապահովման պահանջից ելնելով՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար անհրաժեշտ որոշակի իմպերատիվ նախապայմանի առկայությունն ինքնին չի կարող դիտվել որպես Սահմանադրությանը հակասող: ***Այլ հարց է, որ նման նախապայմանը պետք է լինի իրագործելի, ողջամիտ և չհանգեցնի իրավունքի էության խախտման*** *(տե՛ս Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-652, թիվ ՍԴՈ-690, թիվ ՍԴՈ-719, թիվ ՍԴՈ-765, թիվ ՍԴՈ-844, թիվ ՍԴՈ-873, թիվ ՍԴՈ-890, թիվ ՍԴՈ-932, թիվ ՍԴՈ-942, թիվ ՍԴՈ-1037, թիվ ՍԴՈ-1052, թիվ ՍԴՈ-1115, թիվ ՍԴՈ-1127, թիվ ՍԴՈ-1190, թիվ ՍԴՈ-1192, թիվ ՍԴՈ-1196, թիվ ՍԴՈ-1197, թիվ ՍԴՈ-1220, թիվ ՍԴՈ-1222, թիվ ՍԴՈ-1257, թիվ ՍԴՈ-1289 որոշումները)*:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր հերթին արձանագրել է, որ արդարադատության մատչելիության իրավունքը սերտորեն փոխկապակցված է դատարան դիմելու իրավունքի ֆինանսական սահմանափակման՝ օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրք վճարելու պարտականության հետ: Հայցադիմումի համար սահմանված պետական տուրքի վճարումն անձի դատական պաշտպանության իրավունքի իրականացման նախապայմաններից մեկն է, քանի որ օրենքով սահմանված կարգով պետական տուրքը վճարելու հանգամանքով է պայմանավորված ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ արդարադատությունից օգտվելու հնարավորությունը: Այլ կերպ ասած՝ որպեսզի անձը խախտված իրավունքների պաշտպանության համար կարողանա իրացնել դատարան դիմելու հնարավորությունը, նա պետք է նախևառաջ վճարի օրենքով սահմանված համապատասխան դրույքաչափով պետական տուրք *(տե՛ս Հայկ Օհանյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/1115/05/16 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.11.2018 թվականի որոշումը)*:

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ քաղաքացիական դատավարության մասնակիցների, այդ թվում՝ ստորադաս դատարանների դատական ակտերի դեմ բողոք ներկայացնող անձանց համար օրենսդիրն առաջադրել է պահանջներ, որոնց պահպանման դեպքում միայն կարող է իրականացվել վերջիններիս իրավունքների պաշտպանությունը: Նման պահանջներից մեկն էլ վերաքննիչ բողոքին սահմանված կարգով և չափով պետական տուրքը վճարելու փաստը հավաստող ապացույցը կցելու պահանջն է: Նշված պահանջն ուղղված է պետական տուրք վճարողների՝ պետական տուրքի վճարումով ծառայություններ կամ գործողություններ իրականացնող մարմիններին կամ պաշտոնատար անձանց պետական տուրքի վճարումը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու, ինչպես նաև համապատասխան ծառայություններ կամ գործողություններ իրականացնող պաշտոնատար անձանց վրա օրենքով դրված՝ պետական տուրքը ճիշտ հաշվարկված և ժամանակին վճարված լինելու փաստն ստուգելու պարտականության պատշաճ կատարումն ապահովելուն *(տե՛ս Մհեր Դերձյանն ընդդեմ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ-ի թիվ ԵԴ/11182/02/19 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 19.03.2024 թվականի որոշումը)*:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է նաև, որ օրենսդիրը, ելնելով դատական պաշտպանության իրավունքի մատչելիության սկզբունքից, առանձին հոդվածներով սահմանել է պետական տուրքի գծով արտոնությունների տեսակները: Այլ կերպ՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը ոչ միայն սահմանում է պետական տուրքի գանձման օբյեկտները, դատարաններում պետական տուրքի վճարման դրույքաչափերը, այլ

նաև հստակեցնում է դատարաններում պետական տուրքի գծով կիրառվող արտոնությունները, որոնք ուղղված են ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված՝ յուրաքանչյուր անձի դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրականացմանը *(տե՛ս Հասմիկ Զատիկյանն ընդդեմ Պետրոս Սարգսյանի և Մարիաննա Սարգսյանի ու Մարիաննա Սարգսյանը և Պետրոս Սարգսյանն ընդդեմ Հասմիկ Զատիկյանի թիվ ԵԱՔԴ/2005/02/17 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 14.08.2020 թվականի որոշումը)*:

Սահմանադրական դատարանը, 25.05.2010 թվականի թիվ ՍԴՈ-890 որոշման շրջանակներում արձանագրելով, որ պետական տուրք վճարելու սահմանադրական պարտականության կատարումը սերտորեն առնչվում է անձի՝ դատարան դիմելու սահմանադրական իրավունքի իրացման հնարավորության հետ, ընդգծել է, որ դատարաններում պետական տուրք վճարելու պարտականությունը չի հետապնդում դատարան դիմելու սահմանադրական իրավունքից անձին զրկելու նպատակ: Միաժամանակ, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը սահմանում է այն դեպքերը, երբ դատարաններում պետական տուրք վճարելու պարտականությունից անձն ազատվում է օրենքի ուժով, որով ***բացառվում է այդ պարտականությունից անձին ազատելու հայեցողական մոտեցումը***:

ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է նաև, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է դատարանում պետական տուրքի գծով արտոնությունների կիրառման երկու ընթացակարգ՝ ***օրենքի ուժով*** և դատարանի հայեցողությամբ: Այսպես, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը սպառիչ ամրագրել է այն հիմքերը, որոնց առկայության պարագայում դատական պաշտպանություն հայցող սուբյեկտն օրենքի ուժով ազատվում է պետական տուրքի վճարումից: Նման հիմքերից որևէ մեկի առկայությունը չի պահանջում շահագրգիռ անձի կողմից պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու վերաբերյալ միջնորդության հարուցում և դրա քննարկում ու լուծում դատարանի կողմից *(տե՛ս Շամամ Կարապետյանն ընդդեմ Արայիկ Միրզոյանի թիվ ԱՐԴ/0913/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.01.2014 թվականի որոշումը)*:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով սահմանված հիմքերի առկայության դեպքում անձն ազատված է պետական տուրքի վճարումից օրենքի ուժով, հետևաբար պետական տուրքի գծով արտոնության կիրառումը չի կարող թողնվել դատարանի հայեցողությանը: Ըստ այդմ էլ, բոլոր այն դեպքերում, երբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով սահմանված հիմքերից որևէ մեկով անձն օրենքի ուժով ազատված է պետական տուրքի վճարումից, անձի կողմից չպետք է ներկայացվի պետական տուրքի գծով արտոնություն՝ պետական տուրքի վճարումից ազատում կիրառելու վերաբերյալ միջնորդություն, քանի որ դրա ներկայացումը վերը նշված պատճառաբանությամբ արդեն իսկ առարկայազուրկ է *(տե՛ս Զարուհի Հայրապետյանի օրինական ներկայացուցիչ Մարինա Ռոստոմյանն ընդդեմ Սոնա Հայրապետյանի, Արթուր Հովսեփյանի և մյուսների թիվ ԵԴ/30236/02/18 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.11.2021 թվականի որոշումը)*:

Նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով նաև հանցագործությամբ պատճառված բարոյական վնասի հատուցման հայցապահանջով անձին պետական տուրքի վճարումից ազատելու իրավական խնդրին և փաստելով, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված արտոնությունները ներառում են նաև պետական տուրքից ընդհանրապես ազատելու հնարավորությունը, որն ուղղված է 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով և Կոնվենցիայի 6-րդ

հոդվածի 1-ին կետով երաշխավորված՝ յուրաքանչյուր անձի դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրականացմանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը, մեկնաբանելով մինչև 30.10.2021 թվականը գործած խմբագրությամբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետը, արձանագրել է նաև, որ օրենսդիրը, որպես պետական տուրքի վճարման արտոնություն, այն է՝ պետական տուրքի վճարումից ազատելու նախապայման, ի թիվս այլնի «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով առանձնացրել է նաև այն հայցվորներին, որոնց հանցագործությամբ վնաս է պատճառվել: Ընդ որում, վերը նշված հիմքով պետական տուրքի վճարումից ենթակա են ազատման ինչպես քաղաքացիական դատավարության կարգով, այնպես էլ քրեական դատավարության կարգով քաղաքացիական հայց ներկայացրած անձինք, եթե հանցագործության հետևանքով կրել են վնասներ:

ՀՀ վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով սահմանված արտոնությունների սահմանումն օրենսդրի կողմից պայմանավորված է այն ընդհանուր օրինաչափությամբ, համաձայն որի՝ հատկապես հաշվի են առնվում նման արտոնություն տրամադրելու անհրաժեշտությունը պայմանավորող այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են, ի թիվս այլնի, հանցագործության հետևանքով վնաս կրած անձանց փոխհատուցում ստանալու իրավունքը: Այսինքն՝ օրենսդիրը կարևորել է հանցագործություններից տուժողների գույքային իրավունքների պաշտպանությունը, այդ իրավունքի լիարժեք իրականացումը պայմանավորելով անձի սահմանադրորեն և միջազգային պայմանագրերով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացման հետ, ինչն իր հերթին պահանջում է բավարար դատավարական երաշխիքներ:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հայցվորին հանցագործության հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով պետական տուրքի վճարումից ազատելը հանդիսանում է երաշխիք տուժողի՝ քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով պատճառված վնասի փոխհատուցում ստանալու իրավունքի իրացման համար: ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ այն պարագայում, երբ օրենսդիրը իրավունք է վերապահել տուժողին կամ նրա իրավահաջորդին օրենքով սահմանված կարգով ստանալ քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով պատճառված վնասի (նյութական և ոչ նյութական վնաս) փոխհատուցում, ապա նշված իրավունքի իրացման համար անհրաժեշտ է տրամադրել նաև երաշխիք, այսինքն՝ անհրաժեշտ է, որ հայցվորները դատարան դիմելիս ազատվեն հանցագործության հետևանքով իրենց պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով պետական տուրքի վճարումից, այսպիսով՝ անհրաժեշտ է տրամադրել իրավական երաշխիքներ՝ տվյալ դեպքում պետական տուրքի վճարումից ազատելու եղանակով, քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով պատճառված վնասի փոխհատուցում ստանալու իրավունքի իրացման համար *(տե՛ս Հակոբ Հովհաննիսյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության, ի դեմս՝ ՀՀ կառավարության, «Արմավիր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և Անահիտ Պետրոսյանի թիվ ԱՐԴ/3937/02/17 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.09.2018 թվականի որոշումը)*:

Մեկ այլ որոշմամբ անդրադառնալով հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման հայցապահանջով անձին պետական տուրքի վճարումից ազատելու արտոնության կիրառման ընթացակարգին՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ եթե ներկայացվել է հայցադիմում, որի հիմքը հանցագործությամբ պատճառված վնասն է, ապա դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու պահին պարտավոր է ստուգել միայն հայցադիմումի՝ օրենքով սահմանված ձևին և բովանդակությանը համապատասխանելը՝ առանց արձանագրելու, թե արդյոք առկա է հանցագործությամբ պատճառված վնաս, թե՝

ոչ, նկատի ունենալով, որ հայցադիմումը վարույթ ընդունելու պահին հայցի ըստ էության քննություն դատարանը չի կարող իրականացնել: Այսինքն՝ վարույթ ընդունելով նման հայցադիմումը՝ դատարանը ոչ թե արդեն իսկ արձանագրում է, որ առկա է հանցագործությամբ պատճառված վնաս, որի արդյունքում էլ կիրառում է սահմանված արտոնությունը, ***այլ միայն արձանագրում է, որ ներկայացված է հանցագործությամբ պատճառված վնասի հիմքով հայցադիմում՝ վնասի հատուցման պահանջով, որպիսի պահանջների համար հայցվորն ազատված է պետական տուրքից*** *(տես Սմբատ Բադալյանն ընդդեմ Սիսակ Սարգսյանի թիվ ԱՐԱԴ/2085/02/17 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 20.07.2018 թվականի որոշումը)*:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ

Սույն գործի դատավարական փաստերի համաձայն՝ Համայնքապետարանը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ Ֆելիքս Հարությունյանի՝ վնասը հատուցելու պահանջի մասին:

Որպես հայցի փաստական հիմնավորում Համայնքապետարանը հայտնել է նաև, որ թիվ 34100616 քրեական գործով կատարված նախաքննության ընթացքում հիմնավորվել է, որ Ֆելիքս Հարությունյանը, 2007 թվականից մինչև 2015 թվականն ընկած ժամանակահատվածում աշխատելով Շիրակի մարզի Կարմրավան համայնքի ղեկավարի պաշտոնում, հանդիսանալով պաշտոնատար անձ, պաշտոնեական դիրքն օգտագործելով, մեկ միասնական հանցավոր դիտավորությամբ, իրեն վստահված ուրիշի՝ Շիրակի մարզի Կարմրավան համայնքի բյուջեից յուրացման եղանակով հափշտակել է խոշոր չափերի՝ ընդհանուր 2.487.000 ՀՀ դրամի չափով գումար: Նշված արարքները կատարելու համար Ֆելիքս Հարությունյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով: Քրեական գործով նախաքննության ընթացքում Ֆելիքս Հարությունյանը չի առարկել իր նկատմամբ քրեական հետապնդումը ոչ արդարացնող՝ հայցային վաղեմության ժամկետն անցնելու հիմքով դադարեցնելու դեմ: Թիվ 34100616 քրեական գործով 21.03.2022 թվականին որոշում է կայացվել վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին:

Որպես հայցի իրավական հիմք վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ և 1058-րդ հոդվածները՝ Համայնքապետարանը պահանջել է Ֆելիքս Հարությունյանից բռնագանձել 2.487.000 ՀՀ դրամ՝ որպես պատճառված վնասի հատուցում:

Ի թիվս այլնի, Համայնքապետարանը հայցադիմումին կից Դատարան է ներկայացրել Քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչի 21.03.2022 թվականի «Քրեական գործով վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին» որոշումը:

Դատարանի 22.12.2025 թվականի վճռով հայցը մերժվել է:

Համայնքապետարանը վճիռը բողոքարկել է վերաքննության կարգով, վերաքննիչ բողոքին պետական տուրքի վճարումը հավաստող ապացույց չի կցել, միաժամանակ վերաքննիչ բողոքում նշել է հետևյալը. *«հայցվորն ազատված է պետական տուրքի վճարման պարտականությունից՝ համաձայն՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի»* **(հատոր 5-րդ, գ.թ. 8-14)**:

Վերաքննիչ դատարանը, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 5-րդ մասը, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ

հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի «ա» ենթակետը և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետն ու պատճառաբանելով, որ «*սույն գործի շրջանակներում բողոքաբերը որպես պատճառված վնասի հատուցման գումար պահանջել է 2.487.000 ՀՀ դրամ: (...) վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վճարվելիք պետական տուրքի ընդհանուր գումարը կազմում է 99.480 դրամ (2.487.000 *4%=99.480 դրամ): Մինչդեռ բողոքաբերի կողմից այն չի վճարվել և միջնորդություն չի ներկայացվել պետական տուրքի վճարման հետ կապված արտոնություններ կիրառելու վերաբերյալ: Վերաքննիչ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ պետական տուրքի վճարման արտոնություններ կիրառելու միջնորդություն ներկայացնելու դեպքում այն պետք է հիմնավորել գույքային և ֆինանսական դրության վերաբերյալ համապատասխան ապացույցներով, ինչի պարագայում միայն միջնորդությունը կարող է բավարարվել*», վերաքննիչ բողոքը վերադարձրել է:

Վերը նշված իրավական դիրքորոշումների և փաստերի համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ սույն քաղաքացիական գործով Համայնքապետարանը ներկայացրել է հայցադիմում՝ պահանջելով հանցագործության հետևանքով իրեն պատճառված նյութական վնասի փոխհատուցում, որպիսի հայցապահանջով վերաքննիչ բողոքի համար պետական տուրքը վճարված չլինելը, ինչպես նաև պետական տուրքի գծով միջնորդության առկայությունը կամ բացակայությունը որևէ նշանակություն չունեն վերաքննիչ բողոքի ընդունելիության հարցի լուծման համար, քանի որ Համայնքապետարանը սույն գործով չի կրում պետական տուրք վճարելու պարտականություն՝ օրենքի ուժով այդ պարտականությունից ազատված լինելու հիմքով:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը բողոք բերած անձին անհարկի ծանրաբեռնել է չարդարացված, օրենքով չնախատեսված լրացուցիչ պարտականությամբ այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքի հետ կապված կառուցակարգերը չպետք է անհարկի ծանրաբեռնեն անձանց:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն դեպքում բացակայել է վերաքննիչ բողոքը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով վերադարձնելու իրավական հիմքը: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 2-րդ մասում նշված լիազորության կիրառմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասի և 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի 09.02.2026 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը վերացնելու համար: Նշված որոշումը վերացվելու դեպքում Համայնքապետարանի ներկայացրած վերաքննիչ բողոքը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն, ենթակա է վարույթ ընդունման, եթե բացակայեն վերաքննիչ բողոքը վերադարձնելու այլ հիմքեր կամ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու հիմքեր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ ու 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.02.2026 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔ

ՀՀ դատավորների միությունը շնորհավորում է

ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի դատավոր **Սերգեյ ՉԻՉՈՅԱՆԻ** ծննդյան 60-ամյակը,

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր **Արմեն ԲԵԿԹԱՇՅԱՆԻ** ծննդյան 55-ամյակը,

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր **Տարոն ՆԱԶԱՐՅԱՆԻ** ծննդյան 55-ամյակը,

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի դատավոր **Գևորգ ՍՈՍՅԱՆԻ** ծննդյան 45-ամյակը,

ՀՀ վարչական դատարանի դատավոր **Միեր ՊԵՏՐՈՍՅԱՆԻ** ծննդյան 45-ամյակը,

ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավոր **Արմիդա ՈՍԿԱՆՅԱՆԻ** ծննդյան 40-ամյակը,

ՀՀ վարչական դատարանի դատավոր **Ռոբերտ ՄԱՔԵՅԱՆԻ** ծննդյան 40-ամյակը,

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր **Թաթուլ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ** ծննդյան 40-ամյակը,

ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր
իրավասության դատարանի դատավոր
Կարինե ԴԱՎԹՅԱՆԻ ծննդյան 35-ամյակը,

ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր
իրավասության դատարանի դատավոր
Արման ԲԱԲԱԽԱՆՅԱՆԻ ծննդյան 30-ամյակը,

մաղթում նրանց առողջություն, անսպառ եռանդ
և մասնագիտական արդյունավետ գործունեություն:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Դատական իշխանություն» գիտամեթոդական պարբերականը լույս է տեսնում տարեկան առնվազն չորս անգամ:
Պարբերականի գիտական խմբագրական խորհուրդը քննարկում է միայն այն նյութերը, որոնք ներկայացվում են գրախոսականի առկայությամբ:
Տպագրվող նյութը պետք է ունենա որոշակի կառուցվածք՝ **ներածություն, հիմնական հետազոտություն** (որը կարող է ունենալ բաժիններ և ենթաբաժիններ), **եզրակացություն**:
«Դատական իշխանություն» պարբերականում տպագրության ներկայացվող նյութերի տեխնիկական պահանջները.
1. նյութի սկզբում դրվում է վերնագիրը (գլխատառերով),
2. հաջորդ տողում՝ հեղինակի անուն-ազգանունը (գլխատառերով), հեղինակի գիտական աստիճանն ու կոչումը, աշխատանքի վայրը, պաշտոնը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի անվանումը,
3. տեքստի լուսանցքները. վերև՝ 25 մմ, ներքև՝ 25 մմ, աջ՝ 25 մմ, ձախ՝ 20 մմ,
4. հայերեն շարվածքի տառատեսակը՝ GHEA Grapalat, անգլերեն շարվածքի տառատեսակը՝ GHEA Grapalat, ռուսերեն շարվածքի տառատեսակը՝ GHEA Grapalat,
5. հիմնական տառաչափը՝ 12,
6. միջտողային հեռավորությունը՝ 1.5,
7. օգտագործված գրականության ցանկ՝ աճման կարգով, տառաչափը՝ 10, նշվում է աղբյուրի հեղինակը (թավ), վերնագիրը, հատորը, հրատարակության տեղը, տարեթիվը (մամուլի դեպքում՝ նաև համարը) և էջերի քանակը,
8. հղումները տրվում են տողատակում՝ աճման կարգով, տառաչափը՝ 10, նշվում է աղբյուրի հեղինակը (թավ), վերնագիրը, հատորը, հրատարակության տեղը, տարեթիվը (մամուլի դեպքում՝ նաև համարը) և էջը,
9. նյութը կարող է ներկայացվել հայերեն, անգլերեն կամ ռուսերեն, այն պետք է ունենա երեք լեզուներով ամփոփագրեր (ընդ որում՝ եթե այն անգլերեն կամ ռուսերեն չէ, ամփոփագիրը պետք է լինի 150-250 բառի սահմաններում), որոնք պետք է պարունակեն որոշակի, հստակ և ընդգրկուն տեղեկատվություն նյութի վերաբերյալ: Նյութը երեք լեզվով պետք է ունենա մինչև 10 բանալի բառեր,
10. նյութն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային եղանակով (էլեկտրոնային փոստ՝ journal.judiciary.power@gmail.com):
Պարբերականում հոդվածները տպագրվում են վճարովի հիմունքներով: Տպագրության վճարը կազմում է 12.000 (տասներկու հազար) ՀՀ դրամ: Բացառություն են կազմում ՀՀ դատավորների միության անդամ դատավորները (ինչպես նաև ՀՀ դատավորների միության անդամ նախկին դատավորները), ում համար հոդվածների տպագրությունն իրականացվում է անվճար հիմունքներով:

Թեմայով խոսքեր

«Արդարությունը բոլոր առաքինությունների հիմքն է»:
Ցիցերոն

«Օրենքի առջև բոլորը հավասար են»:
Արիստոտել

«Վատ օրենքը ավելի վատ է, քան անօրինությունը, որովհետև անօրինությունը վնասում է միայն մեկին, իսկ վատ օրենքը՝ շատերին»:
Թոմաս Աքվինացի

«Դատավորը պետք է լինի օրենքի բերանը, որն արտասանում է օրենքի բառերը»:
Շառլ Լուի դը Մոնտեսքյո

«Ավելի լավ է հարյուր մեղավոր փրկվի, քան մեկ անմեղ դատապարտվի»:
Ուիլյամ Բլեքստոն

«Արդար դատաստանը պետության հիմքն է»:
Ջոն Լոք

«Դատավորի առաջին պարտականությունն է լինել արդար, և միայն դրանից հետո՝ խիստ»:
Ջորջ Վաշինգտոն

ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ
1997 Թ ՎԱԿԱՆԻՑ

